ԷՄԻԼ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երևան
ԼԻՄՈՒՇ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2010

ՀՏԴ 32.001:31
ԳՄԴ 66+60.5
Օ - 869

**Երաշխավորված է տպագրության
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի գիտխորհրդի կողմից**

Գիտական խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, սոց. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Ա. Պողոսյան
Գրախոս՝ քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Մ. Քեռյան

Օրդուխանյան Էմիլ
Օ - 869 Իշխանություն և ընդդիմություն. - քաղաքական խոսույթի վերլուծություն.- Եր.: Լիմուշ, 2010.- 228 էջ.

Գիրքը նվիրված է Հայաստանում իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթի վերլուծությանը: Ուսումնա- սիրելով քաղաքական իշխանության և ընդդիմության հիմնական տեսական հայեցակարգերը և հետազոտության հարացույցները, վերլուծելով քաղաքական մասնակցության ձևերը քաղաքական խոսույթի համատեքստում, հետազոտելով հետխորհրդային Հայաս- տանում իշխանության և ընդդիմության փոխհարաբերությունները և քաղաքական խոսույթը՝ աշխատանքում վեր են հանվել վերջինիս առանձնահատկությունները, բացահայտվել են արդի հայ հասարա- կության մեջ իշխանության և ընդդիմության փոխհարաբերու- թյուններում առկա կոնֆլիկտային քաղաքական խոսույթին բնորոշ տարրերը, հիմնավորվել է ընտրությունների ժամանակ ընտրազանգ- վածի վարքագծի վրա քաղաքական խոսույթի ազդեցությունը, ինչպես նաև առաջարկվել են պետության համար արդի սոցիալ-քաղաքական խնդիրների լուծման նպատակով իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթի կատարելագործման ուղիներ և ձևեր:

Գիրքը օգտակար կլինի քաղաքագետների, սոցիոլոգների, պետական գործիչների, ինչպես նաև քաղաքական խոսույթի հիմնախնդրով հետաքրքրվող մասնագետների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 32.001:31
ԳՄԴ 66+60.5

ISBN 978-9939-64-022-8

© Էմիլ Օրդուխանյան, 2010թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 4

ԳԼՈՒԽ I. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Քաղաքական իշխանության հասկացությունը և հիմնական հայեցակարգերը 10
2. Քաղաքական ընդդիմության հասկացությունը և հետազոտության հարացույցները 28
3. Քաղաքական խոսույթը և դրա դրսևորման ձևերը 48
4. Իշխանության և ընդդիմության փոխգործակցության վերլուծության կոնֆլիկտ-խոսութային մեթոդը 55

ԳԼՈՒԽ II. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1. Իշխանության և ընդդիմության տեղը և դերը հասարակությունում 78
2. Քաղաքական մասնակցության ձևերը քաղաքական խոսույթի համատեքստում 113

ԳԼՈՒԽ III. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

1. Իշխանության և ընդդիմության գործունեության կոնֆլիկտ-խոսութային վերլուծություն 132
2. ՀՀ կուսակցությունների ծրագրերի խոսութային վերլուծություն 147
3. Իշխանության և ընդդիմության փոխգործակցությունը Հայաստանում....159
4. Իշխանության և ընդդիմության թեկնածուների քաղաքական ելույթների խոսութային վերլուծությունը 2008թ. ՀՀ Նախագահի ընտրություններում...173
5. Քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերի խոսութային վերլուծությունը 2009թ. Երևանի ավագանու ընտրություններում.....193

ԱՄՓՈՓՈՒՄ 219

ԱՌԱՋԱԲԱՆ

Ժամանակակից աշխարհում և հատկապես՝ Հայաստանում այսօր իշխանության և ընդդիմության փոխհարաբերությունների համատեքստում տեղի են ունենում լայնածավալ և դինամիկ փոփոխություններ, ինչը կարևոր տեղ է զբաղեցնում ինչպես քաղաքական խնդիրների, այնպես էլ՝ քաղաքագիտության կարևորագույն գիտակարգերի շարքում: Իշխանության և ընդդիմության վերաբերյալ պատմական, տեսական և մեթոդաբանական մոտեցումները հնարավորություն են տալիս պատասխանել այն հարցին, թե ինչպես պետք է գործեն այս երկու քաղաքական ինստիտուտների փոխգործունեության, փոխզսպման, փոխվերահսկման և հաղորդակցման մեխանիզմները հօգուտ հասարակության: Այսպիսի հարցադրումը հնարավորություն է ընձեռում ոչ միայն դիտարկել իշխանության և ընդդիմության հարաբերությունների հայեցակարգային տեսլականը 21-րդ դարի քաղաքական գործընթացներում, այլև թույլ է տալիս անհրաժեշտ հետազոտական նյութ տրամադրել մասնագետներին ավելի արդյունավետ քաղաքականություն իրականացնելու համար:

Իշխանության և ընդդիմության փոխհարաբերությունները բազմաբնույթ են և, անշուշտ, փոփոխվում են քաղաքական ժամանակի հետ մեկտեղ: Նրանց հարաբերությունների, նպատակների և խնդիրների վրա նշանակալի ազդեցություն է թողնում ժամանակակից հասարակության փոխակերպումը:[1] Մի խումբ գիտնականների կարծիքով աշխարհը մտել է ուշ կամ բարձր մոդեռնի (է. Հիդենս)[2], նոր այժմեականության (Ու. Բեկ)[3] դարաշրջան, որտեղ մեկ քաղաքականությանը փոխարինման են գալիս խոշոր ընկերությունների կողմից

---

[1] *1. Погосян Г.* Теории модернизации и постсоветское общество: судьба социальных трансформаций в Армении, журнал “ Общество и Экономика” N.6, Москва, 2003, 2. *Պողոսյան Գ.,* Հայ հասարակությունը XXI դարասկզբին, «Լուսաբաց հրատարակչություն», Երևան, 2007, *3. Պողոսյան Գ., Հարությունյան Մ., Առաքելյան Վ.,* Հայաստան, Օտարացած հասարակություն, «Լուսաբաց հրատարակչություն», Երևան, 2007:

[2] *Гидденс Э.* Книга "Ускользающий мир: как глобализация меняет нашу жизнь, Москва, 2004.

[3] *Beck U.* Theory of Reflexive Modernisation/ Theory, Culture and Society, London, 2002.

իրականացվող ենթաքաղաքականությունները, իսկ այնպիսի քաղաքական ինստիտուտներ, ինչպիսիք են իշխանությունը և ընդդիմությունը, սկսում են հետզհետե անտեսվել: Այլ գիտնականների համոզմամբ (Ժ. Բոդրիյար, Ժ. Լիոտար)[4] մարդկությունն այսօր ապրում է հետմոդեռնի ժամանակաշրջանում, որտեղ մետախոսույթի (մետադիսկուրս) իրական հիմքը ոչ թե կեցությունն է, աշխատանքը, արտադրությունը, շահագործումը և շահույթը (Կ. Մարքս), այլ արտադրության, հասարակական հարաբերությունները ձևավորող համակարգերի տարրերը՝ մասնավորապես՝ ԶԼՄ-ները և ԶՀՄ-ները (հեռուստատեսություն, լրատվության և հաղորդակցության էլեկտրոնային միջոցներ): Ժամանակակից աշխարհում ԶԼՄ-ները և ԶՀՄ-ները դադարել են իրականության հայելին լինել, քանզի հենց իրենք են վերածվել իրականության, որի արդյունքում աշխարհը հետզհետե մտնում է վիրտուալ իրականության դաշտ՝ առաջացնելով բազմաթիվ փոփոխություններ թե՛ քաղաքականության, թե՛ հասարակության մեջ:

Պատահական չէ, որ հասարակական-քաղաքական գիտություններում կատարվող հետազոտությունների գիտական հարացույցների (պարադիգմա) շրջանակում Արևմուտքում և հետխորհրդային երկրներում այսօր լայն տարածում է գտնում քաղաքական խոսույթի (քաղաքական դիսկուրս) տեսությունը, որը քաղաքական իրականությունը դիտարկում է որպես բարդ հաղորդակցական երևույթ, որն իր մեջ ներառում է ոչ միայն հաղորդակցության մասնակիցների բնութագրությունը, այլև այն սոցիալական համատեքստը, որտեղ նրանք գոյություն ունեն, ինչպես նաև՝ հաղորդակցության իրականացման և ընկալման գործընթացները: Սա հնարավորություն է ստեղծում նորովի դիտարկել քաղաքական իշխանության և ընդդիմության հարաբերությունները, այսինքն՝ որպես հրապարակային, բազմակողմ և երկխոսության տեսանկյունից կոնֆլիկտային քաղաքական խոսույթի սուբյեկտների հարաբերություններ՝ ստույգ մատնանշված հակադրություններով, որոնց նպատակը տեղի

[4] *Baudrillard J.* La Societe de Consommation: Ses Mythes et Ses Structures, Gallimard, Paris, 1970.

ունեցող քաղաքական երևույթների էության պարզաբանումն է, ժամանակի մարտահրավերներին համարժեք պատասխան տալը և առավել արդյունավետ քաղաքական որոշումներ ընդունելու համար նոր գաղափարներ որոնելը: Քաղաքական խոսույթի տեսության մեջ շատերը դիմում են ոչ դոգմատիկ մոտեցումներին աշխարհի հետստրուկտուրալիստական[5] և հետմոդեռնիստական[6] ընկալման վրա հիմնված նոր գաղափարական ուղղությունների բացատրության համար: Դրա հետ մեկտեղ քաղաքական խոսույթի տեսության մեթոդաբանական հիմքը դեռ լուրջ մշակման կարիք ունի, ինչով էլ այսօր զբաղվում են ԱՄՆ-ում, Եվրոպայում և այժմ՝ նաև Հայաստանում:[7]

Անկասկած, այսօր այժմեական է դարձել Հայաստանում իշխանության և ընդդիմության քաղաքական ինստիտուտների վերաբերյալ հայեցակարգային մոտեցման մշակումը, քանզի այս երևույթն առկա է յուրաքանչյուր հասարակությունում: Այսօր խիստ պահանջ է առաջացել վերլուծելու մեր երկրում այս երկու քաղաքական ինստիտուտների փոխհարաբերությունները քաղաքական խոսույթի համատեքստում:

Հայաստանում համեմատաբար նոր է սկսվել քաղաքական ընդդիմության ինստիտուցիոնալացման գործընթացը, և չնայած այն բանին, որ փորձեր են արվում համակարգելու և պարզեցնելու վերջինիս և իշխանության միջև փոխհարաբերությունները՝ այնուամենայնիվ, այս գործընթացն առաջ է ընթանում կոնֆլիկտային քաղաքական խոսույթի պայմաններում:

Մեր օրերում քաղաքական ընդդիմության տեղի և դերի մասին գիտական բանավեճը սկզբնավորվել է Արևմուտքում մոտ հիսուն

---

[5] *Poster M.* The Mode of Information. Poststructuralism and Social Context. Cambridge, “Polity Press”, 1990.

[6] *Лиотар Ж.* Состояние постмодерна, СПб.: “Алетейя”, 1998.

[7] *1. Օրդուխանյան Է.* Քաղաքական խոսույթը և նրա դրսևորման ձևերը, Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, 3/36/, Երևան 2008, *2. Օրդուխանյան Է.* Քաղաքական խոսույթի վերլուծությունը և նրա առանձնահատկությունները 2008թ. ՀՀ նախագահական ընտրություններում, Մխիթար Գոշ գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 3/19/, Երևան 2008:

տարի առաջ: Քաղաքական ընդդիմության սոցիալ-փիլիսոփայական և քաղաքագիտական խորը ուսումնասիրության գործում անհամեմատ մեծ ներդրում են ունեցել եվրոպացի գիտնականներ Մ. Դյուվերժեն («Քաղաքական կուսակցություններ, 1951»), Ա. Կամյուն («Ապստամբող մարդը», 1951), Ժ.-Պ. Սարտրը («Դիալեկտիկական բանականության քննադատություն, 1960»), ինչպես նաև ամերիկացի գիտնականներ Ռ. Միլսը («Իշխող էլիտա», 1956), Ռ. Դահլը («Պոլիարխիա, մասնակցություն և ընդդիմություն», 1971)[8] և այլոք: Վերոհիշյալ հեղինակները համոզիչ ապացույցներ են ներկայացում իրական ընդդիմության հասարակական, քաղաքական պահանջարկվածության, ինչպես նաև նրա սուբյեկտների մասին, ինչը նպաստում է ժողովրդավարացմանը, հասարակության արդիականացմանը և որոշակիորեն հասարակության մեջ արդարության ամրապնդմանը:

20-րդ դարի 60-ական թթ.-ից ի վեր արտասահմանում ակտիվորեն մշակվում է քաղաքացիական անհնազանդության՝ ընդդիմության գործունեության հետ սերտորեն կապված հիմնախնդիրը, որն ընդլայնման միտում ունի: Դրա մի մասը վերաբերում է ազատական քաղաքական տեսությանը՝ հիմնված հասարակական դաշինքի կամ իրավական կարգի մասին պատկերացումների վրա (Ռ. Նոզիկ, Դ. Դրովկին, Ձ. Ռոուլզ[9] և այլոք), իսկ երկրորդը հիմնված է ժողովրդավարության քաղաքական տեսության շրջանակներում քաղաքացիական անհնազանդության վրա (Յու. Հաբերմաս, Հ. Արենդտ, Կ. Պեյտմեն[10] և այլոք):

Քաղաքական խոսույթի տեսությունն առաջացել է Արևմուտքում 20-րդ դարի 70-ական թթ. որպես՝ լեզվի, մշակույթի և հասարակության

---

[8] *1. Duverger M.* Les partis politiques, Paris, Armand Colin, 1951, 2. *Camus A.* L'Homme révolté, Essai (1951), 3. *Sartre J.-P.* Critique de la raison dialectique II: L'intelligibilité de l'histoire (1985), 4. *Миллс Р.* Властвующая элита, Москва, 1959, 5. *Dahl R.* Polyarchy: Participation and Opposition. New Heaven: Yale University Press, London, 1971.

[9] *1. Nozik R.* Anarchy, State and Utopia. N.Y. Basic Book, 1968, *2. Dworkin D.* Talking Rights Seriously. Cambridge: Harvard University Press, 1978, *3. Rawls J.* A Theory of Justice. Massachusetts: Harvard University Press, 1971.

[10] *Habermas J.* Civil Disobedience: Litmus Test for the Democratic Constitutional State/Berkeley Journal of Sociology. 1985. № 30; *Arendt H.* Crisis in the Republic. N.Y. Harcourt Brace and Jovanovich, 1969; *Pateman C.* The Problem of Political Obligation. Berkeley: University of California Press, 1979.

ուսումնասիրության ստրուկտուրալիստական հայեցակարգերի քննադատական վերլուծություն, որպես՝ հետազոտության՝ ճգնաժամ ապրող մարքսիստական հարացույցներին փոխարինող որոշ տարբերակներ ներկայացնելու փորձ: Քաղաքական խոսույթի տեսության ձևավորման գործում մեծ ներդրում են ունեցել հաղորդակցականության, հերմենևտիկայի, լեզվի սոցիոլոգիայի և սեմիոտիկայի ոլորտների մի շարք գիտնականներ (Մ. Ֆուկո, Յու. Հաբերմաս, Ֆ, Ուեբսթեր, Տ.Վ. Դեյք, Դ. Հովարդ, Դ. Կին, Հ. Լասուել, Ն. Լուման, Պ. Բուրդյե, Ու. Լիպման, Ջ. Ցալլեր, Մ. Մակլյուհեն[11] և այլոք), որոնք պայմանավորում են հասարակական-քաղաքական հարաբերությունները քաղաքական երկխոսության տեսանկյունից:

Քաղաքական հաղորդակցության մեջ քաղաքական խոսույթը կարելի է դիտարկել լայն և նեղ իմաստներով: Լայն իմաստով խոսութային վերլուծության համատեքստը ներառում է գործող անձանց, օբյեկտները, հանգամանքները, ժամանակահատվածը, գործողությունները և այլն: Այս դեպքում քաղաքական խոսույթի տարրեր են համարվում տեղի ունեցող իրադարձությունները, դրանց մասնակիցները և սոցիալական համատեքստը: Իսկ նեղ իմաստով քաղաքական խոսույթը մասնագիտացված տեքստ է, որն ունի իրեն հատուկ լեզու: Իմի բերելով այս երկու մոտեցումները՝ կարող ենք պնդել, որ իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթը դրանց միջև բանավոր և գրավոր տեքստերի փոխանակումն է որոշակի պատմական, սոցիալական և քաղաքական ժամանակում:[12]

---

[11] *Фуко М.* Интеллектуалы и власть, М., 2002; также: Слова и вещи. Археология гуманитарных наук, СПб., 1994; *Хабермас Ю.* Теория коммуникативного действия. Т.1. Рациональность действия и общественная рационализация, М., 1981; *Уэбстер Ф.* Теории информационного общества, Аспект-пресс, М., 2004; *Ван Дейк Т.* Язык. Познание. Коммуникация. М,. 1989; *Howarth D.* Discourse Theory in European Politics. Identity, Policy and Governance, G.B. 2005; *Кин Д.* Средства массовой информации и демократия, М., 1993; *Lasswell H.* The Structure and Function of Communication in Society// The Communication of Ideas. N.Y. 1948; *Луман Н.* Власть как средство коммуникации/ Власть М., 2002; *Bourdieu P.* Language and Symbolic Power, Cambridge, 1991; *Липман У.* Общественное мнение, М., 2004*; Цаллер Дж.* Происхождение и природа общественного мнения. М., 2004, *Маклюэн М.* Понимание Медия: Внешние расширения человека. М., 2003 также: Галактика Гутенберга. Сотворение человека печатной культуры. М., 2003.

[12] *Օրդուխանյան Է.* Քաղաքական խոսույթը և նրա դրսևորման ձևերը, Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, 3/36/, Երևան 2008:

Ժողովրդավարացման պայմաններում Հայաստանում իշխանության և ընդդիմության փոխհարաբերություններին վերաբերող խնդիրների հետազոտությունը համեմատաբար նոր է սկսվել, ինչը կարելի է բացատրել տվյալ երևույթի ուսումնասիրության համար անհրաժեշտ էմպիրիկ նյութի սակավությամբ, քանի որ «ընդդիմություն» քաղաքական ինստիտուտը ՀՀ-ում գործում է 1991թ.-ի անկախությունից հետո, և այսօր քաղաքականության մեջ իշխանության և ընդդիմության փոխհարաբերությունների հետազոտությունը և վերլուծությունը քաղաքական խոսույթի համատեքստում դարձել են խիստ արդիական:

Արդի հասարակությունը զարգանում է արագ տեմպերով, ինչը պայմանավորված է տեղեկատվական հոսքերի մեծ ծավալներով, այսինքն՝ 21-րդ դարի հասարակությունն անցում է կատարում արդյունաբերական հասարակությունից ցանցային, հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակության (Ֆ. Ուեբսթեր Մ. Կաստելս, Դ. Բել[13]): Սակայն այս երևույթը Հայաստանում դեռ իր առաջին քայլերն է կատարում, և վերջապես, տեղեկատվական հասարակության և տեղեկատվական ժողովրդավարության ձևավորման պայմաններում կարելի է նշել, որ հնարավոր կլինի ավելի արդյունավետ և հիմնարար կերպով զբաղվել քաղաքական հաղորդակցության, քաղաքական խոսույթի և քաղաքական լեզվի ուսումնասիրությամբ:[14]

---

[13] *Уэбстер Ф.* Теории информационного общества, Аспект-пресс, М., 2004, *Castells M.* Materials for an exploratory theory of network society. - Brit. J. of. Soc., 2000/ также: *Castells M.* The Information Age: Economy, Society and Culture. T. I. The Rise of the Network Society. Blackwell Publishers. Maiden, Massachusetts, USA. Oxford, UK, 1996; *Белл Д.* Грядущее постиндустриальное общество. Опыт социального прогнозирования, Academia, М., 1999.

[14] *Սուքիասյան Հ.* Տեղեկատվական հասարակության հայեցակարգի ձևավորման տեսական նախադրյալները, Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, 2/35/, Երևան 2008:

ԳԼՈՒԽ 1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Քաղաքական իշխանության հասկացությունը և հիմնական հայեցակարգերը

Իշխանության ձգտումը և նրան ենթարկվելու պատրաստակամությունը մարդկային գիտակցության նախաձևերից են, առանց որոնց դժվար կլիներ պատկերացնել մարդկանց ցանկացած համակեցության ձևավորման գործընթաց: Իշխանության նկատմամբ հասարակության վերաբերմունքը բնութագրվում է ոչ միայն նրան աջակցություն ցուցաբերելով և համերաշխությամբ, այլև՝ անհամաձայնությամբ, բողոքով, դիմադրությամբ, ինչը լիարժեքորեն ներառվում է արդի ժողովրդավարության ընկալման համատեքստում: Հասարակության մեջ քաղաքական հարաբերությունները զարգանում են երկակիորեն՝ օրինապահություն և անօրինապահություն, համապատասխանություն և անհամապատասխանություն, հնազանդություն և դիմադրություն: Իշխանության կողմից հասարակության արդարացի պահանջն արհամարհելու դեպքում վերջինս իրավունք ունի համարժեք պատասխան տալ իշխանությանը: Այդ բողոքի ինստիտուցիոնալ արտահայտությունն էլ ընդդիմությունն է: Օրինական ընդդիմության առկայությունը ժամանակակից ժողովրդավարության անքակտելի մասն է: Բնական է, որ իշխանության և ընդդիմության կառավարման ձևերի, նրանց էության մասին պատկերացումները փոփոխվում են քաղաքական մշակույթի զարգացման հետ մեկտեղ: Այդ իսկ պատճառով այս գլխում մենք նախ և առաջ կդիտարկենք քաղաքական իշխանության հասկացությունը և հիմնական հայեցակարգերը, իսկ հետո՝ քաղաքական ընդդիմության հասկացությունը և հետազոտության հարացույցները:

Քաղաքական իշխանության երևույթը մարդկությանը հայտնի է դեռևս առաջին պետությունների կազմավորման ժամանակներից: Չնայած այն բանին, որ տարբեր երկրների և գիտական դպրոցների կողմից բազում քայլեր են կատարվել դրա էության, հատկանիշների,

գործառույթների, տեսակների և ձևերի պարզաբանման ու ներկայացման համար, այնուամենայնիվ, քաղաքական իշխանության էության մասին վեճերը չեն դադարել:

Քաղաքական իշխանությունը լայն իմաստով՝ կամքի, հեղինակության, իրավունքի, բռնության և այլ միջոցներով մարդկանց գործունեության, վարքի վրա որոշիչ ազդեցություն թողնելու ունակությունն ու հնարավորությունն է, իսկ նեղ իմաստով՝ քաղաքական տիրապետության և պետական մարմինների համակարգ:[15] Միասնական քաղաքական կամքը բացառում է քաղաքացիների ազատ ընտրությունը, հետևաբար՝ *խոսքը վերաբերում է իշխանության որոշակի ձևերին*: Իշխանությունն ինքնին ոչ վատն է, ոչ լավը, սակայն այն կարող է ողջ հասարակության համար ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքներ: Քաղաքական իշխանության սուբյեկտների շրջանակում ներառվում է ոչ միայն պետությունը, այլև՝ քաղաքական կուսակցությունները, որոշ ստվերային շահագրգիռ խմբեր, որոնք ոչ ակնհայտորեն կարող են հանդես գալ որպես քաղաքական իշխանության սուբյեկտներ: Վերոհիշյալ գործոններն անհրաժեշտ են քաղաքական իշխանության սահմանման համար:

Ներկայումս քաղաքական իշխանության ընկալման վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ հայեցակարգային մոտեցումներ: Դրանցից մեկը՝ դասականը, առաջարկում է միմյանց լրացնող երկու տեսակետներ՝ *ա) ուժային* և *բ) համաձայնության*, որը հիմնվում է համընդհանուր բարիքի սկզբունքի վրա: Այս մոտեցումներն առաջարկվել են դեռևս ժամանակակից քաղաքագիտության նախահայրեր *Պլատոնի* և *Արիստոտելի* կողմից, ովքեր պահանջների բավարարումը համարում էին պետական իշխանության նպատակ: «Պետությունն առաջանում է այն ժամանակ, երբ յուրաքանչյուր ոք միայնակ չի կարողանում բավարարել իր պահանջները, որոնց կարիքը զգում է: Այդպիսով, յուրաքանչյուր ոք ներգրավում է մեկին կամ մի քանիսին իր այս կամ այն պահանջը բավարարելու գործում: Մարդիկ,

---

[15] *Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ա.,* «Քաղաքագիտություն» հանրագիտական բառարան, «Print Master», Երևան, 2004, էջ 145:

ունենալով բազում կարիքներ, միավորվում են, որպեսզի ապրեն համատեղ և օգնեն միմյանց. այսպիսի համակեցությունն էլ անվանվում է պետություն»[16],- գրում էր Պլատոնը: Իսկ նրա աշակերտ Արիստոտելն իր «Քաղաքականություն» աշխատությունում պնդում էր, որ. «Անհրաժեշտ է միավորվել ինքնապահպանման նպատակով»:[17]

Պլատոնն ուշադրությունը սևեռում էր պայքարի, բախման վրա, որոնք, նրա կարծիքով, քաղաքական գործունեության միջուկն են: Նա գտնում էր, որ արդար քաղաքական արվեստը բարեկամներին օգուտ բերելու, իսկ թշնամիներին վնաս պատճառելու արվեստն է:[18] Արիստոտելը, ընդհակառակը, ուշադրությունը կենտրոնացնում էր համընդհանուր համաձայնության վրա, ինչին պետք է միտված լինի քաղաքական իշխանությունը: Քաղաքական գործունեության իմաստը նա տեսնում էր սեփականության և մարդկանց տարաբնույթ անձնական շահերի շրջանակում համաձայնության միջոցով համընդհանուր բարիքի ձեռքբերման մեջ: «Բարեկամական հարաբերությունները պետության մեծագույն բարիքն են, քանզի այդ հարաբերությունների լինելիության դեպքում պառակտումները գրեթե անհնարին են»[19],- գրում էր Արիստոտելը:

Հարկ է նշել, որ ոչ Պլատոնը, ոչ էլ Արիստոտելը քաղաքական իշխանության խնդրով, որպես այդպիսին, չէին զբաղվում. նրանց հետաքրքրում էին պետությունը և քաղաքականությունը:

Իշխանության դասական սահմանումը պատկանում է Թոմաս Հոբսին, ով իշխանությունը բնութագրում է որպես մարդու զորեղություն, որպես մյուսների նկատմամբ նրա գերակայություն: Իսկ մարդու զորեղությունը նա բացատրում է որպես. «նրա՝ հետագայում ինչ-որ տեսանելի բարիքի հասնելու համար անհրաժեշտ միջոցների առկայություն»:[20] Ի դեպ՝ մարդկային ամենամեծ զորեղությունը

---

[16] *Платон.* Государство, Законы. Политик, М., 1998, с. 110-111.
[17] *Аристотель*. Политика. Афинская полития, М., 1997, с. 36.
[18] *Платон*. Указ. соч. с. 73-75.
[19] *Аристотель*. Указ. соч. с. 62.
[20] *Гоббс Т.* Левиафан/ Избранные произведения в 2 томах. Т. 2. М., 1991 с. 63.

համաձայնությամբ միավորված մարդկանց մեծամասնության ուժն է: Հոբսն այն անվանում է գերագույն կամ բացարձակ իշխանություն պետության շրջանակներում: Նա մատնանշում է գերագույն իշխանության հետևյալ հատկանիշները: Գերագույն իշխանությունը կարող է՝

1. ընդունել օրենքներ և դրանք չեղյալ հայտարարել,

2. հայտարարել պատերազմ և կնքել խաղաղություն,

3. քննարկել և լուծել վեճեր,

4. նշանակել բոլոր պաշտոնատար անձանց, ղեկավարներին և խորհրդականներին:

Հոբսը քաղաքական է անվանում այն պետությունը, որտեղ քաղաքացիներն ընտրում են գերագույն իշխանությունն իրենց հայեցողությամբ: Նրա համար քաղաքական իշխանությունը ատրիբուտիվ-սուբստանցիոնալ երևույթ է, ինչպես նաև՝ դաշինքի հիման վրա ստեղծված սուբյեկտ-օբյեկտ հարաբերությունների արդյունք:[21]

Համաշխարհային քաղաքագիտությունում դիտարկում են իշխանության ուժային և փոխհամաձայնության (կոնսենսուսային) մոդելները, ինչպես նաև տարբերակում են իշխանության վերաբերյալ մարքսիստական, վեբերյան և պլյուրալիստական (Տ. Պարսոնս, Ռ. Դահլ) մոտեցումները: Մարքսիստական մոտեցումը հետազոտում է իշխանությունը իշխող դասի տեսանկյունից: Ինչ վերաբերում է վեբերյան մոտեցմանը, ապա այն սահմանում է պետությունը որպես՝ բարձրագույն իշխանությամբ օժտված և ուժ գործադրելու մենաշնորհ ունեցող քաղաքական ինստիտուտ: Իսկ պլյուրալիստական տեսություններն իշխանությունը դիտարկում են որպես՝ ողջ քաղաքական համակարգն ընդգրկող երևույթ: Սակայն դժվար է չհամաձայնել այն քաղաքագետների հետ, ովքեր տվյալ տարբերակումները համարում են պարզեցված: Օրինակ՝ Ռոբերտ Դահլը նշում է, որ քաղաքական իշխանությունը կենտրոնացած է փոքրամասնության ձեռքում, որը նա անվանում է «քաղաքական դաս», սակայն նա պաշտպանում է ազատական ժողովրդավարությունը մարքսիստների հարձակումներից, որոնք ընդգծում էին, որ տնտեսապես իշխող դասը ղեկա-

[21] *Гоббс Т.* Философские основания учения о гражданине, МН., 2001, с.104.

վարում է ամբողջ հասարակությունը:[22] Դահլը ոչ ակնհայտորեն համակարծիք էր նաև Վեբերի այն տեսակետին, ըստ որի՝ միայն պետությունն ունի ուժ գործադրելու լեգիտիմ մենաշնորհ:

Իշխանության ուժային հայեցակարգն ավելի ամբողջական զարգացում է ապրել գերմանական հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչներ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի աշխատություններում: Նրանք պնդում էին, որ որքան անհավասարաչափ է սակավաթիվ ռեսուրսների բաշխումը հասարակությունում, այնքան խորն է տիրապետող և տիրապետվող շերտերի միջև շահերի բախումը: Որքան խորապես են հասարակության մեջ տիրապետվող շերտերն ընկալում իրենց իրական հավաքական շահերը, այնքան ավելի իրատեսական է դառնում այն հանգամանքը, որ նրանք կսկսեն կասկածել սակավաթիվ ռեսուրսների բաշխման ձևերի օրինականության հարցում, և ավելի իրատեսական է դառնում այն, որ նրանք համաձայնեցված կարգով կգնան հասարակության մեջ տիրապետող շերտի, այսինքն՝ քաղաքական իշխանության հետ բացահայտ բախման:

Ըստ Մարքսի՝ իշխանության ուժային հայեցակարգի հիմնական դրույթն այն է, որ քաղաքական իշխանության կողմից իրականացվող «պարտադրված հարկադրանքը», կառուցվածքային բռնությունը միավորում է հասարակությունը: Այս պարագայում «քաղաքական իշխանությունն ուղղակիորեն մի դասի կազմակերպված բռնությունն է մյուս դասին ճնշելու նպատակով»:[23]

Էնգելսը կարծում էր, որ «ցանկացած դասակարգային պայքարում տվյալ պայքարի առաջնային նպատակը քաղաքական իշխանությունն է. տիրապետող դասը պաշտպանում է իր քաղաքական վերադասությունը, որպեսզի հնարավորություն ստանա փոխել

---

[22] *Դահլ Ռ.* 20-րդ դարի հասարակական-քաղաքական մտքի դասականներ. Ժողովրդավարության սահմանները և հնարավորությունները: Ընդհանուր խմբագրությունը և ներածական հոդվածը՝ *Գրիգորյան Հ., Գրիգորյանց Գ.* «Զանգակ - 97», Երևան, 2006:

[23] *Маркс К. Энгельс Ф.* Соч. Т. 4. с. 447.

գոյություն ունեցող օրենքներն իր սեփական շահերին և կարիքներին համապատասխան»:[24]

Իշխանության մարքսիստական հայեցակարգի քննադատությունը, մասնավորապես, Ռալֆ Դարենդորֆի կողմից այն է, որ հետարդյունաբերական հասարակությունում իրար հակադրվում են ոչ թե տնտեսական, այլ կառավարողների և կառավարվողների քաղաքական դասերը: Դարենդորֆը դասը սահմանում է ոչ թե արտադրության և սեփականության, այլ տիրապետության և ռեսուրսների բաշխման տեսանկյուններից:[25] Դարենդորֆի հիմնական դրույթներից է նաև այն, որ սոցիալական դերերի կառուցվածքը միաժամանակ ծնում է և՛ համերաշխություն, և՛ բախումային շահեր: Իշխանության պարագայում նշանակում է, որ այն ձգտում է ոչ միայն ամբողջականության, արժեքների և նորմերի համաձայնության պահպանմանը, այլև ապահինտեգրմանը՝ ծնելով բախումային շահեր և համապատասխանաբար՝ կոնֆլիկտային իրավիճակներ: Ազդեցություն ունեցողը և իշխանության կրողը շահագրգռված է իր ստատուս-քվոյի պահպանման հարցում, իսկ նա, ով չունի ոչ մեկը, ոչ էլ մյուսը, շահագրգռված է ռեսուրսների վերաբաշխման և գործող իրավիճակի փոփոխման հարցերում:

Իշխանության կոնֆլիկտային մոդելի մեկ այլ ներկայացուցիչ Մաքս Վեբերն իշխանությունը սահմանում է որպես՝ սոցիալական հարաբերությունների շրջանակներում ուրիշներին իրենց կամքը թելադրելու ոմանց հնարավորություն՝ հակառակ ցուցաբերվող դիմադրությանը:[26] Նման կերպով նա սահմանում է «տիրապետությունը» որպես մի խումբ մարդկանց հնազանդեցմանն ուղղված հրամանի ի կատար ածման հնարավորություն: Այս սահմանումն ունի հետևյալ առանձնահատկությունները՝ ա) իշխանությունն իրականացվում է անհատների կողմից, ինչի հետևանքով այն ենթադրում է

---

[24] *Նույն տեղում,* էջ 266:

[25] *Дарендорф Р.* Совремменый социальный конфликт. Очерк политики свободы, Москва, 2002. с. 125-127.

[26] *Վեբեր Մ.* 20-րդ դարի հասարակական-քաղաքական մտքի դասականներ. Սոցիալական գործողության ըմբռնումը: Ընդհանուր խմբագրությունը և ներածական հոդվածը՝ *Գրիգորյան Հ., Գրիգորյանց Գ.* «Զանգակ - 97», Երևան, 2005:

ընտրություն, գործունեություն և մտադրություն, բ) այն կապված է միջնորդավորող գործունեության մասին պատկերացման հետ, այսինքն՝ անհատի կողմից ցանկալի նպատակներին հասնելը, գ) իշխանությունն իրականացվում է այլոց նկատմամբ, ինչը կարող է հանդիպել դիմադրության և բախումների, դ) իշխանությունը ենթադրում է շահերի տարբերություն այն անձանց միջև, ովքեր տիրապետում են դրան կամ զրկված են դրանից, ե) իշխանությունը բացասական է. այն հանգեցնում է ենթակաների օտարմանը և նրանց գործունեության սահմանափակմանը:

Վեբերը պնդում էր, որ քաղաքական իշխանությունը հեղինակություն է ձեռք բերում այն ժամանակ, երբ դրա իրականացումը ժողովուրդն ընդունում է որպես լեգիտիմ, ավանդույթներով, օրենքներով և առաջնորդի խարիզմայով արդարացված: Վեբերի մոտեցման վերաբերյալ նկատառումներից մեկն այն է, որ իշխանության գործունեության շեշտադրման և նրա կողմից որոշումների ընդունման ժամանակ տեսադաշտից դուրս է մնում այն հանգամանքը, ըստ որի՝ որոշումներ չընդունելը ևս կարող է լինել իշխանության նախաձեռնությունը: Օրինակ՝ գործելու անկարողությունը կամ գործելուց հրաժարվելը խիստ տարբեր երևույթներ են և կարող են վկայել իշխանության անհավասարության մասին: Իշխանության կրողները կարող են ձևավորել ենթակաների պահանջները կամ շահերը նրանց գիտակցության վրա ազդելու միջոցով, որն էլ ***իրականացվում է քաղաքական խոսույթի միջոցով***:

Իշխանության մեկ այլ հայեցակարգ, որն անվանվում է «համաձայնություն», խրախուսվում է հիմնականում ամերիկյան քաղաքագիտական մտքի կողմից, որում իշխանությունը չի բնութագրվում որպես բախում և հարկադրանք:

Այս հայեցակարգի ներկայացուցիչներից է Տ. Պարսոնսը, ով իշխանությունը սահմանում է որպես հանրույթի նպատակներին հասնելու դրական սոցիալական ունակություն: Հասարակության ամբողջականությունը պահպանվում է ոչ թե այն պատճառով, որ գոյություն ունի իշխանություն, այլ՝ այն, որ դրա առանձին տարրերի և անհատների միջև գոյություն ունի սահմանված նորմերի և արժեքների

շրջանակում գործողությունների փոխանակում, որը բավարարում է նրանց շահերը՝ այդպիսով հաստատելով կարգուկանոն: Այս դեպքում իշխանությունը դիտարկվում է բացառապես «ազդեցություն» և «հարգանք» կատեգորիաների տեսանկյունից: Իշխանությունը քաղաքական ազդեցությունն է, սակայն ի տարբերություն տնտեսական ազդեցության, այն հիերարխիկ է, այլ ոչ թե՝ գծային: Սա վերադասի ազդեցությունն է ստորադասի նկատմամբ: Քաղաքական ազդեցությունը հասարակական հարաբերությունների ողջ համակարգը վերահսկելու հնարավորություն է, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում միջոցների հավաքագրում որոշակի նպատակի հասնելու համար: Պարսոնսը միաժամանակ նկատում է նաև, որ «քաղաքական ազդեցության վերահսկման խնդիրը նախ և առաջ ինտեգրումն է, անհատների և ենթակոլեկտիվների ազդեցության փոխակերպումն օրինականացված իշխանության համակարգում, որտեղ ազդեցությունը լուծվում է կոլեկտիվ պատասխանատվության մեջ»:[27]

Այսպիսով, իշխանությունն իբրև քաղաքական ազդեցություն՝ դիտարկվում է որպես հասարակության մեջ լայնորեն տարածված մի երևույթ, որը կենտրոնացած չէ իշխող էլիտայի ձեռքում: Այս դեպքում քաղաքական համակարգը համարվում է բաց պլյուրալիստական, որը հանրության բոլոր անդամներին հնարավորություն է տալիս որոշակիորեն մասնակցել քաղաքական գործընթացներին:[28] Այս մոտեցման կողմնակիցները մեղադրվում են քաղաքական իշխանության և հասարակության փոխհարաբերությունների բախումային ներուժի թերագնահատման համար:

Վերոհիշյալ երկու մոտեցումները հստակորեն սահմանազատում է Ժ. Մարիտենը: Իշխանությունը որպես հեղինակություն (autority) և որպես հզորություն (power). երկու տաբեր հասկացություններ: Հզորությունն ուժ է, որի միջոցով կարելի է ստիպել մյուսներին ենթարկվել: Իշխանությունը ենթադրում է ուղորդելու և հրամայելու իրավունք հանուն համընդհանուր բարիքի: Իշխանու-

---

[27] *Парсонс Т.* О социальных системах, М., 2002. с. 213.

[28] *Парсонс Т.* О структуре социального действия/ Под ред. В.Ф. Чесноковой и С.А. Белоновского. М., 2000.

թյունը ենթադրում է հզորություն, սակայն հզորությունն առանց իշխանության բռնակալություն է: «Քանի որ իշխանությունը նշանակում է իրավունք, ապա արժե դրան ենթարկվել բանականության սահմաններում, այսինքն՝ ենթարկվել ինչպես ազատ մարդիկ են ենթարկվում հանուն համընդհանուր բարիքի»:[29] Իշխանություն գոյություն չունի այնտեղ, որտեղ չկա արդարություն: Անարդար իշխանությունն ոչ այլ ինչ է, քան անարդար օրենք, այսինքն՝ անօրինություն: Ժողովրդավարության աղբյուրը ոչ թե «միայն ինքդ քեզ ենթարկվելու» ցանկություն է, ինչպես ասել է Ժ.-Ժ. Ռուսոն, այլ՝ ենթարկվելու ցանկություն, քանզի դա արդարացի է:[30]

Եթե իմի բերենք վերոշարադրյալ մոտեցումները, ապա ստացվում է, որ քաղաքական իշխանության էությունը դրսևորվում է անմիջապես երկու ձևով՝ բոլորի դեմ ընդհանուր լեգիտիմ բռնությամբ, օրինական կոնֆլիկտով և բոլորի հետ խաղաղ համակեցությամբ՝ անընդհատ համաձայնություն որոնելով: Քաղաքական իշխանությունը միշտ որոշ միջոցներ է գտնում համընդհանուր բարիք ստեղծելու համար, իսկ հասարակությունը զգում է դրա կարիքը և այդ իսկ պատճառով անհրաժեշտության դեպքում քաղաքական իշխանությանը օժտում է օրինական և լեգիտիմ ուժ կիրառելու հնարավորությամբ:

Կան քննադատներ, ովքեր պնդում են, որ քաղաքական իշխանության նպատակը պետության բոլոր քաղաքացիների համընդհանուր բարիքը չէ՝ նշելով, որ դա ամբողջատիրական, ավտորիտար և սոցիալիստական իշխանությունն է, մինչդեռ անձի ազատությունը և մարդու արժանապատվությունը պաշտպանող քաղաքական իշխանությունն ազատական, ժողովրդավարական իշխանությունն է, որն ավելի է համահունչ արդիականության պահանջներին:[31] Այս դեպքում, խոսքը վերաբերում է համընդհանուր բարիքի հասկացության՝ որպես

---

[29] *Маритен Ж.* Человек и государство, М., 2000, с.119.
[30] *Руссо Ж.-Ж.* Об общественном договоре. Трактаты. Канон-Пресс, Москва, 1998.
[31] *Спиридонова В. И.* Концепция “общего блага” в современной западной науке/ Духовное измерение современной политики, М., 2001, с. 5-38.

իշխանության նպատակի փոխակերպմանը: Համընդհանուր բարիքը շարունակում է մնալ որպես իշխանության գաղափարական հիմք:

Պլյուրալիզմի տեսաբան Էռնստ Ֆրենկելը համընդհանուր բարիքն անվանում է կարգավորող գաղափար, որը քաղաքական վեճում պետք է լինի արդյունավետ:[32] Քաղաքական ուժերի միջև վեճի արդյունքը կարելի է սահմանել որպես համընդհանուր բարիք, եթե այն համապատասխանում է արդար հասարակական կարգի նվազագույն պահանջներին և սուբյեկտիվորեն ոչ մի նշանակալի խմբի կողմից չի ընդունվում որպես բռնություն: Այդպիսով, համընդհանուր բարիքի մասին նախկին և գործող պատկերացումների միջև տարբերությունն այն է, որ մենք մերժում ենք համընդհանուր բարիքի հիմնավորման և հասանելիության ձևի և միջոցների մասին ընդհանուր կարգը:

Իշխանության ընդհանուր հատկանիշների հետ մեկտեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև Արևելքում և Արևմուտքում գոյություն ունեցող դրա հայեցակարգային տարբերություններին, ինչը թելադրված է քաղաքակրթական առանձնահատկություններով: Ուշագրավ է շվեդ գիտնական Ռուդոլֆ Չելենի պնդումն առ այն, թե իշխանության կառուցվածքը և բնույթը համապատասխանում են քաղաքակրթական գենոտիպին: Եթե քաղաքակրթությունը դիտարկենք որպես մեկ կամ մի քանի հասարակությունների կայուն, ինքնավերարտադրվող սոցիալական կազմավորման ձև, որտեղ հասարակության անդամները կապված են համապատասխան քաղաքական, տնտեսական, կրոնական, ընտանեկան, հոգեբանական և իրավական ավանդույթներով, որոնք մի էթնոսից փոխանցվել են հաջորդին երկարատև պատմական գործընթացների արդյունքում, ապա մենք կտեսնենք տարբերություններ նախ և առաջ իշխանության համեմատաբար բաց կամ փակ լինելու, այսինքն՝ դրա էքստրավերտության և ինտրավերտության միջև:

Արևելյան հասարակություններում ապրող մարդը հազարամյակներ շարունակ գոյատևել է խիստ կանոնակարգվող, պարփակված համայնքներում, որտեղ մինչև եվրոպական քաղաքակրթության

[32] *Френкель. Э.* «Двойственное государство», Оксфорд Юниверсити Пресс, Нью-Йорк, 1941.

հետ առնչվելը գործել է հասարակության կազմակերպման միևնույն ձևը: Արևելյան պետություններում, որտեղ գործում էր քոչվոր կամ կիսաքոչվոր կենսակերպը, ձևավորվել էին մարդու ինտրավերտ (ներպարփակված) տեսակը և հասարակական ինստիտուտները, մշակվել էր ինքնամեկուսացման սկզբունքը՝ որպես ազգի գոյատևման և նրա մշակույթի պահպանման ճանապարհ: Այստեղից էլ բխում է տվյալ երկրներում, որպես կանոն, «մեղմ» դեսպոտիան՝ իբրև քաղաքական իշխանության ձև: Եվ որքան մեծ է պետության տարածքը և բնակչության թիվը, այնքան դժվար են այնտեղ ընթանում արդիականացման գործընթացները: Արևմուտքում, որտեղ տարածված էին գյուղատնտեսական բնակավայրերը և տնտեսությունները, որտեղ զարգանում էր քրիստոնեությունը՝ Աստծո հանդեպ մարդու անձնական պատասխանատվության և մեղքի սկզբունքներով, ձևավորվեց քաղաքական իրավունքի հասկացությունը, ինչն էլ թույլ տվեց հասարակությանը վերահսկել քաղաքական իշխանությունը՝ այն դարձնելով էքստրավերտ:

Հարկ է նշել, որ քաղաքական իշխանության ուսումնասիրության վերաբերյալ գոյություն ունեն որոշակի ավանդույթներ, որոնք հատուկ են ազգային քաղաքագիտական դպրոցներին: Այսպես, օրինակ՝ ամերիկյան քաղաքագիտական դպրոցում իշխանության ուսումնասիրությունը ներառում է քաղաքական էլիտայի և քաղաքական լիդերության հասկացությունները, իշխանության տարանջատման սկզբունքների, կառավարությունների հետազոտությունը: Քանի որ այնտեղ իշխանությունն ընկալվում է որպես ազդեցություն, ապա քաղաքագիտությունը չի սահմանափակվում միայն կառավարման համակարգերի հետազոտությամբ: ԱՄՆ-ում գոյություն ունեն հանրույթների քաղաքականության հետազոտության վաղեմի ավանդույթներ: Այդպիսով, իշխանության մասին հարցն այնտեղ տեղափոխվում է քաղաքական մասնակցության հետազոտության ոլորտ, որը ենթադրում է քաղաքական լիդերների ընտրություն և որոշում է պետական քաղաքականությունը կամ նրա նկատմամբ դրսևորվող ազդեցությունը: ԱՄՆ-ում քաղաքական իշխանությունը դիտարկում են որպես ***հարաբերություններ*** (Պ.Շարան. «Իշխանությունը սոցիալ-

հոգեբանական հարաբերություն է, որը փոխպարտավորեցնում է նրանց, ովքեր տիրապետում են իշխանությանը և նրանց, ում վրա տարածվում է այդ իշխանությունը»)[33], որպես ***կառուցվածք*** (Ռ.Միլս. «Իշխող էլիտա՝ ոչ ամբողջությամբ ինտեգրված կազմավորում, քանի որ այն բաղկացած է երեք խմբից՝ վերին ռազմական ղեկավարություն, կառավարող վաշինգտոնյան էլիտա, այսինքն՝ քաղաքական էլիտա և տնտեսական էլիտա»)[34], որպես ***գործառույթ*** (Տ.Պարսոնս. «Իշխանությունը հասարակության ռեսուրսների հավաքագրումն է առաջադրված նպատակներին հասնելու համար, որը ճանաչվում է ողջ հասարակության կողմից»)[35], որպես ***գործիք*** (Կ.Դոյչ. «Իշխանությունը կարելի է ընկալել որպես բոլոր արժեքների ձեռքբերման գործիք»):[36] Այս բոլոր մոտեցումներն արտացոլում են իշխանական հարաբերությունների տարբեր կողմերը, որոնցից էլ բխում է քաղաքական իշխանության էության նկարագրությունը: Այս ամենի վրա իր ազդեցությունն է գործում նաև քաղաքական խոսույթը:

Ուշագրավ է նաև 70-ական թթ. լեհ քաղաքագետ Եժի Վյատրի կողմից առաջարկված քաղաքական իշխանության սահմանման գիտական մոտեցումների դասակարգումը, որտեղ տարբերակվում են վեց ուղղություններ՝ 1. բիհեվիորիստական (իշխանությունը սահմանում է որպես վարքագծի հատուկ ձև, որը փոխում է մյուսների վարքագիծը), 2. թելեոլոգիական՝ (բնութագրում է իշխանությունը որպես որոշակի նպատակների հասնելու միջոց), 3. գործիքային (իշխանությունը դիտարկում է որպես որոշակի միջոցների օգտագործման հնարավորություն), 4. կառուցվածքային (իշխանությունը համարում է կառավարողի և կառավարվողի միջև հատուկ հարաբերություններ), 5. կոնֆլիկտային (իշխանությունը ուղորդում է դեպի որոշումներ ընդունելու հնարավորությունները, որոնք կարգավորում են բարիքների բաշխումը կոնֆլիկտային իրավիճակներում), 6. իշխանությունը

---

[33] *Шаран П.* Сравнительная политология, Ч.1. М., 1992.
[34] *Миллс Р.И.* Властвующая элита, М., 1959.
[35] *Парсонс Т.* О структуре социального действия/ Под ред. В.Ф. Чесноковой и С.А. Белоновского. М., 2000.
[36] *Deutsch, K.* Politics and Government, How People Decide Their, Fate Houghton Mifflin Company, Boston, 1980.

սահմանում է որպես ուրիշների նկատմամբ ազդեցություն, երբ նրան, ում հրամայում են, պարտավոր է հնազանդվել:[37]

Իմի բերելով վերոհիշյալ մոտեցումները՝ մենք կարող ենք տալ քաղաքական իշխանության հետևյալ սահմանումը՝ քաղաքական իշխանությունը սուբյեկտի (անհատի, խմբի, կազմակերպության, կուսակցության, պետության) ունակությունն է պարտադրել իր կամքը ուրիշին, կարգադրել և կառավարել ուրիշի գործողությունները հարկադրանքի կամ համոզման մեթոդներով:

ԱՊՀ-ում քաղաքագիտական մտքի ձևավորման ազդակները հիմնականում բխում են Արևմուտքից, և հետազոտողներն ու պետական համակարգերը բավական մեծ աշխատանք են կատարում այդ գիտելիքների յուրացման և համակարգման համար:

Այս տեսանկյունից կարևոր է նաև դիտարկել քաղաքական իշխանության վերաբերյալ ԱՊՀ որոշ առաջադեմ հետազոտողների դիրքորոշումները:

Քաղաքական իշխանության տեսության ռուս հետազոտող Վ. Մակարենկոն կարծում է, որ իշխանության էության ուսումնասիրության մասին արևմտյան ազատական մոտեցումները ոչ լիարժեքորեն են համոզիչ:[38] Այս դեպքում ռուս հետազոտողը հեռանում է իշխանության և տիրապետության վեբերյան դասական մոդելից, որի համաձայն՝ քաղաքացիների կողմից իշխանության ձևավորման ընկալման և դրա աղբյուրների վերաբերյալ գոյություն ունեն երեք ձև՝ ռացիոնալ-իրավական (օրինական), ավանդական և խարիզմատիկ: Եթե նշված հիմքերը սկսում են տատանվել, ապա իշխանության համակարգը փլուզվում է: Մակարենկոյի կարծիքով որոշ հեղինակներ (Ա. Պատրուշև, Մ. Լևինսոն)[39] գտնում են, որ քաղաքական իշխանության վեբերյան հայեցակարգը կարող է բացատրել քաղաքական գործընթացների բնույթը, դրանց ժամանակակից վերափոխություն-

---

[37] *Вятр Е.* Социология политических отношении, М., 1979, с.158.

[38] *Макаренко В.* Русская власть: (теоретико-социологические проблемы), Ростов-на-Дону, 1998, с. 447.

[39] *Патрушев А.*“Расколдованный мир” Макса Вебера. М., 1991; *Левинсон А. Г.* Термин “бюрократия” в российских контекстах / Вопросы философии. № 7-8, 1994.

ները, սակայն նրանք ուշադրության կենտրոնից բաց են թողնում այն, որ լեգիտիմ իշխանության վեբերյան հայեցակարգը «բնական իրավունքի» և «հասարակական դաշինքի» դասական ազատական տեսությունների զարգացման փորձ է, և ազգային հզոր պետության ձևավորման պայմաններում իշխանության և քաղաքացիների միջև հարաբերությունների նկարագրության համար դրա կիրառումն անտեղի է դառնում: Ավելին՝ «վեբերյան հայեցակարգը որպես իշխանության տեսություն լիովին կեղծ է»:[40] Մակարենկոյի կարծիքով իշխանության տեսությունը պետք է բացատրի իշխանության և քաղաքացիների միջև հարաբերությունների բնույթը, էությունը և զարգացումը:

Ըստ Մակարենկոյի՝ իշխանական հարաբերությունները գոյություն ունեն տնտեսական և հոգևոր տիրապետության հարաբերությունների հետ զուգահեռ: Եթե այս դեպքում կիրառենք ստուգման չափանիշները, ապա Վեբերի տեսության դասական օրինակ կարելի է համարել խորհրդային իշխանության համակարգը, քանզի այս դեպքում տնտեսական և հոգևոր իշխանությունները ենթարկվում էին քաղաքական տիրապետությանը: [41]

Մեկ այլ հայտնի ռուս քաղաքագետ Ա. Սոլովյովը առաջարկում է քաղաքական իշխանության հետևյալ սահմանումը. «Քաղաքական իշխանությունը ներկայացնում է նորմատիվորեն և ինստիտուցիոնալորեն ամրակցված սոցիալական հարաբերությունների համակարգ, որտեղ տվյալ հարաբերությունները ձևավորվում են այս կամ այն խմբի գերակայությամբ, և որտեղ գերակայող խումբն իր անդամների շահերին համապատասխան կամովին բաշխում է հասարակական ռեսուրսները նրանց միջև»:[42] Նրա կողմից կատարված քաղաքական իշխանության վերլուծության արդյունքում պարզվում է, որ իշխանությունը պոլիսուբստանցիոնալ, ընդհանուր սոցիալական, խմբային և

---

[40] *Макаренко В.*Русская власть: (теоретико-социологические проблемы), Ростов-на-Дону, 1998. с. 81-82.

[41] *Նույն տեղում:*

[42] *Соловьев А.* Политология: Политическая теория, политические технологии: Учебник для студентов вузов. Аспект Пресс, М., 2000.

անձնակամայական, բազմաստիճան, լեգիտիմությամբ և ոչ լեգիտիմությամբ չափվող, արտաքին գործոններին դիմակայող երևույթ է:

Հարկ է նշել, որ 20-21-րդ դարերում քաղաքական իշխանության գաղափարը փոփոխություններ է կրել մի քանի ուղղություններով՝ 1. պատժամիջոցներ կիրառելու իրավասություն ունեցող մարդու կամքի արտահայտումից մինչև նրա կամքի՝ որպես համոզման արհեստական ձևի արտահայտում, 2. մեծ սահմանափակումներ դրվեցին իշխանության սուբյեկտի գործունեության վրա, որոնք ստեղծվեցին իշխանության օբյեկտների կողմից, որպեսզի քաղաքական լիդերները գործեն այդ սահմանափակումների շրջանակներում, 3. իշխանությունը սկսեց դիտարկվել փորձի և պրակտիկայի տեսանկյունից, 4. իշխանության վարկը սկսեց մեկնաբանվել որպես իրական իշխանությունից տարբերվող մի երևույթ: Այս ամենին մեծ մասամբ նպաստեց համաշխարհային հարաբերությունների համակարգի գլոբալացումը՝ տնտեսականից տեղեկատվական, տեխնոլոգիականից հաղորդակցական հեղափոխությունների անցումը: [43]

Քաղաքական իշխանությունը, ինչպես ցանկացած հանրային կազմավորում, ունի անփոփոխ երկակի օբյեկտիվ-սուբյեկտիվ բնույթ: Դրա լինելը պայմանավորված է սոցիալական բուրգի գագաթին գտնվող խմբերի շահերով, որոնք կազմում են իշխանությունը, որի մասին պատկերացումը հասարակության մեջ ձևավորվում է ժողովրդի գերակայող պահանջներով և իշխանության հետ շփման արդյունքում այդ պահանջների բավարարման աստիճանով: «Ցանկացած պետություն իրենից ներկայացնում է ինչ-որ հաղորդակցություն, ցանկացած հաղորդակցություն ձևավորվում է ինչ-որ բարիքի համար»:[44]

Այս պատկերացումն ամրապնդվում է ԶԼՄ-ների օգնությամբ, որոնք էլեկտրոնային և ժամանակակից քաղաքական տեխնոլոգիաների միջոցով ստեղծում են իշխանության բավականին տպավորիչ պատկեր:

---

[43] *Шаран П.* Сравнительная политология, Ч.1. М., 1992, с. 95.
[44] *Аристотель.* Политика. Афинская полития, М., 1987, с. 35.

20-րդ դարի իշխանության ավանդական մոդելի հետստրուկտուրալիստական քննադատության վառ ներկայացուցիչներից է Միշել Ֆուկոն: Իշխանությունը նրա համար բացասական ճնշիչ ուժ չէ, «այն ճնշում է մեզ ոչ միայն որպես ուժ, որն ասում է «ոչ», այլև՝ ազատում է. այն հաճույք է պատճառում, տալիս է գիտելիք, ձևավորում է քաղաքական խոսույթ»:[45] Ֆուկոյին հետաքրքրում են իշխանության տեխնոլոգիաները, որոնք մարդկանց վերահսկելու համար հենվում են նոր գիտելիքների և միջոցների վրա: Իշխանությունը ինչ-որ բանի հասնելու յուրահատուկ մեխանիզմ է, «այն գործողությունների օգնությամբ որոշակի գործողությունների փոփոխման միջոց է»:[46] Ֆուկոն իշխանությունը չի դիտարկում որպես սուբյեկտ-օբյեկտ հարաբերություններ: Իշխանությունը ինչ-որ մեկի ձեռքում չէ, այն չի յուրացվում ինչպես ապրանքը կամ հարստությունը: Անհատները կամազուրկ և ամեն ինչի համաձայն էակներ չեն: Իշխանությունը ձևավորող անհատները միևնույն ժամանակ նրա շարժիչ ուժն են: Ահա թե ինչու իշխանությունը զավթում է ամենը և բխում ամենքից:

Ի տարբերություն իշխանության հոբս-մարքս-վեբերյան հայեցակարգի՝ Ֆուկոյի հայեցակարգը կարևորում է իշխանության գաղափարը ազատ սուբյեկտների վրա, որոնք ունեն ընտրության հնարավորություն, ինչպես նաև վարքագծի, արձագանքման և գործողության մի քանի տարբերակներ: Նրա կարծիքով իշխանությունը ոչ թե պաշտոնյաներն են, պետությունը և պետական կառավարման մարմինները, այլ՝ իշխողների և իշխվողների հարաբերությունների հակամարտության արդյունքը, ինչը նշանակում է, որ իշխանական հարաբերությունները միշտ *դառնալի* են, այսինքն՝ ենթակա են փոփոխման: Այստեղից էլ բխում է քաղաքական ընդդիմության գաղափարը որպես *իշխանական հարաբերությունների կարգավորման տեխնոլոգիաների քննադատություն*:

---

[45] *Foucault M.* Truth and Power/Power/Knowledge: Selected Interviews and Other Writings, 1972-1977. N.Y. 1980, p. 119.
[46] *Foucault M.* The Subject and Power/Power: Critical concepts.Vol. 1. L., 1994, p. 227.

Ընտրության գաղափարը գոյություն ունի նաև Ֆրանկֆուրտյան գիտական դպրոցի ներկայացուցիչների հայեցակարգերում: Նրանց ամենագլխավոր դրույթն այն է, որ *իշխանությունը հաղորդակցության արդյունք է*: Իշխանության դիտարկման նման մոտեցումն առաջացել է 20-րդ դարի կեսերին հոբս-մարքս-վեբերյան մոտեցման դեմ պայքարում: Ֆրանկֆուրտյան դպրոցի հետևորդ Հաննա Արենդտի կարծիքով իշխանությունն առանձին սուբյեկտի սեփականությունը կամ հատկանիշը չէ, այլ՝ բազմակողմ ինստիտուցիոնալ հաղորդակցություն: Արենդտը տարբերակում է ուժը և իշխանությունը: Բռնությունը միշտ անձնավորված է, մինչդեռ իշխանությունը ձևավորվում է բազմաթիվ մարդկանց կողմից: Իշխանության իր մոդելում նա ներառում է մարդկանց փոխազդեցության և փոխկախվածության հանգամանքները: Ինչպես նշում է Արենդտը. «Ուժն այն է, ինչին ի բնե որոշակիորեն տիրապետում է ցանկացած մարդ և ինչն իրականում կարող է համարել իր սեփականը, իսկ իշխանություն, էապես, ոչ ոք չունի. այն առաջանում է այն ժամանակ, երբ մարդիկ սկսում են գործել միասին, և այն կորչում է այն ժամանակ, երբ մարդիկ սկսում են գործել առանձին»:[47] Ուժը դառնում է իշխանություն ձեռք բերելու առիթ, իսկ իշխանությունը ծագում է մարդկանց հաղորդակցության պահին: Այն չի ստեղծում նյութական բարիքներ, սակայն ազդում է մարդկանց գործունեության վրա: Իշխանությունն առաջանում է համատեղ գաղափարներից ու ցանկություններից և վերանում է, երբ կորչում է դրանց միջև ընդհանրությունը:

Այսպիսով, Հ. Արենդտի կարծիքով իշխանությունը, որպես լեգիտիմ կազմավորում, կարող է ընդունվել միայն հասարակության կողմից նրա հեղինակության ճանաչման դեպքում: Հենց իշխանության հաղորդակցական ընկալումն է վեր հանում իշխանության չարաշահման հնարավոր աղբյուրները: Հաղորդակցությունը ենթադրում է շփման կողմերի հավասարություն, երբ չպետք է լինի չափազանց շատ իշխանություն կամ հնազանդություն: Այստեղից էլ բխում են իշխանության հաղորդակցության նորմերը՝ փոխադարձություն,

[47] *Arendt H.* Communicative Power *II* Power Ed. by S.Lukes, New York, 1968, p.194.

հավասարակշռություն, հնարավորություն, իշխանության կիրառման չափավորություն:

Այսպիսով, քաղաքական իշխանության հասկացությունը, զարգանալով տարբեր փիլիսոփայական, սոցիոլոգիական և քաղաքական հայեցակարգերում, ունի իր առանձնահատկությունները: Իշխանության վերաբերյալ պատմական մոտեցման տեսանկյունից կարելի է առանձնացնել դրա երկու գլխավոր մոդելները, որոնց էությունը պայմանավորվում է երկատումներով՝ ընդհանուր-մասնավոր, կոլեկտիվ-անհատական, անհրաժեշտություն-ազատություն, բռնություն-համաձայնություն:

Համընդհանուր բարիքի հայեցակարգի հետևորդների (կոլեկտիվիստների) համար իշխանությունը բոլորի համար բարիքի ապահովման արդարացի երաշխիք է, այդ թվում՝ նաև օրինական բռնության կիրառման օգնությամբ որպես բանական անհրաժեշտություն, իսկ քաղաքացու իրավունքների կողմնակիցների (ինդիվիդուալիստների) համար իշխանությունը անհատների ինքնակամ համաձայնության արդյունք է. պայմանով, որ այն պաշտպանելու է նրանց իրավունքներն օրենքի շրջանակներում: Հասկանալի է, որ այս երկու հայեցակարգերը, վերջին հաշվով, իրենցից ներկայացնում են մեր սոցիալականության երկու կողմերը: Մեկն իր ուշադրությունը սևեռում է ընդհանուրի, այսինքն՝ որպես մարդկանց բազմություն համարվող հասարակության վրա, իսկ մյուսը՝ ընդհանուրի մի մասի, այսինքն՝ այդ հանրույթը կազմող առանձին անհատների վրա: Այս հայեցակարգերից յուրաքանչյուրը խթանում է իշխանության քաղաքական կեցության այս կամ այն կողմը որպես՝ սուբյեկտ-օբյեկտ հարաբերություններ անկախ այն բանից, թե դրանք կառուցվում են բռնության կամ թե ինքնակամ համաձայնության հիման վրա: Երկու հայեցակարգերն էլ ընդգծում են իշխանության սոցիալական և միաժամանակ մարդակերպական (անտրոպոմորֆիկ) էությունը՝ մատնանշելով, որ դրա հաստատման հիմքում ընկած են ինչ-որ մեկի գաղտնի կամ բացահայտ պատճառաբանված անձնական կամ խմբային շահերը:

Իշխանության ավանդական «ուժային» սուբյեկտ-օբյեկտ հայեցակարգին որպես հակակշիռ՝ հաղորդակցական հայեցակարգը դիտարկում է իշխանությունը որպես, նախ և առաջ, երկու սուբյեկտների հաղորդակցության արդյունք: Պատահական չէ, որ արդի ժողովրդավարության կենտրոնում առկա է հասարակությունում քաղաքական հաղորդակցության էության և բնույթի մասին հարցը:

Դիտարկելով քաղաքական իշխանությունը որպես հաղորդակցության արդյունք՝ կարելի է եզրակացնել, որ քաղաքական իշխանությունը քաղաքական ընտրություն է, որը կատարում է հասարակությունը կառավարող խմբերի, քաղաքական ուժերի կողմից առաջարկված գաղափարների արդյունքում, որտեղ գործում է քաղաքական խոսույթը: Ժողովրդավարական իշխանությունը ենթադրում է առավելապես երկխոսություն ընդդիմության և հասարակության հետ: Ավտորիտար իշխանությունը ենթադրում է կեղծ երկխոսություն կամ երկխոսության նմանակում, որը միշտ փոփոխվում է, իսկ ամբողջատիրական իշխանությունը նախընտրում է մենախոսություն, այսինքն՝ հաղորդակցական բռնություն:

2. Քաղաքական ընդդիմության հասկացությունը և հետազոտության հարացույցները

«Ընդդիմություն» (opposition) բառը լատիներենից թարգմանաբար նշանակում է հակադրություն, որը ենթադրում է հակազդեցություն՝ որևէ բանին, որևէ մեկին, որևէ տեսակետին:[48] Իշխանության չարաշահումներին հակադրվելը և հակազդելը կազմում են քաղաքական ընդդիմության միջուկը: Քաղաքական ընդդիմությունը սեփական քաղաքականության հակադրումն է այլ՝ սովորաբար պաշտոնական քաղաքականությանը, ինչպես և մեծամասնության կամ տիրա-

[48] *Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ա.,* «Քաղաքագիտություն» հանրագիտական բառարան, «Print Master», Երևան, 2004, էջ 123:

պետող տեսակետի դեմ հանդես գալը:[49] Քաղաքական ընդդիմությունը, ըստ էության, լավ կազմակերպված, քաղաքական ստույգ պահանջներ և ծրագրեր ունեցող սուբյեկտներն են, որոնք միաժամանակ ունեն բարձր այլընտրանքային, բողոքի և բախումային ներուժ՝ ուղղված գործող իշխանության կամ վերջինիս կողմից իրականացվող քաղաքականության դեմ:

Վերջին ժամանակներում քաղաքական ընդդիմության հետազոտությունը ներառվում է քաղաքագիտական նոր ուղղություն համարվող «օպոզիտոլոգիայի»[50] մեջ, որը քաղաքական իշխանության մասին գիտության հետ կազմում է «զույգ», սակայն զիջում է վերջինիս իր գիտական մշակվածության տեսանկյունից: Իհարկե, քաղաքական ընդդիմության վերլուծության համար կարելի է օգտագործել իշխանության հայտնի հայեցակարգերը՝ ուժայինը կամ կոնսենսուսայինը, որոնք դիտարկվել են նախորդ ենթագլխում, սակայն այդ դեպքում քաղաքական ընդդիմության ինստիտուտի գոյության ապացույցը կբխի հակադիր կողմից, և որպես գործող սուբյեկտ՝ առաջնային դիրքում նորից կհայտնվի իշխանությունը, որն էլ կպայմանավորի հասարակության մեջ քաղաքական ընդդիմության գոյությունը կամ նրա բացակայությունը: Ընդդիմության ինստիտուտը հնարավոր է իշխանության ատրիբուտիվ-սուբստանցիոնալ հայեցակարգի պարագայում, սակայն կասկածելի է օրենսդրական տեսանկյունից, քանզի այս դեպքում հաղթում է ուժեղը, որն էլ կառավարում է՝ թելադրելով իր կամքը բոլորին և թույլ չտալով ոչ մի «այլընտրանքային իշխանություն», ինչպիսին կցանկանար լինել ընդդիմությունը: Իշխանության համաձայնության և ռելյացիոն հայեցակարգերի դեպքում ընդդիմության ինստիտուտը ներգրավվում է իշխանական հարաբերությունների համակարգում քաղաքական հաղորդակցության համաձայնեցնող գործընթացների, բանակցությունների և այդ ինստիտուտի

---

[49] *Նույն տեղում:*

[50] *Черняховский С.* Коммунистическая оппозиция в современной России: генезис, противоречивость, перспективы, М., 2007.

օրինականացման արդյունքում: Այս դեպքում ընդդիմությունը բաժանում է հասարակության հիմնական արժեքները և իշխանության հետ կիսում պատասխանատվությունն այն ամենի համար, ինչը տեղի է ունենում իր իսկ գործառույթների կատարման դեպքում, այսինքն՝ պետական քաղաքական ուղու որակյալ քննադատություն և հասարակության առջև գաղափարական այլընտրանքների առաջարկում: Այսպիսի ընդդիմությունը կարելի է անվանել կառուցողական:

Եթե շարունակում ենք իշխանության և ընդդիմության հարաբերությունների վերաբերյալ հաղորդակցական մոտեցման զարգացումը, ապա հնարավոր է դառնում կրկին նշել, որ քաղաքական իշխանությունը քաղաքական ընտրություն է, որը կատարում է հասարակությունը կառավարող խմբերի կողմից առաջարկված գաղափարների արդյունքում: Մինչդեռ քաղաքական ընդդիմությունը համարվում է այլընտրանքային իշխանություն, որը, լինելով քաղաքական փոքրամասնություն, առաջարկում է նոր այլընտրանքային գաղափարներ: Հարկ է նշել, որ քաղաքական փոքրամասնությունը կարող է ներկայացված լինել խորհրդարանում կամ ոչ: Ժողովրդավարական վարչակարգերում այս հանգամանքը պայմանավորվում է բացառապես ընտրություններով, երբ բոլոր քաղաքական ուժերն օրենսդրությամբ իրավունք ունեն փորձել իրենց հնարավորությունները քաղաքական դաշտում:

Հարկ է նշել, որ քաղաքական ընդդիմության հետազոտությունն առանց քաղաքական իշխանության լիարժեք չէր լինի, քանի որ ընդդիմության ինստիտուտը ժողովրդավարական վարչակարգերում ձևավորվում է ընտրությունների միջոցով իշխանության համար պայքարում: Երբեմն էլ քաղաքական ընդդիմությունը ստեղծվում է հենց իշխանության կողմից, որպեսզի լինի կանխատեսելի և կառավարելի: Նման ընդդիմությունն ընդունված է անվանել «**կեղծ ընդդիմություն**»: Այս ամենը հաշվի առնելով՝ մենք առաջարկում ենք քաղաքական ընդդիմության ինստիտուտի հետազոտության մի քանի հարացույցներ:

1. Քաղաքական ընդդիմության հետազոտության հարացույց՝ ***«համընդհանուր բարիք - մասնավոր շահ»*** (ընդհանուր-մասնավոր)

երկընտրանքի միջոցով: Այս հարացույցի միջոցով քաղաքական ընդդիմության հետազոտության դեպքում բախվում են ողջ հասարակության իրավունքի առաջնայնության պաշտպանների և անհատի իրավունքների առաջնայնության պաշտպանների գաղափարները, որոնք տարբեր կերպ են մեկնաբանում իշխանությանը հակադրվելու ինստիտուտի, ինչպես նաև իշխանությանը հակադրվելու միջոցների մասին մոտեցումները:

Հին հույն մտածողները նշում էին այն գաղափարը, որ պետությունում բախումներ լինում են այն ժամանակ, երբ խաթարվում է ազատ մեծամասնության շահերի բավարարման հավասարակշռությունը: Պլատոնը կարծում էր, որ մի խմբի շահերը չպետք է գերակայեն մյուսների նկատմամբ, քանզի հակառակ դեպքում դա պետության ներսում կարող է հանգեցնել տարաձայնությունների: Պլատոնը չէր բացառում, որ պետությունը կարող է ծառայել միայն հզորների շահերին, սակայն այս դեպքում դա ոչ թե նորմալ, այլ կոռումպացված պետություն է:[51] «Պետություն» աշխատությունում նա նշում է, որ հասարակությունը ծագում է պահանջներից, որոնք մարդիկ կարող են բավարարել միայն համատեղ ուժերով՝ աշխատանքի բաժանման սկզբունքով: Պոլիսն իրենից ներկայացնում է օրգանական մի ամբողջություն՝ իր կառուցվածքով, գործառույթներով և շահերով: *Ամբողջի շահերը մասի շահերից բարձր են, սակայն այս կանոնի ճանաչման համար պետությունը պետք է ծառայի ողջ հասարակության շահերին, այլ ոչ թե՝ ինչ-որ խմբի*: Այս պարագայում Պլատոնը տարբերում էր ճիշտ օրենքներ՝ ստեղծված համընդհանուր բարիքի համար և սխալ օրենքներ՝ իշխանությունը զավթած ինչ-որ խմբի շահերի պաշտպանման համար: Պատճառն այն է, որ բոլոր պետություններում կան երկու «կուսակցություններ» կամ «հասարակական շերտեր», որոնք պայքարում են միմյանց դեմ: Դրանք են աղքատները և հարուստները: Նրանցից ոչ մեկը միասնական չէ: *Չարի հիմքը մասնավոր սեփականության մեջ է, որը ստիպում է յուրաքանչյուր քաղաքացու նախ և առաջ մտածել իր անձնական շահերի մասին:* Պլատոնը առաջ է

[51] *Платон.* Государство, Законы. Политик. М., 1998, с. 123.

քաշում դրա պարզեցման ծրագիրը՝ առաջարկելով գույքի ընդհանրության և կոլեկտիվիզմի հիման վրա ձևավորվող *իդեալական պետության* գաղափարը: Այս դեպքում պետական կառուցվածքը պետք է լինի խառը, որտեղ կհամակցվեն ժողովրդավարական և միապետական հիմքերը: Ժողովրդավարական հիմքերն արտահայտվում են ազգային ժողովի գործունեության մեջ, որտեղ ձայների մեծամասնությամբ ընտրվում են ներկայացուցիչներ, իսկ միապետական հիմքերն արտահայտվում են այն հանգամանքներում, որոնց համաձայն ընտրություններն անց են կացվում ըստ արժանիքի և արժանապատվության:[52]

Ինչ վերաբերում է Արիստոտելին, ապա նա ուսումնասիրում է պետական հեղաշրջումների պատճառները բոլոր պետական կառուցվածքների տեսանկյունից՝ օլիգարխիայից մինչև պոլիտիա և նույնպես հանգում է այն եզրակացությանը, որ այդ հեղաշրջումները սկսվում են այն ժամանակ, երբ խախտվում է հարաբերությունների համակարգվածությունը, երբ ինչ-որ մի մաս ավելի մեծ նշանակություն է ստանում, քան՝ ամբողջը (խախտվում է ամբողջականությունը): Արիստոտելը մատնանշում է նաև հեղաշրջումների տնտեսական հիմքերը, երբ շատ քաղաքացիներ չեն տիրապետում միջին եկամուտին, մինչդեռ անհրաժեշտ է ամրապնդել միջին խավը: «Պետական կարգը փոփոխվում է նաև այն դեպքում, երբ պետության հակադիր տարրերը, օրինակ՝ հարուստները և հասարակ ժողովուրդը հավասարվում են քանակապես, իսկ միջին խավը վերանում է կամ դառնում սակավաթիվ»:[53]

Այլ կերպ ասած՝ Պլատոնը և Արիստոտելը ենթադրում էին, որ պետությունում հեղաշրջման և ընդդիմության առաջացման պատճառը հասարակությունում շահերի հավասարակշռության խախտումն է, երբ պետությունը դադարում է հոգալ համընդհանուր բարիքի մասին և պայմաններ է ստեղծում ինչ-որ խմբի շահերի բավարարման համար:

---

[52] *Нерсесянц В.С.* История политических и правовых учений. *Политические и правовые учения в Древной Греции*, Норма, М., 2003, с. 35-36.
[53] *Аристотель*. Политика. Афинская полития, М., 1997, с. 172.

Ամբողջի և մասի հավասարակշռության խախտումը, հավաքական և անհատական կարծիքները, համընդհանուր բարիքի և մասնավոր շահերի հակադրությունը ուսումնասիրվել են նաև Միջնադարում: Ինչպես հայտնի է, միջնադարում իշխում էր կոլեկտիվիզմի գաղափարը, իսկ պետության քաղաքական հարաբերություններում իշխում էր հետևյալ օրենքը. «Այն, ինչ վերաբերում է բոլորին, պետք է արժանանա բոլորի հավանությանը»: Այստեղից էլ հետևաբար սկսում է խախտվել միաձայնության սկզբունքը:

Պատահական չէ, որ միջին դարերում «ժողովրդավարությունը» իր տեսությամբ և գործնականում փոխարինվեց «որակյալ մեծամասնության» հասկացությամբ: Հաստատելով «որակյալ մեծամասնության» սկզբունքը՝ աստվածաբանները և դեկրետիստներն[54] արդարացրեցին հասարակության «լավագույն հիմնական մասի» («major et sanior pars») կառավարման գաղափարը: Նրանք հաստատում էին, որ մարդու բնությունը հակված է տարաձայնությունների: Քանի որ, ավատատիրական հասարակությունում մարդը շրջապատված էր բազմաթիվ պարտավորություններով, ապա գոյատևելու համար նա մտնում էր հիերարխիկ հարաբերությունների մի համակարգ, որն ամբողջությամբ պարուրում էր նրան: Բնականաբար, մասնավորի նկատմամբ ամբողջի առաջնայնության սկզբունքի *կողմնակիցների համար ընդդիմությունը, որը չի ներկայացնում ամբողջ հասարակության կարծիքը, դատապարտվում էր և արգելվում: Նման պայմաններում երկկողմ քաղաքական խոսույթն ուղղակի հնարավոր չէր, քանի որ գործում էր միայն իշխանության կողմից պարտադրված, միակողմանի և համընդհանուր բնույթ կրող քաղաքական խոսույթը:*

Նոր ժամանակներում Գ. Հեգելին պետության իր հայեցակարգում հաջողվեց սինթեզել պետության՝ որպես սուբստանցիոնալ և ամբողջական բարոյական օրգանիզմի, պոլիսի առաջնայնությունը անհատի նկատմամբ պլատոն-արիստոտելյան գաղափարը Ռեֆորմացիայի քրիստոնեության փորձի, ֆրանսիական հեղափոխության, մասնավորապես՝ նրա՝ անհատի իրավունքների և ազատությունների

[54] Լատիներեն *decretum* բառից. կանոնական (եկեղեցական) իրավունքի ուսուցիչներ:

ճանաչման և օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքների հետ:[55] Հեգելի մեկնաբանությամբ պետությունը որպես բարոյական ամբողջություն ոչ թե մեռած, այլ կենդանի օրգանիզմ է: Այդ իսկ պատճառով Հեգելը չի խոսում մի կողմից անհատի, քաղաքացու, իսկ մյուս կողմից՝ պետության ազատության մասին, այլ նշում է օրգանապես ամբողջական ազատության մասին, որը ներառում է առանձին անհատների և կյանքի տարբեր ոլորտների ազատությունը: Հեգելի պատկերացմամբ բանական պետությունը ազատության կազմակերպման այնպիսի ձև է, որտեղ բռնության մեխանիզմը և քաղաքական տիրապետության ապարատը միջնորդավորվում և զսպվում են իրավունքով: Այստեղ է, որ Հեգելն արմատապես տարբերվում է պետության՝ իրավունքի նկատմամբ գերակայության սկզբունքի կողմնակիցներից:

Այսպիսով, համընդհանուր բարիքի կողմնակիցներն իշխանությանը հակադրվելու բոլոր ձևերը համարում էին չարիք, որի դեմ պետք էր պայքարել: Այս հարցին այլ կերպ էին նայում անհատի իրավունքների կողմնակիցները:

Իմանուիլ Կանտին են պատկանում անձի սուվերենության (ինքնիշխանության) և ապստամբելու իրավունքի մասին գաղափարները: Պետության դերը Կանտը տեսնում է ոչ թե քաղաքացիների նկատմամբ խնամակալության, այլ նրանց ազատությունների ապահովման մեջ՝ որպես ընդհանուր սկզբունք բարձրացնելով մարդու իրավունքների հարցը: Նրա կարծիքով ապստամբելու իրավունքը հասանելի չի եղել նախնադարյան հասարակությանը, վայրենիներին, որոնց գլխավոր զենքը պարզ բռնության գործադրումն է եղել:[56] «Բարքերի մետաֆիզիկա» աշխատությունում Կանտը հաստատում է, որ քաղաքացիներն օրինական իրավունք ունեն իրականացնել իրենց անձնական նպատակներն այն միջոցներով, որոնք համարում են լավագույնը: *Ոչ պետությունը, ոչ իշխանությունը չեն կարող քաղա-*

---

[55] *Гегель Г.Ф. В.* Философия права, Мылсь, М., 1990, с. 524.
[56] *Кант И.* Метафизика нравов/Соч. 8, Т. 6, М., 1994, с. 376.

քաղաքացիների փոխարեն որոշել այն, թե ինչն է նրանց երջանկություն բերում: Քաղաքացիներն իրենք պետք է ընտրություն կատարեն:[57]

Կանտը փորձում է պատասխանել նաև այն հարցին, թե ինչու՞ օրենքն ինքնին դեռ չի ապահովում ժողովրդի ենթարկումը տիրակալներին, և ինչու՞ են ժողովրդի և իշխանության միջև տարաձայնություններ առաջանում: Նա համադրում է օրենքների համընդհանրության և քաղաքացիների ինքնավարության սկզբունքները: Սահմանադրական հիմնադրույթները և դրական իրավունքը պետք է արժանանան մասնակից կողմերի աջակցությանը: Գործնականում օրենսդիրը պետք է ձգտի ընդունել այնպիսի օրենքներ, որոնց կաջակցեն բոլոր քաղաքացիները: Այս հարցով է պայմանավորվում օրենքների լեգիտիմության չափանիշը: Միայն այն օրենքները, որոնք բավարարում են այս չափանիշներին, պիտանի են քաղաքացիների միջև հարաբերությունների կարգավորման համար:

Կանտի համար կարևոր էր գտնել կոնֆլիկտների կարգավորման հարցի պատասխանը, որոնք տեղի էին ունենում պետության ներսում և պետությունների միջև: Այդ տեսանկյունից Կանտի իրավունքի փիլիսոփայությունը բովանդակում է մի գաղափար, թե ինչպես կարելի է երաշխավորել անհատի ամենամեծ ազատությունը, որպեսզի այն չխանգարի մեկ ուրիշի ազատությանը: Եվ նա ձևակերպում է իրավաբանական ընդհանուր մի սկզբունք. «Իրավունքը պայմանների ամբողջություն է, որի դեպքում մի անձի կամքը համադրելի է մյուսի կամքին ազատության համընդհանուր օրենքի տեսանկյունից»:[58] Այսպիսին է տարբեր և նույնիսկ հակադիր նպատակներ ունեցող մարդկանց խաղաղ համակեցության հնարավորության գլխավոր պայմանը:

Այսպիսով, *«համընդհանուր բարիք – մասնավոր շահ»* գաղափարների համեմատական վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ համընդհանուր բարիքի կողմնակիցները բացասա-

---

[57] *Нерсесянц В.С.* История политических и правовых учений. *Естественно-правовые учения в Германии,* Норма, М., 2003, с. 316.

[58] *Кант И.* Метафизика нравов в двух частях. Введение в учение о праве. Сочинение в 6 томах. Т. 4, часть 2, М., 1965, с. 139.

բար են վերաբերվում իշխանությանը հակադրվելու (ընդդիմության) գաղափարին, քանի որ դա խախտում է հասարակության մեջ շահերի հավասարակշռությունը, իսկ անհատի իրավունքների կողմնակիցները կարծում են, որ քաղաքացիներն ունեն այդպիսի իրավունք, եթե սահմանափակվում են նրանց ազատությունները, կամ էլ գործում են ոչ կատարյալ օրենքներ:

2. ***Ընդդիմության հետազոտության հարացույց՝ պետության և հասարակության հակադրության միջոցով:*** Այս հարացույցը բնորոշ է Նոր ժամանակներին, երբ սկիզբ առավ ժամանակակից եվրոպական պետականության և ժողովրդավարության գործընթացը: Էտատիստներին, որոնց շարքին կարելի է դասել Ն. Մաքիավելուն, Ժ. Բոդենին, Թ. Հոբսին, միավորում էր այն գաղափարը, ըստ որի պետությունը դիտարկվում էր որպես հասարակության «բնական» քառսին դիմակայող մի ուժ, որը բացառապես դրական արժեք է: «Ցիվիլիստները» ի դեմս՝ Ջ. Լոկի, Շ. Մոնտեսքիոյի, Ի. Կանտի, զգուշանում էին պետության անարխիզմից, այսինքն՝ նրա անսահմանափակ կամայական իշխանությունից: Այդ իսկ պատճառով նրանք փնտրում էին նույնիսկ եթե ոչ բացառող, ապա իշխանության չարաշահման հնարավորությունն առավելագույնս սահմանափակող միջոցներ: Նրանց կարծիքով պետությունը և օրենքները կոչված էին անհատի ազատությունների պահպանման և ընդլայնման համար:

Այս երկու խմբերը չեն բացառում խռովության՝ որպես ինքնավար իշխանության դեմ բողոքի դրսևորման գաղափարը, սակայն առաջին խմբի մոտ այն նշանակում է հաճախ բացասական ընկալում ունեցող հնարավորություն, իսկ երկրորդի մոտ՝ իրավունք: Այս հարցի վերաբերյալ հատուկ դիրքորոշում ուներ արմատական ժողովրդավար Ժ.-Ժ. Ռուսոն, ով, ինչպես և ազատականները, ձգտում էր ապահովել անհատի ազատությունները, սակայն յուրօրինակ կերպով. *հասարակությանը, պետությանը անհատի բացարձակ հնազանդությամբ*:[59]

---

[59] *Нерсесянц В.С.* История политических и правовых учений. *Политико-правовое учение Руссо*, Норма, М., 2003, с. 290-300.

Ուշագրավ են տվյալ խնդրի վերաբերյալ Նոր ժամանակների երկու խոշոր փիլիսոփաներ Ջ. Լոկի և Թ. Հոբսի դիրքորոշումները: Նրանցից յուրաքանչյուրն իրեն ներհատուկ կերպով է գնահատել Անգլիայում տեղի ունեցած վաղբուրժուական հեղափոխությունները: Թ. Հոբսին դասենք «էտատիստների», իսկ Ջ. Լոկին՝ «ցիվիլիստների» շարքին: «Էտատիստը» հիմնավորում է այն գաղափարը, թե ինչու չի կարելի բողոքել պետական իշխանության դեմ, իսկ «ցիվիլիստը», լինելով քաղաքացիական հասարակության կողմնակից, հիմնավորում է այդ բողոքների կարևորությունը:

Թ. Հոբսին է պատկանում այն գաղափարը, ըստ որի՝ բոլոր մարդիկ ծնվում են հավասար ֆիզիկական և մտավոր ունակություններով, և նրանցից յուրաքանչյուրն ունի «իրավունք ամենի նկատմամբ»:[60] Սակայն մարդը խորապես եսասեր էակ է, որի կողքին կան նախանձախնդիրներ, մրցակիցներ, թշնամիներ: Այստեղից էլ բխում է «բոլորի պայքարը բոլորի դեմ» սկզբունքը, իսկ պատերազմի պայմաններում «ամենի նկատմամբ իրավունքը» համազոր է «ոչնչի նկատմամբ ոչ մի իրավունք» հասկացությանը: Սա է մարդկային ցեղի բնական վիճակը: Սակայն մարդն ունի ինքնապահպանման բնազդ, որը խթան է հանդիսանում այդ վիճակի հաղթահարման համար, իսկ բանականությունը հուշում է, թե ինչ պայմաններում է հնարավոր այն իրագործել:[61] Այդ պայմանները բնական օրենքներն են:

Օրինակ՝ 1. անհրաժեշտ է ձգտել խաղաղության և հետևել դրան, 2. հրաժարվել սեփական իրավունքների մի մասից հանուն խաղաղության և ընդհանուր բարեկեցության, 3. մարդիկ պարտավոր են կատարել իրենց կողմից կնքված համաձայնությունները, քանզի հակառակ դեպքում դրանք կկորցնեն իրենց նշանակությունը: Սա արդարության սկզբնաղբյուրն է: Իրենց բովանդակությամբ քաղաքացիական օրենքները նույն բնական օրենքներն են, սակայն դրանք ամրագրված են պետության հեղինակությամբ և հզորությամբ: Հասարակական դաշինքի միջոցով անհատներն իրենց նկատմամբ

---

[60] *Гоббс Т.* Философские основания учения о гражданине, М., 2001, с. 304.
[61] *Նույ տեղում:*

գերագույն իշխանությունը վստահում են ուրիշին (առանձին մարդու կամ խմբի): Պետությունն այն կառույցն է, որն օգտագործում է բոլորի ուժը և միջոցները, քանզի դրանք համարում է անհրաժեշտ նրանց խաղաղության և ընդհանուր պաշտպանության ապահովման համար: Նման դեր ունեցողը համարվում է ինքնիշխան, քանզի տիրապետում է գերագույն իշխանությանը, մինչդեռ մյուսները համարվում են նրա ենթակաները: Հասարակական դաշինք կնքելով և քաղաքացիական կարգավիճակի անցնելով՝ անհատները կորցնում են ընտրված կառավարման ձևի փոփոխման հնարավորությունը, այն է՝ *«գերագույն իշխանությունից ձերբազատվելը»: Նրանց արգելվում է ինքնիշխանի դեմ բողոքելը կամ նրա գործողությունները դատապարտելը:*

Հոբսի գաղափարական հակառակորդ Ջոն Լոկը գտնում էր, որ ժողովրդի ինքնիշխանությունը վերադաս է իր իսկ կողմից ստեղծված պետության ինքնիշխանությունից: *Եթե ժողովրդի մեծամասնությունը որոշում է վերջ տալ հասարակական դաշինքը խախտող երևույթներին, ապա լիովին օրինաչափ է դառնում պետության դեմ ժողովրդի կողմից ազատության, օրենքի, համընդհանուր բարիքի վերականգնման համար բարձրացված զինված ապստամբությունը*:

Ըստ Լոկի՝ մինչև պետության ձևավորումը մարդիկ գտնվում էին բնական վիճակում: Նախապետական վիճակում գոյություն չի ունեցել «բոլորի պայքարը բոլորի դեմ» սկզբունքը: Անհատներն ազատորեն տնօրինում էին իրենց անձը և սեփականությունը: Տիրում էր հավասարություն, որի դեպքում «ցանկացած իշխանություն և իրավունք փոխադարձ էր, ոչ ոք չուներ ավելին, քան մյուսը»: Որպեսզի բնական վիճակում պահպանվեին հաղորդակցության նորմերը, բնությունը յուրաքանչյուրին շնորհում էր օրինազանցներին դատելու և համապատասխան պատիժ սահմանելու հնարավորություն: Սակայն չկային մարմիններ, որոնք անաչառորեն կկարողանային լուծել մարդկանց միջև ծագած վեճերը և իրականացնել մեղավորների պատիժները: Այս ամենը նպաստեց չափավոր կյանքի ապակայունացմանը: Իրենց բնական իրավունքների, հավասարության, ազատության, անձի և սեփականության պաշտպանության ապահովման համար մարդիկ համաձայնեցին կազմավորել քաղաքական ամբող-

ջություն՝ պետություն: Այս պարագայում Լոկն իր ուշադրությունը սևեռում է համաձայնության գաղափարի վրա: «Պետության ցանկացած խաղաղ կազմավորում հիմնվել է ժողովրդի համաձայնության վրա»: Մինչդեռ բռնակալական իշխանության դեմ մարդկանց մնում է պայքարի միայն մեկ միջոց. «դիմել Բարձրյալին», գործադրել ուժ «անարդար և անօրեն ուժի (իշխանության) դեմ»: Ժողովրդի ինքնիշխանությունը, վերջին հաշվով, ավելի բարձր է իր կողմից ստեղծված պետության ինքնիշխանությունից:[62]

Լոկը տալիս է նաև պետական իշխանության չարաշահման ձևերի դասակարգումը՝ զավթում, բռնատիրում և բռնակալություն: Իշխանության զավթումը կարող է լինել արդարացի կամ ոչ արդարացի պատերազմի արդյունք: Արդարացի պատերազմում հաղթողը ստանում է պարտվողների նկատմամբ որոշ իրավունքներ, իսկ նախահարձակը (ագրեսորը) չի կարող վստահ լինել զավթված ժողովրդի հնազանդության և ենթարկվածության հարցում: Լոկը բռնատիրումն անվանում է «տան զավթում», երբ իշխանությունը զավթում է նա, ով դրա իրավունքը չունի: Նա, ով այլ ճանապարհով ինչ-որ մաս է ձեռք բերում իշխանությունից, որը նշված չէ օրենքում, իրավունք չունի, որպեսզի նրան ենթարկվեն. նա չի համարվում այն անձը, որին նշանակել է օրենքը, և, հետևաբար, չի համարվում այն անձը, որին ժողովուրդը տվել է իր համաձայնությունը»: Ի դեպ՝ և՛ նախահարձակը, և՛ բռնատերը կարող են դառնալ լեգիտիմ կառավարողներ: Առաջինը՝ այն դեպքում, եթե կստեղծի կառավարման այնպիսի համակարգ, որը կարժանանա ժողովրդի հավանությանը, իսկ երկրորդը՝ եթե ժողովուրդը, արտահայտելով իր համաձայնությունը, կճանաչի նրա իշխանությունը:[63]

Բռնակալությունը իշխանության չարաշահման ամենից հաճախ հանդիպող ձևն է, որը հանդիպում է գրեթե բոլոր պաշտոնատար անձանց գործողություններում: «Բռնակալությունը իշխանության իրականացումն է անկախ իրավունքից: Այնտեղ, ուր վերջանում է օրենքը,

---

[62] *Локк Дж.* Два трактата о правлении/ Локк Джон. Сочинения: В 3 Т., М., 1988.
[63] *Նույն տեղում,* էջ 377-378:

սկսվում է բռնակալությունը: Եվ եթե իշխանության կրողներից մեկը չարաշահում է օրենքով իրեն տրված իշխանությունը և գործադրում է օրենքով չնախատեսված ուժ իր ենթակայի նկատմամբ, ապա նա դադարում է պաշտոնատար անձ լինել, և քանզի նա այդ կերպ է գործում առանց նման իրավասություններ ունենալու, նրան կարելի է հակադրվել, ինչպես ցանկացած մարդու, ով ուժով բռնանում է ուրիշի իրավունքին»:[64]

Ինչպես նշում է Լոկը. «Իշխանության սահմաններն անցնել իրավունք չունի ո՛չ բարձրաստիճան, ո՛չ ցածրաստիճան պաշտոնատար անձը»:[65]

Այսպիսով, նրանք, ովքեր վախենում են պետության բռնությունից, հանդես են գալիս հանուն հասարակության պաշտպանության համար ընդդիմության իրավունքի հնարավորության, իսկ նրանք, ովքեր զգուշանում են հասարակության անարխիայից, զրկվում են պետության դեմ դուրս գալու իրավունքից: Նման պայմաններում նկատելի են դառնում երկկողմ քաղաքական խոսույթի ձևավորման նախադրյալները, որոնք հիմնվում են քաղաքական պլյուրալիմի գաղափարի վրա:

3. Ընդդիմության հետազոտության հարացույց՝ Ժ.-Ժ. Ռուսոյի և Յ. Շումպետերի ժողովրդավարության հայեցակարգերի համեմատության միջոցով: Ընդդիմության հետազոտության այս ձևը կապված է ժողովրդավարության «կոմունիտարիստական» և «էլիտար» մոդելների ուսումնասիրության հետ: Առաջին դեպքում խոսքը վերաբերում է ընդհանուր կամքին, որն արտահայտում է ընդհանուր շահեր և ձևավորում է համընդհանուր բարիքի հասկացություն և մեծամասնության իրավունք, որը, փաստորեն, բացառում է փոքրամասնության դիմադրությունը, նրա ընդդիմադիր լինելը: Իսկ երկրորդ դեպքում այդ իրավունքը պահպանվում է որպես ընտրողների ձայների համար պայքարի միջոց:

---

[64] *Локк Дж.* Два трактата о правлении/ Локк Джон. Сочинения: В 3 Т., М., 1988, с. 378-379.
[65] *Նույն տեղում,* էջ 380:

Արևմուտքում, որտեղ ընդդիմության հետազոտությունը լայն տարածում ունի, ընդդիմության էական հատկանիշները բխեցվում են ազատական ժողովրդավարության, քաղաքական մասնակցության, ներկայացուցչականության, իշխանափոխության հայեցակարգերից: Դա նշանակում է, որ ազատական կամ ազատ մրցակցության պայմաններում ընդդիմությունն ավելի բնական է և գործուն: Հարկ է նշել, որ միայն ազատական-ժողովրդավարական հասարակություններում հնարավոր դարձավ ընդդիմության հասկացության տեսական իմաստավորումը:

Ի դեպ՝ ի՞նչ ժողովրդավարության մասին ենք խոսում, եթե այսօր աշխարհում հաշվվում է ժողովրդավարության մի քանի տասնյակ ձև, և ինչո՞վ են դրանք տարբերվում միմյանցից: Տեսական առումով կարելի է տարբերակել ժողովրդավարության երկու հիմնական հայեցակարգ: *Ժողովրդավարության դասական տեսությունը,* որը սերում է Պլատոնից և Արիստոտելից և ավարտում է իր ձևավորումը 18-րդ դարի ֆրանսիական լուսավորականության քաղաքական փիլիսոփայության շրջանակում (Ժ.-Ժ. Ռուսո) *գլխավոր է համարում ընդհանուր կամքի օգնությամբ համընդհանուր բարիքի հասնելու գաղափարը: «Մարդիկ մշտապես ձգտում են իրենց բարիքին», և այս հարցում նրանց նպաստում է ընդհանուր կամքը, որտեղ կապակցված են ընդհանուր շահերը*[66]): Այս տեսության համաձայն, եթե համընդհանուր բարիքի գաղափարը դառնում է քաղաքականության առաջատար սկզբունք և կառավարողի ու կառավարվողի միջև հասարակական դաշինքի կնքման պայման, ապա քաղաքական մասնակցությունը սահմանափակվում է ներկայացուցիչների ընտրությամբ, որոնք, իրենց հերթին, ձևավորում են կառավարություն, որն էլ կարգավորում է պետական կառավարման համակարգի գործունեությունը:

Ժողովրդավարության այս հայեցակարգի քննադատներն այստեղ տեսնում են ուտոպիզմի դրսևորում՝ կարծելով, որ բոլոր մարդիկ չեն, որ միանման են ընկալում հասարակական բարիքը և առաջնորդվում են բացառապես բանականության և ռացիոնալության

[66] *Руссо Ж.-Ж.* Об общевтвенном договоре. Трактаты. Канон-пресс, М., 1998, с. 219.

սկզբունքներով, այլ ոչ թե՝ բնազդներով և շահադիտական իղձերով: 19-20-րդ դդ. բուրժուական և սոցիալիստական ժողովրդավարությունների միջով անցնելով և համընդհանուր ազգային կամքի և բարիքի իրականացման յուրահատուկ փորձեր կատարելով՝ մարդկությունը սկսեց փնտրել ժողովրդավարության այլընտրանքային տեսական մոդելներ, որոնցից մեկը Յ. Շումպետերի ներկայացրած մոդելն էր, որը բխում էր այն դրույթից, որ *քաղաքականության բովանդակությունը ոչ թե նախադրյալ է, այլ՝ քաղաքական գործընթացի արդյունք: Ժողովրդավարությունն իրականացվում է ոչ թե համընդհանուր բարիքի և ժողովրդի կամքի սկզբունքներին համահունչ, այլ անհատների գործունեության արդյունք է, որոնք, իրենց քաղաքական ծրագրերին համապատասխան, ընտրողների ձայների համար մրցակցային պայքարում ձեռք են բերում քաղաքական իշխանություն:* Ստացվում է, որ ժողովրդավարության պայմաններում քաղաքականությունը նմանվում է ազատ շուկայի, ուր յուրաքանչյուր ոք կարող է լինել այն, ինչ ցանկանում է, իսկ քաղաքական գործիչները գործում են որպես ազատ ակտորներ արդար մրցակցության պայմաններում: «Ժողովրդավարական մեթոդը քաղաքական որոշումներ ընդունելու ինստիտուցիոնալ կառույց է, որտեղ անհատները ընտրողների ձայների համար մղվող պայքարի միջոցով ձեռք են բերում իշխանություն»:[67] Այս մոտեցումը դարձավ ժողովրդավարության «էլիտար» մոդելի էության արտահայտումը:

Հասկանալի է, որ ժողովրդավարության այս մոտեցումն էլ ունի իր քննադատները, որոնք «արդար» մրցակցային պայքարի և «կատարյալ օրենքների» սկզբունքներում տեսնում են որոշակի ուտոպիա: Այնուհանդերձ, այս երկու մոտեցումներն են, որ թույլ են տալիս ավելի լավ պատկերացնել այլակարծության, հակադրության ինստիտուտ համարվող ընդդիմության տեղը և դերը ժողովրդավարական վարչակարգում:

Ժողովրդավարության վերոհիշյալ հայեցակարգերն անվանվում են նաև՝ ա) *դասական, կոլեկտիվիստական ժողովրդավարություն* և

---

[67] *Шумпетер Й.* Капитализм, социализм и демократия, М., 1995, с. 355.

բ) *մրցակցային ժողովրդավարություն*: Առաջինը հիմնվում է ժողովրդի՝ որպես մեկ ամբողջական երևույթի սկզբունքի վրա, որտեղ յուրաքանչյուր մարդ համարվում է միասնական օրգանիզմի մաս, որը կոչված է ենթարկվելու համընդհանուր կամքին: Երկրորդը հիմնված է այն հանգամանքի վրա, որ պետության մեջ իշխանությունը ձեռք է բերվում բնակչության տարբեր խմբերի միջև քաղաքական պայքարի ընթացքում սահմանված օրինական գործընթացների միջոցով:[68] Ժողովրդավարության այս երկու հայեցակարգերը ներկայացված են տարբեր ձևերով: **Կոլեկտիվիստական ժողովրդավարության** ձևերից են Անտիկ աշխարհի ժողովրդավարությունը, խորհրդային տիպի սոցիալիստական ժողովրդավարությունը, Չինաստանում, Վիետնամում, Կուբայում գոյություն ունեցող ժողովրդավարությունները:

Մրցակցային ժողովրդավարությունն իր զարգացումն է ստացել Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, բազմաթիվ եվրոպական երկրներում, Ճապոնիայում և այլուր: Մրցակցային ժողովրդավարության տեսանկյունից առանձնացնում են հետևյալ ձևերը՝ սոցիալ-ժողովրդավարություն, քրիստոնեական ժողովրդավարություն, համաձայնեցման, էլիտար, պլեբիցիտար (կուսակցական), մասնակցային, պլյուրալիստական, ազատական-պահպանողական, շուկայական, տեղեկատվական և, վերջապես, ամբողջական ժողովրդավարություններ:

Վերոհիշյալ երկու հայեցակարգերն էլ պետության գործերի կառավարման հարցում ժողովրդի անմիջական կամ միջնորդավորված մասնակցության իրավունքը համարում են չափազանց կարևոր: Սակայն ընդդիմության վերաբերյալ նրանց տեսակետները տարբերվում են: Առաջին դեպքում, եթե ձևավորվում է ընդհանուր կամք[69], ապա փոքրամասնության կամքը կորչում է (ժողովրդավարական կենտրոնականության սկզբունք): Երկրորդ դեպքում փոքրամասնու-

---

[68] *Гончаров Д.В.* Теория политического участия. М., 1997; *Бегунов Ю.К. Лукашев А.В., Пондиленко А.В.* 13 теорий демократии, СПб., 2002.

[69] *Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ա.,* «Քաղաքագիտություն» հանրագիտական բառարան, «Print Master», Երևան, 2004, էջ 355:

թյան կարծիքի նկատմամբ վերաբերմունքն ավելի ընդբռնողական է, քանզի ենթադրվում է, որ հավասարության, արդարացիության և ազատության կարգախոսները չեն կարող միայն վերաբերել իշխանության համար պայքարում հաղթանակած քաղաքական ուժերին: Այս դեպքում քաղաքական մասնակցության ոլորտն ընդարձակվում է մինչև ինքնավար իշխանությանը հակադրվելու ժողովրդի իրավունքի ճանաչումը, այսինքն՝ օրինականորեն և լեգիտիմորեն գոյություն ունեցող մշտապես գործող *ընդդիմության ինստիտուտի ճանաչումը*:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մեզ մոտ գործել է խորհրդային տիպի կոլեկտիվիստական ժողովրդավարություն: Այս դեպքում մասամբ հասկանալի է դառնում, թե ինչու է քաղաքական մասնակցության ընդդիմադիր դաշտը ենթարկվում կուսակցական մեծամասնության «հարձակմանը» (2007-2012թթ. Ազգային Ժողովի 4-րդ գումարում, որտեղ ընդդիմադիր քաղաքական ուժերի թիվը խիստ կրճատվեց՝ հասնելով մեկի):

Այսպիսով, ժողովրդավարության կոմունիտարիստական հայեցակարգը բացառում է ընդդիմությունը, իսկ ժողովրդավարության «էլիտար» հայեցակարգը ողջունում է ընդդիմության ինստիտուտը և հնարավոր է համարում ընտրողների ձայների համար պայքարում իշխանության հետ նրա մշտական օրինական մրցակցությունը:

Մեր հետազոտության շրջանակներում հատուկ ուշադրության է արժանանում «կոնսենսուսային ժողովրդավարությունը», որտեղ իշխանության և ընդդիմության հարաբերությունները դիտվում են հասարակության մեջ առկա կոնֆլիկտների լուծման գործընթացներում երկուստեք համաձայնության տեսանկյունից: Կոնսենսուսի սկզբունքը ենթադրում է կարծիքների հաշվառում և հիմնվում է անհատի իրավունքների ճանաչման վրա: ԱՄՆ-ի քաղաքագետների սահմանմամբ. «Կոնսենսուսային ժողովրդավարությունն ազատական-ժողովրդավարական պետությունն է, որը բնութագրվում է ընդդիմադիր ուժերի սակավաթվությամբ, քաղաքական կոնֆլիկտի լուծման

կանոններով և մեխանիզմներով»:[70] Քանի որ Հայաստանի նորագույն քաղաքական պատմությունը վկայում է այն մասին, որ մեր հասարակական կյանքն իրենից ներկայացնում է բազմաբնույթ տարաձայնությունների և կոնֆլիկտների ամբողջություն, ապա մեր կարծիքով կոնսենսուսային մոտեցման արժեքն այն է, որ այդ կոնֆլիկտների լուծումը հնարավոր է միայն քաղաքական հաղորդակցության թափանցիկ գործողությունների միջոցով, որոնց հիմքում ընկած են ընդդիմության հետ մշտական երկխոսություն ծավալելու իշխանության սուբյեկտների պատրաստակամությունը, փոխըմբռնման ձգտումը, համաձայնությունը, քաղաքական փոխզիջումը: Այս դեպքում մեծանում է քաղաքական զարգացումների վրա քաղաքական խոսույթի ազդեցությունը:

4. Ընդդիմության հետազոտության հարացույց՝ իշխանության և քաղաքացիների ազատության իրավական կարգավորման միջոցով: Ընդդիմության հասկացությունը սերտորեն կապված է ազատության հասկացության հետ: Այս հարացույցը հիմնվում է քաղաքական իշխանության և ընդդիմության գործունեության սահմանափակման ընկալման գաղափարի վրա՝ հանուն ընդհանուր քաղաքական ազատության, կայունության և հասարակության ու նրա քաղաքացիների անվտանգության: Այս դեպքում սահմանադրությունը և իրավունքը դիտվում են որպես դրանց սահմանափակման միակ միջոցներ: Սակայն, բացի դրանից ինքնին հասարակությունը, քաղաքացիները և նրանց հանրային-քաղաքական ինստիտուտները պետք է հնարավորություն ունենան վերահսկել պետությունը, իսկ պետությունը պետք է իրավունքի օգնությամբ նրանց տրամադրի այդ հնարավորությունը և սահմանափակի նրանց արմատականությունը:

Այս դեպքում հարկ է հիշատակել Շառլ Լուի դը Մոնտեսքիոյին, ով բարձրացրեց քաղաքական ազատության և արդարության հարցերը: «Օրենքների ոգու մասին» աշխատությունում նա տարբերակում է քաղաքական ազատության վերաբերյալ օրենքների երկու տեսակ՝

[70] *Элдер Н., Томас А., Аптер Д.* Условия достижения консенсуса./ Политология вчера и сегодня. Вып. 1, М., 1990, с. 155.

ա) պետական կարգի (ինստիտուցիոնալ ազատության) մասին քաղաքական ազատության օրենքներ (պետական մարմինները չպետք է չարաշահեն իշխանությունը և գերազանցեն իրենց լիազորությունները), բ) քաղաքացիների նկատմամբ սահմանվող քաղաքական ազատության օրենքներ՝ անձի ազատություն, որը վերաբերում է քաղաքացու անվտանգության սկզբունքին՝ ապահովվելով որակյալ դատական մարմինների և փաստաբանության կողմից: Դրանց համադրության արդյունքում ձևավորվում է չափավոր կառավարում, այսինքն՝ պետական կարգ, որի դեպքում ոչ ոքի չեն ստիպի անել այն, ինչը չի պարտավորեցնում օրենքը և չանել այն, ինչը սահմանված է օրենքով:[71] Քաղաքական ազատություն լինում է միայն այնպիսի «չափավոր պետություններում», որտեղ չկա իշխանության չարաշահում: Բայց քանի որ պատմական փորձը ցույց է տալիս, որ իշխանություն ունեցող ցանկացած մարդ հակված է այն ընդլայնելու, ապա անհրաժեշտ է այնպիսի կարգ, որի դեպքում գոյություն կունենա իշխանության տարանջատում նրա ճյուղերի փոխզսպման սկզբունքով: Եթե օրենսդիր և գործադիր իշխանությունները լինեն միասին, ապա քաղաքական ազատություն չի լինի, կամ էլ հարկ կլինի զգուշանալ այն բանից, որ միապետը կամ խորհրդարանը կսկսեն ընդունել բռնակալական օրենքներ՝ դրանք բռնակալորեն գործադրելու նպատակով: Մոնտեսքիոյի կարծիքով կառավարությունը չպետք է միջամտի օրենսդրական գործընթացին, իսկ ժողովուրդը պետք է հնարավորություն ունենա իր ներկայացուցիչների միջոցով անել այն ամենը, ինչն ինքնուրույն չի կարող: Մոնտեսքիոյի համար սկզբունքային է համարվում ոչ այնքան կառավարման ձևերի բաժանումը հանրապետականի, միապետականի և բռնապետականի, այլ չափավոր և ոչ չափավոր կառավարումը (վերջինի թվին դասում է բռնապետությունը): Ոչ չափավոր կառավարման ցանկացած ձև հակառակ է մարդու բնությանը, որին հատուկ է ազատության հանդեպ սերը:[72]

---

[71] *Montesquieu Ch. de S.* De l'esprit des lois, Gallimard (*Folio*), 1995, 2 vol., p. 256.
[72] *Montesquieu Ch. de S.* De l'esprit des lois, Gallimard (*Folio*), 1995, 2 vol., p. 262.

Այսպիսով, մենք տարբերակեցինք իշխանության հակադրության ինստիտուտ համարվող ընդդիմության հետազոտության չորս հիմնական հարացույցներ: 1. «Համընդհանուր բարիք - մասնավոր շահ» կամ «ընդհանուր - մասնավոր» երկընտրանքի միջոցով ընդդիմության հետազոտության հարացույցը պարզորոշ ցույց է տալիս, թե ինչու համընդհանուր բարիքի կողմնակիցները բացասաբար են վերաբերվում իշխանության հակադրության գաղափարին, քանի որ այն խախտում է հասարակության մեջ առկա շահերի հավասարակշռությունը: Սրան հակառակ անհատի իրավունքների կողմնակիցները կարծում են, որ քաղաքացիներն ունեն նման իրավունք, եթե սահմանափակվում է նրանց ազատությունը, կամ գործում են անկատար օրենքներ: 2. Պետության և հասարակության հակադրության միջոցով ընդդիմության հետազոտության հարացույցը հանդես է գալիս պետության ամենազորության դեմ ընդդիմության իրավունքի միջոցով հասարակության պաշտպանության հնարավորության օգտին, իսկ նրանք, ովքեր վախենում են հասարակության անարխիայից, զրկվում են պետության դեմ դուրս գալու իրավունքից: 3. Ժողովրդավարության երկու հայեցակարգերի («կոմունիտարիստական»՝ Ժ.-Ժ. Ռուսո և «էլիտար»՝ Յ. Շումպետեր) միջոցով ընդդիմության հետազոտության հարացույցը արտացոլում է երկու հակադիր դիրքորոշումներ: Ժողովրդավարության կոմունիտարիստական հայեցակարգը բացառում է ընդդիմությունը որպես ընդհանուր կամքը խախտող երևույթ, իսկ ժողովրդավարության «էլիտար» հայեցակարգը ողջունում է ընդդիմությունը և հնարավոր է համարում ընտրողների ձայների համար պայքարում վերջինիս՝ մշտական բնույթ կրող օրինական մրցակցությունն իշխանության հետ: 4. Իշխանության և քաղաքացիների ազատության իրավական կարգավորման միջոցով ընդդիմության հետազոտության հարացույցը ապացուցում է միանձնյա իշխանությանը հակադրվելու համար ժողովրդի օրինական իրավունքի անհրաժեշտությունը նախ և առաջ՝ խորհրդարանի միջոցով:

Այս հարացույցներից յուրաքանչյուրն առանձնահատուկ կերպով է բնութագրում ընդդիմության ծագումը և հնարավորություններն իշխանության հետ փոխհարաբերություններում: Սակայն, յուրաքանչ-

յուր դեպքում գոյություն ունեն երեք գործոններ (անձ, հասարակություն, իշխանություն), որոնցով պայմանավորված է ընդդիմության գործունեության ամրապնդումը: Վերոհիշյալ հարացույցներից յուրաքանչյուրը հիմնվում է երկու հիմնական հասկացությունների վրա՝ մի կողմից կոնֆլիկտի, իշխանության և հասարակության միջև (մասնավորապես՝ ընդդիմության հետ) պայքարի, իսկ մյուս կողմից՝ նրանց միջև դաշինքի վրա, որն էլ ենթադրում է իշխանության և ընդդիմության միջև ***քաղաքական խոսույթի լինելիությունը***:

3. Քաղաքական խոսույթը և դրա դրսևորման ձևերը

Հասարակական հաղորդակցության կարևորագույն միջոցներից մեկը լեզվական հաղորդակցությունն է, որը տեղի է ունենում միջանձնային խոսքային հաղորդակցության ինչպես բանավոր, այնպես էլ՝ գրավոր մակարդակներում: Լեզվական հաղորդակցության բանավոր և գրավոր ձևերը, իրենց հերթին, արտահայտվում են խոսքի բովանդակային միավորում, այսինքն՝ խոսույթում:

Խոսույթը սահմանվում է որպես տվյալ տեքստի բաղկացուցիչ համարվող լեզվական միավորների բովանդակային ամբողջություն:

Խոսույթը ձգտում է իր բովանդակության մեջ արտացոլել հաղորդակցության պահին մարդուն շրջապատող իրավիճակը, և, ամենակարևորը՝ ապահովել այդ իրավիճակի դինամիկ ամբողջականությունը:

Խոսույթը բաղկացած է ամբողջական նախադասություններից և նախադասության մասերից, իսկ նրա բովանդակությունը ոչ միշտ, սակայն հաճախ կենտրոնանում է որոշակի «հենակետային» ընդհանուր հասկացության վրա, որը անվանվում է «խոսույթի ուսումնասիրության նյութ»:

Առանձին նախադասությունները իրենց միասնական տրամաբանական բովանդակությամբ անվանվում են «պրոպոզիցիաներ», որոնք կապակցված են տրամաբանական հանգույցներով (կապեր, շաղկապներ) և այլն: Այսպիսով, խոսույթի ուսումնասիրու-

թյան ժամանակ մեկնաբանողը ձեռնամուխ է լինում ներտեքստային տարբեր հանգույցների կապակցմանը՝ կրկնաբանական, իմաստաբանական (հոմանիշների և հականիշների) կապերին, սահմանում է արտաբերման թեման և այն, ինչն արծարծվում է տվյալ թեմայում:

Տեքստի նման մեկնաբանության ժամանակ մեկնաբանողը «վերականգնում է» տվյալ խոսույթում հեղինակի կողմից «կառուցված» գաղափարային աշխարհը, այսինքն՝ այն բովանդակությունը՝ միտքը, որը պարփակված է տվյալ համատեքստում: Այդ գաղափարային աշխարհն իր մեջ ներառում է նաև մեկնաբանողի կողմից համատեքստի ուսումնասիրության արդյունքում բացահայտելի մանրամասները և նրա կողմից հետագայում տրվելիք գնահատականները:

Այս հանգամանքից է, որ օգտվում է խոսույթի հեղինակը՝ կարողանալով հասանելի դարձնել իր կարծիքը հասցեատիրոջը: Ցանկանալով ընկալել խոսույթը՝ մեկնաբանողը մի պահ, ինքնաբերաբար, ներթափանցում է այլ գաղափարային աշխարհ: Փորձառու հեղինակը՝ հատկապես քաղաքական գործիչը, միշտ փորձում է այնպես ձևակերպել իր խոսքը, որ այն հետագայում մեկնաբանվելիս հնարավորինս համահունչ լինի իր իսկ կողմից նախանշված և տրամաբանական առումով ստույգ սահմանված համապատասխան ըմբռնմանը, քանզի լեզվի բազմիմաստությունը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ համատեքստի մեկնաբանության ժամանակ, այսինքն՝ տվյալ պարագայում մեկնաբանողը կարող է գիտակցաբար կամ անգիտակցաբար ցուցաբերել սուբյեկտիվ մոտեցում:

Խոսույթի մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև քաղաքական խոսույթի (political discourse) հասկացությանը:

Քաղաքական խոսույթը հիմնված է մարդկանց և նրանց տարբեր խմբերի հավաքական և անհատական պահանջների իրացման վրա: Քաղաքական խոսույթի նպատակը երկխոսությունը չէ:[73] Այս եզրն առաջին անգամ գործածվել է ֆրանսերենում 1789թ.-ից ի

[73] *Мазиев Ю., Сарафанникова Е.* Мифология политического дискурса в современном информационном пространстве, 1999.

վեր՝ հետագայում փոխառվելով և յուրացվելով եվրոպական լեզվաընտանիքի այլ լեզուների կողմից:[74]

Քաղաքական խոսույթի համապատասխան օրինակներ կարող են համարվել քաղաքական գործիչների ելույթները (բանավոր և գրավոր), ԶԼՄ-ների կողմից լուսաբանվող քաղաքական նորությունները, որոնք օժտված են հանրային ազդեցության մեծ ուժով:

Բազմաթիվ տեսաբանների կարծիքով (Լիպման Ու. Շեյգալ Ե. Բուշև Ա. և այլոք) անհրաժեշտ է քաղաքական խոսքը տարբերել սովորական առտնին խոսքից, քանի որ այն օժտված է խոսույթի առանձնահատուկ կառուցվածքով, որը խոսքային խիստ յուրօրինակ հնարքների արդյունք է: [75]

Յուրահատուկ են նաև քաղաքական խոսույթի բանավոր և գրավոր ձևակերպումները, որոնք իրենց մեջ կարող են ներառել բազմաթիվ ճարտասանական հարցեր, ենթահարցեր, որոնք իրենցից ներկայացնում են նաև պատասխաններ (կարծիքներ):

Բանավոր քաղաքական խոսքի ժամանակ նշանակալի է խոսքի հնչերանգի, նրա միջոցով արտաբերվող հեգնանքի, գովերգման, ծաղրի, մտահոգության, սարսափի, տագնապի, կոչի և այլ գործոնների դերը, որը կարող է նվազել և երբերմն նույնիսկ կորչել միևնույն խոսքի գրավոր արտահայտման դեպքում:

Ըստ Դեմյանկովի՝ քաղաքական խոսույթը կարելի է դիտարկել երեք տեսանկյուններից՝ ա) զուտ բանասիրական, ինչպես մյուս տեքստերը, բ) սոցիո-հոգե-լեզվաբանական՝ խոսողի՝ լատենտային կամ ակնհայտ քաղաքական նպատակներին հասնելու արդյունավետությունը որոշելիս, գ) անհատական-հերմենևտիկական՝ խոսույթի հեղինակի կամ մեկնաբանողի որոշակի հանգամանքներում արտահայտած անձնական գաղափարները:[76]

---

[74] *Guilhaumou J.* La langue politique et la révolution française: De l'événement à la raison linguistique, 1989, p. 10.
[75] *Бушев А.* Языковые феномены политического дискурса, 2004.
[76] *Демьянков В.* Политический дискурс как предмет политологической филологии, 2006.

Այստեղից ակներև է դառնում, որ քաղաքական խոսույթի ուսումնասիրությունը հիմնված է գիտության տարբեր ճյուղերի համադրման (զուգորդման) սկզբունքների վրա, որը պայմանավորված է խոսույթի ձևի, նրանում առկա (ներկայացվող) խնդիրների և բովանդակության վերլուծությամբ: Գիտական այս ճյուղերից մեկը՝ քաղաքական բանասիրությունը, ուսումնասիրում է խոսույթի հատկանիշների հարաբերակցությունն այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ «իշխանությունը», «ազդեցությունը», «հեղինակությունը» և այլն: Ի տարբերություն քաղաքագետների՝ բանասերներն այս գործոնները դիտարկում են միայն խոսողի և մեկնաբանողի լեզվական առանձնահատկությունների տեսանկյունից, այնինչ քաղաքագետները փորձում են վերհանել համատեքստում թաքնված ընդհանուր բովանդակությունը: Քաղաքագիտական լեզվաբանությունը նախ և առաջ զբաղվում է քաղաքական խոսույթի շարահյուսական, իմաստաբանական և գործաբանական (պրագմատիկ) շարադրանքի վերլուծությամբ, ինչպես նաև՝ խոսույթի մեկնաբանության մոդելների մշակմամբ:[77]

Քաղաքական խոսույթի ուսումնասիրությունը քաղաքագիտության մեջ առաջին հերթին ուղղված է քաղաքական գործիչների քաղաքական մտածելակերպի վերլուծությանը լեզվական տվյալների միջոցով, որի իրագործման համար հետազոտողների մի մասն առաջարկում է համատեքստի վերլուծության, իսկ մյուս մասը՝ կոգնիտիվ (ճանաչողական) պատկերավորման մեթոդները:

Համատեքստի վերլուծության մեթոդի նպատակը քաղաքական խոսույթում առկա բառերի և բառակապակցությունների միջոցով ընդհանուր տեքստի բովանդակության ճշմարտանման վերհանումն է, որի արդյունքում կարելի է տեքստի հեղինակի մտածելակերպի և գիտակցության յուրահատկությունների մասին դատողություններ անել:

---

[77] *Januschek F.* Politische Sprachwissenschaft: Westdeutschet Verlag, 1985.

Ինչ վերաբերում է կոգնիտիվ պատկերավորման մեթոդին, ապա այն թույլ է տալիս վերհանել քաղաքական տեքստերում առկա պատճառական (կազուալ) դատողությունները, որոնց հիման վրա հնարավորություն է ընձեռվում եզրակացություններ անել տեքստի հեղինակի մտածելակերպի և գիտակցության վերաբերյալ:

Քաղաքական խոսույթի մասին խոսելիս անհրաժեշտ է նշել նաև խոսույթի հեղինակի կողմից հաճախակի կիրառվող քաղաքական խոսութային հնարքների օգտագործման փաստը, ինչը, ինքնին, որոշակի երանգ է հաղորդում տվյալ խոսույթին՝ այն դարձնելով ավելի գրավիչ: Նման հնարքների օգտագործման շնորհիվ խոսույթի հեղինակը հնարավորություն է ստանում իր խոսքը դարձնել ավելի ազդեցիկ, ընկալելի և նաև փորձում է արծարծել այն հարցերը, որոնք ցանկանում է լսել զանգվածը: Օրինակ՝ իրենց քաղաքական խոսույթում շատ հաճախ հեղինակները կիրառում են հետևյալ հնարքները՝ ճարտասանություն, չափազանցված աբստրակցիա (վերացական հասկացություններ), քննադատություն, «Ես»-ի գերագնահատում, բացարձակ ճշմարտության առարկում և այլն:

Ահա այս հատկանիշներն են, որ ցուցաբերում են քաղաքական խոսույթին ներհատուկ բանավիճայնություն և նրան առանձնացնում են խոսքի այլ ձևերից: Այս բանավիճայնությունն արտահայտվում է բառերի ընտրության ժամանակ, որի շնորհիվ «մարտական գործողությունները» ռազմի դաշտից տեղափոխվում են քաղաքական հարթակ:[78]

Այսպիսով, քաղաքական խոսքի բանավիճայնությունը յուրատեսակ թատերականացված ագրեսիայի դրսևորում է, որի միջոցով խոսույթի հեղինակը կարող է բացասական վերաբերմունք ներշնչել իր քաղաքական հակառակորդների նկատմամբ՝ տալով նրանց բացասական գնահատականներ:

Քաղաքական խոսույթում կարելի է վերհանել հեղինակի կողմից ոչ ակնհայտ և ակնհայտ ձևով տրված գնահատականները՝

[78] *Garsia Santos J.* El lenguaje politico, Madrid 1987, p. 91.

վերլուծելով արտաբերման մի քանի ձևեր՝ պնդումներ և ընդգծված գործելաոճ, հարցերի միջոցով բարձրացվող քողարկված կարծիքներ, քննարկումներ և խնդիրների նկարագրում, հասարակության առջև ծառացած խնդիրների դրական, կառուցողական լուծումների նկարագրում (օր.՝ «Մենք պետք է անենք այս կամ այն բաները»), կամ ժխտական (օր.՝ «Այսպես ապրել չի կարելի»), իշխանության ներկայացուցիչներին ուղղված հարցադրումներ և պահանջներ:

Ինչպես նշում է Բեյլեյը՝ քաղաքական խոսույթի նշանակությունը, դերը կայանում են իր հասցեատիրոջը, այսինքն՝ քաղաքացիներին «քաղաքականապես» ճիշտ գործողությունների և գնահատականների անհրաժեշտության ներշնչման մեջ: Այլ կերպ ասած՝ քաղաքական խոսույթի նպատակը հասցեատիրոջը համոզելը, նրա մոտ քաղաքական համոզմունքներ ձևավորելու և դրանց համար պայքարելու վճռականություն արթնացնելն է:[79]

Քաղաքական գործիչն իր խոսքում հենվում է սիմվոլների վրա, իսկ նրա հաջողությունը պայմանավորվում է այն հանգամանքով, թե որքանով են այդ սիմվոլները ներդաշնակ զանգվածի գիտակցությանը:[80]

Որպես հետևություն՝ կարելի է նշել, որ քաղաքական գործիչը պետք է կարողանա ազդել մարդկանց գիտակցության մեջ իրեն անհրաժեշտ «նպատակակետի» վրա. քաղաքական գործչի կարծիքները պետք է համապատասխանեն իր հասցեատիրոջ, այսինքն՝ քաղաքական խոսույթի «սպառողների» կարծիքներին և գնահատականներին, հետևաբար՝ նա պետք է ներգործի մարդկանց հույզերի, նրանց պարտքի զգացումի և այլ հոգեբանական գործոնների վրա: Ներշնչանքի միջոցով արտաբերվող քաղաքական խոսույթի նպատակն իր լսարանի մտադրությունների, կարծիքների և գործողությունների դրդապատճառների փոխակերպումն է: Միայն հասցեատիրոջ մոտ ուրիշի կարծիքը կամովին ընկալելու ցանկություն արթ-

[79] *Baylay P.* Live oratory in the television age. The language of formal speeches, 1985, p. 104.
[80] *Rathmayr R.* Language of dictatorship, 1995, p. 211.

նացնելու ճանապարհով է, որ քաղաքական խոսույթի հեղինակը կարող է հաջողության հասնել այդ ներշնչման գործընթացում:

Քաղաքական խոսույթի մասին խոսելիս անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել խոսույթի հեղինակի արտահայտած տեսակետների՝ իր իսկ կողմից հաստատակամ պնդման փաստի վրա: Կուսակցական պատկանելիությունը խոսողին պարտադրում է ցանկացած իրավիճակում պաշտպանել կուսակցության գաղափարները, նույնիսկ, եթե դրանք տվյալ ժամանակաշրջանում որոշակիորեն կորցնում են իրենց արդիականությունը:

Իբրև քաղաքական խոսույթի հնարք՝ խոսողը, որպես իր ելույթի անհրաժեշտության հիմնավորում կամ պատճառ, կարող է օգտագործել նաև «պահի թելադրանքի» հանգամանքը: Օրինակ՝ «Ես խոսում եմ ոչ թե այն պատճառով, որ ուզում եմ խոսել, այլ՝ քանի որ այդպես է պետք»:

Ինչպես «ռազմի դաշտում»՝ քաղաքական խոսույթը նպատակաուղղված է հակառակորդի «զինուժի», այսինքն՝ նրա դիրքորոշումների և փաստարկների ջախջախմանը: Քաղաքական բանավեճում հակառակորդի ոչնչացման միջոցներից մեկը նրան ծաղրի ենթարկելն է: Բազմաթիվ տեսաբանների կարծիքով ծիծաղը, առհասարակ, հակառակորդին նվաստացնելու ոչ գիտակցված ցանկություն է առաջացնում: Ի դեպ՝ այս մեթոդը կիրառվում էր դեռևս Հռոմեական Կայսրության ժամանակաշրջանում:

Հարկ է նշել, որ այս վիրավորական ծաղրանքի հանգամանքը հանրության կողմից ընկալվում է միայն քաղաքական արտակարգ, ծայրահեղ և ճգնաժամային զարգացումների դեպքում, մինչդեռ հակառակ պարագայում այն ուղղակի խիստ քննադատության կարժանանար միևնույն հանրության կողմից:

Քաղաքական հակառակորդին վարկաբեկելու համար, որպես ավելի մեղմ հնարք, օգտագործվում է ոչ թե ծաղրի ենթարկելու մեթոդը, այլ՝ վերջինիս սխալական հայացքների մասին խոսելու հանգամանքը: Խոսողի կողմից իր քաղաքական հակառակորդին հասցեագրված բացասական գնահատականները վերջինիս՝ իր հայացքներում սխալական լինելու վերաբերյալ, զանգվածի մոտ նոր

կարծիքի ձևավորման կամ՝ արդեն իր իսկ ձևավորած կարծիքի ամրապնդման լավագույն միջոցներից մեկն է:

Այսպիսով, նպատակահարմար չէ քաղաքական խոսույթը դիտարկել միայն լեզվական տեսանկյունից, քանի որ այդ դեպքում այն կարող է կորցնել իր նշանակությունը և նպատակը, այսինքն՝ քաղաքական խոսույթի միակողմանի դիտարկման պարագայում, ուղղակիորեն, քիչ հավանական են դառնում քաղաքական խոսույթի հեղինակի կողմից իր լսարանին հասցեագրված գաղափարների, նրանցում թաքնված իմաստների, տրամաբանական անցումների վերհանումն ու մեկնաբանումը: Մինչդեռ քաղաքական խոսույթը և նրա դրսևորման ձևերը հանրության քաղաքական կյանքում մեծ կարևորություն ունեն, ինչը ենթադրում է քաղաքագիտության մեջ քաղաքական խոսույթի ուսումնասիրության և վերլուծության անհրաժեշտություն: Քաղաքական խոսույթի ուսումնասիրությունը ոչ միայն լեզվաբանության, այլև քաղաքագիտության արդի խնդիրներից մեկն է, քանի որ մեր օրերում խիստ անհրաժեշտ է դարձել քաղաքական գործիչների խոսքի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա վերջիններիս քաղաքական գործողությունների մասին դատողություններ անելը: Այս պարագայում հարկ է նշել, որ այդ դատողությունները, մասնավորապես՝ նախընտրական քարոզարշավների ժամանակ թեկնածուների հասարակական-քաղաքական ելույթների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում կատարված եզրակացությունները, հետագայում, միանշանակորեն, կարող են քաղաքագիտական կանխատեսումների հիմք հանդիսանալ:

4. Իշխանության և ընդդիմության փոխգործակցության վերլուծության կոնֆլիկտ-խոսութային մեթոդը

Որպես իշխանություն-ընդդիմություն փոխհարաբերությունների ուսումնասիրության միջոց՝ կոնֆլիկտ-խոսութային մեթոդը բխում է քաղաքականության էությունից, որի հիմքում ընկած են տարբեր ակտորների հակադիր շահերը: Այդ ակտորները ներգրավվում են

երկուստեք կոնֆլիկտային հարաբերություններում և, այդ իսկ պատճառով, ստիպված են բանավեճերի, փոխադարձ քննադատության (կոնֆլիկտային խոսույթ), այնուհետև՝ բանակցությունների, «կլոր սեղանների» և համաձայնեցնող բնույթ ունեցող (համաձայնության խոսույթ) այլ միջոցների օգնությամբ այդ իրավիճակներից ելքի ուղիներ փնտրել, որոնք թույլ կտան կառուցողական լուծումներ գտնել առկա խնդիրներին իրենց ինքնուրույնության և հասարակական ամբողջականության պահպանման նպատակով:

Իշխանության և ընդդիմության հարաբերությունների կոնֆլիկտ-խոսութային վերլուծությունը սկիզբ է առնում դիալեկտիկայից և կառուցվածքային ֆունկցիոնալիզմից, քանի որ կոնֆլիկտները հակասության բաց ձևեր են, մինչդեռ քաղաքական խոսույթը գործնականում ապահովում է այդ հակասության կողմերի միջև հաղորդակցությունը: Կոնֆլիկտ-խոսութային մեթոդի առանձնահատկությունն այն է, որ այն հնարավորություն է տալիս միակցել կոնֆլիկտային և խոսութային հարացույցները և այդպիսով՝ հետազոտել իշխանության և ընդդիմության խոսքը և գործը որպես մեկ ամբողջություն:

Կարլ Մարքսի դիալեկտիկան ուղղված է սոցիալական հակասությունների բացահայտմանը և դրանց լուծման համար միջոցների որոնմանը: Կառուցվածքային ֆունկցիոնալիզմը՝ ի դեմս Տոլկոտ Պարսոնսի[81], չբացառելով հասարակության մեջ առկա հակասությունները և կոնֆլիկտները, ուշադրությունը սևեռում է դրանց կայունության, ընտելացման և հավասարակշռվածության վրա: Վերոհիշյալ գաղափարի հիման վրա Ռալֆ Դարենդորֆը ձևակերպում է կանխադրույթների երկու համակարգ և դրանք համադրում:[82] Այս դեպքում նա չի հաստատում, որ իր կողմից առաջարկված դիրքորոշումներից մեկն ավելի ճիշտ է կամ իրական: Ավելին՝ նա գտնում է, որ առաջարկված երկու մոդելներն էլ «վալիդ» են, օգտակար և անհրաժեշտ են սոցիոլոգիական հետազոտության համար: Դրանցից մեկը կարևորում է համագործակցությունը և էվոլյուցիոն փոփոխությունները, իսկ

---

[81] *Парсонс Т.* Функциональная теория изменения/ Американская социологическая мысль: Тексты, М., 1996.
[82] *Дарендорф Р.* Совремменый социальный конфликт, М., 2002.

մյուսը՝ կոնֆլիկտը և ռևոլյուցիոն փոփոխությունները: Փոխգործունեության այս երկու բաղադրիչները՝ համագործակցությունը և կոնֆլիկտը, այս կամ այն չափով մշտապես առկա են հասարակական կյանքում:

Ստորև ներկայացնենք Տ. Պարսոնսի և Ռ. Դարենդորֆի տեսակետները տվյալ խնդրի վերաբերյալ:

Աղյուսակ 1.

Տ. Պարսոնս	Ռ. Դարենդորֆ
1. Յուրաքանչյուր հասարակություն հարաբերականորեն կայուն կառույց է:	1. Յուրաքանչյուր հասարակություն փոփոխվում է: Սոցիալական փոփոխություններն ամենուրեք են:
2. Յուրաքանչյուր հասարակություն լավ ինտեգրված կառույց է:	2. Յուրաքանչյուր հասարակությունում առկա են անհամաձայնություն և կոնֆլիկտ: Սոցիալական կոնֆլիկտն ամենուրեք է:
3. Հասարակության յուրաքանչյուր տարր ունի որոշակի գործառույթ, այսինքն՝ ինչ-որ բան, որը նպաստում է համակարգի կայունությանը:	3. Հասարակության յուրաքանչյուր տարր նպաստում է նրա ապաինտեգրմանը:
4. Սոցիալական կառույցի գործառնությունը հիմնվում է հասարակության անդամների արժեքային կոնսենսուսի վրա, որն ապահովում է կայունությունը և ինտեգրումը:	4. Յուրաքանչյուր հասարակություն հիմնվում է հասարակության անդամների մի մասի կողմից մյուս մասին հնազանդություն պարտադրելու հանգամանքի վրա:

Վերլուծության կառուցվածքային-գործառութային հարացույցը թույլ է տալիս առանձնացնել ուսումնասիրության ենթակա սոցիալական փոխգործունեության տարրերը, որոշել դրանց տեղը և դերը, ինչպես նաև համակարգի գործառնության նշանակությունը, այսինքն՝ սոցիալական գործառույթները: Տ. Պարսոնսի և Ռ. Մերտոնի, ինչպես նաև նրանց հետևորդներ՝ Հ. Սպենսերի և Է. Դյուրկեյմի կարծիքով հասարակությունն անհատների մեխանիկական միավորումը չէ, այլ՝ ամբողջական համակարգ, որտեղ անհատական կապերը, գործողություններն ու հարաբերությունները ձևավորում են նոր համակարգային որակ: Նորմալ զարգանալու համար յուրաքանչյուր համակարգ պետք է ունենա իր գործառնական նախադրյալները:

Պարսոնսն առանձնացնում է չորս գործառնական նախադրյալներ, որոնք ապահովվում են տարբեր ենթահամակարգերով և կառուցվածքային բաղադրիչներով՝ ***ընտելացում*** (այն ապահովում է տնտեսական համակարգը), ***նպատակահաստություն*** (քաղաքական համակարգ), ***ինտեգրում*** (իրավական ինստիտուտներ և սովորույթներ) և ***կառուցվածքի վերարտադրություն և ապահովում*** (սոցիալականացման մարմիններ, կրթական համակարգեր և ինստիտուտներ, արժեքային-նորմատիվային համակարգ):[83]

Որպես իշխանության և ընդդիմության հարաբերությունների բացատրական մոդել՝ կարևոր է ուսումնասիրել յուրաքանչյուր սոցիալական գործողություն որպես համակարգ, որը բաղկացած է երեք մասից՝ կառուցվածք, իրականացման մեխանիզմ և հետևանքներ: ՍԳՀ-ի (սոցիալական գործողության համակարգ) կառուցվածքը ներառում է յոթ բաղադրիչ՝ գործող անձ, գործողության առարկա, գործողության նպատակ, իրավիճակ, պատճառական կողմնորոշում, գործողության միջոցներ կամ գործիք, գործողության մեթոդ: Իրականացման մեխանիզմը սկսում է գործել այն ժամանակ, երբ գործում ներգրավվում են այն ցուցիչները, որոնք առկա են գործողության կրող հանդիսացող օբյեկտի մոտ: Այս դեպքում է, որ նրանց մոտ առաջանում են կապակցված սպասելիքներ: Քանի որ գործողության երկու

[83] *Парсонс Т.* О социальных системах, М., 2002.

մասնակիցներն էլ ունեն սեփական շահեր, ապա պետք է հայտնվի նաև երրորդը՝ գործողության համակարգի գլխավոր տարրը, այսինքն՝ վերջիններիս ձգտումների և գործառույթների տեսանկյունից մեկի կամ մյուսի (երկուսի) դիրքորոշումների փոփոխությունը:

Այս փոփոխությունը կապված է կա՛մ կողմերից մեկի շահերի հետ, կա՛մ վերաբերում է ընդհանուր շահերին: Եթե տեղի չեն ունենում նման փոփոխություններ, ապա չեն բավարարվում սպասելիքները, այսինքն՝ գործողության համակարգը չի գործում, և այն չի կարելի կոչել սոցիալական գործողություն. դա ուղղակի «հպում» է:[84] Այստեղից էլ հետևություն, որ իշխանության և ընդդիմության միջև կառուցողական հարաբերությունների համար շատ կարևոր է, որպեսզի գործողության համակարգը գործի, իսկ հասարակությունը դրանց փոխհարաբերությունների արդյունքում ստանա ցանկալի փոփոխություններ:

Հակասությունների մասին ուսմունքը ձևավորվել է կոնֆլիկտների ընդհանուր տեսության արդյունքում, որը երևան է եկել 20-րդ դարի կեսերին: Որոշակիորեն կարելի է նշել, որ ինքնին կոնֆլիկտների հիմքում ևս ընկած են ընդհանուրի և մասնավորի տարրերը: ***Կոնֆլիկտը ընդհանուր կամ համընկնող շահեր ունեցող առնվազն երկու կողմերի բախումն է, որոնց շահերը տարուղորդված են հակազդեցության պայմաններում:*** Եթե շահերը չլինեին տարուղորդված, և եթե բացակայեր դրանց միջև հակազդեցությունը, ապա կոնֆլիկտ, որպես այդպիսին, չէր առաջանա:

Հարկ է նշել, որ *զարգացման գործողությունից բացի, կոնֆլիկտը հասարակության մեջ կատարում է նաև կայունացնող գործառույթ*: Այս մասին դեռևս նշում էին 19-րդ դարի վերջում ԱՄՆ-ի սոցիոլոգները: Նրանք սահմանեցին հետևյալ կանխադրույթը՝ *կոնֆլիկտը գտնվում է սոցիալական դինամիկայի հիմքում և նպաստում է հասարակության կայունացմանը*: Այս թեզը մասամբ համապատասխանում էր մարքսիստական այն կանխադրույթին, ըստ որի՝ մինչև օրս գոյություն ունեցող հասարակությունների ողջ պատմությունը

---

[84] *Парсонс Т.* Система современных обществ, М., 1997. О структуре социального действия, М., 2000.

դասակարգերի պայքարի պատմությունն է, իսկ ցանկացած դասակարգային պայքար քաղաքական է, այսինքն՝ ուղղված է իշխանության զավթմանը: Իշխանությունը, իր հերթին, հասարակության մեջ նոր հարաբերությունների ստեղծման և ամրապնդման գործիք է: Պրոլետարիատին հարկավոր է իշխանություն, որպեսզի սոցիալական կոնֆլիկտների ծագման պատճառ համարվող մասնավոր սեփականությունը վերածվի հանրայինի, որը կհանգեցնի դասակարգերի վերացմանը: Դասակարգերի վերացման հետ մեկտեղ վերանում է շահագործումը և հասարակության մեջ առկա թշնամանքը:

1894թ.-ին ԱՄՆ-ում սոցիոլոգիայի վերաբերյալ առաջին դասագրքի հեղինակներ Սմոլը և Վինսենտը նշում էին, որ «Սոցիոլոգիան ծնվել է հասարակության բարելավման արդի պահանջից»:[85] Սակայն այդ ժամանակաշրջանի սոցիոլոգները միակարծիք չէին անհրաժեշտ փոխակերպումների բնույթի գնահատման հարցում: Ոմանք հանդես էին գալիս խորը սոցիալական փոփոխությունների՝ «կառուցվածքային բարեփոխումների» օգտին, իսկ ոմանք էլ կողմ էին միայն սոցիալական որոշ տարրերի փոփոխմանը: Սակայն նրանց բոլորին միավորում էր կոնֆլիկտի հանդեպ վերաբերմունքը: Նրանց համակարգերում կոնֆլիկտը հիմնական կատեգորիան էր և նրանց կողմից դիտվում էր որպես սոցիալական կազմակերպման հիմնական և կառուցողական տարր: Սակայն կային նաև հեղինակներ, որոնց ոչ թե հետաքրքրում էր սոցիալական դինամիկան, այլ՝ սոցիալական կայունությունը, ոչ թե կոնֆլիկտը, այլ՝ ինտեգրումը, կառուցվածքի վերարտադրությունը և լարվածության հաղթահարումը: Խոսքը վերաբերում է կառուցվածքային-գործառութային վերլուծության դպրոցի ներկայացուցիչ Տ. Պարսոնսին, ով առաջարկեց այսպես կոչված «համաձայնության սոցիոլոգիա» հասկացությունը, որի հետ ունեցած ստեղծագործական վեճերի արդյունքում ձևավորվեց «կոնֆլիկտների ընդհանուր տեսությունը»:[86] Սոցիալական դինամիկայի կողմնակից-

---

[85] *Small A.W., Vincent G.E.* An Introduction to the Study of Society. American Bank. Co., N.Y, 1994, p. 77.

[86] *Парсонс Т.* О структуре социального действия/ Под ред. В.Ф. Чесноковой и С.А. Белоновского, М., 2000.

ները կարծում էին, որ ցանկացած գործընթաց՝ սոցիալական կամ քաղաքական, երկակի է. այն ներառում է ինտեգրում և ապահինտեգրում, պահպանողականություն և արդիականացում: Չ. Քուլին գրում է. «Որքան շատ ես մտածում, այնքան լավ ես հասկանում, որ կոնֆլիկտը և համագործակցությունն առանձին տարրեր չեն, այլ միևնույն գործընթացի փուլեր, որը ներառում է և՛ մեկը, և՛ մյուսը: Հասարակական կարգը պետք է պատկերացնել որպես տարաբնույթ համագործակցող ամբողջականությունների բազմություն, որոնցից յուրաքանչյուրն իր մեջ պարունակում է կոնֆլիկտային տարրեր»:[87]

Ամերիկացի սոցիոլոգներ Ռ. Պարկը և Է. Բերջեսը նշում են. «Միայն այնտեղ, որտեղ առկա է կոնֆլիկտ, մարդու գիտակցությունը դատողունակ է և բնազդային. միայն նմանօրինակ իրավիճակներում է, որ գոյություն ունեն ռացիոնալ վարքագծի համար անհրաժեշտ պայմաններ»:[88] Ռացիոնալ վարքագիծը մեկնաբանվում էր որպես բանական, որն ունակ էր կանխատեսել կոնֆլիկտային գործողությունների բացասական հետևանքները:

Լուծելով կոնֆլիկտի կառուցողականության և ապակառուցողականության երկընտրանքի հարցը՝ Պարկը դիտարկում է կոնֆլիկտը սոցիալական փոխգործունեության հիմնական տիպերի շարքում, որոնք են՝ մրցակցությունը (գոյության համար պայքար), ձուլումը (ընդհանուր փորձի և ավանդույթների յուրացում), ակկոմոդացիան (բնական ցանկությունների սահմանափակմանը ընտելանալը): Նա կարծում էր, որ սովորական պայմաններում մրցակցությունն անցնում է աննկատ, սակայն ճգնաժամային իրավիճակներում մարդիկ նոր և մտածված ջանքեր են գործադրում, որպեսզի վերահսկեն իրենց համատեղ կյանքի պայմանները: Այդ ժամանակ այն ուժերը, որոնց հետ նրանք մրցակցում են, նույնականացվում են ստույգ անձանց հետ, և մրցակցությունը վերածվում է կոնֆլիկտի: Պարկի կարծիքով մշակութային և քաղաքական կոնֆլիկտի գործառույթը անհատի, հասարակական խմբի համար պայմաններ և հնարավորություններ

---

[87] *Cooley Ch. H.* Social Process. Scribner's Sous, reedition, N.Y, 1998, p. 38.
[88] *Park R. E. Burgess E.W.* Introduction to the Science of Society. Chicago University Press, Chicago, 1991, p. 578.

ստեղծելն է, որոնք նրանց թույլ կտան հարմարվել փոփոխվող իրավիճակներին, գիտակցել և յուրացնել նոր փորձը, ինչը, վերջին հաշվով, ապահովում է նրանց ռացիոնալ վարքագիծը և հասարակական կարգը:[89] Պարկը սահմանում է տեսական և գործնական առումներով մի հետաքրքիր դրույթ, ըստ որի՝ հիմնական քաղաքական խնդիրը երկակի խնդրի լուծումն է, այսինքն՝ ինչպես առավելագույնս պահպանել մրցակցության արժեքները՝ անհատի ազատությունը, մոբիլությունը, նախաձեռնությունը, յուրահատկությունը, և միևնույն ժամանակ հսկողության տակ պահել, տեղայնացնել ուժերը, լարվածությունը, դաժան պայքարը, կրքերը, որոնք ծագում են հասարակության շահերից բխող մրցակցության ժամանակ: Այսպիսով, Պարկը հանգում է հետևյալ եզրակացությանը. «Կոնֆլիկտը նպաստում է ինտեգրմանը, կարգուկանոնի հաստատմանը և հակամարտող խմբերի փոխհնազանդեցմանը»:[90]

Ուշագրավ են կոնֆլիկտի վերաբերյալ նաև մեկ այլ ամերիկացի սոցիոլոգ Լ. Կոզերի եզրահանգումները՝ *1. կոնֆլիկտը ստեղծում է խմբեր, պահպանում է խմբային նույնականությունը, 2. մի խմբի համախմբումը մյուսի շուրջ նպաստում է ողջ համակարգի ամբողջականության ամրապնդմանը՝ սահմանելով նրա մասերի միջև հավասարակշռություն, 3. հասարակությունում, որտեղ մոբիլությունը ինստիտուցիոնալացված է և ձեռք է բերում ոչ թե վերագրված, այլ՝ նվաճված կարգավիճակ, հասարակական խմբերի միջև թշնամանքը համալրվում է խիստ դրական հակումով նրանց նկատմամբ, ովքեր բարձր դիրք են գրավում սոցիալական հիերարխիայում և թելադրում են վարքագծի մոդելները:*[91]

Այս դատողություններից կարելի է եզրահանգել, որ երկու գլխավոր շահերի խմբերի՝ իշխող և ընդդիմադիր կազմավորումների միջև կոնֆլիկտները չեն ոչնչացնում հասարակությունը, *եթե դրանք համակարգային չեն, այսինքն՝ չեն վերաբերում հիմնական արժեքներին,*

---

[89] *Парк Р.* Конкуренция и конфликты/ Вопросы социологии. Вып. 5, 1994, с. 69.
[90] *Park R. E.* The Social Function of War/ American Journal of Sociology, 1941, p. 551-570.
[91] *Козер Л.* Функции социального конфликта. Идея-Пресс, М., 2000, с. 208.

տեղի են ունենում բաց, պլյուրալիստական հասարակությունում և ինստիտուցիոնալացված են: Այս դեպքում քաղաքական ընդդիմությունն իշխանությանը հետ է պահում հապճեպ քայլերից և ընդհակառակը:

Այս դիտանկյունից՝ ժամանակակից Հայաստանի խնդիրն այն է, որ իշխանության և ընդդիմության միջև կոնֆլիկտները տեղի են ունենում քաղաքացիների անավարտ քաղաքական, ազգային և բարոյական ինքնանույնականացման, այսինքն՝ արժեքային ճգնաժամի պայմաններում: Այդ կոնֆլիկտները ոչ բավականաչափ են ինստիտուցիոնալացված, այդ իսկ պատճառով կարող են հանգեցնել ոչ թե կայունացման, այլ հասարակական անկայունության: Այս պարագայում քաղաքական գործիչները պետք է հանգեն այն կարծիքին, որ պետք չէ պայքարել կոնֆլիկտներ նախաձեռնողների դեմ (օր.՝ հանրահավաքների լիդերների), այլ ուղղակի անհրաժեշտ է ինստիտուցիոնալացնել, լեգիտիմացնել, կառուցավորել և նվազեցնել կոնֆլիկտը: Ի՞նչ է դա նշանակում: **1.** ***Կոնֆլիկտի ինստիտուցիոնալացումը*** նշանակում է հակադիր շահեր ունեցող մասնակիցների կողմից միմյանց շահերի ճանաչում, կոնֆլիկտի առարկայի և նպատակի գիտակցում, կողմերի միջև թշնամանքի վերահսկողության անհրաժեշտություն: Ոչ ինստիտուցիոնալացված կոնֆլիկտը անկանխատեսելի է, կրում է տարերային բնույթ և լի է վտանգներով: **2.** ***Կոնֆլիկտի լեգիտիմացումը*** իրավական և այլ նորմերի սահմանումն է, որոնց շրջանակներում կոնֆլիկտը կարող է կարգավորվել: **3.** ***Կոնֆլիկտի կառուցավորումը*** նշանակում է կոնֆլիկտային շահերի կրողների, նրանց ներուժի, շահերի հավասարակշռության, հասարակությունում նրանց հնարավոր ազդեցության բացահայտում: **4.** ***Կոնֆլիկտի նվազեցումը*** կոնֆլիկտի սրության թուլացմանն ուղղված գործողություն է այն հակադրության ավելի ստորին շերտ տեղափոխելու նպատակով, որից հետո պետք է իրատեսական միջոցներ ձեռնարկվեն կոնֆլիկտի լուծման համար: Բացի այդ, հասարակությանն ուղղված բոլոր ուղերձներում անհրաժեշտ է հստակ ձևակերպել այն քաղաքական արժեքները և նպատակները, որոնք կարող են համախմբել ժողովրդին:

Ժողովրդավարության առաջնային պայմաններից մեկը քաղաքական, տնտեսական, սոցիալական պլյուրալիզմն է, որը սկզբնապես ենթադրում է հասարակության մեջ կոնֆլիկտների առկայություն: Ժողովրդավարության խնդիրը, նախ և առաջ, կոնֆլիկտների կառավարումն է: Մարդկությունն այսօր ապրում է քաղաքական կոնֆլիկտների աշխարհում, որոնք բացի բացասական հետևանքներից (հարաբերությունների կայունության և ամբողջականության ոչնչացում), ունեն նաև մի շարք դրական գործառույթներ: 1. Դրանք իրականացնում են նախազգուշացնող-տեղեկատվական գործառույթ՝ իշխանությանը իրազեկում են լուծում պահանջող խնդիրների մասին, 2. իրականացնում են իշխանության ճնշման գործառույթ՝ վերջինիս կողմից իր նպատակների, որոշումների, քաղաքական ուղու վերանայման նպատակով, 3. խթանում են մրցակցությունը և նպաստում քաղաքական դաշտում նոր ուժերի ի հայտ գալուն:

Պլյուրալիստական ժողովրդավարության կողմնակիցներ Ռ. Դահլը, Տ. Պարսոնսը հանդես են գալիս իշխանության և ընդդիմության միջև մշտական քաղաքական խոսույթի առկայության օգտին, նրանց միջև ծագած հակասությունների «միջնորդավորման» համար: Նրանք գտնում են, որ հասարակության մեջ իշխանությունը պետք է լինի տարակենտրոնացված: Համաձայնեցման գործընթացը հնարավոր է, եթե կոնֆլիկտի կողմերն ունեն որոշակի ուժ և իշխանություն, քանզի հակառակ դեպքում նրանք ուղղակի կանտեսվեն: Իշխանության բազմակենտրոնության պայմաններում քաղաքականությունը բնութագրվում է որպես խնդրի լուծման այնպիսի միջոց, որի դեպքում ընտրությունը կատարվում է համաձայնության և հաշտության օգտին, այլ ոչ թե բռնության և հարկադրանքի:

Ռոբերտ Դահլը ժողովրդավարությունը բնութագրում է երկու փոխկապակցված հատկանիշների չափման տեսանկյունից: Դրանք են՝ ընտրություններում հասարակական մրցակցությունը, ընտրությունների և հասարակական ինստիտուտների միջոցով կառավարման գործընթացին մասնակցելու իրավունքները: Որքան մեծ է իշխանության և ընդդիմության միջև կոնֆլիկտը, այնքան հնարավոր է, որ նրանցից մեկը պետք է փորձի մյուսին դուրս մղել քաղաքական

մրցակցությունից: Սակայն կարող է ստեղծվել նաև այլ իրավիճակ: Որքան ուժեղ է իշխանության և ընդդիմության միջև կոնֆլիկտը, այնքան անհրաժեշտ է, որ նրանցից մեկը հանդուրժի մյուսին: Դահլը սահմանում է իրենց ընդդիմախոսներին հանդուրժող կառավարությունների մասին հիմնական աքսիոմաները: 1. Հավանականությունը, որ կառավարությունը կհանդուրժի ընդդիմությանը մեծանում է այն ժամանակ, երբ հանդուրժելու հավանական չափերը փոքրանում են այն պայմանով, որ ընդդիմության ճնշումն իշխանության համար թանկ կարժենա: 2. Հավանականությունը, որ կառավարությունը կհանդուրժի ընդդիմությանը մեծանում է այն ժամանակ, երբ ճնշման չափերը ևս մեծանում են: Այսպիսով, մրցունակ քաղաքական համակարգի ձևավորման հավանականությունը պայմանավորված է ճնշման չափերով:[92]

Որքան շատ է ճնշման չափը գերազանցում հանդուրժելու չափին, այնքան մեծանում է մրցունակ համակարգի գոյության հավանականությունը: Որքան փոքր է հանդուրժելու չափը, այնքան մեծ են կառավարության կայունության հնարավորությունները: Որքան մեծ է ճնշման չափը, այնքան մեծ են ընդդիմության կայունության հնարավորությունները: Այսպիսով, որպես կառավարության և ընդդիմության պահպանության երաշխիք, անհրաժեշտ է կառավարության և ընդդիմության համար ստեղծել լայն հնարավորություններ:[93]

Այսպիսով, այն հարցը, թե ինչի են հանգեցնում կոնֆլիկտները հասարակության մեջ (ակնկալվող դրական փոփոխությունների, կայունության կամ անկայունության, պատերազմի և հեղափոխությունների) մասամբ ստանում է իր լուծումը:

Մեր վերլուծության հիման վրա կարելի է հանգել այն եզրակացությանը, որ ցանկացած միջխմբային կոնֆլիկտ, որին վերաբերում է իշխանության և ընդդիմության բախումը, անհնարին է առանց կողմերի փոխգործունեության և հաղորդակցության, և հարկ է նշել, որ

---

[92] *Դահլ Ռ.* 20-րդ դարի հասարակական-քաղաքական մտքի դասականներ. Ժողովրդավարության սահմանները և հնարավորությունները: Ընդհանուր խմբագրությունը և ներածական հոդվածը՝ *Գրիգորյան Հ., Գրիգորյանց Գ.* «Զանգակ - 97», Երևան, 2006:

[93] *Dahl R.* Regimes and Oppositions. New Heaven, Yale University Press, London, 1973.

կոնֆլիկտները որոշակի պայմաններում ոչ թե տարանջատում, այլ՝ համախմբում են հասարակությունը:

20-րդ դարի 70-ական թթ. ձևավորված խոսույթի տեսությունն օգնում է հասկանալ իշխանության և ընդդիմության միջև կոնֆլիկտի հաղորդակցական նշանակությունը: Բանն այն է, որ քաղաքական խոսույթի տեսությունը քաղաքական իրականությունը դիտարկում է որպես բարդ հաղորդակցական երևույթ, որը ներառում է ոչ միայն հաղորդակցության մասնակիցների բնութագրությունը, այլև այն սոցիալական համատեքստը, որտեղ նրանք ընդգրկված են:

Ըստ Ուեբսթերի՝ խոսույթն ունի երկու հիմնական նշանակություն՝ ա) բառերի միջոցով մտքերի փոխանակում, բ) ռացիոնալ քննարկում կամ համոզում:[94] ***Քաղաքական խոսույթը հիմնավորված դիրքորոշումների, կարծիքների փոխանակումն է, որի արդյունքում միջոցներ են ձեռնարկվում հասարակական-քաղաքական խնդիրների լուծման համար:*** Այս դեպքում բոլոր քաղաքացիները ևս պետք է ընդգրկվեն որոշումների կայացման գործընթացում, որպեսզի համատեղ որոշեն, թե որ ուղին է ավելի նպատակահարմար հասարակական-քաղաքական խնդիրների լուծման համար:

Ժողովրդավարության պայմաններում քաղաքական խոսույթը որոշումների ընդունման մեթոդ է: Արդյունավետ ժողովրդավարական որոշումների հիմնական բնութագրություններն են՝ 1. որակյալ որոշում, որը հիմնված է քաղաքացիների հիմնավորված դատողությունների վրա, 2. որոշումների ընդունման հավաքական գործընթացը բարձրացնում է բոլոր քաղաքացիների պատասխանատվությունը, 3. որոշման ընդունման գործընթացն ամրացնում է կապերը հասարակության ներսում: Այս մոտեցումների հիմնավորումը կարելի է գտնել անտիկ շրջանի և 18-րդ դարի մտածողների գաղափարներում: Արիստոտելը կարծում էր, որ քաղաքական երկխոսության նպատակը վարքագծի տարբեր բաղադրիչների միջև ճիշտ ընտրության գործընթացն է:[95] Ամերիկյան ժողովրդավարության հիմնադիրները նշում

---

[94] *Уэбстер Ф.* Теории информационного общества, Аспект Пресс, М., 2004.
[95] *Аристотель*. Политика. Афинская полития, М., 1997.

էին, որ քաղաքական խոսքի ներսում հակադիր դիրքորոշումների բախումը բարձրացնում է քաղաքացիների կողմից հարցի էության ընկալման հնարավորությունը և որոշումների կոլեկտիվ ընդունման որակը: Քաղաքական խոսույթի ժամանակ յուրաքանչյուր այլընտրանքային դիրքորոշում պետք է լավ հիմնավորված լինի, որպեսզի ակնհայտ դառնան նրա ուժեղ և թույլ կողմերը:

Իշխանության հետ քաղաքական խոսույթում քաղաքացիների մասնակցությունը (օրինական ընդդիմությունը) հնարավոր է միայն այն ժամանակ, երբ նրանք ունեն հիմնական ընդհանուր արժեքներ: Նման արժեքները պետք է ամրագրվեն օրենսդրությամբ: Օրինակ՝ ԱՄՆ-ում այդ արժեքներն ամրագրված են Անկախության հռչակագրում և Սահմանադրությունում: Այդ արժեքներից գլխավորը օրենքի առջև բոլորի հավասարությունն է, ազատությունը, արդարադատությունը: Նման դրույթ գոյություն ունի նաև ՀՀ Սահմանադրությունում: «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև»:[96]

Ալեքսիս դը Տոքվիլը, ով ուսումնասիրում էր 19-րդ դարի կեսերին ամերիկյան ժողովրդավարությունը, նշում է, որ ԱՄՆ-ում ժողովրդավարության հիմնական գործոններից ամենագլխավորը քաղաքացիության սկզբունքներն են, որոնց հետևում են ամերիկացիները:[97]

20-րդ դարի 50-ական թթ. քաղաքագետները եկան մի եզրահանգման, ըստ որի՝ ժողովրդավարությունը կարող է գոյատևել միայն այն ժամանակ, երբ քաղաքացիները կդառնան նրա հիմնական արժեքների՝ հավասարության և ազատության հետևորդները:

Ժողովրդավարությունը չի կայանում միայն դիրքորոշումների համաձայնեցման գործընթացում կամ «իշխող դասակարգի» հետ ժողովրդի համաձայնության խոսույթում: Այն նաև մշտապես վերարտադրվող կոնֆլիկտային հաղորդակցություն է կամ կոնֆլիկտային խոսույթ: ***Ինչու՞ է այդպես: Առաջին՝ շահերի բազմազանության պայմաններում հնարավոր չէ հանդարտության պահպանումը: Երկրորդ՝***

---

[96] *Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն*, հոդված 14.1:
[97] *Токвиль А. де.* Демократия в Америке, М., 1992.

ժողովրդավարությունը հասարակության մեջ հակադիր շահեր ունեցող խմբերի միջև անընդհատ վերարտադրվող կոնֆլիկտների կառավարման գործընթաց է: Երրորդ՝ ո՛չ հեղափոխական, ո՛չ իշխող էլիտաները ի զորու չեն միակողմանիորեն որոշել հասարակության վերջնական նպատակները:

Հետարդյունաբերական հասարակությունում փոփոխությունների ուժը վերահսկելու էլիտայի ձգտումն արգելակում է սոցիալական զարգացումը: *Իշխանությունը և հասարակությունը պետք է սովորեն միասին մշակել սոցիալական նպատակները:* Սա Ն. Վիների, Կ. Դոյչի, է. Թոֆլերի եզահանգումն է տվյալ հարցի վերաբերյալ:[98]

Իշխանության և ընդդիմության միջև քաղաքական խոսույթն իրական և գործուն քաղաքական հաղորդակցության տարրերից է, որը թույլ է տալիս պարզաբանել տեղի ունեցող երևույթները՝ փորձելով պատասխանել հասարակությանը մշտապես հուզող հարցերին, այն է՝ ո՞վ է մեղավոր, ի՞նչ անել, ինչի՞ց սկսել և այլն:

Իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթը հիմնավորված և, որպես կանոն, հակադիր կարծիքների, որոշումների, տեսակետների բանավոր կամ ոչ բանավոր փոխանակումն է նրանց համոզմունքներին և որոշակի կանոններին ու գործընթացներին համապատասխան, որի նպատակը հասարակական նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ կարևոր քաղաքական որոշումներ ընդունելն է: Իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթի արդյունքում լուծվում են երկու կարևոր խնդիրներ՝ *1. անցկացվում է ընթացիկ քաղաքական ուղու և ծագած խնդիրների հետազոտություն, 2. մշակվում են դրանց լուծման եղանակները և միջոցները, երկրի առաջիկա զարգացման այլընտրանքային ծրագրերը:*

Իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթն ունի երկու ձև՝ ***կոնֆլիկտային խոսույթ*** (բանավեճեր, երկկողմ քննադա-

---

[98] *1. Винер Н.* Человек управляющий, СПб, Питер, 2001., *2. Deutsch, K.* Politics and Government, How People Decide Their Fate, Houghton Mifflin Company, Boston, 1980, *3. Թոֆլեր է.* 20-րդ դարի հասարակական-քաղաքական մտքի դասականներ. Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ, Ընդհանուր խմբագրությունը և ներածական հոդվածը՝ *Գրիգորյան Հ., Գրիգորյանց Գ.* «Զանգակ - 97», Երևան, 2006:

տություններ) և ***համաձայնության խոսույթ*** (բանակցություններ, կլոր սեղաններ, դաշինքներ): Կոնֆլիկտային խոսույթը նեղացնում է վիճող կողմերի գիտակցությունը և ուղղված է նրանց դիրքորոշումների միջև տարբերությունների վերհանմանը, ինչը թույլ է տալիս գտնել շահերի անհամաձայնության առարկան: Կոնֆլիկտային խոսույթի երկարաձգումը հանգեցնում է կործանարար հետևանքների: Մինչդեռ համաձայնության խոսույթն ընդլայնում է կողմերի գիտակցությունը և ուղղված է ընդհանուր շահերի որոնմանն ու դիրքորոշումների մերձեցմանը: Այն կարող է ձևավորվել նաև կոնֆլիկտային խոսույթի արդյունքում: Քաղաքական խոսույթի լիարժեքությունը որոշվում է խոսույթի այս երկու ձևերի առկայությամբ:

Խոսույթը դարձել է 20-րդ դարի փիլիսոփայական մի շարք ուղղությունների կենտրոնական թեմաներից մեկը: Այդ ուղղություններն են Յու. Հաբերմասի հաղորդակցական գործողության տեսությունը, Կ. Յասպերսի հերմենևտիկան, Ֆ. Լիոտարի, Մ. Ֆուկոյի հետստրուկտուրալիզմը:[99] Այս գիտնականներին հետաքրքրում էին երկու հարց՝ հաղորդակցության հնարավորությունները և հաղորդակցային վարքագծի պահանջները: Ստորև վերլուծենք այս հարցի վերաբերյալ նրանց դիրքորոշումները:

Յու. Հաբերմասի հաղորդակցական գործողության հայեցակարգի համաձայն՝ խոսույթն իրենից ներկայացնում է ընդհանուր համաձայնության հասնելու համար երկխոսության պատճառաբանված միջոց: «Խոսույթում մենք փորձում ենք հիմնավորման միջոցով նորից իրականացնել խնդրայնացված համաձայնությունը, որը տեղի է ունեցել հաղորդակցական գործողության մեջ»:[100] Խոսույթը լեզվական հաղորդակցության այնպիսի ձև է, որը կազմված է մի շարք կանոններից: Առաջին՝ խոսույթում մասնակցությունն ազատ է խոսքունակ ցանկացած սուբյեկտի համար, որն իրավահավասար է խոսույթի մյուս

---

[99] *1. Хабермас Ю.* Моральное сознание и коммуникативное действие, СПб., 2000., *2. Ясперс К.* Смысл и назначение истории. Политиздат, М., 1991., *3. Лиотар Ф.* Состояние постмодерна, Алетейя, СПб., 1998., *4. Foucault M.* The Subject and Power/Power: Critical concepts.Vol. 1, London, 1994.

[100] *Хабермас Ю.* Моральное сознание и коммуникативное действие, СПб., 2000. с. 138.

մասնակիցներին: Երկրորդ՝ խոսույթում համաձայնության հասնելու համար արգելվում է հարկադրանքը: Երրորդ՝ խոսույթի մասնակիցներն իրավունք ունեն գործել միայն համագործակցային և պատճառաբանված համաձայնության հասնելու սկզբունքով:

Նման խոսույթը Հաբերմասն անվանում է ճշմարիտ, մինչդեռ կեղծ խոսույթը կեղծ համաձայնության երևույթ է, որը պետք է ընկալել ոչ թե որպես պատահական արտաքին ազդեցությունների արդյունք, այլ՝ որպես հաղորդակցության կառուցվածքում ներդրված հարկադրանքի օրինաչափ հետևանք: Այս երևույթը հանգեցնում է խոսույթի մեկ և ավելի կանոնների պարբերական խախտմանը: Հաղորդակցության կառուցվածքը չի պարունակում հարկադրանք միայն այն դեպքում, երբ բոլոր հնարավոր մասնակիցներն ունեն խոսքային ակտերի իրականացման հնարավորություն: Ճշմարիտ խոսույթն այն է, որի հիմքում ընկած է միայն մեկ շարժառիթ, այն է՝ ճշմարտության հասնելը:

Հերմենևտիկայի ուղղությունում սահմանվում է մարդկային կեցության հիմնական գաղափարների միասնությունը, ինչով էլ բացատրվում է իրական հաղորդակցության հնարավորությունը: Կարլ Յասպերսը տարբերակում է հաղորդակցության *օբյեկտային* և *էկզիստենցիալ* ձևերը: Օբյեկտայինը պայմանավորված է մարդկանց պատկերացումների ընդհանուր կազմակերպմամբ (ընդհանուր շահեր, ընդհանուր մշակութային պատկանելիություն և այլն): Էկզիստենցիալ հաղորդակցությունը հնարավոր է՝ որպես աշխարհի միասնական էության հետ երկու տարբեր անհատականությունների առնչություն: Դրա իրականացումը դիտվում է որպես անմիջական իրական գործողություն: Յասպերսն ընկալում է էկզիստենցիան որպես մարդկային անձի միջուկ, որպես ազատություն: Հենց ազատության մեջ է զետեղված ինքնակեցությունը: Յասպերսի համար խոսույթը երկու ազատությունների հաղորդակցությունն է:[101] Հերմենևտիկայում հաղորդակցական վարքագծի խնդիրը լուծվում է հետևյալ դրույթով՝

[101] *Ясперс К.* Смысл и назначение истории, М., 1991.

սեփական գոյության պարզաբանումը միաժամանակ մյուսներին հասկանալն է:

Հետստրուկտուրալիստները, ընդհակառակը, պնդում են, որ «սոցիալական համընդհանրության տեսանկյունից մարդիկ գտնվում են անիմացության մեջ»: Ըստ Ֆ. Լիոտարի չափավոր ռազմավարության տեսության՝ եկել է մետանարատիվների, այսինքն՝ ազատագրման խոսույթի և գիտելիքի զարգացման խոսույթի ժամանակաշրջանի ավարտը, որոնք ապահովում էին միասնական հաղորդակցական կոդը և ստեղծում իրականության հետ կապ չունեցող հաղորդակցության կեղծ հնարավորութուն: Այս դեպքում արդյունավետ հաղորդակցության մեկնարկային սկզբունքը պետք է լինի ոչ թե կոնսենսուսը, այլ՝ տարակարծությունը:[102] Լիոտարը գրում է, որ ցանկացած իշխանություն ստեղծում է իր խոսքային փորձը, որը ձգտում է համընդհանրության, ճշմարտության և արդարության կարգավիճակի՝ դրանով իսկ իրեն ենթարկելով մյուս խոսքային փորձերը:

Միանշանակ է հետստրուկտուրալիզմի մեկ այլ ներկայացուցիչ ֆրանսիացի փիլիսոփա, հասարակագետ Միշել Ֆուկոյի[103] դիրքորոշումը, որն ուշադրությունը սևեռում է քաղաքական խոսույթի իշխող և հարկադրող ուժի վրա: Ըստ Ֆուկոյի՝ քաղաքական խոսույթը համարվում է հզոր իշխող ռեսուրս, այդ իսկ պատճառով այն հանդիսանում է ցանկության, վախի և վերահսկողության օբյեկտ: Ինչպես նշում է Ֆուկոն. «Ցանկացած հասարակությունում խոսույթի գործածումը միաժամանակ վերահսկվում է, ենթարկվում է սելեկցիայի (ընտրասերման), վերաբաշխվում է որոշակի գործընթացների օգնությամբ, որոնց հիմնական գործառույթները դրա իշխելու իրավազորության և դրա հետ կապված վտանգների չեզոքացումն է, դրանից բխող իրադարձությունների անկանխատեսելիության սահմանափակումը, դրա նմանատիպ սպառնողական նյութեղենությունից խուսա-

[102] *Лиотар Ф.* Состояние постмодерна, Алетейя, СПб., 1998.
[103] *Տես Foucault M.* The Subject and Power/Power: Critical concepts.Vol. 1. London, 1994.

փումը»:[104] Ֆուկոն գտնում է, որ բոլոր խոսույթներն ունեն քաղաքական երանգ, քանի որ համարվում են իշխանության դիսպոզիտիվ:

Ըստ հետստրուկտուրալիզմի՝ ցանկացած իշխանության համար պարտադիր պայման է նրա լեզվական արտահայտումը, իսկ քաղաքականությունը ոչ այլ ինչ է, քան գաղտնագրված նշանների համակարգ, որը բացահայտվում է խոսույթի օգնությամբ: Ըստ հայտնի քաղաքական սեմիոլոգ և գրականագետ Ռոլան Բարտի՝ իշխանությունն իրեն դրսևորում է ոչ միայն պետական ինստիտուտների, հարկադրանքի գործիքների, օրենքների, այլև՝ տեքստերի միջոցով, ինչն անկասկած ակնհայտ է ժամանակակից տեղեկատվական հասարակությունում:[105]

Քաղաքական խոսույթի տեսության հիմաստավորման գործում մեծ ներդրում ունի քաղաքական խոսույթի վերլուծության մեթոդաբանության հիմնադիրներից ֆրանսիացի լեզվափիլիսոփա Միշել Պեշյոն, ով 1969թ.-ին լույս ընծայեց «Խոսույթի ինքնավերլուծություն» աշխատությունը[106], որտեղ հարց էր բարձրացված խոսութային ձևավորումների մասին: Այդ աշխատությունում խոսութի ձևավորումը Պեշյոն դիտարկում է որպես հաղորդակցության մասնակիցների արժեքային կողմնորոշումների, որոշակի գաղափարախոսական դիրքորոշումների արտաբերում, արտահայտում և ներկայացում:[107] Պեշյոն խոսույթների փոխկապակցվածությունը պայմանավորում է հաղորդակցվողների մտածելակերպի առանձնահատկություններով:

Ուշագրավ է նաև խոսույթի վերաբերյալ Տ. Վան Դեյքի դիրքորոշումը: Նա խոսույթը սահմանում է ոչ միայն որպես կապակցված տեքստ, այլև՝ «բարդ հաղորդակցական երևույթ, որը ներառում է նաև սոցիալական համատեքստը, ինչը պատկերացում է ձևավորում ինչպես հաղորդակցության մասնակիցների, այնպես էլ՝ ընկալման և

---

[104] *Фуко М.* /Воля к истине: по ту сторону знания, власти и сексуальности/ Работы разных лет, М. 1996, с. 51.
[105] *Barthes R. Oeuvres complètes, t. III, 1974-1980*, éd. É. Marty, Paris, Le Seuil, 1995.
[106] *Pêcheux M.* "Analyse automatique du discours". Ed. Dunod, réédit., Paris, 1995.
[107] *Русакова О.Ф.* Дискурс-анализ в современных политических исследованиях, М. 2003, с. 2.

արտաբերման գործընթացների մասին»:[108] Այս սահմանումը հնարավորություն է ընձեռում ներթափանցել լեզվի կրողի մտքում տեղի ունեցող գործընթացների կառուցվածքի մեջ: Վան Դեյքը խոսույթի հասկացությունը տարանջատում է լայն և նեղ իմաստների: Լայն իմաստով՝ խոսույթը ներառում է նաև իր հայեցակարգի հասկացությունը, քանի որ այն ներկայացնում է որպես իրականության տարր, որն ունի ժամանակային ձգողականություն և տարածման տրամաբանություն: Այն նկարագրում է գործող անձանց, օբյեկտներին, հանգամանքները, ժամանակահատվածը, գործողությունները և այլն: Այս պարագայում խոսույթի տարրեր են հանդիսանում տեղի ունեցող իրադարձությունները, դրանց մասնակիցները, համատեքստը, այսինքն՝ 1. իրադարձությունների հանգամանքները, 2. իրադարձությունների պարզաբանման դաշտը, 3. իրադարձությունների մասնակիցների գնահատականը, 4. խոսույթն իրադարձությունների հետ կապող տեղեկատվությունը:[109]

Նեղ իմաստով քաղաքական խոսույթի վան-դեյքյան սահմանումը հետևյալն է՝ «Քաղաքական խոսույթը հաղորդակցական իրադարձություն է, որը տեղի է ունենում խոսողի և լսողի միջև հաղորդակցական գործողության որոշակի ժամանակահատվածում, տարածությունում և համատեքստում: Այդ հաղորդակցական գործողությունը կարող է լինել խոսքային, գրավոր, ունենալ բանավոր և ոչ բանավոր բաղադրիչներ»:[110]

Խոսութային վերլուծության մեթոդը ծագել է կառուցվածքային լեզվաբանության շրջանակներում: Ֆ. դը Սոսյուրը «Ընդհանուր լեզվաբանության դասընթաց» աշխատությունում (1916թ.) լեզուն սահմանում է որպես նշանային համակարգ՝ պնդելով, որ այն ձևական տարբերությունների ոլորտ է, որում նշանների նմանությունը կրում է հարաբերական, պատահական բնույթ:[111]

---

[108] *Ван Дейк Т.* Язык. Познание. Коммуникация, М., 1989, с.13.
[109] *Демьянков В. З.* Дискурс/ Словарь англо-русских терминов по прикладной лингвистике и автоматической переработке текста, М., 1982. Вып. 2, с. 247.
[110] *Dijk Teun van*. Ideology: A Multidisciplinary Approach. London: Sage, 1998.
[111] *Saussure F. de.* Cours de linguistique générale, Paris, 1916.

Հետխորհրդային տարածաշրջանում քաղաքական խոսույթի հետազոտությամբ զբաղվում են Ա. Ալթունյանը, Մ. Իլյինը, Է. Լասանը, Ե. Շեյգալը և ուրիշներ:[112] Այս հեղինակների աշխատություններում քաղաքական խոսույթի վերլուծությունը դիտարկվում է սեմիոտիկական և հաղորդակցական մոտեցումների տեսանկյունից: Ինչպես նշում է Իլյինը. «Քաղաքական խոսույթի վերլուծության առարկան քաղաքականությունն է՝ որպես սեմիոտիկական երևույթ, որպես նպատակին հասնելու գիտակցված փոխգործունեություն: Այս պարագայում է, որ քաղաքականությունը դառնում է շփում, հաղորդակցություն և, իհարկե, իր բնույթով նաև՝ «լեզու», սակայն, բնավ, այն չի համընկնում մարդկային բնական լեզուների հետ»:[113]

«Քաղաքական խոսույթի սեմիոտիկա» աշխատությունում ռուս լեզվագետ Շեյգալը սահմանում է քաղաքական խոսույթը որպես ինստիտուցիոնալ շփում, որն օգտագործում է նշանային համակարգը, ինչն առկա է իրավիճակային համատեքստում: Շեյգալը քաղաքական խոսույթը դիտարկում է որպես՝ «ենթալեզու + տեքստ + համատեքստ»:[114]

Այսպիսով, վերոհիշյալ հետազոտողները քաղաքական խոսույթի հիմնական նշանակությունը տեսնում են «քաղաքական գործընթացի գիտակցական և տրամաբանական կազմակերպման մեջ»: Ժամանակակից քաղաքական խոսույթի վերլուծության առաջատար մեթոդաբանական նախադրյալ է հանդիսանում սեմիոտիկական-հաղորդակցական մոտեցումը, որի համաձայն՝ քաղաքական խոսույթ է համարվում ցանկացած նշան (ինչպես բանավոր, այնպես էլ՝ ոչ բանավոր), որը որոշակի գործառույթ է իրականացնում քաղաքական հաղորդակցությունում:

---

[112] *1.Алтунян А.* Анализ политических текстов, М., 2006, *2. Ильин М.* Слова и смыслы. Опыт описания ключевых политических понятий, РОССПЕН, М., 1997, *3. Лассан Э.* Дискурс власти и инакомыслия в СССР, когнитивно-реторический анализ, изд. Тартунского университета, Тарту, 1996, *4. Шейгал Е.* Семиотика политического дискурса, М., 2004.

[113] *Ильин М.* Политический дискурс как предмет анализа// Политическая наука. 2002, N. 3, с. 11.

[114] *Шейгал Е.* Семиотика политического дискурса /РАН/ Институт языкознания, М. Волгоград 2000, с. 15.

Մեր կողմից ընտրված իշխանության և ընդդիմության փոխհարաբերությունների վերլուծության *կոնֆլիկտ-խոսութային մեթոդը*, կոնֆլիկտային հարացույցը միակցում է խոսութային հարացույցին: Մենք անհրաժեշտ ենք համարում համադրել քաղաքական գործիչների խոսքը և գործը, քանզի դա համարում ենք կոնֆլիկտի իրական առարկա: Մինչ կոնֆլիկտ-խոսութային վերլուծությանն անցնելը հարկավոր է պատկերացնել կոնֆլիկտի կառուցվածքը: Առաջարկում ենք կոնֆլիկտի կառուցվածքի հետևյալ օրինակը:

Գծապատկեր 1.



Այս վերլուծության տեխնիկան հետևյալն է՝ իշխանության և ընդդիմության կոնֆլիկտաբանական վերլուծությունը զուգակցվում է իշխանության և ընդդիմության փոխգործակցության խոսութային վերլուծությանը, և իրական գործողությունների և տեքստերի համադրության արդյունքում սահմանվում է նրանց միջև ծագած կոնֆլիկտի տեսակը, հասարակության մեջ առկա կոնֆլիկտի դինամիկան, որոշվում են կոնֆլիկտի կարգավորման ռազմավարությունը, ինչպես նաև՝ քաղաքական խոսույթի հետագա ընթացքը:

Իշխանության և ընդդիմության կառուցողական փոխգործունեությունն է, որ թույլ է տալիս պահպանել հասարակության միասնությունը, քանզի դրանք տարբեր սոցիալական շահերի և պահանջների քաղաքական մարմնավորումներն են: Իշխանության և ընդդիմության

քաղաքական խոսույթի ինստիտուցիոնալացումը վերջիններիս դարձնում է ավելի կանխատեսելի և հանրօգուտ:

Մեր դիրքորոշումն այն է, որ քաղաքականությունը հասարակության մեջ առկա կոնֆլիկտների լուծմանն ուղղված գործունեություն է, որը ժողովրդի միասնության, պետության ամբողջականության և ինքնիշխանության պահպանման միջոցով թույլ է տալիս հասնել ողջ հասարակության բարեկեցությանը:

Կոնֆլիկտը, լինելով մարդկային նախաձեռնության հզոր խթան, հասարակական հարաբերություններին հաղորդում է դիալեկտիկական բնույթ: Ինչպես նշում է ամերիկացի սոցիոլոգ Կրիսբերգը. «Հասարակությունը ձգտում է համընդհանուր համաձայնության և բարեկեցության բարձր նպատակներին, սակայն դրանց չի հասնում ամբողջությամբ, քանի որ ցանկացած սոցիալական ձեռքբերում իր մեջ նոր կոնֆլիկտ և սոցիալական զարգացման իդեալների և արժեքների ընդունված համակարգի կողմնակիցների համար նոր վտանգ է պարունակում»:[115] Կարծիքների և կամքի արտահայտման պայքարից խուսափելու ցանկացած փորձ անխուսափելիորեն հանգեցնում է հասարակության անշարժությանը: Քաղաքական կոնֆլիկտների ինստիտուցիոնալացումը և լեգիտիմացումը իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթի միջոցով կարող են հասարակության համար լինել ավելի օգտակար, քան նրա լռությունը: Պետք չէ վախենալ կոնֆլիկտներից, այլ անհրաժեշտ է սովորել դրանք կառավարել՝ հասկանալով, որ «կոնֆլիկտ» հասկացության բովանդակության մեջ գոյություն ունեն երկու կողմերն իրար կապող ընդհանուր շահ և հաղորդակցական տարր, որոնք կարելի է օգտագործել կառուցողական նպատակներով: Կոնֆլիկտը սահմանում և պահպանում է ուժերի միջև հավասարակշռությունը: Կոնֆլիկտն իր վրա է ընդունում հակամարտող կողմերի ուժերը: Կոնֆլիկտի կարգավորումը հնարավոր է դառնում այն ժամանակ, երբ կոնֆլիկտի յուրաքանչյուր կողմ գիտակցում է մյուս կողմերի հարաբերական ուժը:

---

[115] *Kriesberg L.* The Sociology of Social Conflicts, N.Y. 1973, p. 2.

Ժողովրդավարական հասարակությունում իշխանությունը և ընդդիմությունը մշտապես գտնվում են քաղաքական խոսույթի հարթության վրա, որը բաղկացած է երկու փուլից՝ կոնֆլիկտային խոսույթ և համաձայնության խոսույթ: Կոնֆլիկտ-խոսութային մեթոդը թույլ է տալիս ավելի մանրամասնորեն դիտարկել և վերլուծել իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթը և գործունեությունը, քանզի դրանք իրավամբ ձևավորում են այս երկու քաղաքական ինստիտուտների միջև առկա կոնֆլիկտի էությունը: Այս մեթոդն օգնում է ավելի խորը հետազոտել հասարակության ներսում ծագող կոնֆլիկտները. նման մոտեցումը թույլ է տալիս դիտարկել քաղաքականությունը որպես մի գործունեություն, որն ուղղված է պետության ներսում հասարակության բարեկեցությանը խոչընդոտող կոնֆլիկտների լուծմանը: Դա նշանակում է, որ և՛ իշխանությունը, և՛ ընդդիմությունը հասարակության առջև պատասխանատվություն են կրում իրենց կոնֆլիկտային գործողությունների համար, որոնց կարգավորման հարցում անհրաժեշտ է երկուստեք բաց քաղաքական խոսույթի իրականացում:

ԳԼՈՒԽ 2. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1. Իշխանության և ընդդիմության տեղը և դերը հասարակությունում

Իշխանության և ընդդիմության *(այլակարծության)* ուսումնասիրությունը պայմանավորված է պատմական չորս փուլով, որոնցից յուրաքանչյուրում, տվյալ հասարակական-քաղաքական իրավիճակին համապատասխան, արտահայտվում են թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր գաղափարներ՝ որպես հասարակության մեջ առկա գոհունակության կամ դժգոհության դրսևորում: Այդ փուլերն են՝ Անտիկ շրջանը, Միջնադարը, Նոր ժամանակները և Նորագույն շրջանը:

Առաջին փուլը (9-ից 1-ին դդ. մթա.) պատմականորեն կապված է Հին Արևելքի և Անտիկ Աշխարհի հետ: Այդ ժամանակաշրջանի հասարակական միտքը հիմնվում էր կրոնադիցաբանական հայացքների վրա, որոնց առկայության և համընդհանուր ներգործության պայմաններում իշխանության և հնազանդության մասին պատկերացումներն ունեին մարդկության պատմության այդ փուլին հատուկ ինքնատիպություն: Այդ ժամանակաշրջանում սկզբնավորվում են խոշորագույն համաշխարհային կրոնների հիմնարար գաղափարները, որոնք հետագայում արմատավորվում են մարդկության գիտակցության մեջ՝ մեծ ազդեցություն թողնելով քաղաքական և բարոյական ոլորտների վրա:

Հին Արևելքին հատուկ էր իշխանությանը անվերապահորեն հնազանդվելու և ենթարկվելու գաղափարը, որը գործնականում արտահայտվում էր համայնքային հողատիրությամբ, մասնավոր սեփականության խիստ սահմանափակմամբ: Մարդկանց վարքագիծը պայմանավորված էր բարոյականության սկզբունքներով, որոնց շրջանցման դեպքում պատիժն անխուսափելի էր: Այդ երևույթն իր դրսևորումը գտավ ժամանակի իրավաքաղաքական ուսմունքներում, որոնց համաձայն սոցիալական անհավասարությունը հասարակությանը բաժանում էր ցածր և բարձր դասերի միջև, որտեղ առաջինը պետք է հնազանդվեր երկրորդի իշխանությանը: Իշխանությունը դիտ-

վում էր որպես աստծո կողմից թագավորին կամ կայսերը տրված շնորհ, որին հակառակվելը հավասարազոր էր աստծո կամքին դեմ դուրս գալուն, ինչը, բնականաբար, արժանանում էր դաժան պատժի: Թագավորը պետք է լիներ բարոյականության չափանիշ և դառնար բարեպաշտության օրինակ հասարակության համար: Ի պատասխան դրան՝ հասարակությունը պետք է խոնարհվեր թագավորի առջև:

Իշխանության և հասարակության միջև հարաբերությունները նման կերպով էին արտահայտվում Հին Հնդկաստանում և Հին Չինաստանում, որտեղ հասարակությունը, ենթարկվելով բարձրագույն իշխանությանը, ծառայում էր համընդհանուր բարիքին:

Չին փիլիսոփա Կոնֆուցիոսի (551-479թթ.) ուսմունքում նշված է, որ տիրոջ և ծառայի միջև փոխհարաբերությունները պետք է հիմնված լինեն մարդասիրության, այլ ոչ թե ատելության վրա, քանզի այդ դեպքում ենթակաները չեն դիմի ապստամբության: Կոնֆուցիոսը նաև նշում էր, որ հասարակությունից պետք է օտարվի պետության կառավարման գործընթացին մասնակցելու իրավունքը, քանի որ դա միայն իշխողների բացառիկ շնորհն է:[116] Այս ամենի հետ մեկտեղ Հին Չինաստանում ձևավորվում է նաև մեկ այլ մոտեցում, որի համաձայն սոցիալական հավասարության և համընդհանուր բարիքի հասնելու համար հասարակությունը պետք է քննադատի գործող քաղաքականությունը և ղեկավարի ընտրության իրավունք ունենա:[117]

Հին Հունաստանում (4-ից 2-րդ դդ. մթա.) ևս առկա էր իշխանության և հասարակության միջև հարաբերությունների խնդիրը, որի լուծման համար անհրաժեշտ էր համարվում արդարացի կառավարումը, որը կարող էր հանգեցնել հասարակական կյանքի կայունության ամրապնդմանը: Հին Հունաստանում մի կողմից գոյություն ուներ ստրկություն, իսկ մյուս կողմից նախանշվում էին ժողովրդավարության սաղմերը: Աթենքում գործում էր ժողովրդավարական կառավարում (մեծամասնության դիկտատուրա). մարդկանց մի մասն ազատ էր, և նրանք համարվում էին քաղաքացիներ:

---

[116] *Конфуций.* Я верю в древность. Республика, М., 1995, с. 55.

[117] *Лао-Цзы* /Дао Де Цзин/ *Боуз Д.* Либертарианство: История, принципы, политика, Челябинск, 2004, с. 220-221.

Գոյություն ուներ նաև ազգային ժողով, որտեղ քաղաքացիները ներգրավվում էին պետության գործունեության մեջ և փնտրում առկա խնդիրների համար արդյունավետ լուծումներ:

Եթե Հին Արևելքի բարոյաքաղաքական հայեցակարգերն ուղղված էին համայնքային բարոյական արժեքներին, համակեցության կայունությանը, ապա Հին Հունաստանում շեշտադրվում էին հասարակության մեջ անհատի կարգավիճակի հետ կապված հարցերը և բարոյական ընտրության հնարավորությունները: Եթե Հին Արևելքի հասարակական-քաղաքական միտքը բացառում էր ժողովրդի անհարգալից վերաբերմունքն իշխանության հանդեպ, որը կարող էր հանգեցնել անհնազանդության, ապա Հին Հունաստանի հասարակական-քաղաքական միտքն ավելի ռացիոնալ էր: Այն կարծես հակազդեցության մի մեխանիզմ էր մշակել իշխանության՝ համընդհանուր բարիքին չծառայելու դեպքում, որի արդյունքում քաղաքացիները կարող էին ինքնաբուխ կերպով քայլեր ձեռնարկել իշխանությունը փոխելու և իրենց շահերին համապատասխանեցնելու համար:

Ինչ վերաբերում է «ընդդիմությանը», այսինքն՝ իշխանության հակադրության ինստիտուտին, ապա հարկ է նշել, որ հույն մտածողները, ի դեմս՝ Պլատոնի (427-347թթ.) և Արիստոտելի (384-322թթ.), բացասական վերաբերմունք ունեին դրա վերաբերյալ: Նրանք նշում են, որ եթե իշխանությունը բանական է, և դրա կազմավորման գործընթացներն արդար են, ապա նա, ով չի ցանկանում դրան ենթարկվել, պետք է խիստ պատժի արժանանա: «Եթե աղքատները հնարավորություն են ստանում հասնել հասարակական բարիքներին՝ մտածելով, որ կարող են արժանանալ դրանց մի մասին, ապա դա չի կարող լավ բանի հանգեցնել, քանզի այս դեպքում իշխանությունը դառնում է վեճի առարկա, ինչը ոչնչացնում է և՛ այդ վեճի մասնակիցներին, և՛ մնացած քաղաքացիներին»:[118] Պլատոնի պատկերացմամբ «Ժողովրդավարությունը իրականացվում է այն ժամանակ, երբ աղքատները, հաղթանակ տանելով, իրենց թշնամիների մի մասին վերացնում

[118] *Платон*. Государство. Законы. Политик, М., 1998, с. 274.

են, մյուսներին վտարում, իսկ մնացածին հավասարեցնում քաղաքացիական իրավունքների տեսանկյունից, իսկ պաշտոնները բաշխվում են վիճակահանության սկզբունքով»:[119]

Ինչ վերաբերում է Հին Հայաստանին, ապա պետք է նշել, որ մեզ մոտ նույնպես գործում էին իշխանության և հասարակության միջև փոխհարաբերությունների վերաբերյալ նմանատիպ հասարակաքաղաքական գաղափարներ, որոնք դրսևորվում էին տվյալ պատմաքաղաքական իրավիճակում:

Հայ քաղաքական մտքի ձևավորումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Անտիկ շրջանում մեծ էր հունական փիլիսոփայական գաղափարների և, առհասարակ, այդ գաղափարների հիման վրա ձևավորված աշխարհայացքի ազդեցությունը ողջ տարածաշրջանի, այդ թվում՝ նաև Հայաստանի վրա:

Հայ քաղաքական մտքի սաղմերը, որոշ հիմնարար սկզբունքներ և գաղափարներ ձևավորվել են պատմության հնագույն շրջանում: Հայկ նահապետից և Արամից են սկիզբ առնում հայկական թագավորության «պետականության» ծագումնաբանությունը և դրա իրավաբարոյական հիմքը:

Հայ իրականության մեջ քաղաքական մտքի զարգացման գործում իր ուրույն ներդրումն ունի Տիգրան Մեծը (95-55թթ.): Քաղաքական մտածողության ձևավորման հիմնաքար, ըստ էության, կարելի է համարել Տիգրան Մեծի գաղափարախոսությունը միջազգային քաղաքականության տեսանկյունից, քանզի հայոց պետականության պատմության մեջ նա առաջիններից էր, ով գործնականում համապատասխան քայլեր ձեռնարկեց Հայաստանի միջազգային կարգավիճակը և դիրքը ամրապնդելու համար՝ հաշվի առնելով տարածաշրջանում տարբեր պետությունների շահերը, ինչպես նաև նրանց ռազմական, տնտեսական և իրավաքաղաքական ներուժը և հնարավորությունները:

Տիգրան Մեծը իշխանության և հասարակության հարաբերությունները դիտում էր երկրորդի նկատմամբ առաջինի գերակայության

---

[119] *Նույն տեղում,* էջ 312:

տեսանկյունից, քանի որ եթե հասարակությունը պաշտպանվում է արտաքին թշնամուց և ապահովվում է նրա սպառնալիքներից իշխանության շնորհիվ, ապա այն պետք է անվերապահորեն հնազանդվի վերջինիս: Հասարակության անվտանգության երաշխիք հանդիսացող իշխանությունը պետք է իր կամքը թելադրի հասարակությանը և թույլ չտա որևէ ընդվզում իր ինքնիշխանության դեմ:[120]

Այսպիսով, հարկ է նշել, որ հին դարերի հասարակական-քաղաքական միտքն առաջնային էր համարում աստվածային և բարոյական իշխանությանը հնազանդության և հպատակության գաղափարը՝ անընդունելի համարելով վերջինիս դեմ ուղղված որևէ ոտնձգություն: Սակայն պատմությունը վկայում է, որ Հին Աշխարհում պատերազմները, դավադրությունները, ապստամբությունները, հեղաշրջումներն ավելի շատ էին և հաճախակի, քան ժամանակակից աշխարհում: Այդ ժամանակաշրջանում իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթի մասին խոսելը նպատակահարմար չէ, քանի որ գոյություն չուներ ընդդիմության քաղաքական ինստիտուտը:

Միջնադարում (5-ից 16-րդ դդ.), իշխանության և հասարակության հնազանդության, հակադրության մասին պատկերացումները կրոնական-դիցաբանականից փոխվում են աստվածաբանականի, ինչը պայմանավորված էր Եվրոպայում՝ քրիստոնեության, իսկ Արևելքում՝ բուդդայականության և իսլամի առաջացմամբ: Աստծո գաղափարը համարվում էր քաղաքական իշխանության և պետության հիմնաքար, քանզի դրանք աստծո կամքի արդյունքն էին, որի հետ մեկտեղ համընդհանուր բարիքը շարունակում էր մնալ պետության և քաղաքական իշխանության գլխավոր նպատակը: Միջնադարում հետզհետե մեծանում էր եկեղեցու դերը, որը, լինելով աստծո խոսքի դեսպան, իրեն վերադաս էր համարում պետության և քաղաքական իշխանության նկատմամբ: Այս դարաշրջանում փիլիսոփայական միտքը տիեզերակենտրոնից վերածվում է աստվածակենտրոնի:

---

[120] *Միրումյան Կ.* Հայ քաղաքական մտքի պատմությունից, Լինգվա, Երևան, 2002, էջ 28-31:

Միջնադարյան հասարակությունը ճորտատիրական հարաբերությունների համակարգ էր, որի դեպքում բացակայում էին անհատի իրավունքները և քաղաքացիների ազատությունը: Հասարակությունը բաժանված էր բազմաթիվ շերտերի, որտեղ իշխող դիրք էին գրավում ճորտատերերը, իսկ մյուսները ենթարկվում էին նրանց կամքին: Ե՛վ Արևելքում, և՛ Արևմուտքում հոգևորականությունը ձգտում էր լիակատար իշխանության՝ ցանկանալով էլ ավելի ամրապնդել իր դիրքերը հասարակությունում: Կրոնական ճշմարտությունները համարվում էին անժխտելի և գերակա էին մյուս գաղափարների նկատմամբ:

Միջնադարյան հասարակական-քաղաքական մտքի զարգացման գործում մեծ ներդրում ունի Օգոստոս Երանելին (354-430թթ.), ով անդրադառնում է եկեղեցու և պետության, հոգևոր և աշխարհիկ իշխանությունների միջև հարաբերություններին: Նա առաջ է քաշում աստվածային և երկրային իշխանությունների մասին գաղափարները՝ նշելով, որ դրանցից յուրաքանչյուրն օժտված է ինքնիշխանությամբ, և դրանցից մեկի միջամտությունը մյուսի գործունեությանը շատ վտանգավոր է: Ըստ Օգոստոս Երանելու՝ պետությունը կոչված է պաշտպանելու եկեղեցուն թշնամիներից, բարբարոսներից, հերետիկոսներից, իսկ եկեղեցին կոչված է կրթելու հասարակությանը արդարության ոգով: Եկեղեցու իշխանությունն ավելի բարձր է, քան աշխարհիկ իշխանությունը:[121]

Ուշագրավ է նաև Թովմա Աքվինացու դիրքորոշումն այն մասին, որ հանուն կրոնական բարոյականության կարելի է չենթարկվել և նույնիսկ ապստամբել քաղաքական իշխանության դեմ, եթե բռնապետը ստիպում է կատարել հավատքին հակասող գործողություններ: Աքվինացին նշում է, որ ցանկացած օրենք՝ աստվածային, բնական կամ մարդկային, կոչված է մարդուն ուղղորդելու դեպի հավերժական օրենքի ներգործության դաշտ: Ամենաանկատարը մարդկային օրենքն է, քանզի բնական և աստվածային օրենքներին այդ օրենքի անհամապատասխանության դեպքում, կարելի է դրան չենթարկվել, իսկ նման

[121] *Нерсесянц В.С.* История политических и правовых учений. *Политико-правовые взгляды Августина*. Норма. М., 2003, с. 102.

օրենքի պարտադրումը բռնակալության նշան է: Սակայն միևնույն ժամանակ օրինական իշխանությունների դեմ դուրս գալը մահացու մեղք է համարվում:[122]

Միջնադարյան Եվրոպայի պատմությունը հարուստ էր քաղաքական տարաձայնություններով, որոնք արտահատվում էին թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքական միջավայրում: Պապական իշխանության օրոք լայն տարածում գտավ հերետիկոսության դեմ պայքարը, որն իրականացվում էր կաթոլիկ եկեղեցու կողմից: Եկեղեցին ևս պայքար էր մղում այլակարծության դեմ՝ հերետիկոսներին համարելով կաթոլիկ եկեղեցու թշնամիներ: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ միջնադարյան կաթոլիկ եկեղեցին չէր ընդունում իրեն հակասելու և հակազդելու ոչ մի գործողություն: Այս պայքարը կարելի է վերագրել Եվրոպայի ներքին քաղաքական միջավայրին: Արտաքին քաղաքական միջավայրում ևս ընթանում էր պայքար, սակայն ոչ թե ներկրոնական, այլ երկու տարբեր կրոնների՝ քրիստոնեության և իսլամի միջև, որն իրականացվում էր խաչակրած արշավանքների միջոցով (11-ից 13-րդ դդ.): *Այս երևույթը կարելի է համարել որպես արտաքին ընդդիմության (այլակարծության) նկատմամբ ցուցաբերվող անհանդուրժողականություն:*

Հասարակական-քաղաքական իրավիճակը փոփոխվում է Ռեֆորմացիայի ժամանակաշրջանում, որն իրենից ներկայացնում էր սոցիալական բնույթի մի բուրժուական շարժում՝ ընդդեմ ճորտատիրության և այն պաշտպանող կաթոլիկ եկեղեցու: Այս իրադարձությունների արդյունքում ձևավորվում են նոր կրոնական ուսմունքներ (լյութերականություն, կալվինականություն, ադվենտիստականություն և այլն), որոնց հետևորդներին սկսեցին անվանել *բողոքականներ*:

Հարկ է նշել, որ Ռեֆորմացիայի գաղափարախոսության մեջ ճշմարտությունը դիտվում և ճանաչվում էր որպես երկնային կյանքի և մարդու պրակտիկ գործունեության արժեք: Մարդն ինքը պետք է որո-

---

[122] *Нерсесянц В.С.* История политических и правовых учений. *Учение Фомы Аквинского о государстве и праве*. Норма, М., 2003, с. 113.

շում կայացներ իր համար կարևոր հարցերի շուրջ:[123] *Այս դեպքում նկատվում է որոշակի անհատակարծություն, որը կարևոր նախապայման է համարվում հետագայում տարակարծության ձևավորման համար, այսինքն՝ այս պարագայում հնարավոր է դառնում խոսել որոշակի ընդդիմադիր կեցվածքի դրսևորման մասին, որը կարող է առաջանալ, եթե չեն գոհացվում հասարակության անդամների խելամիտ պահանջները*: Ռեֆորմացիայի գաղափարախոսությունը հիմք հանդիսացավ վաղբուրժուական գաղափարների ձևավորման համար:

Եթե իշխանության և հասարակության հնազանդության հարաբերությունները դիտարկենք իսլամի տեսանկյունից, ապա հարկ է նկատել, որ իսլամական համայնքում գործում է աստվածապետությունը, որտեղ իշխանությունը պատկանում է ալլահին և իրականացվում է նրա խոսքի ներկայացուցչի միջոցով: Իսլամը հիմնվում է կրոնական և պետական ոլորտներում միասնական իշխանության գաղափարի վրա: Իսլամում հավատացյալները բաժանվում են երկու խմբի՝ շիաների և սուննիների, իսկ ինքնիշխանության կրողն ալլահն է: Աշխարհիկ կառավարիչների մասին հարցը տարբեր ձևերով է մեկնաբանվում: Սուննիների կարծիքով ալլահը հավատացիալների համայնքին հրահանգ է տալիս իրականացնել բարձրագույն իշխանությունը: Համայնքն ընտրում է խալիֆ, որը ստանձնում է ղեկավարի գործառույթները: Սակայն խալիֆն առաջնորդվում է ալլահի կամքով, ինչի մասին մանրամասն գրված է Ղուրանում և Սուննայում:[124]

Սուննիները պետության կազմավորումը բացատրում են քաոսից խուսափելու անհրաժեշտությամբ: Իշխանության քննադատությունը նրանք համարում են անարգանք: Ինչ վերաբերում է շիաներին, ապա նրանք բացառում են իշխանության ծագման ռացիոնալ բացատրության փորձերը՝ ներկայացնելով կրոնական փաստարկներ: Նրանց կարծիքով իշխանությունը տրվում է ալլահի կողմից նրա ուղղակի ներկայացուցչին՝ իմամին, ով անսխալական է,

---

[123] *Нерсесянц В. С.* История политических и правовых учений. *Политические и правовые идеи Реформации*, Норма, М., 2003, с. 170.

[124] *Нерсесянц В. С.* История политических и правовых учений. *Политическая и правовая мысль Арабского Востока,* Норма, М., 2003, с. 126-141.

իսկ նրա իշխանությունը՝ սուրբ: Այսպիսին է իշխանության հնազանդության և ընդդիմության բացառման տեսական մեկնաբանությունը իսլամում:[125]

Միջնադարյան հասարակական-քաղաքական մտքի զարգացման շրջանակներում հարկ է անդրադառնալ նաև իշխանության և հասարակության հնազանդության վերաբերյալ միջնադարյան հայ մտածողների հայացքներին:

Միջնադարյան հայ մտածողների հասարակական-քաղաքական հայացքներն ուշագրավ են իրենց ինքնատիպությամբ, ինչը պայմանավորված է տվյալ ժանամակաշրջանում Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակով:

Միջնադարյան հայ քաղաքական մտքի պատմության մեջ մեծ է Մեսրոպ Մաշտոցի (362-440թթ.) ավանդը: Նա պետական իշխանության կարևոր գործառույթներից է համարում օրինազանցների պատժումը՝ նշելով, որ պատժի գործառույթը բնորոշ է բոլոր՝ աշխարհիկ և հոգևոր, երկրային և երկնային իշխանություններին, քրիստոնյա և հեթանոս ժողովուրդներին: Քրիստոնեական երկրներում առաջնորդվում են աստվածատուր օրենքներով, իսկ հեթանոսները, քանի որ չեն ճանաչում ճշմարիտ աստծուն, ղեկավարվում են զուտ բռնության օրենքով: Պետության և եկեղեցու միջև հարաբերությունների տեսանկյունից Մաշտոցը նշում է, որ յուրաքանչյուր թագավոր պետք է միշտ հիշի աստծո օրենքի և կամքի մասին, պահպանի սեփական անձի սրբությունն ու անբիծությունը, հետևի արդարությանը և ճշմարտությանը, այսինքն՝ աստվածային օրենքին: Թագավորը պարտավոր է լինել աստվածային օրենքի կրողն ու կիրառողը: Բոլոր մարդիկ վարձահատույց են լինում իրենց արարքների համար աստծո առջև, լինի թագավոր, թե հպատակ: Մաշտոցը աշխարհում առկա չարիքի պատճառը վերագրում է Աստծո կողմից մարդուն շնորհված կամքի ազատությանը, ընտրության ազատությանը, ինչը մարդուն հավասարապես կարող է տանել դեպի բարին կամ չարը: Բարին այն է, ինչը չի հակասում աստծո կամքին, օրենքին, նրա նշմարած ուղուն, իսկ չարն

[125] *Նույն տեղում:*

այն է, ինչը հակասում է դրանց: Մարդու կամքի ազատության, «անձնիշխանության» մեջ է չարի իրական աղբյուրը:[126] Մաշտոցը գտնում է, որ աստծո և նրա կամքի ներկայացուցչի՝ թագավորի դեմ անհնազանդության քայլեր կատարելն անթույլատրելի է: Այսինքն՝ հասարակությունը պետք է հնազանդվի աստվածային կամքին և դրա արտահայտման աղբյուր համարվող պետությանը:

Միջնադարյան հայ հասարակական-քաղաքական մտքի հաջորդ ներկայացուցիչը Եզնիկ Կողբացին է (380-450թթ.), ով քրիստոնեական վարդապետության արժեհամակարգում դիտարկում է մարդու անհատական և հավաքական ազատության ու փրկության խնդիրները՝ տեսնելով դրանց լուծումներն առ աստված հավատի մեջ: Ազատությունը նա դիտարկում է որպես ժողովրդի աստվածային իրավունք, որի դեմ բռնանալը հավասար է աստծո կամքին հակասելուն: Կողբացին առաջ է քաշում խղճի և դավանության ազատության պահանջը՝ հիմնավորելով յուրաքանչյուր ազգի ինքնության, քաղաքական, կրոնադավանաբանական, մշակութային զարգացման ուղիների ընտրության ազատությունը, սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքը:

Հետևելով իր ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցին՝ Կողբացին աշխարհում առկա բոլոր տեսակի չարիքների՝ սոցիալական անկարգությունների և անարդարության, բռնությունների և քաղաքական ոտնձգությունների պատճառը համարում է մարդու ազատ կամքը, ավելի ճիշտ՝ կամքի ազատության, անձնիշխանության սխալ օգտագործումը: Պետական օրենքների պահպանման, արդարադատության և օրինականության գերագույն երաշխիքը երկրի թագավորն է, ուստի հասարակությունում կատարվող բոլոր հանցագործությունների համար վրեժխնդիրը թագավորն է, իսկ իշխաններն ու դատավորները հետապնդում և պատժում են օրինազանցներին: Կողբացին նշում է, որը չարը դրսևորվում է միայն հասարակական-քաղաքական կյանքում, սոսկ մարդկային հարաբերություններում:[127]

---

[126] *Мирумян К. А.* О природе национальной интеллигенции и ее задачах/ Ереван, 1995, с. 78.
[127] *Եզնիկ Կողբացի*, Եղծ աղանդոց/ բնագիրը և աշխարհաբար թարգմ., Երևան, 1994:

Կողբացին կարևորում է հասարակության հնազանդության դերը պետության կայունության գործընթացում, քանզի հակառակ պարագայում կխարխլվեն պետականության հիմքերը, և ժողովուրդը նորից կարող է հայտնվել օտար զավթիչների տիրապետության տակ:

Ուշագրավ են նաև ականավոր պատմիչ, աստվածաբան-փիլիսոփա Եղիշեի (410-475թթ.) հայացքներն իշխանության և հասարակության հարաբերությունների մասին: Նա իշխանությունը տարանջատում է երկու մասի՝ երկնայինի և երկրայինի: Երկրային իշխանությունը տարածվում է սոցիալական, տնտեսական և քաղաքական հարաբերությունների վրա և իրավունք չունի տնօրինել մարդու հոգին, խիղճը և հավատը, որոնք պատկանում են երկնային թագավորությանը և ենթարկվում հոգևոր իշխանությանը:

Մեկնելով իշխանության ընկալման նման նախադրյալներից՝ Եղիշեն հայերի ապստամբությունը բացատրում է ոչ թե այն բանով, որ նրանք չէին ցանկանում ծառայել պարսից գահին, այլ որովհետև Սասանյաց իշխանությունը չէր սահմանափակվում, չէր բավարարվում աշխարհիկ իշխանությամբ և ձգտում էր տիրել նաև ազգի հոգևոր աշխարհին:

Պետական իշխանության և կառավարման ինստիտուտների հարցում Եղիշեն կարևորում է թագավորի դերը, որը պետք է լինի արդարամիտ, կարողանա իր շուրջը համախմբել, միավորել երկրի բոլոր սոցիալական խավերը, դառնալ հասարակության միասնության երաշխիքը, քանի որ թագավորը ոչ միայն իշխանություն և իրավունք, այլև պատասխանատվություն ունի իր երկրի և ժողովրդի առջև: Իմաստուն և արդար կառավարումը պահանջում է զերծ մնալ բռնություններից և օրինազանցություններից, որոնք կարող են կործանարար լինել ոչ միայն հպատակ ժողովրդի, այլև պետության և թագավորական իշխանության համար: Իմաստուն կառավարման պարագայում ծառաներն ու հպատակ ժողովուրդները չեն ընդդիմանա և չեն ապստամբի թագավորի գերագույն իշխանության դեմ:

Հասարակության կայունության, պետության կառավարման գործում Եղիշեն կարևորում է արդարադատության ինստիտուտի դերը: Ընդունելով երկու տեսակի իշխանություն և իրավունք (երկնային և

երկրային, հոգևոր և մարմնական), նա տարբերակում է նաև արդարադատության երկու տեսակ՝ աստվածային և մարդկային: Երկուսն էլ կապված են օրենսդրության, խրատի, դաստիարակության, ազատ կամքի, վարձահատուցման, մարդու գործնական կյանքի և օրինազանցության հետ: Դրանք նաև սկզբունքորեն տարբերվում են: Այսպես, «թագավորների օրենքը հանցավորներին է պատժում, իսկ Աստված՝ հանցավորին և ազգը, հանցավորներին որպես օրենսդիր, իսկ ազգին՝ որպես առաջագետ»:[128]

Միջնադարյան հայ հասարակական-քաղաքական մտքի վառ ներկայացուցիչներից է նաև խոշորագույն պատմիչ, փիլիսոփա և քաղաքական մտածող Մովսես Խորենացին (410-495թթ.): Պետության գործառույթների շրջանակներում նա կարևոր է համարում երկրում կարգ ու կանոնի հաստատումը, երկրի միավորումը, տիրելու ուժը և պաշտպանությունը օտար նվաճողներից: Խորենացին նշում է, որ քաղաքակրթական փուլի առանձնահատկություններից մեկը պետականության ձևավորումն է, բանավոր օրենքի վերածումը գրավոր օրենքի: Թագավորությունը սոցիալական և քաղաքական հարաբերությունների կարգավորման որակապես նոր՝ բարձր աստիճան է, իսկ գրավոր օրենքն առավել հաստատուն է դարձնում հասարակությունը, հասարակական կարգն ու կանոնը: Պետականության պատմությունը Խորենացին դիտում է որպես մարդկային հարաբերությունների (քաղաքական, սոցիալական, իրավական և այլն) կարգավորման պատմություն:

Խորենացին անդրադառնում է նաև պետություն-եկեղեցի հարաբերություններին և տարբերակում է հոգևոր և աշխարհիկ իշխանությունները, որոնց հարաբերակցությունը հակասական բնույթ է կրում: Եթե սկզբնական շրջանում հոգևոր ոլորտում թագավորական և կաթողիկոսական իշխանությունները հավասար էին, իսկ աշխարհիկ ոլորտում գերակայում էր թագավորական իշխանությունը, ապա ժամանակի ընթացքում աշխարհիկ կյանքում նկատվում է իշխանու-

---

[128] *Եղիշե,* Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի Վարդապետի մատենագրութիւնք, Վենետիկ, 1859, էջ 27:

թյան երկու ձևերի հավասարեցում, ինչը հոգևոր դասի իշխանական հավակնությունների և նախարարների կենտրոնախույս ձգտումների արդյունք էր:[129] Այս ամենը վկայում է երկու իշխանությունների միջև հակասությունների և մրցակցության առաջացման մասին, ինչը հանգեցրեց քաղաքական իշխանության, երկրի կառավարման ճգնաժամի և որպես բնականոն հետևանք՝ պետության կործանման և կաթողիկոսական իշխանության թուլացման:

Այսպիսով, Մովսես Խորենացու քաղաքական հայեցակարգն արտացոլում է պետություն-եկեղեցի հարաբերություններում տեղի ունեցած իրական փոփոխությունները:

Հասարակություն-պետություն հարաբերություններում Խորենացին կարևորում է օրենքների, խրատների և պատժի դերը, որոնք զսպիչ ուժ են համարվում հասարակության ազատ կամքի դրսևորման համար: Հասարակությունը պետք է անպայմանորեն ենթարկվի օրենքներին, որոնց ներգործությունը կրում է համընդհանուր բնույթ: Հասարակության կայունությունը և հաստատունությունը պայմանավորված են գործող օրենքներով, այն հանգամանքով, թե որքանով են դրանք ապահովում հասարակական կարգուկանոնը, որի խախտումն անհանդուրժելի է պետության և իշխանության համար: Հասարակական կարգուկանոնը ոչ միայն անհատական, այլև ողջ ժողովրդի վարքի և գործելակերպի կարգավորիչն է:

Միջնադարյան հայ հասարակական-քաղաքական մտքի խոշորագույն ներկայացուցիչներից է նաև Մխիթար Գոշը (1120-1213թթ.), ով իր հռչակավոր «Հայոց դատաստանագիրք» երկում անդրադառնում է պետության, իշխանության, հասարակության, իրավունքի և իրավահարաբերությունների հիմնարար սկզբունքներին:[130]

Մխիթար Գոշի դատաստանագրքում իրավական առումով շեշտը դրվում է բնական «աստվածային» իրավունքի վրա: Ըստ նրա՝

---

[129] *Մովսես Խորենացի*, Հայոց պատմություն/ *թարգմ., ներած., և ծանոթ. Ս. Մալխասյանի,* Երևան, 1981, էջ 36:

[130] *Մխիթար Գոշ*, Դատաստանագիրք, *փոխադր. Մ. Ոսկանյան, խմբ՝ Գ. Սաֆարյան, Ա. Հ.,* Երևան, 2008:

արարիչը մարդուն ստեղծել է ազատ, օժտել բանականությամբ, ազատ կամքով, ընտրության ազատությամբ:

Գոշի կարծիքով իրավունքի առանցքային խնդիրներից է բնական իրավունքի և դրական իրավունքի հարաբերակցությունը, ինչը բավականին կարևոր է հասարակական հարաբերությունների ձևավորման և կարգավորման համար: Բնական իրավունքի սկզբունքները որպես հավերժ, համամարդկային արժեքներ և գաղափարներ, բնականաբար փոփոխության չեն ենթարկվում, իսկ դրական իրավունքի նորմերը և համակարգերը փոփոխվում են և զարգանում, որովհետև դրանք ստեղծվում են մարդկանց կողմից, և օրինաստեղծ գործունեության վրա էապես ազդում են պատմական, քաղաքական և ազգային կոնկրետ գործոններն ու պայմանները, քանզի յուրաքանչյուր օրենսդրության հիմնական խնդիրն ու նպատակը կոնկրետ հասարակությունում կոնկրետ իրավահարաբերությունների կարգավորումն է:

Գոշը սահմանում է մի շարք նորմեր, որոնք դրական իրավունքը մերձեցնում են բնական իրավունքին, հավասարեցնում են մարդն ու անձը, այլ կերպ ասած՝ անխտիր բոլոր մարդկանց նաև դրական իրավունքի համակարգում, հասարակության մեջ գործող գրավոր օրենքի առջև:[131] Նա բնական և դրական իրավունքների մեջ գերիշխող դերը տալիս է բնական իրավունքին, որից բխեցնում է դրական իրավունքի սկզբունքները:

Տեղական իրավունքին նա հակադրում է ընդհանուր՝ համապետական օրենքը, վերջինիս գերակայություն տալով իրավահարաբերություններում: Համապետական օրենքի հիմքում նա դնում է տեղական, սովորութային իրավունքը:

Գոշը ևս առանձնացնում է իշխանության երկու կառույց՝ պետական և եկեղեցական, աշխարհիկ և հոգևոր: Իշխանության նման բաժանումը կոչված էր ապահովելու հայոց պետականությունն ու նրա հարստությունը՝ ընդգրկելով հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Գոշը նշում է, որ եկեղեցին պետք է զբաղվի միայն հոգևոր ոլոր-

---

[131] *Միրումյան Կ.* Հայ քաղաքական մտքի պատմությունից, Լինգվա, Երևան, 2002, էջ 178:

տով: Այն չպետք է հավակնի և միջամտի պետական-քաղաքական ոլորտին: Իսկ աշխարհիկ իշխանությունը պետք է զբաղվի զուտ պետական-քաղաքական խնդիրներով՝ չմիջամտելով հոգևոր գործերին:

Իշխանություն և հասարակություն հարաբերություններում Գոշը հանդես է գալիս որպես սոցիալական հարաբերությունների օրենսդրական կարգավորման և ներդաշնակության ջատագով: Մի կողմից նա սոցիալական ստորին խավերին կոչ է անում հնազանդվել տերերին, մյուս կողմից՝ վերջիններից պահանջում է «տեր կանգնել» իրենց հպատակներին, հոգալ նրանց մասին, բոլոր գործողություններն ու քայլերը կատարել օրենքի սահմաններում:

Միաժամանակ Գոշը հասկանում է, որ օրենքի առկայությունը ինքնին չի հանգեցնում դրա համատարած գործածությանը և օրինազանցության հաղթահարմանը: Ուստի այն տերերին, ովքեր շահագործում և ոտնահարում են հպատակների իրավունքներն ու մարդկային արժանիքները, նա հորդորում է սանձել կամայականությունը, լինել օրինապահ՝ զգուշացնելով, որ անսանձ վերաբերմունքը կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ հենց իրենց՝ տերերի համար:[132]

Ինչպես նշում է Գոշը՝ հասարակության կայունության ստեղծման և պահպանման համար անհրաժեշտ է հասարակական ընդհանուր շահերի «օգուտի» գերակայություն խավային և անհատական շահերի նկատմամբ, որովհետև «ոչինչ չկա պատվական, քան հասարակական օգուտը»:[133]

Այսպիսով, միջնադարյան հայ հասարակական-քաղաքական միտքն իր ուրույն տեղն ունի հայ ժողովրդի ազգային գիտակցության ձևավորման գործում: Երկար տարիներ շարունակ պետականության կորստի փաստն իր ազդեցությունն է թողել տվյալ ժամանակաշրջանի հայ մտածողների գաղափարների վրա: *Եթե միջնադարյան Եվրոպայի հասարակական-քաղաքական մտքի պատմությունում առաջնային տեղը պատկանում էր իշխանության և հասարակության,*

---

[132] *Միրումյան Կ.* Հայ քաղաքական մտքի պատմությունից, Լինգվա, Երևան, 2002, էջ 186:

[133] *Մխիթար Գոշ,* Առակներ, աշխատություն՝ է. Լ. Պիվազյանի, Երևան, 1951:

միապետի և անհատի, մարդու, պետության և եկեղեցու հարաբերությունների և իրավունքների ուսումնասիրությանը, ապա միջնադարյան Հայաստանում այդ հարցերի հետ մեկտեղ առավելապես կարևորվում էր Հայոց պետականության վերականգնման հարցը, որը մնացյալ հարցերի նկատմամբ ուներ առաջնային բնույթ:

Իշխանության և հասարակության հնազանդության վերաբերյալ միջնադարյան գաղափարներն իմի բերելով՝ արդյունքում ստանում ենք հասարակության հնազանդության և նրա հակադրության վերաբերյալ հակասական պատկեր: Մի կողմից աստվածահաճո իշխանությանը չհնազանդվելը դիտվում էր որպես մեղք, մյուս կողմից հասարակությունն իրավունք ուներ չհնազանդվել իշխանությանը, եթե այն իր ենթականերին հրամայում էր գործել հավատքին հակառակ: Եվ վերջապես, քննադատվում էր եկեղեցին այն բանի համար, որ ձգտում էր հարստության և իշխանության, ինչը վերջիվերջո հանգեցրեց եկեղեցու և աշխարհիկ իշխանության տարանջատմանը: Ինչ վերաբերում է երկկողմ քաղաքական խոսույթին, ապա միջնադարում դեռևս չէին ձևավորվել դրա նախադրյալները ընդդիմության ինստիտուտի բացակայության պատճառով:

Նոր ժամանակները (17-ից 19-րդ դդ.) առանձնանում է բացասական իշխանությանը հակադրվելու հիմնավորված, ռացիոնալ, իրավական փորձերով: Այս ժամանակաշրջանում է, որ իշխանության և հասարակության փոխհարաբերությունների վերաբերյալ ձևավորվում է այլ պատկերացում, որի համաձայն՝ իշխանությունը պետք է ծառայի հասարակությանը, քանզի առաջնային է համարվում ոչ թե կառավարչի, այլ անհատի, ժողովրդի ինքնիշխանությունը: Նոր ժամանակների դարաշրջանում ձևավորվում են կապիտալիստական հարաբերությունները, որոնք հաճախ ուղեկցվում էին սոցիալական և քաղաքական, մասնավորապես՝ բուրժուաժողովրդավարական հեղափոխություններով, որոնք ամրագրում են այն քաղաքական հայեցակարգը, ըստ որի՝ *իշխանության միակ աղբյուրը ժողովուրդն է, որն իրավունք ունի հակադրվել իշխանությանը*: Այս դարաշրջանում է, որ հնարավոր է դառնում խոսել «ընդդիմության»՝ որպես իշխանության հակադրության ինստիտուտի ձևավորման մասին:

Միջնադարից Նոր ժամանակների դարաշրջան անցնելու միջնափուլում մեծ ավանդ ունի իտալացի հասարակական-քաղաքական մտածող Նիկոլո Մաքիավելլին (1469-1527թթ.), ով տարանջատում է քաղաքականությունը կրոնից և էթիկայից: Լինելով Վերածննդի դարաշրջանի աշխարհիկ քաղաքական գիտության հիմնադիրը՝ Մաքիավելլին նշում է, որ «քաղաքական վարքագծի հիմքը ոչ թե բարոյականությունն է, այլ ուժն ու շահը: Սակայն միապետը պետք է հետապնդի նաև բարոյական նպատակներ, այդ պատճառով էլ բարի նպատակն արդարացնում է դրան հասնելու միջոցների ընտրությունը»:[134]

Ըստ Մաքիավելլու՝ նոր պետականության հաստատումը պետք է անցնի երկու փուլ՝ ա) միանձնյա իշխանության հաստատում՝ մասնատված և երկպառակտված օտար զավթիչների կողմից ջլատված պետության միավորման նպատակով: Այս խնդրի լուծմամբ ավարտվում է բացարձակ միապետության պատմական դերը, բ) չափավոր հանրապետության հաստատում: Բարեփոխված հասարակության, նոր կարգի պահպանումը պետք է վստահել մեծամասնությանը՝ ժողովրդի կառավարմանը: Այս պարագայում ժողովուրդը, կապված լինելով օրենքներով, ավելի իմաստուն է, կայուն և կշռադատող, քան իշխանը: Միայն չափավոր հանրապետությունը կարող է երաշխավորել քաղաքացիների ազատությունն ու հավասարությունը: Այս ամենի հետ մեկտեղ Մաքիավելլին կարծում էր, որ «աղանդների և կուսակցությունների առկայությունը» վնաս է պատճառում հանրապետությանը:[135]

Բռնապետին հակադրվելու, նրա դեմ ապստամբելու ժողովրդի իրավունքը կարևորում է նաև աբսոլյուտիզմի գաղափարախոս ֆրանսիացի Ժան Բոդենը (1530-1596թթ.), ով պետությունը համեմատում է կենդանի օրգանիզմի հետ: Պետությունում օրինաչափ է համարվում

---

[134] *Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս.* «Քաղաքագիտություն» հանրագիտական բառարան, *Նիկոլո Մաքիավելլի,* Print Master, Երևան, 2004, էջ 263:

[135] *Макиавелли Н.* Рассуждения о первой декаде Тита Ливия/ Государь: Сочинения. М.-Харьков, 1998, с. 135.

կառավարման մի ձևից մյուսին անցնելը (միապետությունից ժողովրդավարության), և իմաստուն ղեկավարը պետք է պարզեցնի իր պետության համար այդ անցումային փուլը՝ անցնելով չափավոր բարեփոխումների: Իսկ եթե ղեկավարը բավարարաչափ հեռատես չէ, երկրում այդ փոփոխությունները կուղեկցվեն ապստամբություններով:[136] Բոդենը բռնակալ է համարում նրան, ով իր սեփական հեղինակության շնորհիվ զավթում է գերագույն իշխանությունը ժողովրդի կամքին հակառակ: Այս դեպքում ժողովուրդը կարող է սպանել բռնակալին:

Բռնակալի կողմից ժողովրդի նկատմամբ բռնություն կիրառելու հետևանքով ժողովրդի հակազդեցության իրավունքի մասին խորհել է նաև ֆրանսիացի լուսավորիչ Ժան-Ժակ Ռուսոն (1712-1778թթ.)՝ նշելով, որ պետությունը աղքատների և հարուստների միջև պայմանագրի արդյունք է, որտեղ հարուստները հակված են պետության պահպանմանը իրենց շահերի և սեփականության պաշտպանության համար: Օրենքներն ընդունվում են հարուստների շահերին համապատասխան և այդպիսով ոչնչացնում մարդկանց բնական ազատությունը, ամրապնդում մասնավոր սեփականությունը և իրենց շահերի համար «մնացյալ մարդկանց դրդում են աշխատանքի, ստրկության և չքավորության»: Բռնակալն իր իշխանությունն իրականացնում է բռնությամբ, իսկ ժողովուրդը տապալում է բռնապետին: Արդյունքում, Ռուսոն եզրակացնում է, որ ամեն ինչ ընթանում է բնականոն հունով և օրինաչափորեն: Ազատության և հավասարության անցնելը նշանակում է նոր հասարակական դաշինքի կնքում, որի համաձայն յուրաքանչյուր ոք պետք է հրաժարվի իր իրավունքներից հանուն հանրության: Սակայն դրա փոխարեն մարդը ձեռք է բերում «քաղաքացիական ազատություն և սեփականության իրավունք» այն ամենի նկատմամբ, ինչը պատկանում է իրեն: Այսպես է ստեղծվում ազատ և հավասար անհատների միությունը, որը ձևավորում է պետություն: Ռուսոյի կարծիքով քաղաքացի է դառնում նա, ով հաղթահարում է

---

[136] *Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս.* «Քաղաքագիտություն» հանրագիտական բառարան, *Նիկոլո Մաքիավելլի,* Print Master, Երևան, 2004, էջ 70:

կամայականությունը, եսասիրական շահերը և իր սեփական շահերը ծառայեցնում է պետությանը: Ռուսոն ենթարկվում է ազատականների քննադատությանը իր այն դրույթի համար, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք պետք է իր անհատականությունը և սեփական ուժերը հանձնի ընդհանուր բարիքին՝ դառնալով ընդհանուրի անբաժան մաս:[137]

Մարդու իրավունքները որպես համընդհանուր սկզբունք, մարդու խռովության իրավունքը, քաղաքացիական հասարակության մասին պատկերացումներն առաջ է քաշել գերմանացի դասական փիլիսոփա Իմանուիլ Կանտը (1724-1804թթ.), ում կարծիքով օրենսդիրը պետք է ձգտի ընդունել այնպիսի օրենքներ, որոնց կարող են աջակցել քաղաքացիները: Այս հանգամանքով է պայմանավորված օրենքների լեգիտիմության սկզբունքը: Այն օրենքները, որոնք չեն բավարարում քաղաքացիների պահանջներին, կարող են խռովության պատճառ դառնալ:[138]

Նոր ժամանակների դարաշրջանում է, որ քաղաքական ազատությունները սկսում են ձևակերպվել անհատի և ամբողջ ժողովրդի քաղաքական իրավունքների տեսանկյունից: Այս երևույթն իր գործնական արտահայտումն է գտնում ժամանակի մի շարք իրավական փաստաթղթերում (Իրավունքի մասին բիլլ, 1698թ., Հաբեոս կորպուս ակտ, 1679թ.): Ամերիկացի լուսավորիչ Բենջամին Ֆրանկլինը, ով մասնակցում էր ԱՄՆ անկախության հռչակագրի մշակման գործին (1776թ.), առաջարկում է փաստաթղթում ներառել *ժողովրդի հեղափոխության իրավունքի* մասին դրույթ: Այս փաստաթղթում է, որ առաջին անգամ գործնականում դե յուրե ամրագրվում է իշխանությանը հակադրվելու ժողովրդի իրավունքը՝ որպես ժողովրդավարության կարևոր նախապայման: Նման իրավական նորմ հետագայում ձևակերպվում է նաև ֆրանսիական Մեծ հեղափոխության արդյունքում (1789թ.) մշակված «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչա-

---

[137] *Нерсесянц В. С.* История политических и правовых учений. *Политико-правовое учение Руссо*, Норма, М., 2003, с. 290.

[138] *Нерсесянц В. С.* История политических и правовых учений. *Учение И. Канта о государстве и праве*. Норма, М., 2003, с. 399.

կագրում», որտեղ նշվում է մարդու բնական և անօտարելի իրավունքների, ազատության, սեփականության, անվտանգության մասին:

Նոր ժամանակների դարաշրջանը սկիզբ դրեց դասական ազատականությանը, որի հիմնարար գաղափարներն են իրավական պետությունը և քաղաքացիական հասարակությունը, անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ընդդիմության ինստիտուտի միջոցով, որը կոչված է սահմանափակելու իշխանությունը (Բ. Կոնստան, Ֆ. Գիզո):[139]

Ֆրանսիացի ազատականներ Բենժամեն Կոնստանը (1767-1830թթ.) և Ֆրանսուա Գիզոն (1787-1874թթ.) առաջարկում և ապացուցում են մի գաղափար, ըստ որի՝ իշխանությունը «սոցիալականի» հետևանք է: Հասարակությունը գոյություն ունի ինքնուրույն և բոլոր հարցերում չէ, որ ենթակա է քաղաքական որոշումներին: Քաղաքական իշխանությունը դրսևորվում է միայն սոցիալականի միջոցով. անհատները հարաբերություններ են հաստատում ոչ թե օրենքների շնորհիվ, այլ ընդհակառակը՝ օրենքներն իրենցից ներկայացնում են իրենց նախորդող հարաբերությունների արտահայտությունը: Ինչպես նշում է Կոնստանը. «Յուրաքանչյուր մարդ անձամբ պետք է որոշի իր նպատակները, բարեկեցության գաղափարը, անձամբ տնօրինի իր կյանքը»: Անհատապաշտությունը վերածվում է գործնական սկզբունքի: Ազատականների պատկերացմամբ քաղաքական իշխանությունը ոչ թե ժողովրդի ինքնիշխանության սկզբունքի անմիջական իրականացումն է, այլ այդ իշխանության պատվիրակումը և դրա իրականացման վերահսկումը: Եթե Կոնստանի համար գլխավոր խնդիրը վերաբերում է իշխանության և հասարակության միջև հարաբերությունների կարգավորման եղանակին, ապա Գիզոյի համար գլխավորը ոչ կատարյալ իշխանության սահմանափակման հարցն է: Ուշագրավ է «Ժամանակակից Ֆրանսիայում կառավարման միջոցների և ընդդիմության մասին» Գիզոյի աշխատությունը, որտեղ նա անդրադառնում է հետհեղափոխական շրջանում ձևավորվող քաղաքական ընդդիմու-

---

[139] *Нерсесянц В. С.* История политических и правовых учений. *Французский либерализм.* Норма, М., 2003, с. 476.

թյանը: Նա կարևորում է իշխանության հակակշիռ համարվող ընդդիմության ինստիտուտը, որը նրա կարծիքով պետք է հետապնդի իշխանությանը, նրա դեմ հանդես գա իր զինանոցով, փորձի ճնշում գործադրել նրա վրա և հաղթանակ տանել:[140]

Հիմնվելով ժողովրդի՝ իշխանության ձևը փոխելու իրավունքի վրա՝ ընդդիմությունը պետք է ի վիճակի լինի փոխել կառավարությունը՝ այդպիսով բավարարելով հասարակության այն մասի պահանջները, որին ներկայացնում է: Արդյունքում, արդեն իշխանություն դարձած ընդդիմությունը պետք է պահպանի իշխանությունը, որի համար պայքարում էր:[141] Նման պայմաններում երևան են գալիս իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթին բնորոշ տարրերը:

Ուշագրավ են նաև հայ հասարակական-քաղաքական մտածող Շահամիր Շահամիրյանի հայացքներն իշխանության և հասարակության հարաբերությունների վերաբերյալ:

Շահամիր Շահամիրյանը (1723-1797թթ.) իր անմոռանալի ներդրումն ունի հայ հասարակական, քաղաքական և իրավական մտքի զարգացման գործում: Նրա հիմնական երկում՝ Որոգայթ Փառացում, արտացոլվում են նրա իրավաքաղաքական գաղափարները, որոնք հիմնված են ազատական գաղափարների վրա:[142] Շահամիրյանի իրավաքաղաքական հայեցակարգը հիմնված է բնական իրավունքի տեսության վրա, որի սկզբունքներն անփոփոխ են ու հավերժ, ինչպես և մարդկային բնությունը: Նրա կարծիքով քաղաքացիական իրավունքները պետք է համապատասխանեն մարդու բանական էությանը, այսինքն՝ դրական իրավունքի նորմերը պետք է բխեցվեն աստվածային իրավունքի սկզբունքներից: Ըստ Շահամիրյանի՝ մարդիկ իրենց էությամբ ծնվում են ի բնե հավասար, իսկ նրանց մեջ առկա մտավոր և այլ տարբերությունները կրթության և դաստիարակության հետևանք են: Ուստի բոլոր մարդիկ, անկախ հասարակա-

---

[140] *Гизо Ф.* Указ. соч., с. 448.
[141] *Նույն տեղում:*
[142] *Շահամիրյան Շ.* Որոգայթ փառաց, *խմբ.՝ Սաֆարյան Գ., թարգմ.՝ Խաչատրյան Պ.*, Imprint «Հայաստան», Երևան, 2002:

կան դիրքից, պետք է օժտված լինեն հավասար իրավունքներով: Քանի որ միապետական կարգն արհամարհում է մարդկանց բնական իրավունքները, հավասարության աստվածային սկզբունքը, մարդկային արժանապատվությունը, չի կարող իրականացնել և պաշտպանել սոցիալական արդարությունը և իրավական հավասարությունը, ուստի հայ ժողովրդի ազատագրական պայքարի նպատակը չի կարող լինել միապետության ստեղծումը:

Շահամիրյանը նշում է, որ հանրապետության դեպքում ժողովուրդը պարտավորություններ է ստանձնում ոչ թե միապետի, այլ իր իսկ նկատմամբ, ինչը համապատասխանում է արդարության և բնական իրավունքի սկզբունքներին: Ավելին՝ նա համոզված էր, որ հասարակական դաշինքի հիման վրա կարելի է ստեղծել միայն հանրապետական կարգեր: Հանրապետությունը Շահամիրյանը դիտում է որպես օրենքի, բանականության թագավորություն. «եթե ցանկանում եք ազատ լինել և հավասարապես իշխել ձեր աշխարհի, ձեր ունեցվածքի վրա, պատվի արժանանալ ձեր առաքինության համար, ապա հարկավոր է ընտրել բարի օրենքներ՝ հավասարապես բոլոր մարդկանց կամքի և ցանկության համաձայն՝ ձեր բանական հոգու հնարավորություններից ելնելով... »:[143]

Շահամիրյանի կարծիքով օրենքի միջոցով կարելի է վերացնել կամայականությունները, սոցիալական արտոնությունները և հաստատել սոցիալական ներդաշնակություն, արդարություն և հավասարություն: Սակայն այդպիսի ուժով օժտված են միայն այն օրենքները, որոնք ստեղծվել են բոլոր քաղաքացիների ազատ կամքով:

Որոգայթ փառացում Շահամիրյանը կարևորում է պետական իշխանությունների (օրենսդիր, գործադիր, դատական) տարանջատման սկզբունքը: Պետական գերագույն իշխանությունները պետք է ստեղծվեն բազմաստիճան ընտրությունների միջոցով և ծառայեն հասարակությանը:

---

[143] *Պողոսյան Կ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս.* «Քաղաքագիտություն» հանրագիտական բառարան, *Շահամիր Շահամիրյան,* Print Master, Երևան, 2004, էջ 307, *տես* նաև՝ *Շահամիրյան Շ.* Որոգայթ փառաց, Թիֆլիս, 1913:

Շահամիրյանի սահմանադրական նախագիծը նախատեսում է գործադիր իշխանության մի այլ եղանակ. այդ պաշտոնը կարող է լինել ցմահ և ժառանգական: Դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե հայ թագավորական հարստությունների ժառանգներից մեկը ցանկություն կունենա դառնալ գործադիր իշխանության գլուխը և կերդվի ենթարկվել Հայոց խորհրդարանի օրենքներին: Շահամիրյանի սահմանադրությունում հռչակվում է բոլոր ժողովուրդների հավասարությունը օրենքի առջև, խղճի ազատությունը, մտքի ազատությունը, խոսքի ազատությունը, գործունեության ազատությունը, եկեղեցու անջատումը պետությունից և դպրոցի անջատումը եկեղեցուց:

Շահամիրյանի քաղաքական հայեցակարգը մեծապես ազդել է հայ քաղաքական, մասնավորապես՝ սահմանադրական մտքի հետագա զարգացման վրա:

Այսպիսով, Նոր ժամանակների դարաշրջանում ավարտվում է իշխանության զսպման և սահմանափակման, նրա չարաշահման դեպքում որպես հակակշիռ հանդիսացող քաղաքական ընդդիմության ինստիտուտի ձևավորման մասին տեսական պատկերացումների շրջանը: Այս երևույթի մասին փիլիսոփայական, կրոնական, այնուհետև իրավական վերլուծությունները հանգեցրին ընդդիմության օրինականացման ռացիոնալության գաղափարին և իշխանությանը հակադրվելու ժողովրդի իրավունքի ամրագրմանը: Այս ժամանակաշրջանում սկսում են ձևավորվել իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթի հիմքերը:

Նորագույն շրջանում (19-րդ դարից ի վեր) հասարակության մեջ իշխանության և ընդդիմության տեղի և դերի մասին պատկերացումները ստանում են նոր երանգ: Այս ժամանակաշրջանը բնութագրվում է բուրժուական-ժողովրդավարական և սոցիալիստական հեղափոխություններով, որոնք փոխում են աշխարհի պատկերը դեպի բուրժուական և սոցիալիստական ժողովրդավարություններ, որոնք էլ սահմանափակում են ավանդական միապետական կարգերը սահմանադրությամբ: Ազատականության և հասարակությունների ժողովրդավարացման հիման վրա զարգանում է քաղաքական և իրա-

վական պլյուրալիզմը՝ ձևավորելով քաղաքական ընդդիմության ինստիտուտ, որը գործում էր և՛ խորհրդարանում, և՛ նրանից դուրս:

Նորագույն շրջանի հասարակական-քաղաքական կյանքում մեծ ազդեցություն է թողել *մարքսիզմը կամ գիտական սոցիալիզմը*, որի հիմնադիրներն են Կարլ Մարքսը (1818-1883թթ.) և Ֆրիդրիխ Էնգելսը (1820-1895թթ.): Մարքսիզմը պատմական զարգացման շարժիչ ուժ է համարում դասակարգերի պայքարը, որի գլխավոր սուբյեկտը դասակարգն է, որն իրենից ներկայացնում է գոյություն ունեցող արտադրական հարաբերությունների և դրանց քաղաքական ուղղվածության բնույթի դեմ ընդդիմություն:

Մարքսիստները գտնում են, որ գլխավոր հակասությունը աշխատանքի հասարակական բնույթի և եկամուտի յուրացման մասնավոր-կապիտալիստական միջոցի միջև հակասությունն է, որն անհրաժեշտ է վերացնել: Կապիտալի և խոշոր արդյունաբերության աճը հանգեցնում է աշխատավորների ընկերակցությունների միավորմանը և խոշորացմանը, որի արդյունքում աշխատավորները միավորվում են կոմունիստական կուսակցությունում, իսկ վերջինս նրանց զինում է բուրժուազիայի դեմ պայքարի գաղափարախոսությամբ:

Ըստ էության, մարքսիզմը բոլոր քաղաքական ուսմունքներից առաջինն էր, որը հարց բարձրացրեց հեղափոխությունների միջոցով աշխարհի վերափոխման մասին: Մինչ այդ «փիլիսոփաներն ուղղակի տարբեր ձևերով բացատրում էին աշխարհը, սակայն բանն այն է, որ հարկավոր է այն փոխել»:[144] Կոմունիստական կուսակցության խնդիրը գոյություն ունեցող հասարակական կարգի տապալումն էր, պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով սոցիալիզմի և կոմունիզմի հաստատումը, նոր հասարակական-տնտեսական ֆորմացիայի՝ առանց դասակարգերի հասարակության կառուցումը:

Իսկ ի՞նչ էր սպասվում ընդդիմությանը պրոլետարիատի կողմից իշխանության զավթման դեպքում: Մարքսիստները գտնում էին, որ քաղաքական իշխանությունը մի դասակարգի կողմից մյուսին ճնշելու համար կիրառվող կազմակերպված բռնությունն է: Երբ պրոլե-

[144] *Маркс К.* Тезисы о Фойербахе/ Маркс К. Энгельс Ф. Соч. Т. 3, с. 4.

տարիատը հեղափոխության միջոցով վերածվում է իշխող դասի և պարզեցնում նախկին արտադրական հարաբերությունները, ապա դրա հետ մեկտեղ վերացնում է դասակարգային հակադրության գոյության պայմանը, առհասարակ՝ դասակարգերը՝ արդյունքում վերացնելով նաև իր տիրապետությունը որպես դասակարգ: Արտադրությունը կենտրոնանում է ընկերակցությունների ձեռքում: Այդպիսով, հանրային իշխանությունը կորցնում է իր քաղաքական (բռնի) բնույթը, և ընդդիմությունը նրան հակազդելու կարիք չի ունենում: Ընդդիմության գոյության գաղափարը դառնում է անհեթեթ:

19-ից 20-րդ դդ. մի շարք գիտնականներ առանձնանում են իրենց գաղափարներով՝ կարևորելով էլիտաների և կառավարողների դասի նշանակությունը, առանց որոնց կառավարողներն ի վիճակի չեն լինի ինքնուրույն ապահովել հասարակության հետագա զարգացումը: Այդ գիտնականների թվին կարելի է դասել Վիլֆրեդո Պարետոյին (1848-1923թթ.), Գաետանո Մոսկային (1858-1941թթ.), Ռոբերտ Միխելսին (1876-1936թթ.), որոնց քաղաքական հայացքները հիմնվում են հետևյալ երկճյուղման վրա՝ «կառավարող էլիտար փոքրամասնություն և կառավարվող մեծամասնություն»: Պարետոն և Մոսկան համոզված էին, որ յուրաքանչյուր ժողովուրդ առանց էլիտայի ի զորու չէ կազմակերպել իր կյանքը: Ինչպես նշում է Մոսկան. «Միակ խթանին ենթարկվող կազմակերպված փոքրամասնությունը անդիմադրելի է անկազմակերպ մեծամասնության համար, որտեղ յուրաքանչյուր անհատ միայնակ կանգնած է կազմակերպված փոքրամասնության համապարփակության առջև: Միակերպ գործող հարյուրավոր մարդիկ հաղթանակ են տանում տարանջատված հազարավոր մարդկանց նկատմամբ»:[145] Ժողովրդի ապստամբությունը կամ հեղափոխությունը կարող են ոչնչացնել անհանդուրժելի դարձած փոքրամասնության իշխանությունը, սակայն այդ իշխանությանը փոխարինման է գալիս մեկ այլ փոքրամասնության իշխանություն, որը բխում է ժողովրդից:

[145] *Mosca G.* The Ruling Class, N.Y. 1939, p. 51.

Միխելսը գտնում է, որ «մարդկանց մեծամասնությունը դատապարտված է փոքրամասնության իշխանությանը ենթարկվելու անհրաժեշտությանը և պետք է բավարարվի այն բանով, որ օլիգարխիայի համար հանդիսանում է նրա նպատակներին հասնելու միջոց»:[146] Այստեղից բխում է կուսակցությունների տեսության վերաբերյալ Միխելսի եզրահանգումը. «Քաղաքական կուսակցությունը չի կարող չզարգանալ օլիգարխիայի ուղղությամբ»: Հոռետեսական են ժողովրդավարության վերաբերյալ Միխելսի հայացքները: Նա գտնում է, որ ժողովրդավարությունն անհնարին է, քանզի ժողովուրդն ունակ չէ ինքնակազմակերպվել և ինքնակառավարվել: Այդպիսի ունակություններ ունեցող էլիտար փոքրամասնությունները օգտագործում են քաղաքական կազմակերպությունները՝ կուսակցությունները, այն բանի համար, որպեսզի ամրապնդեն իրենց խմբային լիդերությունը, ստեղծեն և ամրացնեն հաջորդ օլիգարխիան, այսինքն՝ մեծամասնության նկատմամբ ընտրյալ փոքրամասնության իշխանությունը:

Միխելսը քննադատում է Մարքսի այն գաղափարը, ըստ որի՝ վերջինիս կողմից գովերգվող պրոլետարիատի դիկտատուրայի կողմից ստեղծված պետությունն իրականում սոցիալիստ առաջնորդների դիկտատուրան է: Բացի այդ, «դիկտատուրա» հասկացությունը հակառակ է «ժողովրդավարություն» հասկացությանը: Առաջինի օգտագործումը հանուն երկրորդի հավասարարժեք է խաղաղության համար պատերազմ սկսելուն: Ահա ինչու է Միխելսը հոռետեսորեն տրամադրված ժողովրդավարության նկատմամբ և հակված է ավտորիտարիզմին, քանզի այդ վարչակարգի պայմաններում է հնարավոր իրադարձությունների բնականոն ընթացքը:

Սակայն որքան էլ որ քննադատեն սոցիալիստական կուսակցությունների գործունեությունը, անհերքելի է այն փաստը, որ մարքսիստական գաղափարները գործնականում հեղաշրջեցին համաշխարհային պատմությունը: Ռուսաստանում, այնուհետև մի շարք այլ երկրներում (խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում,

[146] *Michels R.* Political Parties, London, 1915, p. 407.

1921թ.) տեղի ունեցան սոցիալիստական հեղափոխություններ, և հաղթանակեց կոմունիստական ընդդիմությունը:

Պատմական այս իրադարձություններից հետո աշխարհը բաժանվեց երկու քաղաքական համակարգերի միջև՝ *կապիտալիզմի* և *սոցիալիզմի*: 20-րդ դարի առաջին կեսին այդ համակարգերի միջև սկսվում է իրական գաղափարախոսական և տնտեսական հակամարտություն: Սակայն արտաքին թշնամու կամ քաղաքական ընդդիմության գոյությունն ի դեմս այլ պետությունների, բացառում է ներքին ընդդիմության գոյությունը: Դրան նպաստում են բուրժուազիայի դեմ սոցիալիստական ժողովրդավարության պայքարում հաղթանակած կոմունիստական կուսակցության առաջնորդի ուսմունքը, սոցիալիզմին հասնելու համար դասակարգային պայքարի թեժացման գաղափարը, և այս ամենը հանգեցնում է *այլակարծության դեմ փաստացի համակարգված պայքարին, որն էլ բացառում է սոցիալիստական համակարգ ունեցող մի շարք երկրների ներքին քաղաքական կյանքում ընդդիմության ինստիտուտի գոյությունը*: Իսկ կապիտալիստական երկրներում և հատկապես՝ Արևմուտքում, փաստացիորեն արգելվում էր կոմունիստական ընդդիմության գործունեությունը:

Երկրորդ աշխարհամարտից հետո այդ քաղաքական իրավիճակն իմաստավորեց և ընդհանրացրեց ֆրանսիացի քաղաքագետ Մորիս Դյուվերժեն (1917թ.):

Ուշագրավ է նրա «Քաղաքական կուսակցություններ» աշխատությունը (1951թ.), որտեղ նա ուսումնասիրում է ընդդիմադիր կուսակցությունների ծագման և զարգացման հարցերը: Պատմության ընթացքում ընդդիմությունն ունեցել է տարբեր դրսևորումներ: Նրա օրինականացման տեսանկյունից հետաքրքիր է Հին Հռոմում *պլեբեյների* ինստիտուտը, որի ներկայացուցիչներն ունեին բողոքի իրավունք: Հետագայում ճորտատիրական միապետություններում ընդդիմության դերը պատկանում էր եկեղեցուն:

Իշխանության տարանջատման սկզբունքի միջոցով «արտաքին ընդդիմության» փոխարեն ստեղծվեց «ներքին ընդդիմությունը»: Թագավորին կից ստեղծվեց ասամբլեան, որպեսզի սահմանափակի նրա իշխանությունը: Երբ միապետությունը վերացավ (իսկ յակոբին-

յանների փորձը ցույց տվեց, թե որքան վտանգավոր է լիազորությունների կենտրոնացումը մի անձի ձեռքում), ստեղծվեց երկպալատ մարմին: Քաղաքական կուսակցությունների զարգացումն իշխանության տարանջատման հետ մեկտեղ վերափոխեց նաև ընդդիմության գործառույթները՝ նրան դարձնելով առանձին մարմին, որն արտաքին դիրք էր գրավում կառավարության նկատմամբ: Փոքրամասնության կուսակցությունները դարձան պլեբեյների ժառանգորդները, որոնցում էլ հենց կենտրոնանում է ժամանակակից քաղաքական ընդդիմության ինստիտուտը:[147]

Դյուվերժեն գտնում է, որ արևմտյան ժողովրդավարությանը հատուկ է կազմակերպված ընդդիմությունը, իսկ արևելյան ժողովըրդավարությունում կազմակերպված ընդդիմությունը բացակայում է: Առաջինի պարագայում պատճառը բազմակուսակցական համակարգն է, իսկ երկրորդի պարագայում՝ միակուսակցականը:

Ընդդիմության ինստիտուտի մասին կարելի է խոսել միայն բազմակուսակցական և երկկուսակցական քաղաքական համակարգերում: Այս պարագայում հարկ է նշել, որ երկկուսակցական համակարգն է, որ ընդդիմությանը դարձնում է իսկական քաղաքական ինստիտուտ: Այս երևույթին նպաստում է իշխանության և ընդդիմության՝ որպես «մեծամասնության կուսակցության» և «փոքրամասնության կուսակցության» միջև գործառույթների բաժանումը: Դյուվերժեն մատնանշում է Անգլիայի օրինակը, երբ փոքրամասնության կուսակցության լիդերը պետությունից պարբերաբար ստանում է պարգևատրություն և «Ձերդ Մեծության կառավարության ընդդիմության լիդերի» պաշտոնական կոչում: Բազմակուսակցական համակարգի դեպքում իշխանության և ընդդիմության միջև ժողովրդավարության գիծը ջնջվում է, և, փաստորեն, բացակայում է այն մարմինը, որը կստանձնի ընդդիմության գործառույթները: Սակայն ամուր կոալիցիաները բազմակուսակցական համակարգին կարող են մո-

[147] *Дюверже М.* Политические партии, М., 2000, с. 451-455.

տեցնել երկկուսակցականին՝ ընդդիմությանը դարձնելով ավելի ամուր, չափավոր և որոշակի:[148]

Ինչ վերաբերում է ամբողջատիրական վարչակարգերին, ապա դրանք լիովին բացառում են քաղաքական ընդդիմության գործունեությունը, քանզի այդ վարչակարգերում վերահսկվում են ոչ միայն քաղաքական, այլև հասարակական կյանքի բոլոր բնագավառները, նույնիսկ՝ կենցաղը:

Ուշագրավ են նաև քաղաքական ընդդիմության ինստիտուտի վերաբերյալ պլյուրալիստական ժողովրդավարության կողմնակիցների տեսակետները: 1971թ.-ին Ռոբերտ Դահլը[149] հրատարակում է իր «Պոլիարխիա, մասնակցություն և ընդդիմություն» աշխատությունը, որում կառավարության և նրա ընդդիմախոսների միջև մրցակցությունը դիտում է որպես ժողովրդավարացման կարևոր պայման: Դահլը գտնում է, որ ժողովրդավարության հիմնական հատկանիշը կառավարության կողմից քաղաքացիների պահանջներին արձագանքելն է: Որպեսզի կառավարությունը կարողանա երկարաժամկետ արձագանքել քաղաքացիների պահանջներին, ապա վերջիններս պետք է ավելի լայն հնարավորություններ ունենան ձևակերպելու իրենց պահանջները, կառավարությանը տեղեկացնելու դրանց մասին անհատական կամ կոլեկտիվ գործողությունների միջոցով, որոնք կպայմանավորեն կառավարության գործունեությունը:

Այս ամենի համար անհրաժեշտ են հետևյալ երաշխիքները՝ կազմակերպություններ հիմնելու իրավունք, ազատ և արդար ընտրություններ, ժողովրդի կամքից կախվածություն ունեցող պետական քաղաքական ինստիտուտներ: Դահլի կարծիքով քաղաքական վարչակարգերը բնութագրվում են քաղաքացիների համար վերոհիշյալ երաշխիքների հասանելիության տեսանկյունից: Քաղաքացիները

---

[148] *Նույն տեղում,* էջ 487-488:

[149] *Դահլ Ռ.* 20-րդ դարի հասարակական-քաղաքական մտքի դասականներ. Ժողովրդավարության սահմանները և հնարավորությունները: Ընդհանուր խմբագրությունը և ներածական հոդվածը՝ *Գրիգորյան Հ., Գրիգորյանց Գ.* «Զանգակ - 97», Երևան, 2006:

պետք է նաև քվեարկության և իշխանության համար քաղաքական մրցակցությանը մասնակցելու իրավունք ունենան:[150]

20-րդ դարի 90-ական թթ. սկզբին սոցիալիզմի համակարգի փլուզումից հետո ընդդիմության ճնշման նորմը պահպանվեց նախկին սոցճամբարի մի շարք պետություններում, որոնք չկրեցին նշանակալի քաղաքական փոփոխություններ (Չինաստանի Ազգային Ժողովրդական Հանրապետություն, Կուբա և այլն):

Արևմուտքի քաղաքական պրակտիկայում ճանաչվում է միայն «կառուցողական ընդդիմությունը», որն աջակցում է քաղաքական համակարգին, սակայն քննադատում է կառավարության քաղաքական ուղին:

Այսպիսով, վերոշարադրյալ նյութի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ իշխանության հակադրության գաղափարը զարգացել է պատմականորեն և քաղաքականորեն: Հին դարերում այն ստանում էր փիլիսոփայական-բարոյական հիմնավորում, միջին դարերում՝ կրոնական-բարոյական հիմնավորում, Նոր ժամանակներում՝ ռացիոնալ և իրավական հիմնավորում, նորագույն շրջանում՝ պլյուրալիստական հիմնավորում:

Իշխանության հակազդեցության ինստիտուտի վրա ազդեցություն է գործում ոչ միայն իշխանությունը, այլև պատմաքաղաքական համատեքստը, քաղաքական մշակույթի զարգացումը, քաղաքական միտքը, քաղաքական համակարգը, էթիկան, կրոնը և իրավունքը: Պատմահամեմատական մեթոդով իշխանության հակադրության ինստիտուտի վերլուծությունը թույլ է տալիս ընդգծել այս հարցի վերաբերյալ Արևելքում և Արևմուտքում առկա մոտեցումների առանձնահատկությունները: Եթե Արևելքի բարոյաքաղաքական և կրոնական հայեցակարգերում ավելի բարձր է գնահատվում ընդհանրությունը և կոլեկտիվին հնազանդվելու բարոյականությունը, ապա Արևմուտքում ավելի բարձր են դասվում անհատի իրավունքները, քաղաքական և բարոյական ընտրության հնարավորությունները: Արևելքում ընդդի-

---

[150] *Dahl R.* Polyarchy: Participation and Opposition. Yale University Press, New heaven and London, 1971, p. 18.

մությունն ավելի շուտ սահմանափակվում է ընդհանուր բարոյական նորմերով, քան օրենքներով, իսկ Արևմուտքում ընդհակառակը՝ ընդդիմությունը սահմանափակվում է օրենքներով, այլ ոչ թե բարոյականությամբ:

Քաղաքական ընդդիմությունը քաղաքական իշխանության հակադրության կազմակերպված ինստիտուտ է, որն առաջարկում է այլընտրանքային գաղափարներ և հասարակության զարգացման ծրագրեր: Որպես քաղաքական ընդդիմության սուբյեկտներ կարող են հանդես գալ ինչպես հին, այնպես էլ նոր սոցիալական շերտերը, խմբերը, որոնք չեն կարողանում բավարարել իրենց նյութական, քաղաքական պահանջները՝ այդպիսով ձգտելով ավելի բարձր սոցիալական և քաղաքական կարգավիճակի, ինչն էլ կարող է հանգեցնել իշխանության և ընդդիմության միջև կոնֆլիկտային խոսույթի ձևավորմանը:

Չնայած այն հանգամանքին, որ այսօր ժամանակակից աշխարհում գոյություն ունեն ժողովրդավարության վերաբերյալ տասնյակ հասկացություններ և տեսություններ, անհրաժեշտ ենք համարում ժողովրդավարական պետության վերաբերյալ կարևոր քաղաքական տասը չափորոշիչների ձևակերպումը: Դրանք են՝ 1. իշխանության աղբյուրը ժողովուրդն է, 2. պետության կառավարման գործընթացին մասնակցելու քաղաքացիների իրավունքը, 3. մեծամասնության կողմից որոշումների ընդունումը փոքրամասնության կարծիքը հաշվի առնելու պայմանով, 4. տեղեկատվության հասանելիության քաղաքացիների իրավունքը, 5. ԶԼՄ-ների ազատությունը, 6. համընդհանուր ընտրությունների միջոցով ձևավորվող իշխանության ներկայացուցչական մարմինները, 7. քաղաքացիների իրավունքների և ազատությունների այն ծավալը, որը հնարավորություն է տալիս օրինականորեն գործել նաև քաղաքական ընդդիմությանը, 8. իշխանության տարանջատման սկզբունքը, 9. քաղաքականության հրապարակայնությունը, 10. քաղաքական պլյուրալիզմը:

Անդրադառնանք Հայաստանի երրորդ հանրապետությանը (1991թ.-ից), որտեղ Խորհրդային Միության փլուզումից հետո սկսեց ձևավորվել իշխանությանը հակակշիռ համարվող քաղաքական ընդ-

դիմության ինստիտուտը: Այս հարցի ուսումնասիրության դեպքում պետք է նշել մի կարևոր հանգամանք, ըստ որի հետխորհրդային Հայաստանում ընդդիմության ինստիտուտի ձևավորումն ուղեկցվում էր անցումային փուլի դժվարություններով, որն առկա էր ողջ հետխորհրդային քաղաքական տարածաշրջանում: Սակայն այս հանգամանքը միակը չէր, որը խոչընդոտ հանդիսացավ մեր երկրում տվյալ քաղաքական ինստիտուտի՝ որպես ժողովրդավարության նախադրյալի և քաղաքացիական հասարակության բաղկացուցիչ տարրի ձևավորման ճանապարհին: Խոսքը վերաբերում է անկայուն արտաքին քաղաքական իրավիճակին, որի շրջանակներում մեզ պարտադրվեց հայ ժողովրդի միասնության համար պայքար մղել հարևան պետության՝ Ադրբեջանի դեմ: Ղարաբաղյան պատերազմը համընկավ Հայաստանի Հանրապետության անկախության առաջին տարիների հետ, որն ավելի խստացրեց երկրի թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքական դրությունը:

Քաղաքական վարչակարգի փոփոխման արդյունքում ՀՀ-ում հաստատվեց ժողովրդավարական վարչակարգ, որի հիմնական տարրերից մեկը քաղաքական պլյուրալիզմն է, ինչը ենթադրում է քաղաքական բազմակուսակցական համակարգի ձևավորում: Չնայած այն բանին, որ ՀՀ-ում ստեղծվեցին ընդդիմության գործունեության համար իրավական հիմքեր, այս քաղաքական ինստիտուտը դեռևս շարունակում է իր կազմավորման գործընթացը:

Ընդդիմության ինստիտուտը սերտորեն կապված է ժողովրդավարության կայացման գործընթացի հետ, և քանի դեռ այդ գործընթացը գտնվում է ընթացքի մեջ, քաղաքական ընդդիմության ինստիտուտը շարունակում է մնալ անկատար և ոչ լիարժեք կազմավորված քաղաքական կառույց:

ՀՀ-ում ընդդիմությունը դեռևս այն քաղաքական ուժը չէ, որը կարող է էական ազդեցություն գործել իշխանության կողմից ընդունվող կարևոր որոշումների վրա: Այդուհանդերձ, այս քաղաքական ինստիտուտը շարունակում է զարգանալ՝ ձգտելով դառնալ այն այլընտրանքային միավորը, որը կարող է մրցել իշխանության հետ ոչ միայն ընտրությունների ժամանակ, այլև, իրապես ներգրավված

լինելով խորհրդարանում, փորձել վերահսկել իշխանության գործունեությունը և դառնալ վերջինիս համար իրատեսական հակակշիռ:

Անցումային փուլում գտնվող ՀՀ-ի համար ընդդիմության ինստիտուտի ինստիտուցիոնալացումը կարևոր հանգամանք է, քանի որ այս ինստիտուտի լիարժեք գործունեությունը կարող է նպաստել ժողովրդավարության ամրապնդմանը, որտեղ կարևորվում են նաև քաղաքական փոքրամասնության շահերը: Ժողովրդավարությունը ենթադրում է ոչ միայն իշխանության և ընդդիմության միջև մրցակցություն, այլև՝ այս երկու քաղաքական ինստիտուտների միջև դիրքերի փոփոխման հնարավորություն: Անցումային փուլում չի բացառվում իշխող էլիտայի փոփոխությունը ընտրությունների միջոցով: Սակայն այս դեպքում հնարավոր է, որ իշխանությունը կիրառի ճնշում, որին որպես իրական հակակշիռ՝ ընդդիմությունը պետք է հայտարարի ժողովրդավարական ազատ մրցակցության, ընտրությունների արդար կազմակերպման և իրականացման անհրաժեշտության մասին՝ այն համարելով քաղաքական մասնակցության և իշխանության համար պայքարի եզակի ընդունելի ձև:[151] Այս քաղաքական սցենարը հատուկ է հետխորհրդային մի շարք երկրներին, այդ թվում՝ Հայաստանին:

Հարկ է նշել, որ Հայաստանում ընդդիմությունը ձևավորվում է ոչ այնքան քաղաքական գաղափարների, այլ ավելի շուտ այս կամ այն քաղաքական լիդերի շուրջ, որի գլխավոր նպատակը իշխանություն ձեռք բերելու դեպքում իր և իրեն սատարող քաղաքական ուժերի շահերի ներկայացումն ու պաշտպանումն է, քան ժողովրդի փոքրամասնության կարծիքի, նրա խնդիրների և պահանջների ներկայացումը:

ՀՀ-ում քաղաքական ընդդիմության լիարժեք գործունեության համար անհրաժեշտ են նաև մի շարք ռեսուրսներ, որոնցից կարևորագույնը տեղեկատվական ռեսուրսն է, որի միջոցով ընդդիմությունը կարող է իր այլընտրանքային գաղափարներն ու ծրագրերը հասանելի դարձնել հանրությանը: Տեղեկատվական ռեսուրսների շարքում

---

[151] *Բաղդասարյան Ա.* Ընդդիմության էությունը և դերն անցումային քաղաքական վարչակարգում, Հայաստան № 1, «Նորավարք», Երևան, 2005, էջ 33-47:

քաղաքական բանավոր խոսույթի տեսանկյունից ամենակարևորը հեռուստատեսությունն է, որը լսարանի մոտ ավելի արդյունավետ կերպով է ձևավորում տվյալ քաղաքական ուժի շահերին համապատասխան հասարակական գիտակցություն: Զրկված լինելով այս ռեսուրսից՝ ընդդիմության գործունեության արդյունավետությունը սկսում է անկում ապրել: Ազատ և չեզոք լրատվամիջոցները կարևոր դեր են խաղում ընտրարշավների ընթացքում: Նրանց անաչառ գործունեությունը և հավատարժան տեղեկատվության մատուցումը լսարանին կարող են ընդդիմությանը իրական հնարավորություններ տալ իշխանության հետ պայքարում հաղթանակի հասնելու համար:

Հարկ է նշել, որ ընդդիմության գործունեությունը կարող է նպաստել նաև կոալիցիաների ձևավորմանը, որը տեղի է ունենում ընտրությունների արդյունքում այս կամ այն քաղաքական ուժի կողմից խորհրդարանում ձայների լիարժեք մեծամասնություն ձեռք չբերելու հետևանքով: Այս երևույթը վառ դրսևորվեց Հայաստանում, երբ Ազգային Ժողովի երրորդ գումարման ժամանակ երեք կուսակցություններ կազմեցին կոալիցիա (ՀՀԿ, ՀՅԴ, Օրինաց երկիր): Այս երևույթը կրկնվեց նաև Աժ հաջորդ գումարման ժամանակ, երբ չորս կուսակցություններ կազմեցին կոալիցիա (ՀՀԿ, ԲՀԿ, ՀՅԴ (2009թ.-ին դուրս է եկել), Օրինաց երկիր):

Իմի բերելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ ՀՀ-ում անցումային փուլում ընթացող քաղաքական ընդդիմության ձևավորման գործընթացն ուղեկցվում էր խոչընդոտներով, որոնցից առանձնակի նշանակություն ունեն ղարաբաղյան հակամարտությունը, քաղաքական, տնտեսական և սոցիալական խնդիրները, որոնք երկրում ստեղծեցին ճգնաժամային իրավիճակ: Սկզբնական շրջանում (1991-1996թթ.) ընդդիմությունը մեղադրվում էր այն ամենում, ինչում հնարավոր էր: Արդյունքում, իշխանությունը մասնակիորեն արգելում էր նրա գործունեությունը (օրինակ՝ 1996թ. ՀՅԴ-ի գործունեության արգելում) կամ էլ ուղղակի ձերբակալում նրա լիդերներին: Դրանից հետո կարելի է արձանագրել ընդդիմության գործունեության

որոշակի ազատություն, որը նաև արտահայտվում է տեղեկատվական դաշտում, մասնավորապես՝ մամուլում:[152]

Եթե փորձենք ամբողջությամբ բնութագրել Հայաստանում քաղաքական ընդդիմության գործունեությունը, ապա միանշանակ կարող ենք ասել, որ մինչ օրս դեռ գոյություն չունի ինստիտուցիոնալացված ժողովրդավարական քաղաքական ընդդիմություն: Ընդդիմադիր քաղաքական ուժերի մեծ մասը զուրկ է կազմակերպչական ամբողջականությունից, զարգացած ենթակառուցվածքից, հստակ սոցիալական հիմքերից, ստույգ քաղաքական այլընտրանքային գաղափարախոսությունից: Այս երևույթը մի կողմից պայմանավորված է ժողովրդավարության գործընթացի անավարտությամբ, քանի որ այդ գործընթացի յուրացումը նախ և առաջ պետք է իրականանա հասարակական մակարդակում, այնուհանդերձ՝ քաղաքական ոլորտում: Մյուս կողմից այս երևույթը պայմանավորված է ընդդիմության լիդերների անձնական շահերի, նպատակների և իշխանատենչության առաջնայնության սկզբունքով: Այսինքն՝ քաղաքական ընդդիմությունը փորձում է ներգրավվել իշխանությունում և այն յուրացնել ոչ թե ժողովրդավարացման գործընթացը խթանելու և քաղաքական փոքրամասնության շահերը ներկայացնելու համար, այլ՝ սեփական շահերից ելնելով: Որպես կանոն՝ իշխանության մեջ ներառված որոշ ընդդիմադիր միավորներ շատ արագ մոռանում են իրենց գաղափարների, հռչակած արժեքների ու նորմերի մասին և քաղաքական դիրքերի ամրապնդման նպատակով սկսում են համագործակցել իշխանության ղեկին գտնվող ուժերի հետ՝ չկատարելով իրենց հիմնական գործառույթը, այն է՝ իշխանությանը հակադիր և այլընտրանքային ծրագրերի իրականացումը, որոնց միջոցով հնարավորություն կստեղծվի որոշ խնդիրներին տալ համապատասխան լուծումներ:

Հարկ է նշել, որ ԱԺ բոլոր գումարումներում էլ ընդդիմությունը կարողացել է խորհրդարանում ապահովել որոշակի ներկայություն:

---

[152] *Ընդդիմադիր մամուլ*՝ Հայք, Չորրորդ իշխանություն, Իսկական իրավունք, Ժամանակ Երևան, Հայկական ժամանակ:

2. Քաղաքական մասնակցության ձևերը քաղաքական խոսույթի համատեքստում

Մասնակցության խնդիրը միշտ եղել է քաղաքականության բաղկացուցիչ տարրերից մեկը: Քաղաքական գործընթացներն առանց մասնակցության պատկերացնելն ուղղակի անհնարին է, քանզի այն հանդիսանում է քաղաքական վարքագծի դրսևորման ձև, որի հիմնական գործառույթը քաղաքական համակարգի գործառնության վրա ազդեցություն գործելն է, այսինքն՝ քաղաքական որոշումներին և քաղաքական գործընթացներին, ինչպես նաև՝ քաղաքական ինստիտուտների ձևավորմանը մասնակցելը:

Ժողովրդավարական վարչակարգի պայմաններում է, որ հնարավոր է դառնում հասարակության լայն զանգվածների մասնակցությունը քաղաքական գործընթացներին, մինչդեռ ամբողջատիրական և ավտորիտար քաղաքական վարչակարգերում այն խիստ սահմանափակ է և կրում է ձևական բնույթ: Ամբողջատիրական վարչակարգերում քաղաքական որոշումներն ընդունվում են քաղաքական լիդերի անմիջական մասնակցությամբ և նրա կողմից, իսկ ավտորիտար վարչակարգերում, որը ենթադրում է քաղաքականության նկատմամբ իշխանության մենաշնորհ, քաղաքական որոշումներն ընդունվում են իշխանության ղեկին գտնվող անձանց կամ խմբի կողմից: Փաստորեն, քաղաքական մասնակցության լայն հնարավորությունները կարող են գործնականում դրսևորվել միայն ժողովրդավարական վարչակարգի շրջանակներում, որտեղ գործում է ձևավորված քաղաքացիական հասարակություն: Քաղաքացիական հասարակությունը, լինելով ժողովրդավարական պետության կարևոր նախապայման, մեծ դեր է կատարում քաղաքական մասնակցության ապահովման գործում: Քաղաքացիական հասարակությունը պետությունից անկախ, սակայն նրա հետ համագործակցող հասարակություն է, որի անդամների միջև հաստատվել են տնտեսական, մշակութային, իրավական և քաղաքական զարգացած հարաբերություններ: Քաղաքացիական հասարակությունը տեսականորեն ենթադրում է այնպիսի հասարակություն, որում պետությունը ոչ թե հասարակությունից վեր

կանգնած մի կազմակերպություն է, այլ հասարակության բաղկացուցիչ մասը, իրավական մի կառույց, որը չի միջամտում ինչպես քաղաքացիների, այնպես էլ հասարակական միավորումների, քաղաքական կուսակցությունների գործունեությանը և ի վերջո ծառայում է մարդկանց՝ պայմաններ ստեղծելով նրանց նախաձեռնության, ձեռներեցության, ազատ գործունեության համար և ապահովելով նրանց իրավունքներն ու ազատությունները: Այսպիսի պատկերացումները հասարակության համար դառնում են իդեալ, ծրագիր և զարգացման նպատակ, որը հասարակության, իշխանության, քաղաքականության և մարդկանց համար անվերջ կատարելագործման ընթացք է: Այն ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներն առանց բացառության: Իրապես քաղաքացիական հասարակությունը որոշվում է այդ իդեալի և հասարակության համար իրականում ձեռք բերված վիճակի հարաբերությամբ, ինչպես և ազատության, հավասարության, արդարության և սոցիալական, քաղաքական, բարոյական, մշակութային, այլ արժեքների ձեռքբերման մակարդակով:[153]

Այսպիսով, քաղաքացիական հասարակությունը և քաղաքական մասնակցությունը փոխկապակցված են, որոնց բացակայության պայմաններում քաղաքական համակարգը կդառնա միակողմանի, սահմանափակ և ոչ մոբիլ, այսինքն՝ կկորցնի հասարակության համար իր արդյունավետ զարգացման հնարավորությունը:

Քաղաքական մասնակցության մասին առավել տարածված դասակարգումներից մեկն առաջարկել է բրիտանացի քաղաքագետ Ա. Մարշը[154], ով առանձնացնում է քաղաքական մասնակցության երեք հիմնական ձև՝ *օրթոդոքսալ, ոչ օրթոդոքսալ և քաղաքական հանցագործություն*: Քաղաքական օրթոդոքսալ մասնակցության շարքին են դասվում քաղաքական համակարգի կայուն գործառնությունն ապահովող գործողությունները, իսկ ոչ օրթոդոքսալ են համարվում չարտոնված կամ քաղաքական համակարգի դեմ ուղղված գործողու-

---

[153] *Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս.* «Քաղաքագիտություն» հանրագիտական բառարան, Print Master, Երևան, 2004, էջ 448:

[154] *Marsh A.* Protest and Political Consciousness, London, 1977.

թյունները: Ինչ վերաբերում է քաղաքական հանցագործությանը, ապա այն իրենից ներկայացնում է ոչ լեգիտիմ բռնությամբ ուղեկցվող ապօրինի գործողություններ:

Քաղաքական մասնակցությունը շատ հաճախ ուղեկցվում է քաղաքացիական անհնազանդությամբ: Հետաքրքիր է այս հարցի վերաբերյալ Հաբերմասի[155] դիրքորոշումը, ով ազատ պետության քաղաքական մշակույթի հիմնաքարը համարում է քաղաքացիական անհնազանդությունը, քանզի դրա մեթոդները և օրինականությունը դեռևս չեն երաշխավորում քաղաքական որոշումների լեգիտիմությունը: Սակայն ինքնավար իշխանությանը դիմադրություն կարող է ցույց տալ միայն քաղաքացիական հասարակությունը, որն օժտված է ակտիվ, քննադատական մտքով, իշխանությանը վերահսկելու և դրա անարդար որոշումների դեմ պայքարելու իրավազորությամբ: Այս պարագայում կարելի է նշել, որ ընդդիմությունը հասարակության ակտիվ մասն է, որը ցանկանում է լուծել առկա սոցիալական խնդիրներն այլընտրանքային ճանապարհով:

Քաղաքական մասնակցության գործում կարևորվում է նաև քաղաքական խոսույթի դերը, որը ենթադրում է քաղաքական գործընթացների մասնակիցների միջև կարծիքների, դիրքորոշումների, մտադրությունների ինքնակամ և ազատ փոխանակում, ինչն անհրաժեշտ է քաղաքական դիրքորոշումների հստակեցման, ինչպես նաև առկա քաղաքական և սոցիալական խնդիրների շուրջ հնարավոր համաձայնության ձեռքբերման համար: Այս պարագայում քաղաքական մասնակցությունը կարելի է մեկնաբանել կոնֆլիկտային և համաձայնության խոսույթների տեսանկյունից: Բացասական մտադրությամբ քաղաքական մասնակցությունը կարող է ստեղծել կոնֆլիկտային խոսույթի իրավիճակ, մինչդեռ դրական մտադրությամբ քաղաքական մասնակցությունը ենթադրում է համաձայնության խոսույթ: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ կոնֆլիկտային խոսույթի հաղթահարումը հնարավոր է դառնում համաձայնության խոսույթի

[155] *Habermas J.* Civil Disobedience. Litmus Test for the Democratic Constitutional State/ Berkeley Journal of Sociology, 1985.

միջոցով, հետևաբար բացասական հետևանքներ ունեցող քաղաքական մասնակցության խնդրի դրական լուծման միակ խելամիտ միջոցը համաձայնության խոսույթն է:

Անդրադառնանք քաղաքական մասնակցության *կոնվենցիոնալ* և *ոչ կոնվենցիոնալ* ձևերին: Քաղաքական մասնակցության այս դասակարգումն առաջարկել է ամերիկացի քաղաքագետ Լ. Միլբրայթը:[156] Կոնվենցիոնալ մասնակցություն ասելով՝ Միլբրայթը նկատի ունի օրինական մասնակցությունը, իսկ ոչ կոնվենցիոնալ մասնակցությունը ենթադրում է իշխանության և քաղաքական համակարգի դեմ ուղղված ապօրինի գործողություններ: Առաջինի թվին են դասվում քվեարկությունը, մասնակցությունը կուսակցությունների աշխատանքներին և նախընտրական քարոզարշավներին, իսկ երկրորդի թվին են դասվում մասնակցությունը խռովություններին, դավադրություններին, հեղաշրջումներին, քաղաքական ահաբեկչությանը, ծայրահեղականությանը և այլն:

Կոնվենցիոնալ քաղաքական մասնակցության ձևերը սահմանվում են օրենսդրությամբ և կարգավորվում են վերջինիս կողմից: Այսպիսի քաղաքական մասնակցությունը վերահսկվում է իշխանության կողմից, հետևաբար ենթարկվում է որոշակի սահմանափակումների, որն իր հերթին թույլ չի տալիս քաղաքական մասնակցության տվյալ ձևին լիարժեք դրսևորվել: Որպես օրինակ կարելի է նշել *ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին ՀՀ օրենքը,* որը սահմանում է. «1. Սույն օրենքի նպատակը Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով ամրագրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և իրավաբանական անձանց խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է՝ ապահովելով ժողովրդավարական հասարակությունում պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության, բարքերի, այլ

[156] *Milbrath L. W.* Political Participation, Chicago, 1965.

քաղաքացիների իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանությունը: 2. Սույն օրենքը կարգավորում է խաղաղ ժողովներ, հանրահավաքներ, երթեր (շքերթներ) կամ ցույցեր (այդ թվում՝ նաև նստացույցեր), ինչպես նաև այլ միջոցառումներ անցկացնելու հետ կապված հարաբերությունները»:[157]

Սույն հոդվածը հետագայում ենթարկվեց լրամշակման, որտեղ հստակորեն սահմանվեց. «1. Սույն օրենքի նպատակը Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով ամրագրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ քաղաքացիներ) և իրավաբանական անձանց խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունքի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է: Այս իրավունքի իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակական անվտանգության, անկարգությունները և հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսելուն ոստիկանության և պետական մարմինների կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ: 2. Սույն օրենքը կարգավորում է խաղաղ ժողովներ, հանրահավաքներ, երթեր (շքերթներ) կամ ցույցեր (այդ թվում՝ նաև նստացույցեր), ինչպես նաև այլ միջոցառումներ անցկացնելու հետ կապված հարաբերությունները»:[158] *(1-ին հոդվածը փոփ. 04.10.05 ՀՕ-183-Ն):* Արդյունքում տվյալ հոդվածի լրամշակված տարբերակում ավելի հստակորեն են սահմանվում այս օրենքի նպատակները և կարգավորման առարկաները:

---

[157] *Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին ՀՀ օրենքը, հոդված 1, կետ՝ 1, 2*, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1192

[158] *Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին ՀՀ օրենքը, հոդված 1, կետ՝ 1, 2*, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1192

Հարկ է նշել, որ պետության քաղաքականությունը շատ հաճախ ուղղված է լինում հասարակության քաղաքական մասնակցության վերոհիշյալ ձևի սահմանափակմանը, ինչը չի համապատասխանում ժողովրդավարական արժեքներին և քաղաքացիական հասարակության սկզբունքներին՝ արգելք հանդիսանալով ժողովրդավարացման գործընթացի համար:

Անհրաժեշտ է ընդլայնել հասարակության քաղաքական մասնակցության շրջանակները, քանզի ժողովրդի կողմից ընտրվող իշխանությունը պետք է պատասխանատու և հաշվետու լինի ժողովրդի առջև և չփորձի խուսափել վերջինիս քննադատությունից, ինչը հաճախ տեղի է ունենում ժամանակակից աշխարհում: Ժողովրդավարական պետություններում քաղաքական մասնակցության ձև հանդիսացող հանրահավաքներին, ցույցերին, երթերին մասնակցությունը դիտարկվում է որպես ժողովրդի կողմից իշխանությանը վերահսկելու հրապարակային գործառույթ, որն իշխանությանը ստիպում է չանտեսել ժողովրդի շահերը և նրան չզրկել պետության կառավարման գործընթացում անուղղակի մասնակցությունից: Սակայն այս հանգամանքը չպետք է նաև որոշ քաղաքական շահեր հետապնդող ուժերի համար դառնա իշխանության դեմ ուժով դուրս գալու նախապայման և ծառայի նրանց եսասիրական նպատակներին ու նկրտումներին, այլ ընդհակառակը՝ այս պարագայում պետք է գործի փոխզսպման և փոխհամաձայնության սկզբունքը երկուստեք բարօրության ապահովման համար:

Ոչ կոնվենցիոնալ քաղաքական մասնակցության առավել հաճախ հանդիպող ձևերից են *խռովությունը, պուտչը, ապստամբությունը, հեղափոխությունը և այլն*: Այս երևույթները դրսևորվել են պատմության տարբեր փուլերում և շարունակվում են մինչ օրս:

Ստորև մանրամասնորեն ներկայացնենք ոչ կոնվենցիոնալ քաղաքական մասնակցության վերոհիշյալ ձևերը:

Խռովությունը առկա սոցիալական իրականության դեմ ուղղված մարդկանց մեծ զանգվածների գործնական ակտիվությունն է: Այն կրում է տարերային բնույթ և չունի ոչ մի դրական ծրագիր, որն ուղղված կլինի խախտված նորմերի վերականգնմանը: Հետազոտող-

ների մի մասը խռովությունը դասում է ապստամբության ձևերի շարքում:

Ապստամբությունը սոցիալական զանգվածային գործողության ավելի բարձր աստիճան է, քան խռովությունը: Այն ունի կազմակերպված ղեկավարներ և ներառում է որոշակի նպատակներ, որոնք հիմնավորվում են ոչ բարդ ծրագրերով, կարգախոսներով, ինչը գործնականում բացառվում է խռովության դեպքում: Ապստամբության մասնակիցները հակադրվում են իշխանության ներկայացուցիչներին՝ քննադատելով նրանց գործողությունները: Ապստամբությունը դասակարգային հակամարտություն է, այլ ոչ թե խմբային պայքար:

Իմի բերելով վերոհիշյալը՝ կարելի է ձևակերպել ապստամբության վերաբերյալ հետևյալ սահմանումը: *Ապստամբությունը որոշ դասակարգերի բացահայտ զինված գործունեությունն է, որն ուղղված է քաղաքական իշխանության, գործող քաղաքական վարչակարգի դեմ*: Դրա նպատակները պայմանավորում են վերջինիս ձևերը: Այս տեսանկյունից Ա. Միզերը տարբերակում է ապստամբության հետևյալ ձևերը:

1.*Բունտ*՝ զանգվածների տարերային, չկազմակերպված գործունեություն: Որպես կանոն՝ այն ունի տեղային բնույթ, չի ենթադրում համազգային խնդիրների լուծում, դրա սոցիալական հիմքը կազմված է հալածված հասարակական զանգվածներից:

2.*Ռազմական պուտչ*՝ պետական հեղաշրջում կատարելու նպատակով դավադիրների ռեակցիոն գործունեություն:

3.*Խռովություն*՝ պետական հեղաշրջման նպատակով գործող քաղաքական իշխանության դեմ ուղղված ռեակցիոն ռազմական խմբավորման զինված գործունեություն, որը հաջողության հասնելու դեպքում հաստատում է ռազմական դիկտատուրա, ոչնչացնում է ժողովրդավարական հաստատությունները, վերացնում է ժողովրդավարական իրավունքները և ազատությունները, կիրառում է զանգվածային ահաբեկում:

4.*Ռազմական հեղաշրջում*՝ պետական իշխանությունը բռնի կերպով փոխելու ձև, որի արդյունքում երկրի կառավարումը ստանձնում են զինվորականները:

5.*Զանգվածային զինված ապստամբություն*՝ նպատակը քաղաքական իշխանության զավթումն է: Դրանով են սկսվել քիչ թե շատ նշանակալի քաղաքական հեղափոխությունները (օրինակ՝ ֆրանսիական Մեծ հեղափոխությունը 1789թ.):

Ընդհանուր առմամբ այս բոլոր ձևերն էլ ունեն ընդհանուր հատկանիշներ և դրանց միջև խիստ հատկանշական տարբերություններ չեն նկատվում, քանզի այս ձևերի գլխավոր նպատակն ուժի գործադրությամբ քաղաքական իշխանության տապալումն է և նորի հաստատումը:

Ժամանակակից աշխարհում առաջանում են ոչ կոնվենցիոնալ քաղաքական մասնակցության նոր ձևեր, որոնց թվին կարելի է դասել *քաղաքական ծայրահեղականությունը* և *քաղաքական ահաբեկչությունը*: Հետազոտողների մի մասը հակված է դրանք չհամարել որպես քաղաքական մասնակցության ձևեր, քանզի դրանք վերագրվում են քրեորեն պատժելի հանցանքներին, սակայն մյուսները գտնում են, որ ընդդիմությունը ևս մի ժամանակ արգելված էր և համարվում էր հակակառավարական գործունեություն, որի համար սահմանվում էր ծանր պատիժ: Մինչդեռ այսօր ժողովրդավարական երկրներում այն քաղաքական գործընթացների ազատ մասնակից է:

Քաղաքական ծայրահեղականությունը բացասական, հակասոցիալական երևույթ է, որն իր քաղաքական նպատակներին հասնելու համար կիրառում է ոչ լեգիտիմ բռնություն կամ սպառնալիքներ: Հասարակական-քաղաքական երևույթ համարվող քաղաքական ծայրահեղականությունն իր քաղաքական նպատակներին հասնելու համար, առանց որևէ լեգիտիմ լիազորության, կիրառում է բռնության տարբեր ձևեր: Այս պարագայում կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին՝ *1. քաղաքական ծայրահեղականությունը որոշակի սոցիալ-տնտեսական կենսապայմանների ստեղծումն է, 2. ծայրահեղականության գլխավոր հատկությունը քաղաքական պայքարում բռնության կիրառումն է, 3. ծայրահեղականությունը քաղաքական պայքարի մեթոդ է:*

Ինչ վերաբերում է քաղաքական ահաբեկչությանը, ապա այն ևս իր քաղաքական նպատակներին հասնելու համար կիրառում է

բռնություն: Գոյություն ունի ահաբեկչության վերաբերյալ մոտ հարյուր սահմանում, սակայն այդ սահմանումների հիմնական գաղափարը հետևյալն է՝ *բռնությունը կամ բռնության սպառնալիքը համարվում են ահաբեկչության միջոց*: Մի շարք քաղաքագիտական բառարաններում «ահաբեկչություն» տերմինը սահմանվում է որպես ծայրահեղական կազմակերպությունների և անձանց ընդդիմադիր գործունեություն, երբ բռնությամբ կամ դրա սպառնալիքով տվյալ ուժերը փորձում են հասնել իրենց նպատակներին:[159] Գոյություն ունի նաև ահաբեկչության մեկ այլ էական բաղադրիչ: Խոսքը վերջինիս քաղաքական ուղղվածության մասին է: Այս դեպքում դիտարկվում է ահաբեկչության՝ որոշակի քաղաքական նպատակների հասնելու երևույթը: Ի դեպ՝ այդ քաղաքական նպատակները բազմազան են: Դրանք կարող են ուղղված լինել պետական կարգի փլուզմանը, տնտեսական, քաղաքական, սոցիալական բարեփոխումների անցկացմանը, որոնք անտեսվում են իշխանությունների կողմից:

Հարկ է նշել մի կարևոր հանգամանք, ըստ որի քաղաքական բռնության սուբյեկտը և օբյեկտը կարող են փոխվել քաղաքական գործընթացների զարգացման հետևանքով: Եթե քաղաքական գործընթացները հանգեցնում են տնտեսական, սոցիալական ճգնաժամերի, ապա քաղաքական բռնության սուբյեկտի դերը ստանձնում են հասարակության ճնշված շերտերը, որպեսզի քաղաքական բռնության ճանապարհով իշխանությանը ստիպեն լուծել առկա կենսական նշանակություն ունեցող խնդիրները կամ զիջել իշխանությունն ավելի բանիմաց և նպատակասլաց քաղաքական ուժերին՝ արդյունքում իշխանությանը դարձնելով քաղաքական բռնության օբյեկտ: Մինչդեռ քաղաքական իշխանությունը կարող է դիմել քաղաքական բռնության՝ դառնալով դրա սուբյեկտ միայն այն ժամանակ, երբ առկա է թաքնված կամ բացահայտ սպառնալիք որոշ հասարակական-քաղաքական ուժերի կողմից իշխանությունը զավթելու համար: Այս

---

[159] *Պողոսյան Կ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս.* «Քաղաքագիտություն» հանրագիտական բառարան, Print Master, Երևան, 2004:

դեպքում քաղաքական իշխանությունը դիմում է բռնություն գործադրելու իր լեգիտիմ իրավունքին այն պատճառով, որպեսզի ճնշի իր դեմ դուրս ելած քաղաքական ուժերին՝ փորձելով պաշտպանել իր լեգիտիմությունը, իշխանությունը և սահմանադրական կարգը: Հայտնի ճշմարտություն է այն, որ *ոչ մի քաղաքական ուժ չի ցանկանում իշխանությունը կամովին զիջել ուրիշներին*: Նման դեպքերում իշխանության և հասարակության կամ նրա մի հատվածի միջև առաջացած կոնֆլիկտային իրավիճակը հարթելու համար հարկավոր է երկկողմ փոխզիջումային քաղաքականության իրականացում, որտեղ հաշվի կառնվեն երկու կողմերի շահերը, և քայլեր կձեռնարկվեն կոնսենսուսի միջոցով առկա խնդիրների փոխշահավետ լուծմանը հասնելու համար: Այս պարագայում կարևոր նախապայման է հանդիսանում քաղաքական խոսույթը, քանի որ միայն դրա առկայության և արդյունավետ գործելու պայմաններում են հնարավոր կոնֆլիկտների հարթման վերոհիշյալ կոնսենսուսային եղանակները: *Քաղաքական խոսույթը, որն ապահովում է քաղաքական հաղորդակցությունը ինչպես կոնֆլիկտային, այնպես էլ հետկոնֆլիկտային իրավիճակներում, թույլ է տալիս առկա խնդիրների համար գտնել ավելի իրատեսական և արդյունավետ լուծումներ*:

Ոչ կոնվենցիոնալ քաղաքական մասնակցության այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ ծայրահեղականությունը և ահաբեկչությունը, պահանջում են օրենսդրական սահմանափակումներ: Վերջին ժամանակներում ՀՀ-ում այս ուղղությամբ ձեռնարկվել են բազմաթիվ միջոցառումներ:

2005թ. մարտի 22-ին ԱԺ-ն ընդունեց ահաբեկչության դեմ պայքարի մասին ՀՀ օրենքը, որը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության դեմ պայքարի իրավական և կազմակերպական հիմքերը և կարգավորում է ահաբեկչության դեմ պայքարի իրականացման հետ կապված հարաբերությունները: Այս օրենքում հստակ սահմանվում են ահաբեկչության դեմ պայքարի նպատակ-

ները, որոնց համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության դեմ պայքարի կազմակերպումը նպատակաուղղված է՝ 1. ահաբեկչական գործունեության նախազգուշացմանը, բացահայտմանը, կանխմանը, խափանմանը և դրա հետևանքների նվազեցմանը, 2. ահաբեկչությունից անձի, հասարակության և պետության պաշտպանությանը, 3. ահաբեկչական գործունեությանը նպաստող պատճառների ու պայմանների բացահայտմանը և վերացմանը:[160]

Ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում ՀՀ-ն ստորագրել է նաև մի շարք միջազգային փաստաթղթեր, որոնցից են՝ 1997թ. դեկտեմբերի 16-ին Նյու Յորքում ստորագրված՝ Ահաբեկչական ռմբահարումների դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիան, 1999թ. դեկտեմբերի 9-ին Նյու Յորքում ստորագրված՝ Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին միջազգային կոնվենցիան, 2000թ. նոյեմբերի 15-ին Նյու Յորքում ստորագրված՝ Միջազգային կազմակերպված հանցագործության դեմ պայքարի ՄԱԿ-ի համաձայնագիրը, 2004թ. հոկտեմբերի 17-ին Մոսկվայում ստորագրված՝ Ահաբեկչության դեմ պայքարի ԱՊՀ անդամ-պետությունների փոխգործակցության մասին պայմանագիրը:[161]

Միանշանակ կարելի է արձանագրել, որ ՀՀ-ում ոչ կոնվենցիոնալ քաղաքական մասնակցության այս ոլորտն ունի հստակ իրավական կարգավորման հիմքեր:

Կոնվենցիոնալ քաղաքական մասնակցության ամենատարածված ձևը *ընտրազանգվածի մասնակցությունն է ընտրություններին*: Ժողովրդավարական պետություններում չափազանց կարևոր է քաղաքական մասնակցության այս ձևը, քանի որ այն հիմք է հանդիսանում համընդհանուր ընտրությունների միջոցով քաղաքական իշխանության ձևավորման համար: Որպես ժողովրդավարացման գործընթացում գտնվող երկիր՝ ՀՀ-ի համար ևս կարևոր է ընտրա-

---

[160] *Ահաբեկչության դեմ պայքարի մասին ՀՀ օրենքը*, հոդված 2, կետ՝ 1, 2, 3:
[161] *ՀՀ Սահմանադրական դատարանի կայքէջ*, www.concourt.am

զանգվածի վարքագիծը, քանզի այն քաղաքացիական հասարակության ձևավորման և դրա ամրապնդման կարևոր նախապայմաններից մեկն է:

Այժմ անդրադառնանք 1991թ.-ից մինչև 2008թ. տեղի ունեցած ՀՀ Նախագահի ընտրությունների, ԱԺ ընտրությունների և Սահմանադրության հանրաքվեների ուսումնասիրությանը և վերլուծությանը տվյալ ժամանակահատվածում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության դինամիկայի հետազոտման նպատակով: Ստորև ներկայացնենք 1991-2008թթ. ընտրազանգվածի քաղաքական մասնակցության պատկերը ՀՀ-ում, որը հիմնված է պաշտոնական տվյալների վրա:[162]

---

[162] *ՀՀ Ազգային արխիվ՝ 1.* ՀՀ Գերագույն Խորհրդի Պատգամավորների ընտրությունների կենտրոնական ընտրական հանձնաժողով, 1991թ. հոկտեմբերի 16-ի ՀՀ նախագահի ընտրության արձանագրություններ, ֆոնդ 1183, ցուցակ 1, գործ 52, *2.* Վերլուծական տեղեկանք, ՀՀ ԱԺ ընտրությունների և ՀՀ Սահմանադրության հանրաքվեի արդյունքների ամփոփման մասին, ֆոնդ 1183, ցուցակ 1, գործ 31, *3.* ՀՀ նախագահի ընտրությունների ընտրական հանձնաժողովների արձանագրություններ, ֆոնդ 1183, ցուցակ 3, գործ 97, *4.* 1998թ. ՀՀ նախագահի արտահերթ ընտրությունների քվեարկության վերջնական արդյունքների մասին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ամփոփիչ արձանագրություններ, ֆոնդ 1183, ցուցակ 3, գործ 143, *5.* 1999թ. մայիսի 30-ի ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքներ, http://elections.am/Default.aspx, *6.* 2003թ. փետրվարի 19-ի ՀՀ Նախագահի ընտրությունների 1-ին փուլի արդյունքներ, http://elections.am/Default.aspx, *7.* 2003թ. մարտի 5-ի ՀՀ Նախագահի ընտրությունների 2-րդ փուլի արդյունքներ, http://elections.am/Default.aspx, *8.* 2003թ. մայիսի 25-ի ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքներ, http://elections.am/Default.aspx, *9.* 2003թ. մայիսի 25-ի (ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի) հանրաքվեի արդյունքներ, http://elections.am/Default.aspx, *10.* 2005թ. նոյեմբերի 27-ի (ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի) հանրաքվեի արդյունքներ, http://elections.am/Default.aspx, *11.* 2007թ. մայիսի 12-ի ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքներ, http://elections.am/Default.aspx, *12.* 2008թ. փետրվարի 19-ի ՀՀ Նախագահի ընտրություններ, http://elections.am/Default.aspx

Աղյուսակ 2.

1991-2008թթ. ՀՀ-ում ընտրություններին քաղաքացիների մասնակցության պատկերը

Տարեթիվը	ՀՀ ընտրողների ընդհանուր թիվը ըստ ընտրողների ցուցակների	Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը՝ ըստ ստորագրությունների	Մասնակցության տոկոսը՝
1991թ. Ն.Ը.	2. 155. 698	1. 518. 090	70.4%
1995թ. Ս.Հ.	2. 189. 804	1. 217. 531	55.6%
1995թ. Աժ.Ը.	2. 461. 700	1. 283. 573	52.1%
1996թ. Ն.Ը.	2. 201. 999	1. 331. 029	60.4%
1998թ. Ն.Ը. I փուլ	2. 300. 816	1. 449. 004	62.9%
1998թ. Ն.Ը. II փուլ	2. 300. 816	1. 567. 702	68.1%
1999թ. Աժ.Ը.	2. 198. 544	1. 137. 660	51.7%
2003թ. Ն.Ը. I փուլ	2. 315. 410	1. 462. 383	63.1%
2003թ. Ն.Ը. II փուլ	2. 331. 507	1. 595. 702	68.4%
2003թ. Աժ.Ը.	2. 340. 744	1. 233. 757	52.7%
2003թ. Ս.Հ.	2. 339. 704	1. 215. 908	51.9%
2005թ. Ս.Հ.	2. 317. 462	1. 514. 545	65.3%
2007թ. Աժ.Ը.	2. 319. 722	1. 391. 540	59.9%
2008թ. Ն.Ը.	2. 311. 917	1. 671. 027	72.2%

1991-2008թթ. ՀՀ-ում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության վերաբերյալ վերոհիշյալ տվյալների համադրման և համեմատության արդյունքում ստանում ենք հետևյալ պատկերը՝

Գծապատկեր 2.



1991-2008թթ. Քաղաքական մասնակցության դինամիկան տոկոսային արտահայտությամբ

Այսպիսով, 1991-2008թթ. միջև ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում քաղաքական մասնակցության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների մասնակցության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2008թ. փետրվարի 19-ի ՀՀ Նախագահի ընտրություններում (72.20%), երկրորդ տեղում է 1991թ. հեկտեմբերի 16-ի ՀՀ Նախագահի ընտրություններում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ցուցանիշը (70.40%), երրորդ տեղում՝ 2003թ. մարտի 30-ին տեղի ունեցած ՀՀ Նախագահի ընտրությունների երկրորդ փուլում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ցուցանիշը (68.40%), չորրորդ տեղում՝ 1998թ. մարտի 16-ին տեղի ունեցած ՀՀ Նախագահի ընտրությունների երկրորդ փուլում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ցուցանիշը (68.10%): ՀՀ-ում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ամենացածր ցուցանիշը

գրանցվել է 2003թ. մայիսի 25-ի (ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի) հանրաքվեում (51.90%):

Ուշագրավ է այն, որ 1991-2008թթ. միջև ընկած ժամանակահատվածում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ամենաբարձր ցուցանիշները ՀՀ-ում գրանցվել են նախագահական ընտրությունների ժամանակ (1991թ., 1996թ., 1998թ., 2003թ., 2008թ.), մինչդեռ ԱԺ ընտրությունների (1995թ., 1999թ., 2003թ., 2007թ.) և, Սահմանադրության հանրաքվեների (1995թ., 2003թ., 2005թ.) ժամանակ ընտրազանգվածի մասնակցության ցուցանիշներն ընդհանուր առմամբ զիջում են նախագահական ընտրությունների ցուցանիշներին:

Գծապատկեր 3.



Այս երևույթը կապված է տվյալ իրադարձությունների շուրջ հասարակական-քաղաքական քննարկումների հաճախակիության և դրանց հրապարակայնության հետ: Բանն այն է, որ նախագահական ընտրությունների ժամանակ քաղաքական քննարկումների տիրույթը, տեղեկատվության տարածման ծավալները և հասարակության կող-

մից դրանց ուղղված արձագանքներն ավելի մեծ են, քան համընդհանուր քվեարկության մյուս դեպքերում, քանզի նախագահական ընտրությունների ժամանակ հասարակության գրեթե բոլոր շերտերը ցուցաբերում են քաղաքական բարձր ակտիվություն, շահագրգռվածություն, քանի որ իրենց շահերի, պահանջների բավարարման, սոցիալական խնդիրների լուծման հնարավորությունների իրականացումը կապում են ապագա նախագահի հետ: Վերոհիշյալ բոլոր գործոնները նպաստում են հասարակական-քաղաքական լայնածավալ քննարկումների կազմակերպմանը, ինչն էլ իր հերթին ձևավորում է համապատասխան քաղաքական խոսույթ, որը, ազդելով հասարակական գիտակցության վրա իր մանիպուլյացիոն գործառույթով, կարող է պայմանավորել ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ակտիվությունը: Ահա սա է պատճառը, որ նախագահական ընտրությունների ժամանակ ՀՀ-ում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ցուցանիշներն ավելի բարձր էին, որն էլ պայմանավորված էր նախընտրական քարոզարշավների ընթացքում հասարակական-քաղաքական քննարկումների ավելի հաճախակի և ընդգրկուն լինելու հանգամանքներով:

1991-2008թթ. ՀՀ-ում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ցուցանիշները պայմանավորված են նաև քաղաքական խոսույթի դրսևորման ձևերով և դրա առանձնահատկություններով: Հարկ է նշել, որ քաղաքական խոսույթը ժողովրդավարացման գործընթացի սկզբնական շրջանում դրսևորվում է ավելի սեղմ ծավալներով, քանզի կոնֆլիկտային խոսույթի հաղթահարման համար դեռևս առկա չեն կայուն նախապայմաններ, որոնք թույլ կտան համաձայնության խոսույթի միջոցով հասնել առկա հասարակական-քաղաքական խնդիրների կոնսենսուսային լուծումներին: Այս պարագայում 1991թ. հոկտեմբերի 16-ի ՀՀ Նախագահի ընտրություններում գրանցված ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ցուցանիշը կարելի է համարել բացառիկ, քանի որ այն պայմանավորված էր ազգային արժեքների և հայոց անկախ պետականության վերականգնման մղումով: Այդ դեպքում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության այդպիսի բարձր ցուցանիշը պայմանավորված էր ոչ

թե քաղաքացիական, այլ՝ ազգային գիտակցությամբ: Տվյալ ժամանակահատվածում քաղաքական խոսույթը պայմանավորված էր ոչ թե ներքաղաքական ուժերի բախումային գործողություններով, այլ՝ անկախության վերահաստատմանն ուղղված համաձայնության խոսույթով, որը հիմք հանդիսացավ ժողովրդի միասնական քաղաքական կամքի ձևավորման և դրսևորման համար:

Ինչ վերաբերում է 1998թ. մարտի 16-ին տեղի ունեցած ՀՀ Նախագահի ընտրությունների երկրորդ փուլում քաղաքական մասնակցության ակտիվությանը, ապա այս պարագայում միանշանակ անհրաժեշտ է անդրադառնալ քաղաքական խոսույթին, որը կրում էր կոնֆլիկտային բնույթ, քանզի պայքարը իշխանության և ընդդիմության թեկնածուների միջև թեժ էր: Կոնֆլիկտային խոսույթի հետևանքով ընտրությունների առաջին փուլում հասարակության ձայները բաժանվեցին հավասար մասերի՝ բացարձակ մեծամասնություն չտալով թեկնածուներից ոչ մեկին: Միևնույն երևույթը կրկնվեց նաև նախագահական հաջորդ ընտրություններում, երբ նորից անցկացվեց ընտրությունների երկրորդ փուլ (30-ը մարտի, 2003թ.): Փաստորեն, կարելի է արձանագրել, որ վերոհիշյալ դեպքերում քաղաքական խոսույթի ազդեցությունը հասարակական գիտակցության վրա բավականին մեծ էր, ինչը հիմք հանդիսացավ ընտրությունների երկրորդ փուլ անցկացնելու համար, որոնց ժամանակ գրանցվեցին քաղաքական մասնակցության ավելի բարձր ցուցանիշներ, քան ընտրությունների առաջին փուլերում: Այս ամենը պայմանավորված էր տվյալ քաղաքական իրադարձությունների նկատմամբ հասարակական բարձր ակտիվությամբ:

2003թ. մայիսի 25-ի (ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի) հանրաքվեի ընթացքում քաղաքական խոսույթը կրում էր համեմատաբար պասսիվ, սակայն նորից կոնֆլիկտային բնույթ: Այդ ժամանակ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագծի վերաբերյալ քննադատությունները բազմաթիվ էին, ինչն էլ, ձևավորելով կոնֆլիկտային քաղաքական խոսույթ, նպաստեց քվեարկության արդյունքում վերջինիս տապալմանը: Տվյալ նախագծի տապալումը պայմանավոր-

ված էր նաև այդ խնդրի շուրջ հասարակության զգալի հատվածի անտարբերությամբ, որի հետևանքով գրանցվեց ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ամենացածր ցուցանիշը:

Ինչ վերաբերում է 2008թ. փետրվարի 19-ի ՀՀ Նախագահի ընտրությունների ժամանակ գրանցված ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ամենաբարձր ցուցանիշին, ապա այս դեպքում նշանակալի է քաղաքական խոսույթի դերը, որը, նախընտրական քարոզարշավի ընթացքում կրելով կոնֆլիկտային բնույթ, հիմնական քաղաքական պայքարը ծավալեց իշխանության և ընդդիմության թեկնածուներից երկուսի միջև: Նախընտրական քարոզարշավի ընթացքում իշխանության թեկնածուի նկատմամբ ընդդիմադիր թեկնածուի խիստ քննադատական կեցվածքը հանգեցրեց քաղաքական պայքարի թեժացմանը, ինչն իր ուրույն դրսևորումը գտավ նաև քաղաքական խոսույթում, որն էլ իր հերթին բարձրացրեց հասարակության՝ ընտրություններին մասնակցելու քաղաքացիական գիտակցության մակարդակը: Հասարակության տարբեր շերտերը մեծ շահագրգռվածություն ցուցաբերեցին այդ ընտրություններում, որտեղ հասարակական-քաղաքական թեժ քննարկումների հետևանքով ձևավորված քաղաքական խոսույթի ազդեցությունը ընտրազանգվածի գիտակցության վրա բավականին մեծ էր: Արդյունքում գրանցվեց մինչ օրս ՀՀ-ում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ամենաբարձր ցուցանիշը:

1991-2008թթ. ՀՀ-ում ընտրազանգվածի քաղաքական մասնակցության փորձի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացությանը, որ ընտրությունների ընթացքում տեղեկատվության տարածումը, քաղաքական գործընթացների հրապարակայնությունը, հասարակական-քաղաքական քննարկումները ձևավորում են համապատասխան քաղաքական խոսույթ, որն իր դրսևորման ձևերով և առանձնահատկություններով որոշակի ազդեցություն է գործում ընտրազանգվածի վարքագծի վրա: Որքան հաճախակի են հասարակական-քաղաքական քննարկումները, որքան ընդարձակ է տեղեկատվության դաշտը և որքան հրապարա-

կային է քաղաքական խոսույթը, այնքան մեծ է ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ակտիվությունը և հակառակը:

Փաստորեն, ժողովրդավարական վարչակարգերում, ինչպես նաև ժողովրդավարացման ուղին որդեգրած պետություններում քաղաքական խոսույթի ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա բավականին մեծ է, քանի որ այդ գործընթացների ձևավորման և զարգացման արդյունքում քաղաքական խոսույթը կարող է պայմանավորել նաև քաղաքական մասնակցության ձևերը, հատկապես՝ ընտրազանգվածի մասնակցությունը, ինչը ժողովրդավարական պետություններում քաղաքացիական հասարակության բաղկացուցիչ տարրերից մեկն է:

ԳԼՈՒԽ 3. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

1. Իշխանության և ընդդիմության գործունեության կոնֆլիկտ-խոսութային վերլուծություն

Մարդկության պատմությունը հեղեղված է քաղաքական կոնֆլիկտներով: Իշխանության համար պայքարը, այն պահպանելը և ամրապնդելը, ինչպես նաև դրա դեմ ուղղված ոտնձգությունները միշտ առաջացրել են հույսեր և ատելություն, վախ և իշխանատենչություն և հաճախ կրել են կոնֆլիկտային բնույթ: Ոչ միայն իշխանության համար պայքարը, այլև հասարակության մեջ տեղի ունեցող տարաբնույթ փոփոխությունները, այդ թվում՝ հետամբողջատիրական համակարգերի կողմից բաղձալի ժողովրդավարական վարչակարգերին անցումը շատ հաճախ ուղեկցվել են ճգնաժամերով և անկայունությամբ:

Այս պարագայում գոյություն ունի մեկ վտանգավոր միտում: Չափից դուրս կայունության ձգտումը շատ հաճախ վերափոխվում է մտակաղապարի, և ժողովրդավարության ձգտող պետությունը նորից վերադառնում է ավտորիտար վարչակարգին նոր տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով, որն էլ բթացնում է իրականության հանդեպ քաղաքացիների պատկերացումները: Այս պարագայում «ազատություն-կարգուկանոն» երկընտրանքն անկայուն հավասարակշռությունից վերածվում է կայուն միատարրության՝ անարխիայի կամ ավտորիտարիզմի, որը հակակշռի բացակայության դեպքում բազմապատկում է իր հզորությունը, ինչն էլ վերջին հաշվով կանգնեցնում է բազմաթիվ աղետների առջև ինչպես պետությանը, այնպես էլ հասարակությանը:[163]

Ահա թե ինչու այսօր, բացի քաղաքական կայունության խնդրից, արդիական են նաև քաղաքական կոնֆլիկտին վերաբերող խնդիրների, պայմանների, նորմերի, դրա ցանկալի և անհրաժեշտ ձևերի գի-

[163] *Сорокин П. А.* Человек. Цивилизация. Общество. Политиздат, М., 1992.

տակցումը և բացահայտումը, դրանց համար արդյունավետ լուծումներ գտնելը, որոնք հասարակությանը կարող են թույլ տալ կայուն կերպով զարգանալ տեղի ունեցող իրադարձությունների քննադատության, իշխանությանը հակազդելու ընդունելի ձևերի միջոցով, որոնք չեն ջլատում հասարակությունը և պետությունը: Բնականաբար այս դեպքում հարց է առաջանում քաղաքական կայունությունը կամ կառուցողական կոնֆլիկտայնությունն ապահովող սուբյեկտների՝ իշխանության և ընդդիմության դերի մասին: Այս հարցին պատասխանել օգնում է վերլուծության կոնֆլիկտ-խոսութային մեթոդը:

Վերլուծության կոնֆլիկտ-խոսութային մեթոդը հիմնվում է կոնֆլիկտաբանական հետազոտության վրա, որի հիմքում ընկած են կոնֆլիկտի երկու կողմերի՝ իշխանության և ընդդիմության սուբյեկտիվ գործնական հարաբերությունները և նրանց քաղաքական տեքստերի վերլուծությունը: Այսպիսի վերլուծությունն իրենից ներկայացնում է հետազոտություն, որը թույլ է տալիս վեր հանել՝ 1.կոնֆլիկտի արմատները (պատմությունը, պատճառը), 2. կոնֆլիկտի սուբյեկտների բնութագրությունները (արժեքները, դիրքորոշումները, պահանջները), 3. կոնֆլիկտային փոխգործունեության վիճակը (կոնֆլիկտի դինամիկան, կողմերի վարքագիծը, կոնֆլիկտի տևողությունը), 4. կոնֆլիկտի կառավարման գործընթացը (ռազմավարության և մարտավարության, կարգավորման սկզբունքների, չափանիշների և մեթոդների ընտրությունը):

Տեղայնացնելով այս մեթոդը Հայաստանի օրինակում՝ փորձենք ցույց տալ, թե ինչպես է այն գործել Լևոն Տեր-Պետրոսյանի (1991-1998թթ.) և Ռոբերտ Քոչարյանի (1998-2008թթ.) կառավարման տարիներին:

Դրա համար նախ և առաջ պետք է գտնել ժամանակակից Հայաստանում իշխանության և ընդդիմության միջև *կոնֆլիկտի արմատները*, որոնք ընդհանուր առմամբ կապված են հասարակությունում կոնֆլիկտային իրավիճակներ և ճգնաժամեր առաջացնող ընդհանուր միտումների և փոխադարձ կախվածության բացահայտման գիտական խնդրի հետ (այս հարցին մենք մասամբ անդրադարձել ենք նախորդ գլխում): Ժամանակակից Հայաստանում իշխանու-

թյան և ընդդիմության փոխհարաբերությունների ընկալման համար հարկ է անդրադառնալ տնտեսական և սոցիալական ոլորտների փոխադարձ կախվածության խնդրին, որով պայմանավորված է քաղաքական դինամիկան: Այսպես, թե այնպես Հայաստանում տնտեսության և քաղաքականության միջև կապն ակներև է: ԽՍՀՄ փլուզման և ՀՀ անկախության սկզբնափուլում անմրցունակ տնտեսությունը պահանջում էր ներդրումներ և դրանց բացակայության պայմաններում շարունակում էր մնալ անարդյունավետ: Այդ ժամանակաշրջանում պետբյուջեի վրա ծանր ազդեցություն թողեց նաև սկզբնավորվող արցախյան գոյամարտը: Խանութների առջև սկսեցին գոյանալ հերթեր, սննդամթերքների խանութներում հետզհետե պակասեցին առաջին անհրաժեշտության ապրանքները, որոնք սկսեցին տրամադրվել կտրոններով: Այս ամենը չէր կարող անհետևանք մնալ հասարակությունում, քանզի այդ երևույթների նախադրյալները ձևավորվել էին դեռևս ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին, երբ ժողովուրդն արդեն հոգնել էր խորհրդային համակարգի խիստ վերահսկողությունից, որը հնարավորություն չէր տալիս անձի լիարժեք ինքնաարտահայտմանը[164]:

Հարկ է նշել, որ ընդդիմադիր տրամադրություններն ակտիվանում են ամեն անգամ, երբ իշխանությունը ձեռնամուխ է լինում համակարգի ազատականացման գործին: Իշխանությունն այդ գործընթացը սկսում է բարեփոխումներով, սակայն դրանք չի հասցնում ավարտին, ինչն էլ հասարակության մեջ լարվածության և ճգնաժամի առաջացման հիմք է հանդիսանում, որի արդյունքում տեղի են ունենում հեղափոխական փոփոխություններ «ներքևից»: Այդ երևույթի վառ ապացույցն են Գորբաչյովի կառավարման տարիները, ով հայտարարեց «վերակառուցման» մասին: Դրան հաջորդեց ԽՍՀՄ փլուզումը և ՀՀ անկախացումը, որի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը

[164] *Պողոսյան Գ.* Հայ հասարակությունը 21-րդ դարասկզբին, «Լուսաբաց», Երևան, 2006:

հայտարարեց ժողովրդավարական և ազատական արժեքների առաջնայնության մասին:[165] Սա ենթադրում է «ազատական խոսույթ»:

ՀՀ հաջորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը փորձեց կարգավորել երկրում առկա անկարգությունները:[166] Իսկ սա ենթադրում է «օրենքի և կարգուկանոնի խոսույթ»: Ինչ վերաբերում է երրորդ՝ գործող նախագահ Սերժ Սարգսյանին, ապա նրա վարած քաղաքականությունից կարելի է ենթադրել, որ նա փորձում է հաստատել «օրենքի, կարգուկանոնի և համաձայնության խոսույթ»: Սակայն հարկ է նշել, որ այս խոսույթներից և ոչ մեկը ընդդիմության կողմից մինչ օրս չի ընդունվել: Պատճառները մի քանիսն են՝ 1. կառուցողական ընդդիմության ոչ արմատավորվածությունը Հայաստանում, 2. իշխանության և ընդդիմության միջև կառուցողական խոսույթի սակավությունը, 3. իշխանության ինքնավերարտադրության հանգամանքը: Այս պարագայում հարկ է հիշել ռուս հետազոտող Ի.Ա. Իլյինի կարծիքը. «Որքան դժվար է ժողովրդին տրվում պետական միասնությունը և անկախությունը, այնքան հզոր պետք է լինի իշխանությունը»:[167] Փաստորեն, նման դեպքերում միշտ չէ, որ պետությունը կարող է իրեն թույլ տալ, որպեսզի ձևավորվի ուժեղ քաղաքական ընդդիմություն:

80-ական թթ. վերջի և 90-ական թթ. սկզբի իրադարձությունները ոչ միայն անարդյունավետ տնտեսության, այլև քաղաքական ազատությունների բացակայության արդյունք էին, երբ իշխանության խոսույթը զգալիորեն ազդեց հասարակական գիտակցության վրա, որի հետևանքով սկսեցին ձևավորվել այլընտրանքային մամուլը, ավելի ուշ՝ ընդդիմադիր շարժումներն ու կուսակցությունները:

Իշխանությունը և ընդդիմությունը հանդիսանում են անընդհատ վերարտադրվող քաղաքական խոսույթի կողմեր, որոնցից յուրաքանչյուրը հավակնում է մեծամասնության շահերի ներկայացմամբ և հանրային կառավարողի բարձր կարգավիճակի օգտագործմամբ համընդհանուր բարիքի ձևավորման իրավունքներին: Սուբյեկտների փոխհարաբերակցության տեսանկյունից դա քաղաքական իշխանության և

---

[165] *Պետրոսյան Ռ.* Քաղաքագիտություն, «Նոյյան Տապան», Երևան, 2004, էջ 231-237:
[166] *Նույն տեղում*:
[167] *Ильин И. А.* О сильной власти/ Наши задачи, М.- Париж, 1992.

ընդդիմության միջև կոնֆլիկտային խոսույթն է: Որպես նրանց կոնֆլիկտային խոսույթի օբյեկտ առաջ են գալիս քաղաքական նպատակները, արժեքները, խաղի ընդհանուր կանոնները, քաղաքական ուղին ձևավորելու իրավունքը, քաղաքական հաղորդակցության օրակարգի կազմումը և այլն:[168] Կոնֆլիկտի առարկան քաղաքական իշխանությունն է: Այս պարագայում կոնֆլիկտի երկու կողմերն էլ վկայակոչում են ժողովրդի անունից հանդես գալու իրենց իրավունքը և միշտ քաղաքականորեն փաստարկում են իրենց խոսույթը:

Իշխանության ձեռքում լեգալության և լեգիտիմության փաստերն են (օրենքներին համապատասխան գործելը և ժողովրդի մեծամասնության կողմից իրենց իշխանության ճանաչումը), իսկ ընդդիմության ձեռքում՝ «մասնակի» լեգալությունը, որն արտահայտվում է քաղաքական իրավունքներով և ազատություններով (այդ թվում՝ խոսքի ազատության, միավորումներ կազմելու, երթեր, ցույցեր, հանրահավաքներ անցկացնելու, պետության գործերի կառավարմանը մասնակցելու, ընտրելու և ընտրվելու իրավունքը և այլն), ինչպես նաև փոքրամասնության լեգիտիմությունը, որը հաստատվում է քվեարկության պաշտոնական արդյունքներով:[169]

Ժամանակակից Հայաստանում իշխանությունը և ընդդիմությունը՝ որպես շահերի խմբեր, տարասեռ են և հակասական: Այսօր իշխանության մեջ քաղաքական և վարչական էլիտայի շրջանակներում ներգրավված են հատկապես խոշոր բիզնեսի ներկայացուցիչներ և քաղաքական ուժեր: Ազգային ժողովի վերջին երկու գումարումներում (2003թ., 2007թ.) խորհրդարանում ներկայացված են եղել քաղաքական ուժեր, որոնք հիմնականում սատարել են հետևյալ շերտերին և ներկայացրել նրանց շահերը՝

• խոշոր սեփականատերերի, ձեռնարկատերերի և գործարարների շահեր (ՀՀԿ, ԲՀԿ),

---

[168] *Тимофеева Л.* Позитивные социальные последствия конфликтов власти и оппозиции, М., 2006.

[169] *Тимофеева Л.* Политология. Дисциплины специализации: Связи государственной службы с общественностью: Учебно-методический комплекс, РАГС, М., 2008.

• միջին և մանր բիզնեսի ներկայացուցիչների շահեր (ՕԵԿ, ՀՅԴ),

• բյուջետային աշխատողների, մասնավոր ոլորտի աշխատողների, մտավորականների շահեր (ՕԵԿ, ՀՅԴ, ժառանգություն):

Սակայն պետք է նշել, որ վերոհիշյալ կետերից արդյունավետ է եղել աջակցությունը խոշոր բիզնեսին, որն իրականացվել է իշխանական կուսակցությունների կողմից, մինչդեռ ընդդիմադիր ուժերի ջանքերը հիմնականում եղել են ապարդյուն:

Իշխանության և ընդդիմության՝ որպես քաղաքական կոնֆլիկտի կողմերի գործունեության վերլուծության դեպքում հարկ է նշել նաև նրանց անձնային առանձնահատկությունների և լեգիտիմության աղբյուրի, ինչպես նաև՝ բռնություն կիրառելու իրավունքի նկատմամբ նրանց պատկերացումների մասին: Որպես օրինակ կարելի է նշել 1996թ. նախագահական ընտրությունների ժամանակ Լևոն Տեր-Պետրոսյան - Վազգեն Մանուկյան (ընդդիմության լիդերի) նախագահի թեկնածուների միջև կոնֆլիկտային իրավիճակը, որը դրսևորվեց երկկողմ բռնի գործողություններով, 2003թ. Ռոբերտ Քոչարյանի նախագահության օրոք ընդդիմության լիդերների դեմ ուղղված բռնի գործողությունները, 2008թ. նախագահական ընտրությունների ժամանակ նորից ընդդիմության լիդերների դեմ ուղղված բռնի գործողությունները: Այս ամենն ապացուցում է, որ տվյալ ժամանակահատվածներում Հայաստանում իշխանության և ընդդիմության միջև քաղաքական խոսույթը կրել է կոնֆլիկտային բնույթ, որն ուղեկցվել է բռնությամբ: Սակայն կարելի է առանձնացնել նաև համաձայնության խոսույթին բնորոշ քաղաքական իրադարձություններ (օրինակ՝ 1991թ. նախագահական ընտրությունները, 1995թ. Սահմանադրության հանրաքվեն):

Քաղաքական կոնֆլիկտի կողմերն ունեն իրենց ուրույն պատճառաբանությունները կոնֆլիկտի վերաբերյալ: Օրինակ՝ իշխանությունը բռնության կիրառումը միշտ պատճառաբանում է սահմանադրական կարգի պաշտպանությամբ և վերականգնումով, մինչդեռ

ընդդիմությունը անընդհատ պահանջում է փոքրամասնության իրավունքների ճանաչում և դրանց պաշտպանության ապահովում:

Այժմ առանձնացնենք Հայաստանում քաղաքական ընդդիմության սուբյեկտների կազմավորման և գործունեության հիմնական փուլերը՝ սկսած ԽՍՀՄ փլուզման տարիներից:

Մեր հետազոտության արդյունքները թույլ են տալիս տարբերակել ընդդիմության սուբյեկտների կազմավորման և գործունեության հինգ հիմնական փուլ:

Առաջին փուլը (1988-1989թթ.) պայմանավորված էր քաղաքական շարժումների, ազգային ճակատների, նախակուսակցական կառույցների ձևավորմամբ (ՀՀՇ, ՍԻՄ, ԱԻՄ), որոնք հիմնականում զբաղվում էին կոմունիստական կուսակցության գաղափարների քննադատությամբ:

Երկրորդ փուլում (1990-1991թթ.) ձևավորվում է այլընտրանքային կուսակցությունների առաջին ալիքը, երբ տարբեր քաղաքական ուժեր մուտք են գործում խորհրդարան (Հայաստանում 1990թ.-ի Գերագույն Խորհրդի ընտրություններում խորհրդարան մուտք գործեց «Հայոց Համազգային Շարժում» կուսակցությունը (ՀՀՇ)՝ ստեղծված դեռևս 1988թ.-ին):

Երրորդ փուլում (1991-1993թթ.) ձևավորվում է այլընտրանքային կուսակցությունների երկրորդ ալիքը (հիմնադրվեցին Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությունը (ՀՌԱԿ), Հայաստանի Դեմոկրատական կուսակցությունը (ՀԴԿ), Ազգային Ժողովրդավարական միությունը (ԱԺՄ), 1990թ.-ին Հայաստանում պաշտոնապես գրանցվեց Հայ Յեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ)):

Չորրորդ փուլում (1995-1998թթ.) արդեն սկսվում է նկատվել քաղաքական դաշտում ընդդիմադիր կուսակցությունների ակտիվացում (ՀԴԿ, ՀՌԱԿ, ՀԿԿ և այլն):

Հինգերորդ փուլում (1998-2008թթ.) ընդլայնվում են քաղաքական գործընթացներին ընդդիմադիր կուսակցությունների մասնակցության ծավալները (ՕԵԿ, ՀՔԴՄ, ՀՅԴ, ԱՄ, ՄԱԿ, ՀԺԿ և այլն):

Վերոշարադրյալը հիմք է տալիս ասել, որ Հայաստանում քաղաքական ընդդիմությունը սկսեց ձևավորվել 80-ական թթ. վերջին տարիներին, սակայն այն իր ուրույն ազդեցությունն ունեցավ քաղաքական կյանքում միայն 1990թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում Գերագույն Խորհրդի կազմում ընդգրկվելուց հետո: Խոսքը ՀՀՇ-ի մասին է, որը կոմկուսի համար դարձավ առաջին ընդդիմադիր ուժը և ԽՍՀՄ փլուզումից հետո ստանձնեց Հայաստանի Հանրապետության գերագույն իշխանությունը՝ ի դեմս Լևոն Տեր-Պետրոսյանի, ով սկսեց իրականացնել երկրի ազատականացման և ժողովրդավարացման իր ծրագիրը: Տնտեսության ոլորտում տեղի ունեցավ պլանային տնտեսությունից ազատ շուկայական հարաբերությունների անցումը, սկսվեց սեփականաշնորհման գործընթացը, սկիզբ դրվեց ազատ մրցակցության համար բարենպաստ պայմանների ձևավորմանը: Փաստորեն, խորհրդային սոցիալիզմից անցում կատարվեց կապիտալիզմի: ԽՍՀՄ փլուզումից և ՀՀ անկախացումից հետո ՁԼՄ-ներում հետզհետե սկսեցին լուսաբանվել ժողովրդավարության կարևոր սկզբունքները, որոնք դանդաղ, սակայն սահուն կերպով հետզհետե արմատավորվեցին հասարակության գիտակցության մեջ որպես ժողովրդավարության պարտադիր պայմաններ:

Հայկական Սոցիոլոգիական Ասոցիացիայի կողմից անցկացված հետազոտության արդյունքների հիման վրա դիտարկենք ժողովրդավարական որոշ սկզբունքների վերաբերյալ հայերի դիրքորոշումները:

Աղյուսակ 3.

Ժողովրդավարական որոշ սկզբունքների մասին հայերի գնահատականները

Հարց: *Հայաստանը ժողովրդավարակա՞ն է, ժողովրդավարացման գործընթացու՞մ է, թե՞ երբեք չի լինի ժողովրդավարական:*	Հարցվողների քանակը	Տոկոսը
Հայաստանը ժողովրդավարական երկիր է	144	12.0%
Հայաստանը գտնվում է ժողովրդավարացման գործընթացում	713	59.4%
Հայաստանը երբեք չի լինի ժողովրդավարական	330	27.5%
Դժվարանում եմ պատասխանել	11	0.9%
Հրաժարում պատասխանից	2	0.2%
Ընդամենը	1200	100.0%

Աղյուսակ 4.

Հարց: *Պետությունը պետք է հետևի հասարակական կարգուկանոնի՞ն, թե՞ պաշտպանի քաղաքացիական իրավունքները:*	Հարցվողների քանակը	Տոկոսը
Պետությունը պետք է հետևի հասարակական կարգուկանոնին	731	60.9%
Պետությունը պետք է պաշտպանի քաղաքացիական իրավունքները	461	38.4%
Դժվարանում եմ պատասխանել	8	0.7%
Ընդամենը	1200	100.0%

Աղյուսակ 5.

Հարց: *Արդյո՞ք քաղաքացիները վախենում են ազատ արտահայտել իրենց քաղաքական կողմնորոշումը:*	Հարցվողների քանակը	Տոկոսը
Ոչ ոք չի վախենում արտահայտել իր քաղաքական կողմնորոշումը	311	25,9%
Քչերն են վախենում արտահայտել իրենց քաղաքական կողմնորոշումը	652	54,3%
Բոլորը վախենում են արտահայտել իրենց քաղաքական կողմնորոշումը	218	18,2%
Դժվարանում եմ պատասխանել	9	0,8%
Հրաժարում պատասխանից	10	0,8%
Ընդամենը	1200	0.0%

Վերոհիշյալ տվյալներից[170] պարզ է դառնում, որ՝ *1. քաղաքացիների մեծամասնությունը (59,4%) կարծում է, որ Հայաստանը գտնվում է ժողովրդավարացման փուլում, 2. քաղաքացիների մեծամասնությունը (60,9%) նախապատվություն է տալիս պետության կողմից հասարակական կարգուկանոնին հետևելու անհրաժեշտությանը, 3. քաղաքացիների մեծամասնությունը (54,3%) գտնում է, որ քչերն են վախենում արտահայտել իրենց քաղաքական կողմնորոշումը*: Այս ամենը վկայում է այն մասին, որ Հայաստանում ժողովրդավարացման գործընթացը որոշակիորեն առաջքայլ է կատարել: Ժողովրդի մոտ նկատվում է ժողովրդավարական արժեքների վերաբերյալ դրական վերաբերմունքի ձևավորում, ինչը պայմանավորված է հիմնականում

[170] *Վերոհիշյալ տվյալները վերցված են 2008թ. Հայաստանի Սոցիոլոգիական Ասոցիացիայի կողմից իրականացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքներից, որին հեղինակը մասնակից է եղել:*

ազատական և ժողովրդավարական խոսույթով, որն էլ, իր հերթին, նպաստում է քաղաքացիական հասարակության ձևավորմանը:

90-ական թթ. կեսերին իշխանության և ընդդիմության միջև քաղաքական խոսույթը սկսում է սաստկանալ, ինչը փոխանցվում է նաև կողմերի առաջնորդներին, որոնց միջև ծավալվում է անզիջում քաղաքական պայքար: Խոսքը 1996թ. նախագահական ընտրություններում Լ. Տեր-Պետրոսյանի և Վ. Մանուկյանի միջև քաղաքական պայքարի մասին է, երբ կողմերից մեկը՝ ընդդիմությունը, չընդունելով քվեարկության արդյունքները, քաղաքական պայքարը տեղափոխեց փողոց՝ պահանջելով արդարության վերականգնում, իսկ մյուս կողմը՝ իշխանությունը, որպես դրան հակազդեցություն, դիմեց քաղաքական բռնության: Այդ բացասական երևույթը տարբեր դրսևորումներով կրկնվեց նաև Ռոբերտ Քոչարյանի նախագահության տարիներին 2003թ., 2008թ. նախագահական ընտրությունների ժամանակ, երբ քաղաքական ընդդիմության նկատմամբ նորից կիրառվեցին բռնի գործողություններ: Հարկ է նշել, որ այս տեսանկյունից Լևոն Տեր-Պետրոսյանի և Ռոբերտ Քոչարյանի նախագահության տարիներին քաղաքական խոսույթը կորցրեց համաձայնության խոսույթին ներհատուկ գլխավոր բաղադրիչը, այն է՝ *դիմացինի խոսքն ընկալելու, դրան ընդառաջ գնալու ունակությունը և պատրաստակամությունը*: Այդ ժամանակահատվածում իշխանության և ընդդիմության միջև քաղաքական խոսույթը մեծապես ուղղված էր քաղաքական հակառակորդին «ցավեցնելուն» և նրա հեղինակությանը վնաս պատճառելուն: Այլ կերպ ասած՝ ժողովրդավարացման պայմաններում քաղաքական հաղորդակցության մասնակիցները կիրառում էին բացառապես կոնֆլիկտ-խոսութային հաղորդակցության ապակառուցողական ձևերը. հակառակորդի միակողմանի, կտրուկ քննադատություն, որը վերաճում էր երկխոսության մասնակցի հասցեին ուղղված վիրավորանքների, զրպարտությունների, բացակայում էին կառուցողական բանակցությունները, որոնք ուղղված կլինեին առկա քաղաքական և սոցիալ-տնտեսական խնդիրների համատեղ լուծմանը, միմյանց դիրքորոշումների ընկալմանը և դրանց մերձեցմանը:

Այս հարցում իրենց մեղքի բաժինն ունեին նաև ԶԼՄ-ները, որոնք հիմնականում իշխանության գործունեությունը լուսաբանում էին բացառապես վերջինիս համար շահավետ դիրքերից, մինչդեռ քաղաքական ընդդիմությունը հնարավորինս հեռու էր պահվում հանրային հեռուստատեսությունից, ինչն էլ խոչընդոտում էր վերջինիս գործունեության արդյունավետությանը:

Վերոշարադրյալի հիման վրա վերլուծենք Հայաստանում 1991-2008թթ. ժամանակաշրջանում իշխանության և ընդդիմության փոխգործակցությունը ՀՀ նախագահներ Լևոն Տեր-Պետրոսյանի և Ռոբերտ Քոչարյանի կառավարման օրինակով: Այս հարցում առաջնորդվել ենք խնդիրների հետազոտության հետևյալ հաջորդականությամբ՝ *քաղաքական առաջնորդի խոսույթ, ընդդիմության խոսույթ, կոնֆլիկտի տեսակներ:*

Հայաստանում 1991-2008թթ. Լևոն Տեր-Պետրոսյանի և Ռոբերտ Քոչարյանի նախագահության ժամանակահատվածի վերաբերյալ իրականացված իշխանության և ընդդիմության փոխհարաբերությունների կոնֆլիկտ-խոսութային վերլուծության արդյունքում հանգել ենք որոշ եզրակացությունների:

Այսպես, օրինակ՝ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի քաղաքական խոսույթն իր նախագահության տարիներին կրել է այսպիսի բնույթ՝ *ազատականացում, ժողովրդավարական արժեքների հաստատում*: Տվյալ ժամանակահատվածում ընդդիմության քաղաքական խոսույթին բնորոշ են եղել հետևյալ տարրերը՝ *իշխանության քրեականացում, կոռուպցիայի առաջացում, ժողովրդի և ընդդիմության քաղաքական իրավունքների ոտնահարում*: Մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ այդ ժամանակահատվածում իշխանության և ընդդիմության միջև գործել են *կոնֆլիկտի արժեքային, ինքնանույնականացման և սոցիալ-տնտեսական ձևերը*:

ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի քաղաքական խոսույթն իր նախագահության տարիներին, ըստ մեր եզրակացությանը, կրել է այսպիսի բնույթ՝ *հզոր և պատասխանատու պետության ձևավորում*: Տվյալ ժամանակահատվածում ընդդիմության քաղաքական խոսույթին բնորոշ են եղել հետևյալ տարրերը՝ *հակասոցիալական*

պետություն, ընդդիմության ճնշում, քաղաքական իրավունքների ոտնահարում, իշխանության վերարտադրություն: Մենք հանգել ենք այն եզրակացությանը, որ այդ ժամանակահատվածում իշխանության և ընդդիմության միջև ևս գործել են *կոնֆլիկտի արժեքային, ինքնանույնականացման և սոցիալ-տնտեսական ձևերը*:

Ինչ վերաբերում է ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի քաղաքական գործունեության կոնֆլիկտ-խոսութային վերլուծությանը, ապա դեռևս վաղ է հստակ եզրակացություններ անել, թեև նրա գործունեության նախնական արդյունքների հիման վրա կարելի է հստակորեն նշել, որ նա նախընտրում է ընդդիմության և հասարակության հետ երկխոսության մոտեցումը, ինչը թերևս համաձայնության խոսույթի փորձ է:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության առաջին երկու նախագահների քաղաքական գործունեությունն ընթացել է կոնֆլիկտի երեք ձևերի ուղեկցությամբ՝ արժեքային, ինքնանույնականացման և սոցիալ-տնտեսական կոնֆլիկտներ, որոնք մեծ մասամբ կոնֆլիկտային խոսույթի արդյունք են: Դա վկայում է այն մասին, որ Հայաստանը տվյալ ժամանակահատվածում գտնվել է խորը սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամում, որից դեռևս վերջնականապես դուրս չի եկել: Մինչ այժմ հայ հասարակությունը վերջնականապես չի ստացել իր քաղաքական նպատակներին ու արժեքներին, սոցիալական արդարության էությանը, հայ ժողովրդի՝ որպես քաղաքական ամբողջությանը վերաբերող հարցերի պատասխանները: Պատճառները բազմաթիվ են, սակայն դրանցից մեկը միանշանակ պայմանավորված է այն հանգամանքով, որ իշխանության խոսույթը և նրա վարած իրական քաղաքականությունը հաճախ տարբերվում են միմյանցից:

Վերոշարադրյալը հիմք է տալիս պնդել, որ Լ. Տեր-Պետրոսյանի և Ռ. Քոչարյանի կառավարման տարիներին իշխանության և ընդդիմության միջև քաղաքական խոսույթը կրել է հիմնականում կոնֆլիկտային բնույթ:

Մեր համոզմամբ Հայաստանում ժողովրդավարական խոսույթը սկիզբ է առնում դեռևս սոցիալիստական գաղափարախոսությունից,

որը հռչակում էր սոցիալական հավասարության և անդասակարգ հասարակության գաղափարները, որոնք ինքնին պետք է կարգավորեին հասարակության մեջ առաջացող քաղաքական կոնֆլիկտները: Սոցիալիստական գաղափարախոսության համաձայն՝ հասարակությունում առաջնայնությունը տրվում էր բանվոր դասակարգի շահերին, որը Խորհրդային Միությունում զուգակցվում էր «բանվոր գյուղացիների և ազգային մտավորականության» հետ:[171]

Մեր օրերում հայ հասարակությունը կանգնած է սոցիալական բևեռացման, այսինքն՝ հարուստների և աղքատների միջև առկա հսկայածավալ սոցիալական անհավասարության խնդրի առջև: Ընտրություններում փաստացիորեն հաղթում են այն ուժերը, որոնք տիրապետում են հզոր ֆինանսական և վարչական ռեսուրսների, որոնք բազմապատկվում են՝ կլանելով նաև տեղեկատվական ռեսուրսները: Արդյունքում՝ երկրում առաջանում է «նոր վերնախավ», որը հաճախ փորձում է ոչ թափանցիկ կերպով իրականացնել քաղաքական գործընթացները:

Եթե օրինակ ՌԴ-ում 2001թ.-ից նախագահ Պուտինը ձեռնամուխ եղավ իշխանության «գնման» իրավիճակի կարգավորմանը և ուղղահայաց իշխանության միջոցով ստեղծեց կառավարելի ժողովրդավարություն[172], ապա ՀՀ-ում դա դեռ տեղի չի ունեցել: Ավելին՝ ամերիկյան և եվրոպական փորձի համեմատ Հայաստանում բավականին թույլ է զարգացած քաղաքացիական հասարակությունը: Փաստորեն, կարելի է արձանագրել, որ ՀՀ-ում գոյություն չունի կառավարվող ժողովրդավարություն: Այս պարագայում ուշագրավ է մատնանշել ամերիկացի հետազոտող Յ. Շումպետերի կարծիքն այն մասին, որ ճգնաժամային իրավիճակներում չի կարելի բացառել ընտրությունների հետաձգումը: Շումպետերը գրում է. «Ոչ կայուն ժամանակաշրջաններում ժողովրդավարությունը գտնվում է ոչ շահավետ պայմաններում: Իրականում ժողովրդավարության բոլոր մոդելներն էլ միասնաբար ընդունում են այն գաղափարը, որ որոշ իրավի-

---

[171] *Федоров В. А.* История России XIX - начала XX века. Гриф МО РФ, Академия, М., 2004.
[172] *Тимофеева Л.* Позитивные социальные последствия конфликтов власти и оппозиции, М., 2006.

ճակներում ավելի խելամիտ է հրաժարվել մրցակցային լիդերությունից և ընդունել մենաշնորհայինը»:[173] Խոսքը արտակարգ դրությունների ժամանակ մենաշնորհային լիդերության ինստիտուտի գոյության մասին է:

Հիմնականում նմանատիպ իրավիճակներ նախատեսվում են սահմանադրություններում, այդ թվում՝ նաև ՀՀՍ-ում: ՀՀ Սահմանադրության 53.1 հոդվածում նշվում է. «Ռազմական և արտակարգ դրության ժամանակ Հանրապետության Նախագահի ընտրություն չի անցկացվում, իսկ Հանրապետության Նախագահը շարունակում է իր լիազորությունների իրականացումը»:[174] Այս դեպքում իշխանության կողմից դրսևորվող քաղաքական խոսույթը ստանում է առավելապես անհամաչափ և միակողմանի բնույթ:

Այսպիսով, Հայաստանում իշխանության և ընդդիմության փոխհարաբերությունների կոնֆլիկտ-խոսութային վերլուծության արդյունքում մենք հանգել ենք այն եզրակացությանը, որ քաղաքական հաղորդակցության էությունը նրա երկակիության, կոնֆլիկտային բնույթի մեջ է, որի վրա ազդում են հաղորդակցության սուբյեկտների արժեքային, աշխարհահայացքային, հոգեբանական հատկանիշները և նրանց քաղաքական շահերը: Քաղաքական հաղորդակցությունը կարող է լինել կառուցողական, եթե այն ուղղված է կողմերի միջև ընդհանուր շահերի որոնմանը և բացահայտմանը կամ էլ՝ ապակառուցողական, եթե այն ուղղված է քաղաքական գործընկերոջ դեմ: Իշխանություն - ընդդիմություն հաղորդակցության բովանդակությունը և ձևերը հիմնականում կախված են իշխանության էությունից. ամբողջատիրական կամ ավտորիտար իշխանության պարագայում իշխանության և ընդդիմության միջև առաջանում է անհամաչափ հաղորդակցություն, մինչդեռ ազատական-ժողովրդավարական իշխանության դեպքում հիմքեր են ստեղծվում համաչափ քաղաքական հաղորդակցության ձևավորման համար: Սա հնարավոր է միայն այն պայմանով, երբ ժողովուրդը հնարավորություն ունի վերահսկել և հավասարակշռել

---

[173] *Шумпетер Й.* Капитализм, социализм и демократия, М., 1995, с. 386.
[174] *Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն*, հոդված 53.1:

իշխանություն - ընդդիմություն երկխոսությունը՝ միջամտելով դրա ընթացքին: Այս դեպքում իշխանությունը և ընդդիմությունը՝ որպես լիարժեք քաղաքական կառույցներ, ժողովրդավարության պայմաններում համարվում են բարդ հասարակական-քաղաքական հաղորդակցություն իրականացնող սուբյեկտներ, ինչը ենթադրում է փոխհարաբերությունների այսօրինակ մեխանիզմ՝ փոխգործունեություն, փոխզսպում, փոխադարձ վերահսկողություն, կառուցողական քաղաքական քննադատություն:

Հարկ է նշել, որ Հայաստանում դեռևս չի հաջողվում ձևավորել կառուցողական խոսույթ, որն ուղղված կլինի կողմերի միջև փոխըմբռնմանը, հասարակության զարգացման համար քաղաքական նոր գաղափարների և հեռանկարների որոնմանը, կոնֆլիկտային իրավիճակներում բանակցությունների միջոցով փոխշահավետ լուծումների ձեռքբերմանը: Իսկ այս ամենի բացակայությունը կարող է հիմք ծառայել երկրում նոր բռնությունների համար: Այս հարցում քիչ չէ նաև ԶԼՄ-ների պատասխանատվությունը, որոնք միջնորդավորում են քաղաքական խոսույթը: Մեր օրերում շատ հաճախ ԶԼՄ-ներն իրադարձությունների և կարծիքների օբյեկտիվ լուսաբանման գործառույթից բացի վերաճում են քաղաքական իրադարձությունների ուղղակի մասնակիցների՝ դառնալով քաղաքական համակարգի մաս, որն այսօր կոչվում է «մեդիաքաղաքական» համակարգ:

2. ՀՀ կուսակցությունների ծրագրերի խոսութային վերլուծություն

Անդրադառնանք քաղաքական կուսակցությունների ծրագրերի խոսութային վերլուծությանը ՀՀ-ում, որը թույլ կտա ավելի հստակորեն պատկերացնել քաղաքական գործընթացներում նրանց դիրքորոշումները:

Ժողովրդավարական պետություններում քաղաքական կուսակցությունները մեծ դեր են խաղում հասարակական-քաղաքական

ոլորտում: Լինելով քաղաքական պլյուրալիզմի երաշխիք՝ նրանք ներկայացնում են տարբեր սոցիալական խմբերի շահերը և կոչված են ապահովելու նրանց ձայները կառավարման մարմիններում: Այս տեսանկյունից մեծ հետաքրքրություն է առաջացնում քաղաքական կուսակցությունների ծրագրերի խոսութային վերլուծությունը, որի միջոցով կարելի է պարզել քաղաքական համակարգում նրանց գաղափարախոսական ուղղվածությունը:

Այժմ հետազոտենք Հայաստանի պետական կառուցվածքը վեց քաղաքական կուսակցությունների ծրագրերի խոսութային վերլուծության միջոցով: Մեր կողմից ընտրված կուսակցություններից հինգը ներկայացված են 2007թ.-ին ձևավորված Ազգային Ժողովում (Հայաստանի Հանրապետական կուսակցություն, «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն, «Օրինաց Երկիր» կուսակցություն, Հայ Յեղափոխական Դաշնակցություն, «Ժառանգություն» կուսակցություն) և Հայոց Համազգային Շարժումը (ՀՀՇ), որը 1990-1998թթ. Հայաստանում զբաղեցրել է պետական բարձր պաշտոններ:

Փորձենք վերոհիշյալ կուսակցությունների ծրագրերում գտնել պետության կերտման մի շարք կարևոր հարցերի շուրջ համաձայնություններ և տարաձայնություններ:

Նախ և առաջ խոսենք պետականությանը վերաբերող քաղաքագիտական որոշ եզրույթների մասին: Սահմանադրական իրավունքում պետությունը սահմանվում է որպես իշխանական կառույց, որը տիրապետում է պետության տարածքում հասարակության կազմակերպման ինքնիշխան լիազորություններին և սահմանում նրա գործակցությունն արտաքին աշխարհի հետ:[175] Պետության կառուցվածքը ենթադրում է պետականությանը բնորոշ հատկանիշներ՝ պետական կառուցվածքի ձև, քաղաքական վարչակարգ, կառավարման ձև:

Պետականության հատկանիշները բոլոր քաղաքական կուսակցությունների ծրագրերի բաղկացուցիչ տարրերն են, քանզի կուսակցությունների նպատակը իշխանության ձեռքբերումն է, իրականա-

---

[175] *Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս.* «Քաղաքագիտություն» հանրագիտական բառարան, *Պետություն,* Print Master, Երևան, 2004, էջ 337:

ցումը և պահպանումը: Բնականաբար նրանք արտացոլում են առաջատար պետությունների պետականաշինության փորձը, այդ իսկ պատճառով 20-րդ դարի երկրորդ կեսին ընդունված սահմանադրությունները բովանդակում են պետականության այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ ժողովրդավարական, իրավական, սոցիալական և այլ հատկանիշները:

Պետական կազմակերպման ձևը[176] վերաբերում է տարածքային կազմակերպմանը, ինչպես նաև կենտրոնական և տեղական քաղաքական մարմինների փոխհարաբերություններին: Ժամանակակից աշխարհում գոյություն ունեն պետական կառուցվածքի ունիտար (միատարր), դաշնային և համադաշնային ձևեր:

Քաղաքական վարչակարգը[177] նեղ իմաստով մեթոդների և միջոցների ամբողջություն է, որի միջոցով իշխող դասն իրականացնում է իր քաղաքական և տնտեսական տիրապետությունը, հասարակության մեջ իր իշխանությունը: Լայն իմաստով այն քաղաքական համակարգի հատկանիշ է, քանզի քաղաքական վարչակարգն արտացոլում է հասարակության քաղաքական ոլորտի որոշակի վիճակը, որի բաղադրիչներն են քաղաքական հարաբերությունները, քաղաքական կազմակերպումը և քաղաքական գիտակցությունը: Տարբերակում են քաղաքական վարչակարգի երեք ձև՝ ժողովրդավարական, ավտորիտար և ամբողջատիրական (տոտալիտար):

Կառավարման ձևը[178] պետական իշխանության կազմակերպումն է, որը սահմանվում է պետական իշխանության գերագույն մարմինների կառուցվածքով և իրավական կարգավիճակով: Այն կախված է գերագույն պետական իշխանության կազմակերպումից, ավելի ստույգ՝ պետական իշխանության գերագույն մարմիններից մեկի իրավական կարգավիճակից, այսինքն՝ պետության առաջնորդից: Կառավարման երկու հիմնական ձևերի՝ միապետության և

---

[176] *Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բաբաջանյան Ա., Աստվածատուրով Ս.* «Քաղաքագիտություն» հանրագիտական բառարան, *Պետություն,* Print Master, Երևան, 2004, էջ 333:

[177] *Նույն տեղում,* էջ 438:

[178] *Նույն տեղում*, էջ 213:

հանրապետության միջև տարբերությունն այն է, թե ով է կանգնած պետության գլխում:

Այժմ մանրամասն հետազոտենք պետական կառուցվածքի և պետական իշխանության վերաբերյալ հայաստանյան վեց կուսակցությունների (ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ, ՀՀՇ, ՀՅԴ, Ժառանգություն) դիրքորոշումները: Այս պարագայում բախվում են կուսակցությունների հիմնական շահերը, Հայաստանի ապագայի հանդեպ նրանց պատկերացումները և պետությունում առկա կոնֆլիկտների կառավարման միջոցները:

Օրենսդիր մարմնի գործունեությունն ամրապնդել առաջարկում է ՀՀԿ-ն՝ գտնելով, որ դա կարող է դրական ազդեցություն ունենալ Հայաստանի ներքին քաղաքականության վրա և նպաստել պետական կառույցներում տեղի ունեցող գործընթացների բարելավմանը:

Ինչպես նշվում է ՀՀԿ ծրագրում, այն ազգային պահպանողական կուսակցություն է: ՀՀԿ նպատակներն ու գործունեությունը բխում են ազգի և հայրենիքի հավիտենության գաղափարներից: Այդ նպատակի իրագործման գրավականը հայ ազգային գաղափարախոսությունն է:[179]

Պետության գործունեության հիմնական սկզբունքների և ուղղությունների վերաբերյալ Հայաստանի Հանրապետական կուսակցությունն ունի իր մոտեցումները: Հայոց պետությունը հայության նպատակների իրականացման հիմնական և ամենաարդյունավետ միջոցն է: Պետական կառավարման ձևը, կախված իրականացվող նպատակների, ծրագրերի լուծման արդյունավետությունից, կարող է փոխվել պետության զարգացման տարբեր փուլերում, իսկ կառավարման համակարգի գործունեությունը պետք է հիմնված լինի իրավունքի գերակայության, օրենքի իշխանության, ազգային անվտանգության և զարգացման հայեցակարգերի ու ծրագրերի վրա: Պետությունը պետք է աջակցի քաղաքական համակարգի զարգացմանը, ժողովրդավարության կայացմանը, մասնակի և փուլային բարեփոխումների ճանապարհով՝ հասարակության անընդհատ բարելավմանը: Ցանկացած

[179] *ՀՀԿ ծրագիր,* http/hhk.am/arm/index.php?page=program

բարեփոխում պետք է համապատասխանի հասարակության ավանդական արժեհամակարգին՝ ուղղված լինելով դրա արդիականացմանը:[180]

Խորհրդարանի գործունեությունն ամրապնդել առաջարկում է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ գտնելով, որ պետք է ստեղծել պայմաններ Ազգային Ժողովի ընտրությունների հարյուր տոկոսանոց համամասնական ընտրական համակարգին անցում կատարելու համար: Դա նշանակում է, որ այդպիսով աճում է տարբեր քաղաքական կուսակցությունների՝ խորհրդարան մուտք գործելու հնարավորությունը, ինչը կուսակցական լիդերների միջև պայքարից բացի կհանգեցնի նաև գաղափարական պայքարի, որն ավելի գնահատելի է ժողովրդավարական պետություններում:[181] Ինչ վերաբերում է պետական կառավարման արդյունավետությանը, ապա ԲՀԿ-ն անհրաժեշտ է համարում՝ 1. բացառել նախարարությունների, գերատեսչությունների և պետական կառավարման այլ մարմինների կողմից միանման գործառույթների իրականացումը, 2. ընդունել վարչական կանոնակարգ՝ սահմանելով ու հստակեցնելով որոշումներ ընդունելու կարգը և ժամկետները, ինչպես նաև փաստաթղթաշրջանառության և վարչարարության կանոնների խախտման համար պատասխանատվությունը, 3. բարձրացնել պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության թափանցելիության աստիճանը՝ արմատավորելով հասարակական վերահսկողության միջազգային փորձը, 4. հնարավորինս կրճատել պետական պաշտոնյաների և ծառայողների թվաքանակը, բարձրացնել նրանց պատասխանատվությունը և կատարելագործել պետական ծառայողների վարձատրության համակարգը:[182]

Ուշագրավ է նաև պետական կառուցվածքի մասին «Ժառանգություն» կուսակցության ծրագիրը, որտեղ նշվում է, որ տվյալ կուսակցության գաղափարախոսության կարևոր դրույթներից է ազգային գաղափարախոսության վրա հիմնված ազատական, ժողովրդավա-

---

[180] *ՀՀԿ ծրագիր,* http/hhk.am/arm/index.php?page=program
[181] *ԲՀԿ ծրագիր,* http://bhk.am/arm/program.php
[182] *ԲՀԿ ծրագիր,* http://bhk.am/arm/program.php

րական կառավարման համակարգը, որի նպատակն է իրավական, սոցիալական պետության ստեղծումը, որտեղ ազգային և պետական շահերը վեր են ամենից: Որպես ժողովրդավարական պետություն՝ Հայաստանում շատ կարևոր է իշխանության տարանջատման սկզբունքը, որը համարվում է քաղաքական գործողություններում ազատության և անկախության հիմք:[183]

Պետական կառուցվածքի տեսանկյունից ՕԵԿ-ը նույնպես ժողովրդավարական արժեքների կողմնակից է: Կուսակցության ծրագրում կարևոր են համարվում հետևյալ կետերը՝ 1. ժողովրդավարական, սոցիալական, աշխարհիկ և իրավական պետության կերտումը, 2. իշխանության երեք թևերի՝ օրենսդիր, գործադիր, դատական, կայուն զարգացումը և նրանց միջև համագործակցության ու փոխադարձ հակակշռման ապահովումը, 3. ժողովրդավարական ինստիտուտների ձևավորմանը և արդյունավետ գործունեությանը նպաստելը[184] և այլն:

ՀՀՇ-ն նույնպես նմանատիպ դիրքորոշում ունի վերոհիշյալ հարցերի վերաբերյալ: Նրա ծրագրում նշվում է, որ կուսակցությունն ընտրել է պետականության, ժողովրդավարության, ազատականության, խաղաղության և սոցիալական արդարության գաղափարական սկզբունքները:[185] Կուսակցությունն անհրաժեշտ է համարում ստեղծել այնպիսի համակարգ, որը երաշխավորում և ապահովում է մարդու կյանքի և սեփականության անձեռնմխելիությունը, յուրաքանչյուր անձի խոսքի, խղճի, մտքի, դավանանքի ազատությունը, օրենքի գերակայությունն ու նրա առջև բոլորի հավասարությունը, իշխանությունների տարանջատումն ու հասարակության կողմից վերահսկելիությունը, դատարանի անաչառությունը:

ՀՅԴ-ն տարբերվում է մյուս կուսակցություններից իր գաղափարախոսությամբ: Ծրագրում նշված ազգային, ժողովրդավարական և

---

[183] *«Ժառանգություն» կուսակցության ծրագիր,* http://heritage.am/documents/programarm.htm

[184] *ՕԵԿ ծրագիր,* http://www.oek.am/program.html

[185] *ՀՀՇ ծրագիր,* ՀՀՇ համագումար, 22-23, Ժողովածու համագումարի պատվիրակների համար, Երևան, 2000:

այլ նպատակներից բացի ՀՅԴ-ն իրեն համարում է նաև հեղափոխական կուսակցություն: Այն իր բոլոր ուժերով պայքարում է հայ ազգի քաղաքական-տնտեսական, ընկերային-մշակութային բովանդակ շահերի պաշտպանության համար:[186] ՀՅԴ-ն հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը հիմնավորում է իր գաղափարաբանությամբ: Նա առաջադրում է անհատի ազատության, ազգային ինքնորոշման, անկախ պետականության, ընկերության համերաշխության և բարօրության ճանապարհով հայ մարդու և հայ ազգի անկաշկանդ, բազմակողմանի և ներդաշնակ զարգացման ապահովումը:

Այսպիսով, մեր կողմից ընտրված հայաստանյան վեց քաղաքական կուսակցությունների ծրագրերի խոսութային վերլուծությունից պարզ է դառնում, որ բոլոր կուսակցությունները (ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ, ՀՀՇ, ՀՅԴ, Ժառանգություն) միակարծիք են պետական կառուցվածքին և պետական իշխանությանը վերաբերող հետևյալ հարցերում՝

1.Հայաստանը պետք է լինի ժողովրդավարական, աշխարհիկ, սոցիալական և իրավական,

2.պետական ապարատը պետք է կազմակեպվի իշխանության տարանջատման սկզբունքով. օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները պարտավոր են միմյանց փոխլրացնել, փոխզսպել և փոխվերահսկել,

3.քաղաքական վարչակարգը պետք է լինի ժողովրդավարական,

4.կառավարման ձևը պետք է լինի հանրապետական,

5.բոլոր կուսակցությունները կողմ են միատարր պետական-տարածքային կառուցվածքին,

6.կուսակցությունների մի մասն անհրաժեշտ է համարում պայքարել իշխանական մարմիններում առկա կոռուպցիայի և բյուրոկրատիզմի դեմ (այս դրույթը հստակ սահմանված է ԲՀԿ[187], Ժառանգու-

[186] *ՀՅԴ ծրագիր,* http://www.arfd.am/arm/index.php?c=1&sc=1&id=2&p=0
[187] *ԲՀԿ ծրագիր,* http://bhk.am/arm/program.php

թյան[188] և ՕԵԿ[189] ծրագրերում): Նշենք, որ այս մասին չի նշվում ՀՅԴ և ՀՀՇ ծրագրերում:

Վերլուծենք մեր կողմից ընտրված հայաստանյան վեց կուսակցությունների դիրքորոշումներն արտաքին քաղաքականության ոլորտում, մասնավորապես՝ Արցախյան խնդրի, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների և հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցերի վերաբերյալ, որոնք համարվում են ՀՀ արտաքին քաղաքականության առաջնային հարցեր:

ԲՀԿ ծրագրում այս հարցերը նշված են առանձին կետերով: Արցախյան խնդրի կապակցությամբ կուսակցության ծրագրում նշվում է, որ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչման ապահովմամբ, հակամարտության երկու կողմերի՝ Արցախի և Ադրբեջանի կատարած փոխզիջումների հիման վրա, անվտանգության միջազգային երաշխիքների ամրագրմամբ Արցախի հիմնախնդրի խաղաղ, քաղաքական ճանապարհով կարգավորումը ՀՀ արտաքին քաղաքականության գերակայություններից մեկն է:[190] Կուսակցությունն անհրաժեշտ է համարում նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բազմակողմ և ուղղակի բանակցություններին զուգընթաց համակողմանիորեն աջակցել Արցախի անվտանգության ապահովմանը, ժողովրդավարացմանը, սոցիալ-տնտեսական զարգացմանը և տարածաշրջանային ինտեգրմանը: ԲՀԿ-ի համար ընդունելի է արցախյան հիմնախնդրի այնպիսի կարգավորումը, որի բանակցային գործընթացում ԼՂՀ-ն հանդես կգա որպես լիիրավ կողմ, իսկ Արցախի կարգավիճակի հարցում կբացառվի որևէ լուծում՝ առանց Արցախի ժողովրդի համաձայնության: ԼՂՀ անկախությունն այլընտրանք չունի:[191]

Ինչ վերաբերում է Սփյուռքին և հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, ապա ԲՀԿ-ն անհրաժեշտ է համարում

---

[188] *«Ժառանգություն» կուսակցության ծրագիր,* http://heritage.am/documents/programarm.htm
[189] *ՕԵԿ ծրագիր,* http://www.oek.am/program.html
[190] *ԲՀԿ ծրագիր,* http://bhk.am/arm/program.php
[191] *Նույն տեղում:*

Հայաստան-Սփյուռք հարաբերությունների համակարգված զարգացումը և հետագա խորացումը միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, իսկ ցեղասպանության կապակցությամբ կուսակցության ծրագրում հստակ նշվում է հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում Հայաստանի Հանրապետության մասնակցության չափն ազգային, պետական իրատեսական շահերով պայմանավորելու մասին: Կուսակցության ծրագրում հստակորեն նշվում է, որ հայոց ցեղասպանության դատապարտումն ու միջազգային ճանաչումն այլընտրանք չունի:[192]

ՀՀԿ ծրագրում ստույգ չի խոսվում արցախյան խնդրի և հայոց ցեղասպանության մասին, այլ ուղղակի նշվում է, որ արտաքին քաղաքականության ոլորտում պետության գործունեությունը պետք է ուղղված լինի հարևան երկրների հետ բարիդրացիական և կայուն հարաբերությունների հաստատմանն ու պահպանմանը, միջազգային հանրությանը բնականոն ինտեգրմանը, նրանում Հայաստանի դերի մեծացմանը, աշխարհի բոլոր երկրների հետ փոխշահավետ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ կապերի զարգացմանը:[193] Իսկ հայկական Սփյուռքի վերաբերյալ կուսակցության ծրագրում պարզ նշվում է, որ պետությունը պետք է բարենպաստ պայմաններ ստեղծի սփյուռքահայության ներուժի համախմբման համար՝ ի նպաստ Հայոց պետության հզորացման և Սփյուռքի արժանապատիվ գոյատևման՝ հիմնական նպատակ ունենալով սփյուռքահայության վերադարձը հայրենիք:

«Ժառանգություն» կուսակցության ծրագրում ևս առկա են արցախյան խնդրի կարգավորման և Սփյուռքի մասին դրույթներ: Արցախի կապակցությամբ կուսակցության ծրագրում սահմանված են Արցախի անկախության միջազգային ճանաչման ապահովման և Հայաստանի հետ նրա միավորման դրույթները: Իսկ ինչ վերաբերում է Սփյուռքին, ապա կուսակցությունն անհրաժեշտ է համարում նրա հետ արդյունավետ և բազմակողմանի հարաբերությունների ամ-

---

[192] *ԲՀԿ ծրագիր,* http://bhk.am/arm/program.php
[193] *ՀՀԿ ծրագիր,* http/hhk.am/arm/index.php?page=program

ռապնդումը և խորացումը՝ Սփյուռքում հայապահպանությանը նպաստելու համար:[194] Հարկ է նշել, որ «Ժառանգություն» կուսակցության ծրագրում բացակայում է հայոց ցեղասպանության մասին դրույթը:

Արտաքին քաղաքականության ոլորտում ՀՅԴ-ն նախ և առաջ ձգտում է Հայ Դատի լուծմանը և ողջ հայության համար ամբողջական հայրենիքի ստեղծմանը: Նրա արտաքին քաղաքականությունն ուղղված է այս նպատակի իրականացմանը: Կուսակցությունը կարևորում է արցախյան խնդրի կարգավորումն Արցախի (ԼՂՀ) միջազգային ճանաչմամբ առանց հայկական կողմից միակողմանի զիջումների:

Ինչ վերաբերում է ՕԵԿ-ին, ապա կուսակցության ծրագրում ևս առկա են արցախյան խնդրի և Հայաստան-Սփյուռք կապերի մասին դրույթներ: Կուսակցության ծրագրում անհրաժեշտ է համարվում գործուն պետական, հասարակական և իրավական մեխանիզմների ստեղծման, գործարար և մշակութային կապերի ակտիվացման ճանապարհով Հայաստան-Սփյուռք-Արցախ ներուժի համախմբումը: Արցախյան խնդրի լուծման համար պետք է հիմնվել համակարծության և ազգային շահերի վրա: Իսկ Սփյուռքի հետ հարաբերությունների ամրապնդումն անհրաժեշտ է ոչ միայն ազգային քաղաքական շահերի պաշտպանման, այլև՝ ազգային արժեքները միջազգային ասպարեզում ներկայացնելու համար:[195] ՕԵԿ ծրագրում ևս բացակայում է հայոց ցեղասպանության մասին դրույթը:

Վերլուծենք արտաքին քաղաքականության ոլորտում վերոհիշյալ հարցերի վերաբերյալ ՀՀՇ ծրագիրը: Կուսակցության ծրագրում գրված է, որ հայրենիքում և Սփյուռքում ապրող հայությունը պետք է ունենա մեկ նպատակ՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հզորացումն ու ամրապնդումը: Հայկական սփյուռքն իր ուժերով կարող է և պետք է կարևոր դեր խաղա անկախ Հայաստանի սոցիալ-տնտեսական և հոգևոր զարգացման գործում: Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները պետք է կառուցվեն փոխըմբռնման և համագործակցության սկզբունքների հիման վրա: Հայաստանի արտաքին

---

[194] *«Ժառանգություն» կուսակցության ծրագիր,* http://heritage.am/documents/programarm.htm
[195] *ՕԵԿ ծրագիր,* http://www.oek.am/program.html

քաղաքականությունը պետք է ուղղված լինի տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատմանը: Առաջնայնություն տալով եվրոպական կառույցներում Հայաստանի լիիրավ անդամակցությանը՝ անհրաժեշտ է ակտիվ մասնակցություն ցուցաբերել տարածաշրջանային համագործակցության բոլոր կառույցների աշխատանքներին:[196] Հարկ է նշել, որ կուսակցության ծրագրում բացակայում է հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման մասին դրույթը:

Ստորև բերված աղյուսակում համակարգված կերպով ցույց տանք վեց կուսակցությունների՝ ներքին և արտաքին քաղաքական ոլորտներում վերոհիշյալ հարցերի վերաբերյալ ծրագրային դրույթների համեմատական պատկերը:

Աղյուսակ 6.

Ծրագրային դրույթներ, պետական կառուցվածքի, պետական իշխանության, արտաքին քաղաքականության մասին	ՀՀԿ	ԲՀԿ	ՕԵԿ	ՀՅԴ	ժառանգություն	ՀՀՇ
ժողովրդավարական վարչակարգ	առկա	առկա	առկա	առկա	առկա	առկա
Հանրապետական կառավարման ձև	առկա	առկա	առկա	առկա	առկա	առկա
Ազատական, իրավական պետություն	առկա	առկա	առկա	առկա	առկա	առկա
Պայքար կոռուպցիայի, բյուրոկրատիզմի դեմ	չկա	առկա	առկա	չկա	առկա	չկա
Արցախյան հիմնախնդիր	չկա	առկա	առկա	առկա	առկա	առկա
Հայաստան - Սփյուռք կապեր	առկա	առկա	առկա	առկա	առկա	առկա
Ցեղասպանության միջազգային ճանաչում	չկա	առկա	չկա	առկա	չկա	չկա

[196] ՀՀՇ ծրագիր, ՀՀՇ համագումար, 22-23, ժողովածու համագումարի պատվիրակների համար, Երևան, 2000:

Այսպիսով, քաղաքական կուսակցությունների ծրագրերի խոսութային վերլուծության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին:

Մեր կողմից ընտրված հայաստանյան վեց քաղաքական կուսակցությունները կողմ են այն դրույթին, որ հայկական պետությունը պետք է լինի իրավական, ժողովրդավարական և միատարր, պետք է ունենա ժողովրդավարական քաղաքական վարչակարգ և հանրապետական կառավարման ձև (խառը, խորհրդարանական-նախագահական կամ նախագահական-խորհրդարանական), պետք է գործեն իշխանության եռաձյուղ բաժանման և ՀՀ բոլոր սուբյեկտների իրավահավասարության սկզբունքները: Սակայն վեց կուսակցություններից միայն մի քանիսի ծրագրերում են առկա իշխանական մարմիններում կոռուպցիայի և բյուրոկրատիզմի դեմ պայքարի մասին դրույթներ (ԲՀԿ, ՕԵԿ, Ժառանգություն):

Արտաքին քաղաքականության ոլորտում վեց կուսակցություններից հինգի ծրագրերում (ԲՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ, ՀՀՇ, Ժառանգություն) նշվում է արցախյան խնդրի լուծման կարևորության մասին տարածաշրջանում քաղաքական իրավիճակի կայունացման և հարևան պետությունների հետ հարաբերությունների բարելավման նպատակով: Բոլոր վեց կուսակցությունների ծրագրերում կարևորվում են Հայաստան-Սփյուռք հարաբերությունները, քանզի դրանց միջոցով կարելի է նպաստել միջազգային ոլորտում ազգային քաղաքական շահերի ներկայացմանը, ընդլայնմանը և պաշտպանմանը (օրինակ՝ արցախյան հիմնախնդրի լուծում, հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում): Ինչ վերաբերում է հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, ապա այս դրույթն առկա է մեր կողմից վերլուծության ենթարկված կուսակցություններից միայն երկուսի ծրագրերում: ՀՅԴ-ն և ԲՀԿ-ն իրենց ծրագրերում հատուկ ուշադրություն են դարձրել այդ հարցին՝ հայոց ցեղասպանության ճանաչումը համարելով ազգային-պետական շահ:

Այսպիսով, կարելի է պնդել, որ վերոհիշյալ կուսակցությունների ծրագրերում գոյություն չունեն խիստ գաղափարախոսական տարբերություններ, քանի որ բոլոր վեց կուսակցություններն առաջնորդվում

են ժողովրդավարական գաղափարներով: Սակայն հարկ է նկատել, որ գոյություն ունեն որոշ տարբերություններ, մասնավորապես՝ արտաքին քաղաքականության ոլորտում արցախյան խնդրի և հայոց ցեղասպանության հարցերի շուրջ:

3. Իշխանության և ընդդիմության փոխգործակցությունը Հայաստանում

Ժողովրդավարական երկրներում իշխանության և ընդդիմության փոխգործակցությունը համարվում է քաղաքացիական հասարակության ձևավորման և կայացման կարևոր նախապայման: Հակադիր դիրքորոշումներ ունեցող այդ քաղաքական ուժերի առաջնային նպատակը իշխանության ձեռքբերումն է, իրականացումը և դրա պահպանումը: Քաղաքական էլիտայի կողմից իրականացվող երկրի արդիականացման գործընթացը կարող է զգալիորեն ազդել իշխանության և ընդդիմության փոխհարաբերությունների ձևի և բովանդակության վրա:

Այս պարագայում կարևոր է հիշել ամերիկացի քաղաքագետ Սամուել Հանտինգտոնի՝ ժողովրդավարացման ալիքների մասին դասակարգումը, ով նշում է, որ այսօր աշխարհը գտնվում է ժողովըրդավարացման երրորդ ալիքի ներգործության տակ:[197] Ժողովըրդավարացման առաջին ալիքը թվագրվում է 19-րդ դարի սկզբից, երբ ԱՄՆ-ում և եվրոպական մի շարք երկրներում սկսեցին ձևավորվել ժամանակակից ժողովրդավարության գաղափարական սկզբունքները: Այս ալիքը տևեց մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, որը բացասական ազդեցություն թողեց ժողովրդավարացման գործընթացի տարածման վրա: Հայտնի է, որ առաջին աշխարհամարտի ժամանակ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը խոստա-

[197] *Huntington S.* How Countries Democratize/ Political Science Quarterly/ Vol. 106. No. 4, p. 186.

ցավ պաշտպանել ժողովրդավարությունը արտաքին սպառնալիքներից: Սակայն հենց 20-րդ դարի 20-ական թթ.-ին պատերազմում պարտություն կրելու հետևանքով առաջացած վրեժխնդրության զգացումը ծնեց հակաժողովրդավարական միտումներ, ինչի արդյունքում Իտալիայում առաջացավ ֆաշիզմի, իսկ Գերմանիայում՝ նացիզմի գաղափարախոսությունը:

Ժողովրդավարացման երկրորդ ալիքը սկսվեց երկրորդ աշխարհամարտից հետո, մասնավորապես՝ պարտություն կրած պետություններում (Արևմտյան Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա) և շարունակվեց մինչև 60-ական թթ. կեսերը, երբ մի շարք երկրներում (Հունաստան, Ֆիլիպիններ, Հարավային Կորեա, Նիգերիա և այլն) կրկին հաստատվեցին ավտորիտար վարչակարգեր:

Ժողովրդավարացման երրորդ ալիքը սկսվեց 1974թ.-ին Պորտուգալիայում Սալազարի բռնապետության անկումից հետո և շարունակվեց Իսպանիայում, Հունաստանում, Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում (Արգենտինա, Բրազիլիա, Բոլիվիա, Պանամա, Չիլի, Ուրուգվայ, Էկվադոր, Պերու և այլն): 80-ական թթ. կեսերին այն հասավ նաև Ասիա (Ֆիլիպիններ, Հարավային Կորեա, Թայվան, Թայլանդ և այլն), իսկ 1989-90-ական թթ. վերջին ժողովրդավարացման երրորդ ալիքը հեղեղեց ԽՍՀՄ-ը, Կենտրոնական և Արևելյան Եվրոպան: Խորհրդային համակարգի փլուզումից հետո կազմավորվեցին տասնհինգ նորանկախ հանրապետություններ, որոնք հռչակեցին իրենց որպես «նոր ժողովրդավարություններ»:[198]

Ժողովրդավարացման երրորդ ալիքը կրեց համընդհանուր բնույթ: Ամերիկյան «Freedom House»[199] կազմակերպության տվյալներով, որի հիմնական գործառույթը աշխարհում ազատության և ժողովրդավարության գործընթացներին հետևելն է, եթե 1972թ.-ին աշխարհում հաշվվում էր ժողովրդավարության չափանիշներին ծգտող 42 պետություն, ապա 1994թ.-ին դրանց թիվը կազմում էր արդեն 72, իսկ 1997թ.-ին՝ 117: Արևելաեվրոպական և նախկին խորհրդային

---

[198] *Նույն տեղում,* էջ 579:
[199] *Freedom House,* www.freedomhouse.org

պետությունների շարքում որպես «ամրապնդված ժողովրդավարություններ» հաշվվում է 7 պետություն (Չեխիա, Հունգարիա, Լեհաստան, Սլովենիա, Էստոնիա, Լիտվա և Լատվիա), իսկ անցումային փուլում գտնվող պետությունները 14-ն են (Ռուսաստան, Մոլդովա, Սլովակիա, Բուլղարիա, Ռումինիա, Ուկրաինա, Մակեդոնիա, Խորվաթիա, Ալբանիա, Հայաստան, Ղրղզստան, Վրաստան, Ղազախստան և Ադրբեջան):[200]

Հանտինգտոնը տարբերակում է քաղաքական արդիականացման երկու ձև՝ ինքնաբերաբար (ժողովրդավարացման առաջին ալիքի երկրներ՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա) և հաջորդական (snowball-ձնագունդ) (Ժողովրդավարացման երկրորդ և երրորդ ալիքի երկրներ): Հաջորդական ժողովրդավարացման հիմնական գործոնը, նրա կարծիքով, արդեն գոյություն ունեցող «համաշխարհային մշակույթի» հետ առնչվող սոցիալ-մշակութային կապերն են: Քաղաքական արդիականացման հաջողությունը մեծ մասամբ պայմանավորված է տեղի ունեցող գործընթացների ներդաշնակությամբ, այսինքն՝ որքանո՞վ են դրանք համահունչ ազգային արժեքներին, ինչպե՞ս են ընկալվում հասարակության կողմից և արդյո՞ք արժանանում են վերջինիս համակրանքին:[201]

Հարկ է նշել, որ արդիականացման պայմաններում մտավորականությունը հանդես է գալիս որպես ընդդիմության սուբյեկտ: Այս մասին նշում է Հանտինգտոնը՝ բնութագրելով հարաբերականորեն նոր սոցիալական խմբերը, որոնք առաջացել են արդյունաբերականացման և քաղաքակենտրոնացման արդյունքում: Միջին դասը, որում ներառված են քաղաքացիական ծառայողները, բժիշկները, ուսուցիչները, դասախոսները, ինժեներ-տեխնիկները և այլոք Հանտինգտոնն անվանում է ընդդիմադիր ուժ ունեցող ամենամեծ զանգված:[202] Լինելով տեղեկացված՝ միջին դասը առաջինն է յուրացնում քաղաքական նոր գաղափարները և նպաստում է հասարակության մեջ դրանց

---

[200] *Мельвиль А.* Демократические транзиты. Теоретико-методологические и прикладные аспекты, М. 1999, с. 8.
[201] *Хантингтон С.* Запад уникален, но не универсален/ МЭ и МО. № 8, 1997, с. 85.
[202] *Huntington S*. Political Order in Changing Societies, New Heaven. 1970, p. 266.

տարածմանը, որի արդյունքում ավելի մեծաթիվ մարդիկ, սոցիալական խմբեր, որոնք նախկինում չէին ցուցաբերում քաղաքական ակտիվություն, սկսում են քաղաքականացվել: Մարդիկ սկսում են գիտակցել, որ քաղաքականությունն ուղղակիորեն կապված է իրենց շահերի հետ, և ընդունվող քաղաքական որոշումներից է կախված իրենց ճակատագիրը: Այս պարագայում նրանք առավելապես ձգտում են մասնակցել քաղաքական կյանքին և փնտրում են քաղաքական որոշումների վրա ներգործելու միջոցներ: Սակայն այդ երևույթն ունի նաև բացասական կողմեր: Բանն այն է, որ զանգվածները չունեն կառավարման համապատասխան հմտություններ. նրանք չգիտեն ինչպես գործադրել իշխանական լծակները: Արդյունքում մասնակցելով քաղաքականությանը՝ նրանք չեն ստանում ակնկալվող արդյունքները, ինչն էլ զարգացող երկրներում հանգեցնում է քաղաքական անկայունության, կառավարման համակարգի ապակայունացման: Հանտինգտոնը գտնում է, որ արագացված ժողովրդավարացումն այն երկրներում, որտեղ բացակայում են դրա համար անհրաժեշտ պայմանները, կարող է հանգեցնել ոչ թե զարգացման, այլ՝ հետընթացի:[203]

Հետազոտողների մի մասը կարծում է, որ ժողովրդավարացումն անցնում է երկու փոփոխական փուլ՝ ազատական և պահպանողական: Իսկ մյուս մասը գտնում է, որ այդ գործընթացը տեղի է ունենում դրանցից մեկի առավելությամբ: Ժողովրդավարացման պահպանողական մոդելը հիմնվում է քաղաքական գործընթացների կոշտ կառավարման և նախանշված նպատակներին հասնելու համար առկա խնդիրների նվազեցման սկզբունքների վրա: Ուստի այս պարագայում նվազում է քաղաքական ընդդիմության դերը, և ուժեղանում է քաղաքական կառավարման կենտրոնացումը: Մինչդեռ քաղաքական նպատակներին հասնելու գործում ժողովրդավարացման ազատական մոդելին ներհատուկ է կառավարման ապակենտրոնացումը: Այս պարագայում հաջողության հասնելու համար իշխա-

[203] *Huntington S*. Political Order in Changing Societies, New Heaven, 1970.

նությունը քաղաքական գործընթացներում ներգրավում է նաև օրինական քաղաքական ընդդիմությանը:[204]

Հանտինգտոնը գտնում է, որ արդիականացման պահպանողական մոդելը ենթադրում է ավտորիտար վարչակարգ, կարգուկանոնի վերահսկողություն, ինչը կարող է ապահովել անցումը շուկայական հարաբերություններին, ազգային միասնությանը և գերկենտրոնացված քաղաքական ինստիտուտներին, որոնք, ունակ կլինեն վարել արդիականացման քաղաքականություն և կապահովեն քաղաքական մասնակցությունը: Անցումային քաղաքական համակարգի հենց այս գործոնները կարող են հանգեցնել արդիականացման գործում դրական արդյունքների:[205]

Պահպանողականները պնդում են, որ արդիականացման գործընթացը պահանջում է քաղաքական նպատակների և սոցիալ-տնտեսական զարգացման, կայունության, հավասարության և մասնակցության գործոնների համահարաբերակցում, քանզի դրանց միջև է, որ հաճախ ծագում են լարվածություն և կոնֆլիկտներ: Խոսքը վերաբերում է հավասարության և մասնակցության աստիճանին, քանզի հակառակ դեպքում, եթե դրանք վերածվում են նպատակի, ապա դա սպառնում է սոցիալ-տնտեսական կայունությանը: Առաջնայնությունների ընտրության հարցը, բնականաբար, կախված է իշխող էլիտայի կամքից, որը շահագրգռված է իշխանության պահպանման և ներքին լարումների հավանականության նվազեցման հարցերում: Պահպանողականների հիմնական գաղափարը բարեփոխումների և իշխող էլիտայի շահերի միջև համապատասխանությունն է:[206]

Պահպանողականները նշում են արդիականացման տարբեր ձևերի հնարավորության մասին, քանզի ավտորիտար վարչակարգերը միանշանակ չեն: Նրանք առաջարկում են աստիճանական արդիականացում ավտորիտար վարչակարգի պայմաններում: Այդ պայմանների թվին են դասվում՝ ա) քաղաքական հակառակորդների

---

[204] *Растоу Д.* Переходы к демократии. Попытки динамической модели // *Полис*. № 5, 1996.
[205] *Huntington S.* The Third Wave: Democratization in the Late Twentieth Century. - Norman and London, 1991.
[206] *Даймонд Л.* Прошла ли “третья волна” демократизации? // *Полис*. № 5, 1999.

հետ ունեցած խնդիրներում համաձայնության հասնելու քաղաքական լիդերների ունակությունը, բ) բարեփոխումների ընթացքում որակապես տարբեր և ոչ շարունակական փուլերի առանձնացումը, որոնցից յուրաքանչյուրը պետք է ունենա ստույգ նպատակներ և առաջնայնություններ, գ) բարեփոխումների հաջողությունը մեծապես պայմանավորված է ժամանակի և վայրի ճիշտ ընտրությամբ:[207]

Ինչպես նշում է ռուս հետազոտող Վիշնևսկին. «Պահպանողական արդիականացման էությունը ավելորդ լարվածությունից և խնդրայնությունից խուսափելն է»:[208] Այդ իսկ պատճառով բարեփոխումները պետք է լինեն ծրագրված, որպեսզի չհրահրեն ընդդիմության կտրուկ հակազդեցությունը: Բարեփոխումների իրականացման ժամանակի ընտրությունը կախված է քաղաքական ուժերի տեղաբաշխումից, քանզի առանց հզոր քաղաքական կոալիցիայի անհնար է դիմակայել բռնությանը և իրականացնել բարեփոխումներ օրենսդրական ճանապարհով:

Ազատականների գաղափարախոսության կենտրոնական տարրը քաղաքական համակարգի կողմից ժողովրդի պահանջներին և ժամանակի մարտահրավերներին համարժեք պատասխաններ տալու ունակության ձևավորումն է: Սակայն եթե քաղաքական կարգուկանոնի ապահովման համար պահպանողականները հենվում են կենտրոնացված ինստիտուտների ամրության և կայունության վրա, ապա ազատականները շեշտը դնում են իշխանության և հասարակության միջև անընդհատ երկխոսության վրա:

Ամերիկացի քաղաքագետ Կ. Դոյչը[209] նշում է, որ ազատականների քաղաքական արդիականացման հիմնական չափանիշը ներկայացուցչական ժողովրդավարության համակարգում քաղաքացիների ներգրավվածության աստիճանն է: Նա քաղաքական արդիականացումը սահմանում է մասնակցության և հավաքագրման (մոբիլի-

---

[207] *Шмиттер Ф.* Размышления о гражданском обществе и консолидации демократии // *Полис.* № 5, 1996.

[208] *Вишневский А.* Консервативная модернизация в СССР. ОГИ, М., 1998.

[209] *Мельвиль. А. (Дойч Карл)* Мир политической науки [Текст]: в 2 кн., Моск. гос. ин-т междунар. отношений (МГИМО-Ун-т) МИД России, Просвещение, М., 2004 - 2005.

զացիայի) կատեգորիաներով՝ նշելով, որ արդիականացումը պայմանավորված է զանգվածների մասնակցությամբ, ինչը ստանում է աճող քաղաքական ապակենտրոնացման բնույթ: Քաղաքական մասնակցության ընդլայնումը քաղաքական զարգացման բանալին է: Այս դեպքում ընդդիմությունն ավելի ակտիվ է գործում:[210]

Անցումային բարեփոխումների իրականացման համաշխարհային փորձը թույլ է տվել մշակել տնտեսության, քաղաքականության, սոցիալական հարաբերությունների ընդհանուր չափորոշիչներ[211] (Դ. Ռաստոու), որոնք դրված են արդիականացման համար անհրաժեշտ նպատակների հիմքում: Սոցիալական ոլորտում նման պահանջների թվին է դասվում բաց սոցիալական կառույցի կազմավորումը, որը չի սահմանափակում բնակչության շարժը: Իսկ քաղաքական ոլորտում նման պահանջների թվին են դասվում մարդու իրավունքների պաշտպանությունը, իշխանության կազմակերպման և գործառնության պլյուրալիստական համակարգը, քաղաքական հաղորդակցության աճը, որոշումների կայացման և իրագործման կոնսենսուսային մոտեցումը, քաղաքական համակարգի և հասարակության փոխհարաբերությունների ինքնակարգավորման մեխանիզմների մշակումը:

Ռուս քաղաքագետ Ս. Խենկինը նշում է, որ հաջող արդիականացման համար անհրաժեշտ է հասնել իշխող և ընդդիմադիր ուժերի միջև երեք ձևի կոնսենսուսի՝

1.կոնսենսուս՝ հասարակական-քաղաքական գործընթացներում (խուսափել հետապնդումներից, ձգտել հաշտեցնել հաղթողներին և պարտվողներին),

2.կոնսենսուս՝ քաղաքական ազատությունների պայմաններում հասարակության զարգացման համար ժամանակավոր նորմերի սահմանմամբ,

---

[210] *Deutsch K.* Politics and Government, How People Decide Their Fate, Houghton Mifflin Company, Boston, 1980.

[211] *Растоу Д.* Переходы к демократии: попытка динамической модели/ Полис. №. 5, 1996, с. 7.

3.կոնսենսուս՝ իշխող վարչակարգի կողմից իրականացվող քաղաքականության հետ:[212]

Արժեքային կողմնորոշումները ձևավորվում են դանդաղ և ինքնաբերաբար: Հասարակության մեջ այս գործընթացի գիտակցաբար արմատավորումը կարող է հանգեցնել վաղաժամ քաղաքական և տնտեսական ժողովրդավարացման, որը կարող է չհամապատասխանել հասարակական գիտակցության մակարդակին և մշակույթին: Այս պարագայում առաջանում է ճգնաժամային իրավիճակ, իսկ որպես նմանատիպ դիմակայության սուբյեկտ՝ հանդես է գալիս ընդդիմությունը, որն իր ներսում կրում է պահպանողական և ազգային-մշակութային տարրեր:[213]

Ժողովրդավարացման երրորդ ալիքի ազդեցությունից անմասն չմնաց նաև Հայաստանը, որտեղ սկսվեց քաղաքական համակարգի արդիականացում:[214] Այդ գործընթացում իրենց կարևոր դերն ունեցան իշխանությունը և ընդդիմությունը:

ԽՍՀՄ փլուզմամբ սկսված արդիականացման երրորդ փուլը Հայաստանում պայմանավորված էր ՀՀՇ-ի և նրա առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանի ազատական-ժողովրդավարական գաղափարախոսությամբ: Հարկ է նկատել, որ ՀՀ քաղաքական արդիականացման գործընթացում ակներև են պահպանողական մոդելին հատուկ տարրեր: Օրինակ՝ Հայաստանում իշխանափոխության գործընթացները շատ հաճախ ուղեկցվել են ցնցումներով, քանի որ իշխանություններից ոչ մեկն այն առանց լարվածության չի փոխանցել հաջորդին: Հայտնի իրողություն է, որ Հայաստանում ընտրություններն ուղեկցվում են աղմկահարույց իրադարձություններով և բողոքի մեծ ալիքով: Այս ամենը վկայում է այն մասին, որ Հայաստանում դեռևս չեն ավարտվել ժողովրդավարացման և քաղաքացիական

---

[212] *Хенкин С.* Три консенсуса на пути к демократии/ Полис, но. 3, 1993, с.189.

[213] *Նույն տեղում:*

[214] *Տե՛ս 1. Погосян Г.* Современное армянское общество: особенности трансформации. “Academia”, М., 2005., *2. Погосян Г.* Теории модернизации и постсоветское общество: судьба социальных трансформаций в Армении, журнал “Общество и Экономика” N.6, М., 2003.

հասարակության ձևավորման գործընթացները, իսկ քաղաքական խոսույթը շարունակում է հիմնականում կրել կոնֆլիկտային բնույթ:

Եթե ԽՍՀՄ վերջին տարիների ազատական բարեփոխումների փուլում ձևավորվեցին նոր քաղաքական և տնտեսական ինստիտուտներ, ապա բարեփոխումների այս նոր փուլում դրանք ենթարկվում են էական փոփոխությունների, որպեսզի հասարակությունը և պետությունը կարողանան ընտելանալ դրանց (օրինակ՝ ժողովրդավարական այլընտրանքային ընտրությունների ինստիտուտը, ազատ ԶԼՄ-ների ինստիտուտը): Սա ընտելացման բնական երևույթ է, և, չնայած դանդաղ քայլերին, Հայաստանում շարունակվում է քաղաքական համակարգի արդիականացման գործընթացը: Իշխանության և բնակչության միջև կապերը ենթադրում են, որ քաղաքական դասը և հասարակությունը կարող են միավորվել ազգային նպատակներին հասնելու համար պատերազմի ժամանակ, ինչի վկայությունն են 1988թ.-ի շարժումը և արցախյան գոյամարտը:

Ինչ վերաբերում է հետխորհրդային Հայաստանի առաջին տարիներին (1991-1994թթ.), ապա իշխող քաղաքական ուժը՝ (ՀՀՇ) որպես ազատական-ժողովրդավարական գաղափարների կրող, ձեռնամուխ եղավ մի շարք բարեփոխումների: Փոփոխությունները սկսվեցին նախ և առաջ սեփականության ոլորտում: Հանրային սեփականությունից անցում կատարվեց մասնավորի, սեփականաշնորհվեցին բնակարանները, տեղի ունեցավ հողի մասնավորեցում, պլանային տնտեսությունից անցում կատարվեց շուկայականի (սոցիալիզմից անցում կապիտալիզմի): Չնայած այս ամենին՝ ԽՍՀՄ փլուզումն իր խորը հետքը թողեց երկրի քաղաքական-տնտեսական վիճակի վրա՝ առաջացնելով բազմաթիվ սոցիալ-տնտեսական և քաղաքական խնդիրներ՝ գործազրկություն, արտագաղթ, պատերազմ և այլն: Այդ ճգնաժամային իրավիճակի հաղթահարման խթանիչ ազդակներ հանդիսացան արցախյան գոյամարտում զինադադարի համաձայնության ձեռքբերումը և 1995թ. ՀՀ առաջին գումարման Ազգային ժողովի ընտրությունները, երբ քաղաքական ուժերի կողմից ցուցաբերվեց բարձր քաղաքական ակտիվություն:

Քաղաքական արդիականացման գործընթացում բավականին մեծ է այլընտրանքային գաղափարների աղբյուր հանդիսացող ընդդիմադիր կուսակցությունների դերը:

Անհրաժեշտ է նշել, որ 1995թ.-ից մինչ օրս տեղի է ունեցել ՀՀ Ազգային ժողովի չորս գումարում, և բոլոր գումարումների արդյունքում խորհրդարան են մուտք գործել ընդդիմադիր քաղաքական ուժեր:

Ստորև ներկայացնենք Հայաստանում քաղաքական ուժերի մասնակցությունն ԱԺ ընտրություններին և նրանց՝ ԱԺ մուտք գործելու տոկոսային հարաբերակցությունը ԱԺ բոլոր գումարումներում, որն ավելի հստակորեն ցույց կտա իշխանության և ընդդիմության փոխգործակցությունը քաղաքական համակարգում: Նշենք, որ ընտրական շեմը կազմում է հինգ տոկոս:

1995 թվականի հուլիսի 5-ին և 27-ին երկու փուլով տեղի ունեցան ՀՀ առաջին գումարման Ազգային ժողովի ընտրությունները, որոնց մասնակցեց 14 կուսակցություն: Օրենքով սահմանված 5 տոկոսի սահմանագիծը հաղթահարեց 5 կուսակցություն, որոնց միջև տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ՝ «Հանրապետություն» միավորում (50%, 20 պատգ.), «Շամիրամ» (20%, 8 պատգ.), ՀԿԿ (15%, 6 պատգ.), ԱԺՄ (7,5%, 3 պատգ.), ԱԻՄ (7,5%, 3 պատգ.): ԱԺ-ում ստեղծվեց նաև «Բարեփոխումներ» պատգամավորական խումբը (31 պատգ): 21 պատգամավոր ընդգրկված չէր որևէ խմբակցության կամ պատգամավորական խմբի կազմում: Հետագայում ձևավորվեց «Երկրապահ» պատգամավորական խումբը (17 պատգ.):[215]

1999թ. մայիսի 30-ին տեղի ունեցան ՀՀ երկրորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները (131 պատգամավոր՝ 75-ը մեծամասնական և 56-ը համամասնական ընտրակարգով): ԱԺ ընտրություններին մասնակցեց 21 կուսակցություն: Խորհրդարանի անդամ դարձան 6 կուսակցություն և դաշինք, որոնք ձևավորեցին խմբակցություններ՝ «Միասնություն» դաշինք (41,69%, 29 պատգ.), ՀԿԿ (12,09%, 8 պատգ.), «Իրավունք և միաբանություն» դաշինք

[215] *ՀՀ Ազգային ժողովի կայքէջ,* http://parliament.am/parliament.php?id=history&lang=arm

(7,96%, 6 պատգ.), ՀՅԴ (7,84%, 5 պատգ.), «Օրինաց երկիր» կուսակցություն (5,28%, 4 պատգ.), ԱԺՄ (5,17%, 4 պատգ.): Ազ-ում ստեղծվեցին «Կայունություն»՝ հետագայում «Ագրարային-արդյունաբերական ժողովրդական միավորում» (11 պատգ.), «Հայաստան» (12 պատգ.) և «Ժողովրդական պատգամավոր» (16 պատգ.) պատգամավորական խմբերը: 12 պատգամավոր ընդգրկված չէր որևէ խմբակցության կամ պատգամավորական խմբի կազմում:[216]

2003թ. մայիսի 25-ին տեղի ունեցան ՀՀ երրորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները (131 պատգամավոր՝ 75 համամասնական և 56 մեծամասնական ընտրակարգով), որոնց մասնակցեց 21 կուսակցություն: Ընտրություններում հաղթած 6 կուսակցություն և դաշինք ստեղծեցին հետևյալ խմբակցությունները՝ «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» (23,66%, 23 պատգ.), «Օրինաց երկիր» (12,60%, 12 պատգ.), «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» (11,45%, 11 պատգ.), «Արդարություն» (13,71%, 14 պատգ.), «Ազգային Միաբանություն» (8,91%, 9 պատգ.), «Միավորված աշխատանքային կուսակցություն» (5,67%, 6 պատգ.): Ազ-ում ստեղծվեց նաև «Ժողովրդական պատգամավոր» պատգամավորական խումբը (16 պատգ.): 14 պատգամավոր ընդգրկված չէր որևէ խմբակցության կամ պատգամավորական խմբի կազմում:[217]

2007թ. մայիսի 12-ին տեղի ունեցան ՀՀ չորրորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները, որոնց մասնակցեց 23 կուսակցություն, որոնցից հինգն անցան խորհրդարան՝ «Ժառանգություն» կուսակցություն (5.34%, 7 պատգ.), «Օրինաց Երկիր» (6.1%, 8 պատգ.), «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» (12.21%, 16 պատգ.), «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (19%, 25 պատգ.), «Հայաստանի Հանրապետական Կուսակցություն» (48.85%,

---

[216] *Նույն տեղում:*
[217] *Նույն տեղում:*

64 պատգ.): 11 պատգամավոր ընդգրկված չեն որևէ խմբակցության կամ պատգամավորական խմբի կազմում:[218]

Ստորև ներկայացնենք ՀՀ ԱԺ չորս գումարումներում խորհրդարան մուտք գործած ընդդիմադիր կուսակցությունների համամասնության պատկերը՝

Աղյուսակ 7.

ԱԺ գումարում	**Խորհրդարան մուտք գործած կուսակցությունների ընդհ. թիվը**	**Խորհրդարան մուտք գործած ընդդիմադիր կուսակցությունների թիվը**	**Խորհրդարան մուտք գործած ընդդիմադիր կուսակցություններ**	**Խորհրդարանում ընդդիմադիր կուսակցությունների զբաղեցրած տեղերի տոկոսային արտահայտությունը**
Առաջին, 1995թ.	5	3	ՀԿԿ, ԱԺՄ, ԱԻՄ	30%
Երկրորդ, 1999թ.	6	4	ՀԿԿ, Իրավունք և միաբանություն , ՕԵԿ, ԱԺՄ	30.5%
Երրորդ, 2003թ.	6	3	Արդարություն, Ազգային Միաբանություն, ՄԱԿ	28.29%
Չորրորդ, 2007թ.	5	1	Ժառանգություն	5.34%

[218] *ՀՀ Ազգային Ժողովի կայքէջ,* http://parliament.am/parliament.php?id=history&lang=arm

Գծապատկեր 4.

Ընդդիմադիր կուսակցությունների զբաղեցրած տեղերի տոկոսային հարաբերակցությունը ՀՀ ԱԺ չորս գումարումներում



Այս պատկերից պարզ է դառնում, որ ՀՀ Ազգային Ժողովում ընդդիմադիր քաղաքական ուժերի ներկայությունը հետզհետե նվազել է: Այս երևույթի բացատրության համար տեսականորեն կարելի է առաջ քաշել հետևյալ պատճառները՝ 1. կառուցողական ընդդիմության բացակայությունը, 2. հասարակության ընդդիմադիր զանգվածի նվազումը, 3. քաղաքական աբսենտեիզմը, 4. ընդդիմադիր քաղաքական ուժերին չսատարելու ցանկությունը, 5. քվեարկության արդյունքների կեղծումը և այլն:

Վերոհիշյալ բոլոր պատճառներն էլ բնորոշ են տվյալ երևույթին և որոշակիորեն հիմնավորում են այն: Սակայն ակնհայտ է, որ բոլոր ընտրությունների ժամանակ Հայաստանում բարձրացել են բողոքի ալիքներ՝ կապված քվեարկության արդյունքների հավաստիության հետ: Բողոքի ալիքներն ուղեկցվել են հանրահավաքներով, երթերով,

ցույցերով, սակայն դրանց արդյունքում քվեարկության արդյունքները չեն փոխվել (իսկ եթե փոխվել են, ապա չեն ազդել քվեարկության վերջնական արդյունքների վրա) և չեն նշանակվել նոր ընտրություններ: Կարևոր է նշել նաև այն հանգամանքը, որ Հայաստանում դեռ գոյություն չունի կառուցողական ընդդիմություն, որի գործողությունները ուղղված կլինեն ոչ թե իշխող քաղաքական ուժի դեմ, այլ վերջինիս հետ համագործակցելուն և հասարակությունում առկա հրատապ խնդիրների լուծման համար համատեղ ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Այսպիսով, քաղաքական արդիականացումը ՀՀ-ում սկսեց զարգանալ ազատական գաղափարներով, որի արդյունքում ժողովրդավարական ընդդիմությունը, չնայած մի շարք բացթողումների, կարողացավ հասնել որոշակի արդյունքների: ԽՍՀՄ փլուզման շրջանում առաջին իրական ընդդիմադիր ուժը՝ Հայոց Համազգային Շարժումն էր, որ իրական քաղաքացիական դիմադրություն ցուցաբերեց կոմունիստական իշխանությանը: Ընդդիմությանը հաջողվեց տապալել միակուսակցական համակարգը, և 1991թ.-ին մյուս թեկնածուների հետ պայքարում Լևոն Տեր-Պետրոսյանը դարձավ ՀՀ առաջին նախագահ: Արդեն իշխանություն դարձած նախկին ընդդիմությունը նպաստեց 1995թ. ժողովրդավարական սահմանադրության ընդունմանը: Սակայն պետք է նշել, որ 1991թ.-ին իշխանությունը ստանձնած ազատական ուժի ձեռնարկած արմատական բարեփոխումները նաև բացասական ազդեցություն ունեցան երկրի տնտեսության, արտադրության վրա, ինչի արդյունքում ակտիվացավ հայրենասիրական ընդդիմությունը (ՀՅԴ): Իր քաղաքական կարգավիճակը պահպանելու համար նախկին ազատական-ժողովրդավարական ընդդիմությունը, զգալով քաղաքական տրամադրությունների փոփոխությունը, սկսեց մասամբ արտաբերել հայրենասիրական գաղափարներ (Հայաստանը մեր հայրենիքն է, պաշտպանենք մեր հայրենիքը, միասնական Հայաստան և այլն): Սակայն քաղաքական ճնշումը հետզհետե ավելանում էր, և արդյունքում 1998թ.-ին ՀՀ նախագահի հրաժարականից հետո իշխող քաղաքական ուժը զիջեց իր դիրքերը նաև 1999թ. ԱԺ ընտրություններում: Իշխանությունը ստանձնած նոր քաղաքական

ուժերը ևս իրենց հռչակեցին ժողովրդավարական և ազատական գաղափարների կրողներ:

Հարկ է նշել, որ ժողովրդավարական ոչ մեծ երկրներում նախագահի ազդեցությունը բավականին մեծ է, և հիմնականում վերջինիս քաղաքական կամքից են կախված նախկին և նոր խնդիրների լուծումները: Այդ իսկ պատճառով նախագահի և իշխանական մարմինների գլխավոր խնդիրներից մեկն ընդդիմադիր ուժերի հետ քաղաքացիներին մտահոգող հարցերի, նրանց անվտանգության և բարեկեցության շուրջ խորհրդակցելն է: Իշխանությունը պետք է հաշվի առնի ընդդիմության կարծիքը, իսկ ՁԼՄ-ներն էլ պետք է հասանելի լինեն վերջինիս:

4. Իշխանության և ընդդիմության թեկնածուների քաղաքական ելույթների խոսութային վերլուծությունը 2008թ. ՀՀ Նախագահի ընտրություններում

Ժամանակակից քաղաքագիտությունն իր զարգացման փուլում առավել հաճախ է դիմում կիրառական քաղաքագիտության մեթոդներին, որոնք թույլ են տալիս հավաքել և մշակել հսկայական էմպիրիկ նյութ, որն իր հերթին հիմք է հանդիսանում այս կամ այն տեսական հայեցակարգերի հաստատման կամ ժխտման համար: Այդ մեթոդները, ենթարկվելով ժամանակի ազդեցությանը, կատարելագործվում են, արդիականացվում և ավելի հաճախակի են կիրառվում քաղաքական հետազոտություններում՝ ապահովելով դրանց նախապատրաստումը, իրականացումը և արդյունքը:

Քաղաքական խոսույթի ուսումնասիրությունը և վերլուծությունը լայնորեն կիրառվում են արևմտաեվրոպական երկրներում և ԱՄՆ-ում դեռևս 20-րդ դարի 50-ական թթ.-ից: ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային հանրապետություններում քաղաքական խոսույթի ուսումնասիրությունը և վերլուծությունը քաղաքական հետազոտությունների համեմատաբար նոր ոլորտ է, որը ձևավորման և զարգաց-

ման փուլում պետք է լուրջ քայլեր կատարի կայուն հիմքեր հաստատելու համար:

Իշխանական հարաբերությունների խնդիրը միշտ էլ եղել է քաղաքական գիտության ուսումնասիրության հիմնական օբյեկտներից մեկը: Իշխանության ստրուկտուրալիստական վերլուծությունը սկսվում է հետևյալ աքսիոմայից. «իշխանական հարաբերությունները կապակցված են լեզվում»: Ցանկացած նախադասություն, քերականական կառույց և, անշուշտ, ցանկացած լեզու ոչ այլ ինչ է, եթե ոչ իշխանական հարաբերությունների ձևավորում:

Քերականական նախադասությունն ինքնին *իշխանության ձև է*: Նրանում միշտ առկա է *ենթական*, որն անփոփոխ է, գլխավորը և իրականացնում է «ինքնիշխանի» գործառույթը: Մինչդեռ *ստորոգյալը* ցույց է տալիս «ինքնիշխանից», այսինքն՝ ենթակայից բխող գործողություն: Բացի այդ նախադասության մեջ կան նաև «հնազանդվողներ», որոնց վրա ներգործում է ենթական: Խոսքը լրացումների մասին է:

Այսպիսով, ցանկացած մտքի արտաբերում իրենից ներկայացնում է ստորակարգային հարաբերությունների կազմակերպում. յուրաքանչյուր նախադասությունում մենք ստեղծում, հաստատում, ամրագրում և կառուցում ենք իշխանական գործառույթներ: Իշխանությունն իրականացվում է ոչ միայն լեզվի միջոցով կամ օգնությամբ, այլև՝ ձևավորում է խոսքը և որոշում դրա կառուցվածքը: Իշխանությունը սերտորեն կապված է լեզվի հարացույցի հետ և գոյություն ունի դրանում:

Լեզվի և իշխանության միջև ուղղակի կապը մեզ հնարավորություն է տալիս խոսել այնպիսի երևույթի մասին, ինչպիսին «քաղաքական լեզուն» է: Ըստ էության, ցանկացած լեզու իր մեջ ներառում է քաղաքականության տարրեր, քանի որ իշխանական գործառույթների բաշխումը դրանում ուղղակի կամ անուղղակի կերպով արտացոլում է համապատասխան մշակույթների խորը քաղաքական կողմնորոշումները: Քաղաքական լեզուն համապատասխանում է քաղաքական համակարգին և պայմանավորվում է վերջինիս կողմից: «Քաղաքական լեզուն» ոչ միայն ազդում է խոսքի

վրա, այլև մտքի արտաբերումները համապատասխանեցնում է գաղափարախոսություններին:

Քաղաքական լեզվում տեղի է ունենում շարակարգերի և հարացույցների միահյուսում. «քաղաքական լեզվի» օրենքներով կառուցված ցանկացած արտահայտություն կոչված է ոչ միայն ազդելու օբյեկտի (մարդու, հասարակության) վրա, որը կլսի այդ արտահայտությունը, այլև՝ արտահայտելու խորքային գաղափարախոսական հենքի ասպեկտները, որոնք կանխորոշում են այդ արտահայտությունը:

Քաղաքական լեզվի կարևոր հատկանիշներից է քաղաքական քարոզչությունը: Այս դեպքում խոսքը վերաբերում է տարբեր առիթներով և տարբեր հանգամանքներում իրական քաղաքական խոսույթների ձևավորմանը, որոնք հիմնված են որոշակի գաղափարախոսության վրա: Տեղի ունեցող իրադարձությունների գնահատման, ծրագրեր կազմելու և դրանք առաջարկելու համար «քաղաքական լեզվից» օգտվող սուբյեկտները ոչ միայն դրա միջոցով հասնում են իրենց իշխանական կարգավիճակի հետ կապված ստույգ նպատակների, այլ նաև ապահովում են գաղափարական նախապայմանների ներշնչումը: Այս կամ այն սոցիալական երևույթի մասին ստույգ քաղաքական խոսք կառուցելով՝ «քաղաքական լեզվի» կրողը հենվում է գաղափարախոսության վրա, ինչը պայմանավորում է նաև քաղաքական խոսույթի ուղղվածությունը: Փաստորեն, քաղաքական քարոզչության համար գլխավոր դերակատարը քաղաքական լեզվի միջոցով արտաբերվող խոսքն է կամ խոսույթը:[219]

Քաղաքական խոսույթի գործնական կողմն արտահայտվում է, հատկապես, քաղաքական ընտրարշավների, քարոզարշավների ժամանակ, երբ անհրաժեշտություն է առաջանում վերլուծել թեկնածուների քաղաքական խոսքը, որը կարևոր նախապայման է քաղաքական կողմնորոշում ձեռք բերելու, դրանում համոզվելու կամ այն փոխելու գործում:

---

[219] *Дугин А.,* Философия политики/ Арктогея, М., 2004, с. 387-394.

Այժմ դիտարկենք 2008թ. փետրվարի 19-ի ՀՀ Նախագահի ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում իշխանության և ընդդիմության թեկնածուների քաղաքական խոսույթները, նշենք դրանց առանձնահատկությունները, վեր հանենք դրանց միջև նմանություններն ու տարբերությունները թեկնածուների քաղաքական խոսույթների վերլուծության և համադրության միջոցով:

Այս խնդրի լուծման համար խոսութային վերլուծության ընթացքում օգտագործել ենք 2008թ. ՀՀ Նախագահի ընտրությունների պաշտոնական ընտրարշավի մեկնարկից մինչ ավարտը բոլոր թեկնածուների հեռուստաելույթները, ինչպես նաև մամուլի լուսաբանումները:[220]

Ուսումնասիրելով թեկնածուների քաղաքական բառապաշարը՝ կարելի է վստահորեն նշել, որ այն բավականին հարուստ է, լավ մշակված, ինչը, ինքնին, բովանդակալից խոսքի ապացույց է: Սակայն պետք է նշել նաև, որ չնայած այն բանին, որ թեկնածուներն ունեին քաղաքական հարուստ բառապաշար, այնուամենայնիվ, նրանք

---

[220] *ՄԱՄՈՒԼ՝ Հայաստանի Հանրապետություն. 2008, թիվ՝* 11/4348, 12/4349, 13/4350, 14/4351, 15/4352, 16/4353, 17/4354, 18/4355, 19/4356, 20/4357, 21/4358, 22/4359, 23/4360, 24/4361, 25/4362, 26/4363, 27/4364, 28/4365, 29/4366, 30/4367, 31/4368, 32/4369,*Հայոց Աշխարհ, 2008, թիվ՝* 11/2563, 12/2564, 13/2565, 14/2566, 15/2567, 16/2568, 17/2569, 18/2570, 19/2571, 20/2572, 21/2573, 22/2574, 23/2575, 24/2576, 25/2577, 26/2578, 27/2579, 28/2580, 29/2581, 30/2582, 31/2583,*Հայք, 2008, թիվ՝* 11/1490, 12/1491, 13/1492, 14/1493, 15/1494, 16/1495, 17/1496, 18/1497, 19/1498, 20/1499, 21/1500, 22/1501, 23/1502, 24/1503, 25/1504, 26/1505, 27/1506, 28/1507, 29/1508, 30/1509, 31/1510, 32/1511,*Ժամանակ Երևան, 2008, թիվ՝* 11/1114, 12/1115, 13/1116, 14/1117, 15/1118, 16/1119, 17/1120, 18/1121, 19/1122, 20/1123, 21/1124, 22/1125, 23/11265, 24/11266, 25/11267, 27/11269, 28/11270, 29/1271, 30/1272, 31/1273,*Հայկական Ժամանակ, 2008, թիվ՝* 11/1960, 12/1961, 13/1962, 14/1963, 15/1964, 16/1965, 17/1966, 18/1967, 19/1968, 20/1969, 21/1970, 22/1971, 23/1972, 24/1973, 25/1974, 26/1975, 27/1976, 28/1977, 29/1978, 30/1979, 31/1980, 32/1981, *Голос Армении, 2008, номер*. 4/19654, 5/19655, 6/19656, 7/19657, 8/18658, 9/19659, 10/19660, 11/19661, 12/19662, 13/19663, 14/19664, 15/19665, 16/19666,*Ազգ, 2008, թիվ՝* 11/3905, 12/3906, 13/3907, 14/3908, 15/3909, 16/3910, 17/3911, 18/3912, 19/3913, 20/3914, 21/3915, 22/3916, 23/3917, 24/3918, 26/3920, 27/3921, 28/3922, 29/3923, 30/3924, 31/3925, 32/3926,*Իսկական Իրավունք, 2008. թիվ՝* 5/93, 6/94, 7/95, 8/96, 9/97, 10/98, 11/99, 12/100, 13/101,*Առավոտ, 2008, թիվ՝* 11/3127, 12/3128, 13/3129, 14/3130, 15/3131, 16/3132, 17/3133, 18/3134, 19/3135, 20/3136, 21/3137, 22/3138, 23/3139, 24/3140, 25/3141, 26/3142, 27/3143, 28/3144, 29/3145, 30/3146, 31/3147, 32/3148,*Չորրորդ Իշխանություն, 2008, թիվ՝* 722, 723, 109, 725, 110, 726, 727, 111, 728, 729, 112, 730, 731:

իրարից խիստ տարբերվում էին բառերի ընտրության տեսանկյունից, քանզի մի մասի մոտ գերակշռում էին փոխաբերությունները, որոնք խոսքին հաղորդում էին առավել հուզական բնույթ:

Նախ և առաջ ներկայացնենք և վերլուծենք թեկնածուների քաղաքական նշանաբանները:

Աղյուսակ 8.

2008թ. ՀՀ Նախագահի ընտրություններում թեկնածուների քաղաքական նշանաբանները

Արտաշես Գեղամյան	*«Հանուն ազգային միաբանության»*
Արթուր Բաղդասարյան	*«Իմ նախագահը», «Միացնե՛նք նոր սկզբի ժամացույցը»*
Վազգեն Մանուկյան	*«Փոխել, ոչ թե հարմարվել»*
Արամ Հարությունյան	*«Ես կլինեմ ոչ միայն բոլորի, այլ նաև յուրաքանչյուրի նախագահը»*
Վահան Հովհաննիսյան	*«Մեր վահանը երկրի նոր նախագահ», «Մեր հին ընկերը երկրի նոր նախագահ», «Ես վահանի հետ եմ»*
Տիգրան Կարապետյան	*«Տիգրան Կարապետյանը այլընտրանքային թեկնածու», «Ժողովրդի թեկնածուն Տիգրան Կարապետյանն է»*
Սերժ Սարգսյան	*«Առա՛ջ Հայաստան»*
Լևոն Տեր-Պետրոսյան	*«Հաղթելու՛ ենք»*
Արման Մելիքյան	*Նշանաբան չունի*

Արտաշես Գեղամյան՝ «Հանուն ազգային միաբանության»: Այս քաղաքական նշանաբանն իր մեջ ներառում է ազգի միասնության, համակարծության գաղափարները, որոնք կոչված են միաբանելու ժողովրդին ընդհանուր նպատակի հասնելու գաղափարի շուրջ: Այս նշանաբանը կոչված է ընտրազանգվածի մոտ ձևավորելու ազգի, պետության, ապագայի հանդեպ վեհ, կայուն, լավատեսական պատկերացումներ, քանզի տվյալ նշանաբանի իմաստաբանական վերլուծության դեպքում ակնհայտ է դառնում, որ վերոհիշյալ թեկնածուի քաղաքական պայքարը հետապնդում է ոչ թե անձնական, այլ ազգային բարօրությանն ու միաբանությանն ուղղված նպատակներ, այսինքն՝ նրա գործողություններն ուղորդվում էին «հանուն ազգային միաբանության» սկզբունքով: Այս նշանաբանում կարևորվում է ազգի, ժողովրդի պահանջների արդարացի բավարարումը, ազգային շահերին համահունչ քաղաքականության իրականացումը, վճռական քաղաքական որոշումների ընդունման գործում ողջ ազգի համախմբումն ու միաբանումը: Գաղափարախոսության տեսանկյունից տվյալ նշանաբանը հանդիսանում է ազգային գաղափարախոսության կրող. այն ունի ավելի ընդհանրական և տեսական բնույթ, քանզի չի բովանդակում ստույգ խնդիրներ և դրանց լուծմանն ուղղված գործնական միջոցներ և մեթոդներ:

Արթուր Բաղդասարյան՝ «Իմ նախագահը» և ***«Միացնե՛նք նոր սկզբի ժամացույցը»***: Ինչ վերաբերում է «Իմ նախագահը» քաղաքական նշանաբանին, ապա այս պարագայում ակնհայտ է, որ դրանում կարևորվում է թեկնածուի անձը և այն վստահությունը, որ հենց նա է, ով պետք է դառնա երկրի նախագահ: Սեփական անձի նկատմամբ վստահությունը կարևոր նախապայման է քաղաքական պայքարում հաջողության հասնելու համար և, իհարկե, հզոր զենք՝ հասարակական, այս դեպքում՝ ընտրազանգվածի գիտակցության վրա ազդեցություն գործելու համար: Կարևոր է նշել մի փաստ, այն է՝ վերոհիշյալ քաղաքական նշանաբանը նախընտրական քարոզարշավի ընթացքում երբևէ չի հնչել հենց թեկնածուի շուրթերից, այլ՝ բացառապես նրան սատարող կուսակիցների և համակիրների շուրթերից: Այս հանգամանքն ընտրապայքարի արդյունավետ մարտա-

վարական քայլ է, ըստ որի ոչ թե անձամբ թեկնածուն է կարևորում իր անձը, իր անփոխարինելի լինելու գաղափարը, այլ այդ պարտականությունը հմտորեն թողնում է ուրիշներին, ինչը կարող է ավելի արդյունավետորեն և դրականորեն ազդել տվյալ թեկնածուի քաղաքական վարկանիշի բարձրացման վրա: Ինչ վերաբերում է «Միացնե՛նք նոր սկզբի ժամացույցը» քաղաքական նշանաբանին, ապա այն ենթադրում է նոր և հստակ փոփոխությունների իրականացում, որն ուղղված է ոչ թե նախկինի արմատական վերացմանը, այլ՝ նոր գաղափարների և ծրագրերի ներդրման միջոցով համակարգի թարմացմանը: Տվյալ քաղաքական նշանաբանի իմաստաբանական վերլուծության արդյունքում պարզ է դառնում այն մոտեցումը, ըստ որի՝ պետք է կանգնեցնել գործող ժամացույցը և միացնել նորը, որն իր հետ կբերի նոր փոփոխություններ, որոնք չհաջողվեց կատարել նախորդ իշխանությանը: Այս նշանաբանում պարզորոշ կերպով նկատվում է ռեֆորմիստական քաղաքական գաղափարախոսության առաջարկման միտում, ինչն ուղղված է բարեփոխումների իրականացմանը:

Վազգեն Մանուկյան՝ «Փոխել, ոչ թե հարմարվել»: Այս քաղաքական նշանաբանում առաջին հերթին ակնհայտ է դառնում թեկնածուի՝ գործող իշխանական համակարգի և դրա կրողների փոփոխման, այլ ոչ թե վերջիններիս հարմարվելու դիրքորոշումը: Տվյալ քաղաքական նշանաբանը հստակորեն վեր է հանում տվյալ թեկնածուի քաղաքական կողմնորոշումը և նրա գաղափարները պետության ապագա քաղաքականության վերաբերյալ: Այս նշանաբանում չեն կարևորվում թեկնածուի անձը, նրա անցած քաղաքական ուղին, այլ միանշանակ և հաստատուն կերպով նշվում են նրա պատկերացումներն առկա քաղաքական իրավիճակի վերաբերյալ, որին ոչ թե պետք է հարմարվել, այլ՝ պարզապես փոխել: Այս քաղաքական նշանաբանը ևս ռեֆորմիստական գաղափարախոսության կրող է:

Արամ Հարությունյան՝ «Ես կլինեմ ոչ միայն բոլորի, այլ նաև յուրաքանչյուրի նախագահը»: Տվյալ նշանաբանի խոսութային վերլուծության արդյունքում միանշանակ ակնհայտ է դառնում այս թեկնածուի՝ սեփական անձի կարևորումը և այն վստահությունը, որ հենց նա

է, ով պետք է դառնա նախագահ: Այս նշանաբանում պարզ նշվում է տվյալ թեկնածուի՝ նախագահ դառնալու հավակնության մասին: Սակայն դրանում առկա է իմաստաբանական մի նրբություն, որն ամենայն հավանականությամբ ուղղված է ընտրազանգվածի գիտակցությունում տվյալ թեկնածուի հանդեպ դրական վերաբերմունքի և համակրանքի ձևավորմանը: Խոսքը վերաբերում է հետևյալին. *«...այլ նաև յուրաքանչյուրի նախագահը»*: Այս մտքի իմաստաբանական վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ տվյալ թեկնածուն մտահոգված է ոչ թե ընդհանուր, այլ յուրաքանչյուր քաղաքացու առանձին խնդիրներով և իր ընտրության դեպքում փորձելու է լուծումներ գտնել ոչ միայն ընդհանուր, այլ մասնավոր՝ առանձին խնդիրների համար ևս, *ինչը գործնականում ուղղակի անհնարին է*: Տվյալ քաղաքական նշանաբանի այս երկրորդ մասն իր մեջ ներառում է ավելի շուտ ուտոպիստական, քան իրատեսական գաղափարներ: Որոշակի նմանություն կա Արթուր Բաղդասարյանի և Արամ Հարությունյանի քաղաքական նշանաբանների միջև, սակայն հարկ է նշել մի հանգամանք ևս, այն է՝ տվյալ թեկնածուն՝ ի տարբերություն Արթուր Բաղդասարյանի, անձամբ էր հնչեցնում իր քաղաքական նշանաբանը՝ ընտրելով քաղաքական պայքարում այդ մարտավարությունը:

Վահան Հովհաննիսյան՝ «Ես վահանի հետ եմ», «Մեր հին ընկերը երկրի նոր նախագահ», «Մեր վահանը երկրի նոր նախագահ»: Տվյալ թեկնածուի քաղաքական նշանաբանները բազմազան են, սակայն դրանցում առկա են որոշակի նմանություններ, որոնցից յուրաքանչյուրում կարևորվում են թեկնածուի անձնական հատկանիշները՝ ընկերասիրություն, ուժ, հզորություն, վստահելիություն, ինչպես նաև նրա՝ երկրի նոր նախագահ լինելու անհրաժեշտությունը: Այս քաղաքական նշանաբաններում առաջնային պլան են մղվում տվյալ թեկնածուի՝ որպես հասուն և փորձառու քաղաքական գործչի հատկանիշները: Դրանցում ակնհայտ է նաև այն սկզբունքը, որ շատերը վստահում և հավատում են տվյալ թեկնածուի քաղաքական հայացքներին և ընտրություններում նրա հաղթանակին: Քաղաքական նշանաբանների իմաստաբանական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ դրանցում օգտագործվում է տվյալ թեկնա-

ծուի անունը, սակայն ոչ թե որպես հատուկ, այլ որպես հասարակ գոյական: Այսպիսի մոտեցումը կարելի է բնութագրել որպես խոհեմ և խորամանկ մարտավարական քայլ, քանզի վերոհիշյալ քաղաքական նշանաբաններում ներքուստ՝ ոչ, սակայն իրականում բարձրագոչվում է հենց թեկնածուի անունը՝ ընտրազանգվածի մոտ ձևավորելով որոշակի հասարակական գիտակցություն՝ տվյալ թեկնածուի անունը, ինչպես արդեն նշվել է, նույնացնելով ուժ, հզորություն, պաշտպանվածություն, վստահելիություն ներշնչող հասկացությունների հետ, այսինքն՝ այն պատկերացումները, որոնք բովանդակում է «վահան» հասարակ գոյականը: Անհրաժեշտ է նշել նաև այն փաստը, որ այս նշանաբաններն արտասանվում էին ոչ թե տվյալ թեկնածուի, այլ նրա թիմակիցների, համակիրների շուրթերից, ինչը, ինչպես արդեն նշվել է, քաղաքական պայքարում արդյունավետ մարտավարության ձև է:

Տիգրան Կարապետյան՝ «Տիգրան Կարապետյան՝ այլընտրանքային թեկնածու», «Ժողովրդի թեկնածուն Տիգրան Կարապետյանն է»: Այս քաղաքական նշանաբաններում պարզորոշ ընդգծվում են տվյալ թեկնածուի անձի կարևորման միտումները, ինչպես նաև նրա՝ այլընտրանքային թեկնածու լինելու համոզվածությունը: Հարկ է նշել այն հանգամանքը, որ «Ժողովրդի թեկնածուն Տիգրան Կարապետյանն է» քաղաքական նշանաբանում կարևորվում են ժողովրդի ազատ կամքի արտահայտման, նրա ընտրության իրավունքի իրականացման ժողովրդավարական սկզբունքները, որոնք տվյալ նշանաբանի համաձայն՝ կոչված է և ունակ է ապահովել ժողովրդի համար թեկնածուների շարքում իր քաղաքական հայացքներով և քաղաքական ուղիով այլընտրանք համարվող Տիգրան Կարապետյանը:

Վերոհիշյալ նշանաբաններում կարելի է ընդգծել նաև այն հանգամանքը, որ տվյալ թեկնածուն վստահ է, որ կստանա ժողովրդի մեծամասնության քվեն:

Սերժ Սարգսյան՝ «Առա՛ջ Հայաստան»: Այս քաղաքական նշանաբանի վերլուծության արդյունքում կարելի է հստակորեն նշել, որ իշխանության թեկնածու Սերժ Սարգսյանի մոտ առանձնանում է պետական մտածողության և գաղափարախոսության միտվածությունը, քանզի նա իր քաղաքական նշանաբանում չի ընդգծում սեփա-

կան անձին հատուկ հատկանիշներ, չի կարևորում սեփական անձը, չի համարում, որ նա է միակ թեկնածուն, ով ընդունակ է լուծել երկրի առջև ծառացած խնդիրները, այլ փորձում է առաջ տանել հայոց պետականության, միասնության գաղափարը, այսինքն՝ նախանշում է պետության համար կայուն զարգացում, բարգավաճում և հեռանկարներ: Գաղափարախոսական առումով իշխանության թեկնածու Սերժ Սարգսյանի մոտ նկատվում է պետականամետ քաղաքական քայլերի իրականացման մտադրություն:

Լևոն Տեր-Պետրոսյան՝ «Հաղթելու՛ ենք»: Այս թեկնածուի քաղաքական նշանաբանի վերլուծության արդյունքում պարզ է դառնում նրա և նրան սատարող քաղաքական ուժերի վճռական տրամադրվածությունը ընտրություններում հաղթանակ տոնելու համար: Տվյալ նշանաբանում բառացիորեն չի նշվում պետության դերի կարևորության, հասարակությունում առկա քաղաքական և սոցիալ-տնտեսական խնդիրների մասին, այլ նշվում է թեկնածուի սեփական անձի, նրան սատարող քաղաքական ուժերի կարևորության և ընտրություններում իր ընտրողների հաղթանակի մասին:

Ինչ վերաբերում է հաջորդ թեկնածուին՝ Արման Մելիքյանին, ապա նա չուներ քաղաքական նշանաբան, ինչը նմանատիպ համընդհանուր քվեարկությունների ժամանակ կարելի է համարել լուրջ բացթողում, քանզի քաղաքական նշանաբանի բացակայությունը ընտրազանգվածի մոտ կարող է ձևավորել տվյալ թեկնածուի նկատմամբ որոշակի անտարբերություն:

Անդրադառնանք նախընտրական քարոզարշավի ընթացքում թեկնածուների՝ հանրության հետ հանդիպումների ժամանակ քաղաքական ելույթների՝ որպես քաղաքական խոսույթի բաղկացուցիչ մասի վերլուծությանը:

Առանձնապես ուշագրավ է նախագահի թեկնածուներից Արտաշես Գեղամյանի քաղաքական ելույթների ոճը: Այն յուրահատուկ է իր դրսևորմամբ և բառապաշարի ընտրությամբ, որն ավելի մոտ է ոչ այնքան քաղաքական, այլ՝ գեղարվեստական ոճին, որն աչքի է ընկնում իր հարստությամբ և բազմաբովանդակությամբ՝ երբեմն հասնելով պերճախոսության: Ա. Գեղամյանն իր քաղաքական ելույթ-

ներում գործածում է այնպիսի բառեր, որոնք հագեցած են հուզականությամբ և ունեն խիստ ընդգծված հնչերանգ: Նրա արտահայտած նախադասությունները լի են համեմատություններով և քննադատական վերլուծություններով՝ ուղղված ավելի շուտ նախկին, քան գործող իշխանության դեմ: Իր ընդգծված խոսքում նա հստակորեն նշում է երկրի բարեկեցության համար իր ծրագրի կարևորության մասին՝ համարելով այն փրկության միակ ճշմարիտ ուղին: Տվյալ թեկնածուն իր քաղաքական ելույթների ժամանակ գործածում է հետևյալ բովանդակությամբ բառեր, բառակապակցություններ և նախադասություններ՝ *(կուռ, համախմբված, ի հեճուկս, ապիկար, ՀՀՇ պարագլուխներ, բարբարոսական հակաքարոզչություն, լուտանքների հեղեղ, կողոպտված արժեքներ, փայփայած անկախություն, եղբայրասպան գործողություններ, խիղճ ու բարոյականություն, անարգանքի սյունին գամել, սադրանքի արդյունքում ապակայունացնել վիճակը, (արարման ծրագիր, ահա մտքի իշխանությունը Հայաստանում ազդարարող մեր նոր հռչակագիրը), ի՞նչ են ուզում էս ժողովրդից նախկին և գործող իշխանությունները, Ավարայր են ուզում ստեղծել Երևանի կենտրոնում, Աստված մի արասցե, ահա թե ինչի համար ենք մենք ապրում, մենք մերոնց համար ենք աղոթում, լո՛ւյս վառենք, որդի, մերը հավատի մեծ սիրո լույսն է, հայերի դարդով միայն հայերն են ի զորու տապակվել, ազգը պետք է լինի միաբանված, ժողովրդի հավաքական կամքը չկատարել չենք կարող, մեզ համար թշնամիներ են այն մարդիկ, ովքեր հայոց պետականության թշնամիներն են)*:

Վերոհիշյալ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների խոսութային վերլուծության արդյունքում ակնհայտ են դառնում Ա. Գեղամյանի քաղաքական խոսքի և բառապաշարի յուրօրինակությունը և հարստությունը, ինչը նախընտրական քարոզարշավի ընթացքում կարելի է համարել ծանրակշիռ առավելություն, քանզի անաղարտ և գրական խոսքը շատ հաճախ ընտրազանգվածի մոտ ձևավորում է տվյալ թեկնածուի նկատմամբ դրական վերաբերմունք և համակրանք:

Հարկ է նշել, որ Ա. Գեղամյանի արտահայտած մտքերը չեն պարունակում խիստ քննադատություններ և մեղադրանքներ մյուս

թեկնածուների հասցեին, բացի Լևոն Տեր-Պետրոսյանից: Բացի այդ, Ա. Գեղամյանը նախընտրական քարոզարշավի ընթացքում մեծ կարևորություն է տալիս իր կողմից առաջադրված արարման ծրագրին, որը ներկայացնում է որպես ժողովրդի փրկության միակ միջոց:

Ուշագրավ են նաև Արթուր Բաղդասարյանի նախընտրական քաղաքական ելույթները, որոնք ունեն ստույգ ուղղվածություն և կրում են համակարգված բնույթ: Նրա քաղաքական խոսքը բազմաբովանդակ է և վերաբերում է պետության համար առաջնային կարևորություն ունեցող ոլորտներին, այսինքն՝ ի տարբերություն մյուս թեկնածուների, Արթուր Բաղդասարյանն իր նախընտրական քաղաքական ելույթներում անդրադառնում է այս կամ այն ոլորտին վերաբերող հարցերին առանձին ելույթներով, ինչն ավելի ամբողջական և պարզորոշ պատկերացում է ձևավորում տվյալ թեկնածուի քաղաքական ծրագրի վերաբերյալ: Ա. Բաղդասարյանն իր խոսքում գործածում է ոչ թե հուզական և զգայական բառեր, այլ՝ նրա խոսքում գերակշռում են քաղաքական, իրավական և տնտեսական եզրույթները, որոնք, լինելով մենիմաստ բառեր, ընտրազանգվածի մոտ ձևավորում են կայուն, աներեր և ավարտուն կարծիք: Քաղաքական ելույթներում նմանօրինակ մոտեցման ցուցաբերումը տվյալ թեկնածուի խոսքը դարձնում է դյուրըմբռնելի և ընտրազանգվածի համար մատչելի: Արթուր Բաղդասարյանն իր նախընտրական քաղաքական ելույթներում հաճախակի է գործածում պետությանը, իրավունքին և տնտեսությանը վերաբերող բառեր, բառակապակցություններ և նախադասություններ *(մոնոպոլիստներ, իշխանապետեր, ծանր միտումներ, մեծագույն և երկարատև գների աճ, հուսալքված գործազուրկներ, ցածր աշխատավարձեր, չնչին կենսաթոշակներ, կլանային և օլիգարխիկ քաղաքականություն, ավելացող արտաքին պարտք, անխոհեմ արտաքին քաղաքականություն, հավատի ճգնաժամ, տեղական ֆեոդալներ, վարչական ռեկետ, իշխանության հովանավորություն ունեցող մարդասպաններ, հարկերի և տուրքերի նվազեցում, պրոֆեսիոնալ բանակ, պայմանագրային զինծառայություն, ագահ իշխանություններ, հովանավորվող բիզնեսմեններ, քաղաքական կամք, իշխանությունը վախենում է ժողովրդից, մեր հիմնական*

պրոբլեմը գործող իշխանությունն է, գիտնականները երկրում չեն գնահատվում, ստեղծել առողջ տնտեսություն, նախարարները կազինոներում միլիոնավոր դոլարներ են ծախսում, միասին կառուցենք նոր Հայաստան՝ հույսի և արժանապատվության երկիր, պետությունը թև ու թիկունք չի կանգնում ժողովրդին, իշխանությունը վախի և խուճապի մեջ է, գումարը վերցրեք, բայց մի քվեարկեք, ես չեմ ուզում ապրել այնպիսի Հայաստանում, որտեղ ժողովրդի 80%-ը աղքատ է):

Տվյալ թեկնածուի քաղաքական ելույթները զերծ չեն իշխանության հասցեին ուղղված քննադատություններից և մեղադրանքներից, որոնք ուղղված են իշխանության կողմից իրականացվող հովանավորչության, պետական համակարգում գործող կոռուպցիայի և օլիգարխիկ կլանների դեմ: Քննադատությունների և մեղադրանքների հետ մեկտեղ տվյալ թեկնածուն նշում է նաև վերոհիշյալ արատավոր երևույթների դեմ պայքարի իր ծրագրային մոտեցումների մասին:

Անդրադառնանք Վազգեն Մանուկյանի նախընտրական քաղաքական ելույթներին, որոնք թերևս չեն առանձնանում իրենց յուրահատկությամբ: Դրանք ավելի շուտ կրում են սահմանափակ բնույթ՝ զերծ լինելով հախուռն քննադատություններից, սակայն, այնուամենայնիվ, այդ ելույթներում առկա են որոշակի քողարկված քննադատություններ՝ ուղղված նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի հասցեին: Քաղաքական ելույթներում Վ. Մանուկյանի կողմից գործածվող քաղաքական բառապաշարը չի առանձնանում բառերի ընտրության բազմազանությամբ, ճարտասանական հնարքներով: Այն ավելի շուտ համալրված է եզրույթներով, քանզի տվյալ թեկնածուն իր խոսքում չի ուռճացնում կամ ծայրահեղացնում այս կամ այն երևույթը, որը տվյալ պահին գտնվում է քննարկման փուլում: Նա հաճախ գործածում է այնպիսի բառեր, բառակապակցություններ, նախադասություններ, ինչպիսիք են՝ *զոռբայություն, կիսակապիտալիստական, կիսաֆեոդալական երկիր, սերտաճած քաղաքականություն, խոշոր բիզնես, իշխանության բուրգ, թեթևացնել հարկերը, փոխել սահմանադրությունը, ստեղծել հզոր բանակ, մշակույթի զարգացում, գիտության և կրթության զարգացում, մարդկանց ոտնահարված իրավունքներ, վախ ապագայի նկատմամբ, իշխանությունը լճա-*

ցած է, փոխել պետության համակարգը, փոխել արատավոր համակարգը, իշխանությունը գտնվում է թույլ վիճակում, հեղինակությունը դա ճշմարտությունն է, մի՛ ստեղծեք կուռքեր, տվեք մարդկանց ազատություն, և նրանք կդառնան ազգային, առանց երազանքի ո՛չ մի պետություն ո՛չ մի բանի չի հասնում, ժողովրդի 80%-ը պետք է ունենա նույն նպատակները, ժողովուրդը տերն է երկրի, այս իշխանությունը և նախկին իշխանությունը ինձ համար բացարձակապես նույնն են:

Տվյալ թեկնածուն իր քաղաքական ելույթներում փորձում է առողջ քննադատության համատեքստում դիտարկել և վերլուծել առկա իրավիճակը և առաջարկում է այն փոխել, այլ ոչ թե հարմարվել դրան: Լինելով փոփոխությունների կողմնակից՝ տվյալ թեկնածուն այդ փոփոխությունները տեսնում է խելամիտ քաղաքական քայլեր ձեռնարկելու պատրաստականության մեջ:

Ինչ վերաբերում է նախագահի թեկնածու Վահան Հովհաննիսյանին, ապա նրա քաղաքական ելույթներն առանձնանում են ժողովրդական խոսքին հատուկ նրբերանգով, քանզի տվյալ թեկնածուն հաճախակի է գործածում առտնին ոճին հատուկ բառեր՝ զերծ մնալով արհեստական բառերի գործածումից՝ այդպիսով փորձելով ավելի մոտ կանգնել ժողովրդին, այսինքն՝ տվյալ դեպքում ընտրազանգվածին: Տվյալ թեկնածուի քաղաքական բառապաշարը կայուն է և ունի ստույգ ուղղվածություն, ինչպես նաև դրանում առկա են ոճական դարձույթներ և բանադարձումներ: Տվյալ թեկնածուն իր նախընտրական քաղաքական ելույթներում հաճախ գործածում է հետևյալ բառերը, բառակապակցություններն ու նախադասությունները՝ *(թասիբ, հայրենասիրություն, պոպուլիստներ, չինովնիկներ, լավ տղերք, արդարության վերահաստատում, սոցիալական համերաշխություն, արդար Հայաստան, ազատ քաղաքացիներ, տնտեսական հզոր կլաններ, ազատ և արդար ընտրությունների ապահովում, կաշառակեր չինովնիկներ, նվիրումը հայրենիքին, համակարգային փոփոխություններ, անհամաչափ տնտեսական զարգացում, սահմանադրական կարգի վերականգնում, արատավոր սիստեմ, ընդդիմությունը դիտվում է բարիկադից այն կողմ, կազմաքանդել և վերացնել այն, ինչը խոչընդոտում է Հայաստանի զարգացմանը, դուք եք երկրի*

հույսը, մարզերը պետք է զարգանան, մեր գրպանը կարած է, ինձ պետք չի կեղծած ձայն, բանակը ազատ քաղաքացի դաստիարակելու տեղ է, քվեարկեք նրա օգտին, ում ուզում եք, միասին գնում ենք նախագահական պոստը վերցնելու, ես կվերադարձնեմ ձեր ազատությունը ձեզ, մենք տեսնում ենք զարգացումը, բայց այդ զարգացումը մեզ շրջանցում է, ես բացարձակ ազատ եմ):

Իր ելույթներում խոսելով ժողովրդի առջև ծառացած խնդիրների լուծման եղանակների մասին՝ Վ. Հովհաննիսյանը հիմնականում չի դիմում մյուս թեկնածուների հասցեին ուղղված կոպիտ քննադատությունների և մեղադրանքների՝ ցուցաբերելով զսպվածություն և հավասարակշռվածություն:

Թեկնածուներից երեքը (Տիգրան Կարապետյան, Արամ Հարությունյան, Արման Մելիքյան) նախընտրական քարոզարշավի ընթացքում համեմատաբար պասսիվ էին, ինչը պայմանավորեց նաև նրանց նախընտրական քաղաքական ելույթների սակավությունը, որն էլ իր հերթին անդրադարձավ նրանց քաղաքական խոսքի վրա: Նախագահի թեկնածու Տիգրան Կարապետյանը նախընտրական քաղաքական գովազդի շրջանակներում լիարժեք կերպով չանդրադարձավ որևէ կարևոր հարցի: Հետևաբար նախընտրական շրջանում նրա քաղաքական խոսքը և բառապաշարը բավականին աղքատիկ էին, քանզի չկային կարևոր խնդիրների շուրջ լուրջ քննարկումներ:

Նախագահի թեկնածու Արամ Հարությունյանի քաղաքական ելույթներն ունեին միակողմանի բնույթ, քանզի նրա քաղաքական խոսքը և բառապաշարը նախընտրական շրջանում սահմանափակ էին, այսինքն՝ բացակայում էին ոճաբանությանը և հնչերանգին բնորոշ բազմաթիվ տարրեր: Տվյալ թեկնածուի քաղաքական խոսքը զուրկ էր քաղաքական լեզվին հատուկ երանգներից, բառախաղից, ճարտասանական և մանիպուլյացիոն հնարքներից: Տվյալ թեկնածուն իր քաղաքական ելույթներում հաճախ գործածում էր հետևյալ մտքերը՝ (*ղարաբաղյան խնդրի խաղաղ և արդար կարգավորում, շատ կարևոր է Արցախի հարցը, բոլոր թեկնածուները պետք է Արցախի հարցի շուրջ միասնական փաստաթուղթ ստորագրեն, որևէ դրսի ուժ թող հույս չունենա, որ կարող է իր նախընտրելի թեկնածուն ի վնաս*

Հայաստանի գործել, հնարավոր չէ գաղափարների մրցակցություն, Հայաստանը այլևս հետ գնալու հնարավորություն չունի, մեռած լեզուներով խոսելով իշխանության չեն գալիս, ես գիտեմ ձեր դժվարությունները):

Հարկ է նշել մի հանգամանք ևս. տվյալ թեկնածուն իր քաղաքական ելույթներում մեծ կարևորություն է տալիս իր «ես»-ին՝ ընդգծելով, որ նա է, ով ունակ է արդյունավետ լուծումներ գտնել ոչ միայն բոլորի, այլև յուրաքանչյուրի խնդիրների համար: «Ես»-ի նմանատիպ գործածումը խոսքում վկայում է տվյալ թեկնածուի ինքնավստահության կամ սեփական ուժերի և հնարավորությունների գերագնահատման մասին: Արամ Հարությունյանն իր քաղաքական ելույթներում չի դիմում քննադատությունների և մեղադրանքների, այլ փորձում է բոլոր թեկնածուներին համախմբել արցախյան հիմնախնդրի վերաբերյալ համընդհանուր, բոլոր թեկնածուների կողմից ընդունելի փաստաթղթի ստորագրման գաղափարի շուրջ:

Ինչ վերաբերում է նախագահի թեկնածու Արման Մելիքյանի նախընտրական քաղաքական ելույթներին, ապա դրանք առանձնանում են տվյալ թեկնածուի քաղաքական խոսքի համապարփակությամբ: Բառերի ընտրության տեսանկյունից կարելի է նշել նրա քաղաքական խոսքի չափավորության մասին, որը ներառում է ինչպես եզրույթներ, այնպես էլ վարչական ոճին ներհատուկ տարրեր: Տվյալ թեկնածուն իր քաղաքական ելույթներում հաճախ գործածում է հետևյալ արտահայտությունները՝ *(ծայրահեղական ուժեր, օրախնդիր հարցեր, արմատական ընդդիմություն, արմատական իշխանություն, կոռուպցիոն կառավարման համակարգի վերացում, ապրել արժանապատիվ կյանքով, զգալ արժանապատիվ քաղաքացի, ազատագրված տարածքները ԼՂ կազմում պահելը, նսեմանում է նսեմացնողը ինքը, գաղափարական պայքարը ծխացած կույտ է, պետք է փոխել կառավարման համակարգը, այս ընտրությունը ոչ թե գաղափարական, այլ՝ սեփականությունը պահպանելու պայքար է, մեր խնդիրն է վերափոխել մեր կյանքը, բախումները մեզ համար ինքնասպանությանը հավասարազոր են)*:

Այս թեկնածուն իր ելույթներում բազմիցս անդրադառնում է արցախյան հիմնախնդրին՝ կարևորելով վերջինիս հայանպաստ լուծման անհրաժեշտությունը, ինչպես նաև գտնում է, որ տվյալ ընտրություններում բացակայում է գաղափարական պայքարը:

Այժմ անդրադառնանք Սերժ Սարգսյանի նախընտրական ելույթներին: Իշխանության թեկնածուն իր հասարակական-քաղաքական ելույթների ժամանակ բավականին կոռեկտ է բառերի ընտրության հարցում: Նա իր ելույթներում հաճախ գործածում է այնպիսի բառեր, որոնք մասամբ զուրկ են հուզականությունից, սակայն միևնույն ժամանակ նրա մտքերը հստակ ձևակերպված են և ընկալվում են լսարանի կողմից: Իշխանության ներկայացուցիչը գործածում է լավատեսական, դրական, հուսադրող, հավատ ներշնչող բառեր (առավել հաճախ գործածվող բառեր, բառակապակցություններ, նախադասություններ՝ *լավ, առողջ, երջանիկ, հարուստ, հզոր, ուժեղ, կայուն, արժանապատիվ, բարգավաճ երկիր, զարգացող շուկա, մրցակցող տնտեսություն, բարձր աշխատավարձեր, հզոր բանակ, մեր երկրում չի լինելու ոչ մի աղքատ մարդ, ես թույլ չեմ տա ժողովրդավարության և մարդու իրավունքների հետընթաց, Ես վստահ եմ, մենք ապրելու ենք ավելի լավ Հայաստանում, Առաջ դեպի նոր Հայաստան, ամենից մեծ ռեսուրսը մեր ժողովրդի ռեսուրսն է, եկեք ավելացնենք մեր հավատը մեր երկրի նկատմամբ, իմ ծրագրի հենքը համայն հայության ներուժի բացահայտումն ու օգտագործումն է, մեր ներքին թշնամին աղքատությունն է, մեր երկրում աղքատ մարդիկ չեն լինելու, ինձ անհրաժեշտ է ձեր քվեն, որովհետև ուզում եմ լինել ձեր նախագահը, («Ինչ սկսվում է չարությամբ, ավարտվում է ամոթով». մեջբերում՝ Բ. Ֆրանկլին)*), որոնք լսարանի մոտ դրական հույզեր են առաջացնում՝ հաղորդելով լավատեսական լիցքեր և հոգեկան հավասարակշռվածություն, ինչը կարևոր հանգամանք է ելույթի ժամանակ հանրությանը ուշադրության կենտրոնում պահելու համար: Ինչ վերաբերում է մրցակից թեկնածուների քննադատությանը, ապա այս հարցում իշխանության թեկնածուն զուսպ է և մեկնաբանություններ է տալիս միայն իրեն խիստ քննադատելու դեպքում, այն էլ որպես՝ պատասխան:

Իշխանության թեկնածուի արտահայտած մտքերը չեն պարունակում զազրախոսական, թշնամական երանգներ, սակայն նա հաճախ է գործածում սեփական «ես-ը», ինչն ապացուցում է թեկնածուի՝ սեփական ուժերի նկատմամբ համոզվածության և վստահության փաստը, որն ընտրություններում վերջինիս հաղթանակի վերաբերյալ համոզվածություն է ներշնչում նաև հանրությանը: Փաստորեն, կարելի է նշել, որ իշխանության թեկնածուն քաղաքական ընտրապայքարի տեսանկյունից ընտրել էր լուրջ մշակված, կշռադատված և հիմնավորված մարտավարություն:

Դիտարկենք Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական քաղաքական ելույթները, որոնք իրենց բովանդակությամբ բավականին տարբերվում են իշխանության թեկնածուի քաղաքական ելույթներից: Ինչ վերաբերում է բառերի ընտրությանը, ապա պետք է նշել, որ բառապաշարի, հնչերանգի, իմաստաբանական առումներով այն խիստ տարբերվում է և հարուստ է փոխաբերություններով, ոճական բանադարձումներով և դարձույթներով, ինչը մեծ հուզականություն է հաղորդում խոսքին և լսարանին պահում է մշտական ուշադրության կենտրոնում: Պետք է նշել նաև, որ ճարտասանական արվեստի տեսանկյունից Լ. Տեր-Պետրոսյանի բառապաշարն իր բովանդակային առումով արհեստավարժ կերպով է կազմված: Երբեմն տվյալ թեկնածուն դիմում է նաև սրամտությունների լսարանին թարմություն հաղորդելու համար՝ միևնույն ժամանակ պահպանելով սեփական անձի զգոնությունը և ելույթի կարևորությունն ու լրջությունը իրավիճակը վերահսկելու համար: Այս թեկնածուի կողմից ընտրված բառերի մասին խոսելիս պետք է նշել, որ դրանք հիմնականում ունեն քննադատական բնույթ, իրենց մեջ պարունակում են կոչեր, ճարտասանական բաց հարցեր, որոնց պատասխանները լսարանին հայտնի են և այդպիսով՝ լսարանին ներշնչում են պայքարելու ոգի, ազատատենչական հույզեր, ներկան նորով փոխելու գաղափարներ, սեփական անձի մտավոր և ֆիզիկական կարողությունները գերագնահատելու զգացումներ: Տվյալ թեկնածուի արտաբերած խոսքերը հոգեկան պոռթկումների և հոգեբանական լարվածության ալիք են բարձրացնում լսարանի գիտակցության մեջ՝ պարտադրելով նրանց վճռական

քայլեր կատարել իրենց նպատակին հասնելու համար: Լ Տեր-Պետրոսյանը հաճախ գործածում է հետևյալ բառերը, բառակապակցությունները, նախադասությունները՝ (*ավազակապետություն, բռնապետություն, կոռուպցիա, անարդարություն, քոչվոր, ավազակախումբ, իշխանիկներ, վախ, լկտիություն, տկար իշխանավորներ, ընչազուրկ մարդիկ, պետական մասշտաբի ռեկետ, դարաբաղյան կլան, էլեմենտար ստախոս, ապաքաղաքական քրեական ռեժիմ, հանցավոր ռեժիմ, գերկենտրոնացած իշխանություններ, պայքա՛ր, պայքա՛ր մինչև վերջ, իմաստավորելով անցյալը դեպի ապագա, հաղթելու՛ ենք, ժողովրդի համբերության բաժակը լցվել է, այս երկրի տերը դուք եք, թույլ մի՛ տվեք, որ բորենիները ծեզանից խլեն ձեր արժանապատվությունը, իմ իշխանության օրոք ժողովուրդը վախեցած չի եղել, հաղթածը պետք է լինի հանգիստ, հանդարտ և ողորմած)*: Սրանից ակներև է դառնում, որ տվյալ թեկնածուի ելույթներում առկա են խիստ քննադատություններ և երբեմն՝ նույնիսկ մեղադրանքներ իշխանության կամ նրան սատարող ուժերի հասցեին: Անհրաժեշտ է նշել նաև այս թեկնածուի կողմից ճիշտ հնչերանգի գործածման փաստը, որը չափազանց կարևոր նշանակություն ունի ճարտասանական ելույթների ժամանակ: Հարկ է նշել ևս մի հանգամանք, որը կարևոր դեր է կատարում քաղաքական ելույթների ժամանակ: Խոսքը ելույթների տևողության մասին է: Որքան երկարատև է ելույթը, այնքան դժվար է այն իր ողջ նշանակությամբ լսարանին մատուցելը, քանզի լսարանի մոտ կարող է առաջանալ հոգնածություն, որի հետևանքով նրա ուշադրությունը կարող է շեղվել բուն խնդրից: Այս պարագայում պետք է հավաստել, որ իշխանության թեկնածուի նախընտրական ելույթներն ավելի կարճատև էին և հակիրճ, քան ընդդիմության թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի ելույթները, սակայն անհրաժեշտ է կարևորել նաև այն հանգամանքը, որ ընդդիմության այս թեկնածուն իր ճարտասանական բարձր արհեստավարժության շնորհիվ կարողանում էր լսարանի ուշադրությունը պահել արծարծվող խնդրի վրա մինչև ելույթի ավարտը:

2008թ. ՀՀ Նախագահի թեկնածուների քաղաքական խոսույթների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում միանշանակ կարելի է ասել, որ իշխանության և ընդդիմության թեկնածուները նախընտրական քարոզարշավի ընթացքում իրենց քաղաքական խոսույթների տեսանկյունից բավականին տարբեր էին և յուրատեսակ, սակայն նրանք որոշակիորեն նման էին քաղաքական խոսույթի կազմակերպվածության տեսանկյունից:

Նախընտրական քարոզարշավի ժամանակ քաղաքական խոսույթի վերլուծությունը ժամանակակից քաղաքագիտությունում դարձել է չափազանց կարևոր, քանզի, ինչպես արդեն նշվել է, այն հանրությանը հնարավորություն է տալիս ձեռք բերել քաղաքական կողմնորոշում, համոզվել սեփական քաղաքական հայացքներում կամ դրանք փոխարինել նոր քաղաքական հայացքներով՝ պայմանավորված այս կամ այն թեկնածուին համակրելու հանգամանքով:

2008թ. ՀՀ Նախագահի ընտրությունների ժամանակ թեկնածուների նախընտրական քաղաքական խոսույթների ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը, որ իշխանության թեկնածու Սերժ Սարգսյանի մոտ նկատվում է ավելի դրական, պետականամետ, կառուցողական, փոխզիջումային քաղաքական դիրքորոշում, մինչդեռ ընդդիմության թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի քաղաքական հայացքները հիմնականում խարսխված են սեփական և իրեն սատարող քաղաքական ուժերի ընդհանուր քաղաքական գաղափարախոսության կարևորման, գործող իշխանության և նրա կողմից իրականացվող քաղաքական գործողությունների խիստ քննադատության, իշխանության քաղաքական ուղու և գործելաոճի մերժման, ինչպես նաև իշխանության հետ որևէ փոխզիջման չգնալու քաղաքականության վրա: Ինչ վերաբերում է մյուս թեկնածուներին, ապա նրանք ավելի չափավոր են իրենց քաղաքական խոսքում և նախընտրական քարոզարշավի ընթացքում որդեգրել էին պայքարի ավելի մեղմ, ոչ բախումային ձևը, ինչը դրսևորվում էր նաև նրանց քաղաքական խոսքում: Ընտրարշավի ընթացքում թեկնածուների քաղաքական խոսույթները և քաղաքական

դիրքորոշումները պայմանավորված էին նրանց կողմից կիրառվող ընտրապայքարի մեթոդների և միջոցների ընտրությամբ:

5. Քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերի խոսութային վերլուծությունը 2009թ. Երևանի ավագանու ընտրություններում

Ժամանակակից քաղաքագիտությունում քաղաքական խոսույթի ուսումնասիրությունը նախընտրական ծրագրերի վերլուծության միջոցով դարձել է խիստ արդիական: Այն հնարավորություն է տալիս հանրության մոտ ձևավորել այս կամ այն քաղաքական ուժի գաղափարախոսության և ծրագրային դրույթների մասին հստակ պատկերացումներ: Նախընտրական ծրագրերի խոսութային վերլուծությունը թույլ է տալիս վեր հանել դրանց միջև գոյություն ունեցող նմանություններն ու տարբերությունները, որոնց հիման վրա կարելի է դատել այդ ծրագրերի սոցիալական, տնտեսական և քաղաքական ուղղվածության մասին: Այս տեսանկյունից կարևորել ենք 2009թ. Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերի խոսութային վերլուծությունը:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ ընտրությունները կայացան համամասնական ընտրակարգով, որոնց մասնակցեցին յոթ քաղաքական ուժեր (ՀՀԿ, ԲՀԿ, ՀԱԿ, ՕԵԿ, ԺԿ, ՀՅԴ, ՀԱՍԿ): Արդյունքում 7 տոկոսանոց ընտրական շեմը կարողացան հաղթահարել միայն երեքը՝ ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն և ՀԱԿ-ը: Հետագայում ՀԱԿ-ը հրաժարվեց իր մանդատներից:

Գծապատկեր 5.

2009թ. Երևանի ավագանու ընտրությունների արդյունքները[221]

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺ	ՁԱՅՆԵՐ	ՏՈԿՈՍԱՅԻՆ ՇԵՄ	ՏԵՂԵՐ
ԲՀԿ	89131	22.65 %	17
ԺԿ	8479	2.15 %	0
ՀԱԿ	69140	17.57 %	13
ՀԱՍԿ	1936	0.49 %	0
ՀՀԿ	186630	47.43 %	35
ՀՅԴ	18094	4.60 %	0
ՕԵԿ	20106	5.11 %	0

Ընտրություններից առաջ նախընտրական կարգախոսների մշակումը շատ հաճախ զուգակցվում է նախընտրական ծրագրերի մշակման հետ, որը կրում է փոխլրացնող բնույթ: Այս տեսանկյունից բացառություն չէին նաև Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերից մի քանիսը, որոնք, բացի նախընտրական ծրագրերից, առաջնորդվում էին նաև քաղաքական կարգախոսներով:

Նախ և առաջ անդրադառնանք կուսակցությունների նախընտրական կարգախոսների խոսութային վերլուծությանը, որը թույլ կտա ավելի հստակորեն պատկերացնել քաղաքական ուժերի մարտավարական գաղափարախոսությունը ընտրությունների ժամանակ:

[221] http://elections.am/Council.aspx

Աղյուսակ 9.

Քաղաքական ուժերի նախընտրական կարգախոսները 2009թ. Երևանի ավագանու ընտրություններում

ՀՀԿ	*Քեզ համար, Երևա՛ն*
ԲՀԿ	*Մեր խոսքը գործ է, Միասին կառուցենք բարգավաճ երկիր*
ՀՅԴ	*Սա Երևանն է, այստեղ դու տանն ես*
ԺԿ	*Երևանը ողջ հայության մայրաքաղաքն է, օգտվիր վաղվա օրը կանխորոշելու քո իրավունքից, Վեհ քաղաքին, վեհ մոտեցում*
ՕԵԿ	*Իսկ ինչո՞ւ ոչ կին քաղաքապետ*
ՀԱԿ	*կարգախոս չունի*
ՀԱՍԿ	*կարգախոս չունի*

Դիտարկենք Հայաստանի Հանրապետական Կուսակցության նախընտրական կարգախոսը՝ *«Քեզ համար, Երևա՛ն»*: Այս կարգախոսի խոսութային վերլուծության արդյունքում կարելի է ասել, որ այն բավականին պարզ է, հստակ և չի բովանդակում տարիմաստություններ: Տվյալ կարգախոսը միանշանակ արտահայտում է մեկ ամբողջական միտք, որում բացառապես կարևորվում են Երևան քաղաքի գաղափարը և այն բոլոր նախանշված ծրագրերը, որոնք պետք է իրականացվեն ի բարօրություն վերջինիս: Այս կարգախոսը բավականին ընդգրկուն է և իր բովանդակության մեջ ներառում է այն բոլոր գաղափարները, որոնք տվյալ քաղաքական ուժը պատրաստ է ի կատար ածել ընտրություններում հաջողության հասնելու դեպքում: Այս տեսանկյունից կարելի է ասել, որ այն քաղաքականապես լավ մշակված է և նպատակային:

Ինչ վերաբերում է Բարգավաճ Հայաստան Կուսակցության նախընտրական կարգախոսին *«Մեր խոսքը գործ է, Միասին կառուցենք բարգավաճ երկիր»*, ապա այն իր բովանդակությամբ էապես տարբերվում է ՀՀԿ-ի կարգախոսից: Տվյալ կարգախոսի խոսութային

վերլուծության արդյունքում բացահայտվում են դրա իմաստային առանձնահատկությունները: Այս կարգախոսում կարևորվում է ոչ թե ստույգ Երևան քաղաքը, այլ, առհասարակ, ամբողջ երկիրը: Կարգախոսում հստակորեն նշվում է նաև տվյալ կուսակցության խոսքի և գործի՝ որպես մեկ ամբողջության մասին գաղափարը, որի համաձայն՝ *«այն ամենը, ինչ ասվում է, միանշանակ վերածվում է գործի»*: Սեփական ուժերի նկատմամբ այսպիսի վստահությունը և համոզվածությունը շատ հաճախ ընտրազանգվածի մոտ ձևավորում են համապատասխան հոգեվիճակ, ինչպես նաև հաջողություն են բերում տվյալ քաղաքական ուժին: ԲՀԿ-ի կարգախոսի երկրորդ հատվածի *(Միասին կառուցենք բարգավաճ երկիր)* խոսութային վերլուծությունից ակներև է դառնում կուսակցության անվան հետ կարգախոսի կապը: Այս պարագայում ևս փորձ է արվել կարգախոսում կարևորել կուսակցության դերը և ընտրություններում վերջինիս ազդեցությունը: Որպես եզրակացություն՝ կարելի է նշել, որ տվյալ կարգախոսում ԲՀԿ-ն հաջողության գրավականը կապում է ոչ թե զուտ կարգախոսի բովանդակության, այլ՝ հիմնականում կուսակցության հեղինակության հետ:

Իր յուրահատկությամբ առանձնանում է Հայ Յեղափոխական Դաշնակցության նախընտրական կարգախոսը՝ *«Սա Երևանն է, այստեղ դու տանն ես»*: Հարկ է նկատել, որ այն վերցված է երևանյան ֆոլկլյորում հայտնի երգի խոսքերից: Այդ փաստը կարելի է համարել ՀՅԴ-ի կողմից կատարված լուրջ մարտավարական քայլ, քանզի հանրությանը արդեն հայտնի և սիրված երգի խոսքերի ընտրությունը որպես նախընտրական կարգախոս, կարող է դրական ազդեցություն թողնել ընտրազանգվածի կողմնորոշման վրա: Կարգախոսի խոսութային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ դրանում Երևան քաղաքը նույնացվում է տան, հարազատ օջախի հետ, որի նկատմամբ ուշադրությունը և հոգատարությունը պետք է լինեն ավելի բարձր: Այս կարգախոսը հանրությանը ներշնչում է ապահովության, անվտանգության, հուսալիության զգացումներ, այսինքն՝ այն զգացումները, որոնք կարելի է ունենալ տանը, հետայսու պետք է նաև ներհատուկ լինեն Երևան քաղաքին:

Բովանդակային տեսանկյունից կարգախոսը հարուստ է, լավ հիմնավորված և ազդեցիկ:

Ուշագրավ են նաև ժողովրդական Կուսակցության նախընտրական կարգախոսները՝ *«Երևանը ողջ հայության մայրաքաղաքն է, օգտվիր վաղվա օրը կանխորոշելու քո իրավունքից»* և *«Վեհ քաղաքին, վեհ մոտեցում»*: Առաջին կարգախոսը կարելի է առանձնացնել երկու մասի: Առաջին մասում *(Երևանը ողջ հայության մայրաքաղաքն է)* հստակորեն նշվում է Երևանի՝ ողջ հայության մայրաքաղաքի մասին գաղափարը՝ տալով նրան ոչ թե տեղական, այլ՝ համահայկական նշանակություն: Այս դեպքում պարզորոշ նշվում է Երևան քաղաքի ազգային կարևորության մասին: Իսկ կարգախոսի երկրորդ հատվածը *(օգտվիր վաղվա օրը կանխորոշելու քո իրավունքից)* բովանդակում է այն միտքը, ըստ որի՝ քաղաքի յուրաքանչյուր բնակչից է կախված նրա վաղվա օրը, այսինքն՝ այս պարագայում Երևանը կարևորվում է որպես քաղաք՝ բացառապես իր բնակիչների հետ միասին: Այս հանգամանքը կարող է ընտրազանգվածի մոտ ձևավորել վստահություն և քաղաքի կառավարման գործին մասնակցություն ունենալու զգացում: Հարկ է նկատել, որ այս կարգախոսը երկարաշունչ է, սակայն օժտված է հստակ տրամաբանությամբ:

ԺԿ երկրորդ կարգախոսի *(Վեհ քաղաքին, վեհ մոտեցում)* խոսութային վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ այն հիմնված է վերացական մոտեցումների վրա: Այս տեսանկյունից կարգախոսում Երևանը նույնացվում է բարձր, վեհ գաղափարների հետ, որոնք կարող են լինել ճշմարիտ արժեքներ: Այս կարգախոսը կարելի է համարել ուտոպիայի դրսևորում, որն իրականում զուրկ է գործնական հիմքից, բայց և կոչված է ներգործելու ընտրազանգվածի հոգեբանական դաշտի վրա:

Վերոհիշյալ կարգախոսներից խիստ տարբերվում է Օրինաց Երկիր Կուսակցության նախընտրական կարգախոսը՝ *«Իսկ ինչո՞ւ ոչ կին քաղաքապետ»,* որն ունի պարզ բովանդակություն, դյուրըմբռնելի է և աչքի է ընկնում իր յուրօրինակությամբ: Խոսութային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ կարգախոսում կարևորվում են հայաստանյան քաղաքական դաշտում ոչ հաճախ հանդիպող կին

քաղաքական գործչի կերպարը և այն պաշտոնը, որին նա հավակնում է: Տվյալ կարգախոսը չի բովանդակում գաղափարներ, որոնք կվերաբերեին ստույգ Երևան քաղաքին, նրա բնակիչներին և քաղաքում առկա խնդիրներին: Պետք է նկատել, որ ՕԵԿ-ը նախընտրական կարգախոսի միջոցով առաջ է քաշում Երևանի ավագանու ընտրություններում կուսակցության հետապնդած հիմնական նպատակը, այն է՝ կուսակցության կողմից առաջադրված կին թեկնածուի հաղթանակը Երևանի քաղաքապետի պաշտոնի համար ընթացող պայքարում:

Հարկ է նշել, որ ընտրություններին մասնակցող մյուս քաղաքական ուժերը՝ Հայ Ազգային Կոնգրեսը (ՀԱԿ) և Հայաստանի Աշխատավորական Սոցիալիստական Կուսակցությունը (ՀԱՍԿ) չունեին նախընտրական կարգախոսներ:

Այժմ խոսութային վերլուծության միջոցով հետազոտենք Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի (ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ, ՀՅԴ, ՀԱԿ, ԺԿ, ՀԱՍԿ) նախընտրական ծրագրերը: Այս պարագայում հնարավոր է դառնում բացահայտել նախընտրական ծրագրերի միջև նմանություններն ու տարբերությունները, հիմնական առաջարկությունները, Երևանի կառավարման համակարգի վերաբերյալ քաղաքական ուժերի մոտեցումները:

Խոսութային վերլուծության համար առանձնացնենք հետազոտության մի քանի ոլորտներ՝ բնակչության կենսագործունեության ապահովում, բնապահպանություն, տրանսպորտ, քաղաքաշինություն, ձեռնարկատիրություն, արտաքին կապեր, մշակույթ, սպորտ և երիտասարդություն:

ԲՀԿ նախընտրական ծրագրում նշվում է, որ Երևանի սոցիալ-տնտեսական զարգացումը պետք է հիմնված լինի գիտականորեն հիմնավորված հեռանկարային, միջնաժամկետ և նպատակային ծրագրերի համակարգի վրա: Ծրագրերի մշակումը պետք է իրականացվի արդեն իսկ ընդունված պետական ռազմավարական ծրագրերի հետ համադրման տեսանկյունից, որոնց հետ պետք է կազմի մեկ միասնական ամբողջություն՝ իրականացման առավելագույն արդյունավետության ու դրանց համակարգման գործուն մեխա-

նիզմների ապահովման նպատակով: Այդ տեսանկյունից կուսակցությունն առաջարկում է մշակել և իրականացնել համատիրությունների կայացման և աջակցության պետական ծրագիր, Երևանի ավագանուն վերապահել համատիրության և բազմաբնակարան շենքերի կառավարման մյուս մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության իրավունք, Երևանի քաղաքապետին ավագանու առաջարկությամբ վերապահել բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների՝ օրենսդրությանը հակասող որոշումների կասեցման և դատական կարգով բողոքարկման իրավունք:[222]

Բնակչության կենսագործունեության ապահովման տեսանկյունից ԲՀԿ ծրագրում նշվում է, որ քաղաքային իշխանության հիմնական նպատակը քաղաքի բնակչության կյանքի համար հարմարավետ և նորմալ պայմանների ստեղծումն է: Ծրագրում կարևորվում են հասարակական տարածքների, հետիոտն գոտիների, հրապարակների, կանաչապատ տարածքների ընդլայնման և բարեկարգման հարցերը, ինչպես նաև խիստ կարևոր է համարվում բնակչության բնակարանային պայմանների և կուլտուր-կենցաղային սպասարկման շարունակական բարելավումը՝ հաշվի առնելով տարիքային և սոցիալական տարբեր խմբերի պահանջները:[223]

Վերոհիշյալ ոլորտում ուշագրավ են ՀՀԿ ծրագրային դրույթները, որոնց համաձայն՝ բնակչության կենսագործունեության ապահովման համար պետք է իրականացվեն ստույգ մշակված ծրագրեր, որոնք ուղղված կլինեն նոր աշխատատեղերի, նոր համատիրությունների ստեղծմանը, գործող համատիրությունների կայացման և աշխատանքների արդյունավետության բարձրացման գործընթացին:[224]

ՕԵԿ նախընտրական ծրագրում ևս առկա են բնակչության կենսագործունեության ապահովման վերաբերյալ առանձին դրույթներ: Մասնավորապես՝ կուսակցությունն առաջարկում է ներդրում-

---

[222] Երևանի ավագանու ընտրություններ, ԲՀԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 3-7:
[223] *Նույն տեղում*, էջ 8:
[224] Երևանի ավագանու ընտրություններ, ՀՀԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009:

ների և ներքին խնայողությունների ավելացման համար բարենպաստ տնտեսական միջավայրի ստեղծում, կայուն տնտեսական զարգացման ապահովում և աշխատատեղերի ստեղծում, տեղեկատվական քաղաքական միջավայրի ձևավորում:[225]

Բնակչության կենսագործունեության ապահովման տեսանկյունից ՀԱԿ-ը առաջարկում է սոցիալական խնդիրների արագ արձագանքման՝ «սոցիալական շտապ օգնություն» ծրագիր, սակայն հարկ է նշել, որ այն չի մանրամասնված նախընտրական ծրագրի շրջանակներում: ՀԱԿ-ը նաև առաջարկում է երկարատև խնամքի կարիք ունեցող անձանց համար հատուկ հաստատությունների և խնամքի կենտրոնների ստեղծում:[226]

Անհրաժեշտ է նշել, որ ՀԱԿ-ը առանձնանում է մյուս քաղաքական ուժերից այն բանով, որ իր նախընտրական ծրագրում բացի «Երևանի ծրագրից» զետեղել է նաև «քաղաքական ծրագիր», որում խոսվում է Երևանի վարչատարածքային սահմաններում հավաքների ազատության վերականգնման, անկախ հեռուսատատեսությունների և ռադիոկայանների միջոցով խոսքի ազատության ապահովման, ընտրակեղծիքների մեքենայի վերացման, ավազակապետական կոռուպցիոն բուրգի փլուզման գործընթացի սկզբնավորման, հակակշիռների ստեղծման, սահմանադրական կարգի վերականգնման մասին:[227] Այդ հանգամանքը ևս մեկ անգամ ապացուցում է ՀԱԿ-ի՝ արմատական ընդդիմության կեցվածք ընդունելու մասին ձգտումը:

Բնակչության կենսագործունեության ապահովման խնդրի վերաբերյալ ԺԿ-ն անհրաժեշտ է համարում իրականացնել աշխատանքի իրավունքի և զբաղվածության խնդիրների, գործատուների ու վարձու աշխատողների հարաբերությունների, կենսաթոշակների և նպաստների սահմանման օրենսդրական կարգավորում, կենսաթոշակների և նպաստների չափի համապատասխանեցում կենսապա-

---

[225] Երևանի ավագանու ընտրություններ, ՕԵԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 4:
[226] Երևանի ավագանու ընտրություններ, ՀԱԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 10:
[227] *Նույն տեղում*, էջ 3-5:

հովման նվազագույն զամբյուղի պահանջներին, մայրաքաղաքի բնակչության սոցիալապես անապահով շերտերի համար հասարակական հավելյալ ծրագրերի ստեղծում և իրագործում, ինչպես նաև բնակչության առանձին խմբերի համար օրենսդրորեն ամրագրված որոշակի արտոնությունների հաստատագրում, դոտացիայի հատկացում բնակչության անապահով խավերին, կենսամակարդակի բարձրացում՝ զբաղվածության համապատասխան ծրագրերի իրագործման շրջանակներում:

Հարկ է նշել, որ մյուս քաղաքական ուժերի (ՀՅԴ, ՀԱՍԿ) նախընտրական ծրագրերը չեն պարունակում բնակչության կենսագործունեության ապահովման մասին առանձին դրույթներ:

Ինչ վերաբերում է բնապահպանությանը, ապա այդ խնդրի վերաբերյալ դրույթներ գոյություն ունեն ընտրապայքարին մասնակցող քաղաքական ուժերի մեծ մասի նախընտրական ծրագրերում: Առավել հանգամանորեն այդ խնդրին անդրադարձել են ԲՀԿ-ն, ՀՀԿ-ն, ՕԵԿ-ը և ՀԱԿ-ը:

ԲՀԿ նախընտրական ծրագրում նշվում է, որ բնակչության առողջ ապրելակերպի ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի մայրաքաղաքի բնապահպանական և սանիտարական վիճակի բարելավումը: Այս պարագայում կուսակցությունը կարևոր է համարում՝ 1. մթնոլորտային օդի աղտոտման նորմատիվների գերազանցումը բացառելու և աղմուկից զերծ գոտիներ ձևավորելու նպատակով ավտոմոբիլային տրանսպորտի բացասական ազդեցության սահմանափակումը, 2. քաղաքի կոնկրետ տարածքների նկատմամբ բնապահպանական հատուկ պահանջների սահմանումը, 3. տեխնոգեն պատճառներով աղտոտված տարածքների վերականգնման և առողջացման ուղղությամբ միջոցառումների ծրագրի մշակումը, 4. շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն գործող վնասակար նյութերի արտանետումների կրճատման նպատակով էկոլոգիապես մաքուր արտադրության խթանումը, 5. արտադրական և կենցաղային կոշտ թափոնների օգտահանման ու ոչնչացման ենթակառուցվածքների զարգացումը, 6. տեխնոլոգիապես հնացած և բնապահպանական առումով վնասակար արտադրությունների վե-

ռացումը կամ կատարելագործումը, բնակելի տարածքների և արդյունաբերական գոտիների միջև բուֆերային կանաչ գոտիների ստեղծումը[228] և այլն:

Բնապահպանության խնդիրը կարևորվում է նաև ՀՀԿ նախընտրական ծրագրում, որտեղ հստակորեն նշվում է, որ ներկայումս մեկ բնակչին հասնող կանաչ տարածքների ընդհանուր ցուցանիշը բավարար չէ քաղաքի բնակչության հանգստի և մաքուր, թթվածնով հարուստ օդի ապահովման համար: Այդ տեսանկյունից Երևանը կանաչապատ քաղաք դարձնելու համար ՀՀԿ-ն ծրագրում է՝ 1. ստեղծել կանաչ գոտիների կառավարման միասնական համակարգ, 2. ընդլայնել Երևանի քաղաքային տնկարանը և կառուցել ջերմատուն, 3. վերականգնել և ընդլայնել զբոսայգիներն ու պուրակները, 4. վերագործարկել ջրավազանները, շատրվանները, 5. հիմնանորոգել և ընդլայնել ոռոգման ցանցը, 6. իրականացնել քաղաքի մաքրության և աղբահանության համալիր ծրագիր, 7. շարունակել օժանդակել կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցմանը և շահագործմանը, բոլոր փողոցներում տեղադրել մեծ և փոքր աղբարկղներ[229] և այլն:

Բնապահպանության վերաբերյալ առանձին դրույթներ կան նաև ՕԵԿ նախընտրական ծրագրում, որում հստակորեն նշվում է, որ աշխարհի առավել զարգացած մայրաքաղաքներում առաջնահերթ կարևորվում են բնապահպանական խնդիրները, մինչդեռ մեզանում բնությունը դիտարկվում է որպես շահագործման օբյեկտ: Վերջին շրջանում մտահոգիչ են դառնում անբարենպաստ բնապահպանական միջավայրի հետ կապված շնչառական և մաշկային հիվանդությունները: Իրավիճակի շտկման համար ՕԵԿ-ը անհրաժեշտ է համարում՝ 1. Երևանի բնապահպանական հայեցակարգի մշակումը և ընդունումը, 2. կանաչ տարածքներում չհիմնավորված կառուցապատման դադարեցումը, 3. քաղաքային այգիների և զբոսայգիների բարեկարգումը, 4. ջրային ռեսուրսների խնայողական օգտագործ-

[228] Երևանի ավագանու ընտրություններ, ԲՀԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 8-10:
[229] Երևանի ավագանու ընտրություններ, ՀՀԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009:

ման մեխանիզմների մշակումը և ներդրումը, 5. կենցաղային թափոնների վերամշակման ձեռնարկությունների ստեղծումը՝ բնապահպանական նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ, 6. կանաչ տարածքների, անտառածածկույթով հարուստ վայրերի անխնա օգտագործման համար պատասխանատվության խստացումը[230] և այլն:

Ուշագրավ են բնապահպանության վերաբերյալ ՀԱԿ-ի ծրագրային դրույթները, որոնցում նշվում է, որ մայրաքաղաքում աղտոտվածությունը աղետալի է նույնիսկ ձեռնարկությունները չօգտագործելու պարագայում: Օդային ավազանի աղտոտվածությունը 3-20 անգամ, իսկ հողերինը տասնյակ անգամ գերազանցում է թույլատրելի սահմանային չափանիշը: Մայրաքաղաքի ջրային ավազանները և հոսող գետերը ծանր մետաղներով, կեղտաջրերով և տարբեր թափոններով աղտոտված են նորմայից մոտ 11 անգամ ավելի: Այդ վիճակը շտկելու համար ՀԱԿ-ը առաջարկում է՝ 1. վերականգնել Երևանի «թոքեր» հանդիսացող տարածքները, 2. վերականգնել բուսաբանական այգին՝ իր ենթակառուցվածքներով, 3. կատարել կանաչ գոտիների գույքագրում և դասակարգում ըստ գործառնական նշանակության, 4. բացառել այգիներում և պուրակներում կապիտալ շինությունների կառուցումը, 5. վերակառուցել Աէրացիայի կայանը, 6. աշխատանքներ կատարել մայրաքաղաքում մակերեսային ջրերի աղտոտումը կանխելու, ջրամատակարարման ցանցում կորուստները նվազեցնելու և խմելու ջրի որակը բարձրացնելու համար[231] և այլն:

ԺԿ նախընտրական ծրագրում բնապահպանության խնդրի մասին խոսվում է առանց ստույգ դրույթների: Այս պարագայում կուսակցությունը կարևորում է Երևանը էկոլոգիապես մաքուր և գեղատեսիլ դարձնելու հիմնախնդիրը, որտեղ օրենսդրության շրջանակներում պետք է լուծում ստանան համապատասխան ծրագրերը՝

---

[230] Երևանի ավագանու ընտրություններ, ՕԵԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 6:
[231] Երևանի ավագանու ընտրություններ, ՀԱԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 9:

բացառելով էկոլոգիական արհեստական աղետները և կանաչ տարածքների զանգվածային կրճատումներն ու ստվերային բնօգտագործումները: Նախընտրական ծրագրում ԺԿ-ն նշում է, որ խթանելու է բնապահպան հասարակական կազմակերպությունների հետ համակարգված աշխատանքները, ինչպես նաև համապատասխան վարչական և ինստիտուցիոնալ կառույցների ներդաշնակ գործունեությունը:

Վերոշարադրյալ նյութը հիմք է տալիս ասել, որ բնապահպանության խնդիրը վերոհիշյալ քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում արժանացել է պատշաճ ուշադրության:

Տրանսպորտի խնդիրը ևս կարևոր տեղ է զբաղեցնում ուսումնասիրվող նախընտրական ծրագրերում: Այդ հարցի վերաբերյալ քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում ևս կարելի է վեր հանել համապատասխան դրույթներ:

Ինչպես նշվում է ԲՀԿ նախընտրական ծրագրում՝ քաղաքի զարգացման տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունի տրանսպորտային համակարգի զարգացումը: Տրասնպորտային խնդիրների լուծումը, որպես կանոն, քաղաքային գրեթե բոլոր բնակավայրերում հասարակական կյանքի բնականոն ընթացքը պայմանավորող հիմնական գործոններից մեկն է: Երևանի տրանսպորտային խնդիրների շարքում ԲՀԿ-ն հատկապես կարևորում է ուղևորափոխադրման գործընթացի բարելավումը: Կուսակցության համոզմամբ՝ հիմնականում միկրոավտոբուսների միջոցով քաղաքի բնակչության տրանսպորտային սպասարկման իրականացումն անընդունելի է, իսկ տրանսպորտային երթևեկության կազմակերպման հիմնախնդիրը պետք է լուծվի համալիր կերպով և ներառի քաղաքում երթևեկության բոլոր մասնակիցների համար տեղեկատվական ապահովման ժամանակակից համակարգի ներդրումը, խաչմերուկների, փողոցային ցանցի թողունակության և հնարավորությունների ընդլայնումը, հետիոտն երթևեկության ամբողջական համակարգերի ստեղծումը, թունելների և արտափողոցային հետիոտն անցումների կառուցումը, որոնք կապահովեն կարևոր մայրուղիների երթևեկու-

թյան անընդհատ ռեժիմ ըստ ավտոտրանսպորտի տեսակների, օրվա ժամերի և օրերի:[232]

Այս հարցի վերաբերյալ ՀՀԿ նախընտրական ծրագրում նշվում է, որ հասարակական տրանսպորտի չկանոնակարգված աշխատանքը, մեքենաների և ուղևորների կուտակումները, կայանատեղերի բացակայությունը առաջացնում են լուրջ խնդիրներ՝ վտանգելով հետիոտնի ազատ տեղաշարժը: Տրանսպորտի և կապի ոլորտում առկա խնդիրները կարգավորելու համար կուսակցությունը նախատեսում է համալրել քաղաքի ավտոբուսային և տրոլեյբուսային պարկը, բարեկարգել և կահավորել հասարակական տրանսպորտի կանգառները, տեղադրել կանգառանշաններ, աստիճանաբար կրճատել միկրոավտոբուսների քանակը, կառուցել նոր, ժամանակակից ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղեր, խիստ վերահսկողություն սահմանել տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի նկատմամբ: [233]

Ինչ վերաբերում է ՀԱԿ-ին, ապա տրանսպորտային երթևեկությունը կարգավորելու համար այս քաղաքական ուժն առաջարկում է ներդնել կարգավորման ավտոմատ կառավարման համակարգ: Ըստ դաշինքի նախընտրական ծրագրի՝ մայրաքաղաքի փողոցների ասֆալտապատումը կիրականացվի բարձր որակով՝ բացառելով դրանց ամենամյա վերանորոգման արատավոր ավանդույթը, կվերանայվի Երևանի տրանսպորտային երթևեկության սխեման: Ուղևորների համար այն կդարձվի առավել հարմարավետ, շահագործման մեջ կդրվեն քաղաքային ժամանակակից ավտոբուսներ և տրոլեյբուսներ, կապահովվի մետրոպոլիտենի արդյունավետ շահագործումը, կավարտվի մետրոպոլիտենի Բարեկամություն-Աջափնյակ հատվածը, ինչպես նաև կնախաձեռնվի Աջափնյակ-Սիլիկյան թաղամաս – Մալաթիա - Չարբախ երթուղու կառուցումը,

---

[232] Երևանի ավագանու ընտրություններ, ԲՀԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 12:
[233] Երևանի ավագանու ընտրություններ, ՀՀԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009:

վերգետնյա տրանսպորտի համար կստեղծվեն պատշաճ կահավորված կանգառներ:[234]

Ինչ վերաբերում է ՕԵԿ նախընտրական ծրագրին, ապա դրանում նշվում է, որ Երևանը կարող է և պետք է դառնա տարածաշրջանային հեռահաղորդակցման խաչմերուկ: Ուստի այդ նպատակին հասնելու համար կուսակցությունը անհրաժեշտ է համարում մշակել մայրաքաղաքի համընդհանուր համակարգչային ցանցի ընդլայնման ծրագիր, քայլեր ձեռնարկել ինտերնետ ծառայությունների ցանցի առաջընթաց զարգացման ուղղությամբ, ավելացնել ավտոբուսների և տրոլեյբուսների քանակը, մշակել և իրականացնել հասարակական տրանսպորտի վիճակի բարելավման նպատակային ծրագիր, շարունակել ժամանակի պահանջներին համապատասխան ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղերի կառուցման գործընթացը, վերսկսել Երևանի մետրոպոլիտենի կիսակառույց կայարանների շինարարությունը:[235]

Մյուս քաղաքական ուժերից միայն ԺԿ նախընտրական ծրագիրն է, որ տրանսպորտի, կապի և հեռահաղորդակցության խնդիրների վերաբերյալ չի բովանդակում առանձին դրույթներ:

Վերոշարադրյալ նյութի հիման վրա կարելի է եզրակացնել, որ տրանսպորտի խնդիրն առանձին դրույթներով ներկայացված է եղել ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերից միայն մի քանիսի նախընտրական ծրագրերում (ԲՀԿ, ՀՀԿ, ՀԱԿ և ՕԵԿ):

Այժմ անդրադառնանք հետազոտվող նախընտրական ծրագրերում քաղաքաշինությանը վերաբերող դրույթների խոսութային վերլուծությանը:

Երևան քաղաքում որպես քաղաքաշինական առաջնահերթ և հիմնարար խնդիրներ՝ ԲՀԿ-ն կարևորում է առկա տարածքների քաղաքաշինական կարգավորման սահմանների առանձնացումը և վարչական շրջանների անձնագրավորումը, ըստ քաղաքաշինական

---

[234] Երևանի ավագանու ընտրություններ, ՀԱԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 8:
[235] Երևանի ավագանու ընտրություններ, ՕԵԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 5:

գործունեության կարգավորման ռեժիմի՝ բնական համալիրի բաղկացուցիչ մաս հանդիսացող, այդ թվում՝ կանաչ տարածքների գոտիավորումը, քաղաքաշինական և նախագծային փաստաթղթերի մշակումը, առանձին օբյեկտների տեղաբաշխման նկատմամբ հստակ պահանջների սահմանումը և դրանց պահպանման ապահովումը: ԲՀԿ-ն գտնում է, որ անհրաժեշտ է մշակել քաղաքաշինական գոտիավորման և հողօգտագործման այնպիսի սխեմաներ, որոնք պետք է հստակ առանձնացնեն գործունեության որոշակի տեսակների համար օգտագործման թույլատրելի տարածքները, այդ տարածքներում քաղաքաշինական գործունեության շրջանակները, արգելեն այդ սխեմաներից դուրս քաղաքաշինական գործունեությունը, հողհատկացումներն ու հողօգտագործումը: Կուսակցության նախընտրական ծրագրում նշվում է, որ քաղաքաշինական զարգացման հիմնական նպատակ պետք է հռչակվի մայրաքաղաքի զարգացման քաղաքաշինական ներուժի բացահայտումը և քաղաքի բնակիչների համընդհանուր շահերին այն ծառայեցնելը:[236]

Քաղաքաշինության ոլորտում ՀՀԿ-ն նախատեսում է վերանորոգել քաղաքի փողոցների ասֆալտբետոնե ծածկը, դիտահորերը և եզրաքարերը, բարելավել կամրջային կառույցների շահագործումը, ապահովել բնակելի և հանրային շենքերի շահագործման և սպասարկման անվտանգությունը, լուծում տալ քանդման ենթակա և վթարային բազմաբնակարան շենքերի բնակիչների բնակարանային խնդիրներին:[237]

Ուշադրության են արժանի նաև քաղաքաշինության վերաբերյալ ՀԱԿ-ի նախընտրական ծրագրում առկա դրույթները, որոնց համաձայն՝ վերջին տարիներին մայրաքաղաքը կառուցապատվել է «կետային» սկզբունքով և բակային տարածքների, ընդհանուր օգտագործման կանաչ գոտիների, զառիթափ լանջերի հաշվին: Էականորեն նվազել են բազմաբնակարան բնակելի ֆոնդի որակական ու ֆիզիկական ցուցանիշները: Այս տեսանկյունից ստեղծված

[236] Երևանի ավագանու ընտրություններ, ԲՀԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 13-14:
[237] Երևանի ավագանու ընտրություններ, ՀՀԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009:

վիճակը շտկելու համար ՀԱԿ-ն առաջարկում է քննարկել մայրաքաղաքի կառուցապատմանն առնչվող բոլոր ծրագրերը և գոտիավորման նախագծերը մայրաքաղաքի բնակչության և շահագրգիռ կազմակերպությունների հետ: Նախընտրական ծրագրում նշվում է, որ քաղաքաշինական նորմերը չեն ստորադասվի պատվիրատուի քմահաճույքին, կիրականացվի Երևանի կենտրոնը բեռնաթափելու համալիր ծրագիր, կկիրառվի բժշկության մեջ ընդունված «չվնասելու» սկզբունքը՝ ձեռնպահ մնալով չհիմնավորված կառուցապատումից, ինչպես նաև մայրաքաղաքում խստորեն կկիրառվեն «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջները:[238]

Քաղաքաշինության ոլորտին վերաբերող հարցերը պատշաճ ուշադրության են արժանացել նաև ՕԵԿ նախընտրական ծրագրում, որտեղ նշվում է, որ Երևանում մասնավոր, էլիտար շինարարության մեծ մասն իրականացվել է «հողը դա փող է» սկզբունքով՝ ոչնչացնելով կանաչ տարածքները և զանգվածաբար ոտնահարելով քաղաքացիների իրավունքները: Ինչպես նշվում է ՕԵԿ ծրագրում՝ քաղաքի զարգացման գործընթացում հաճախ են տեղ գտել անհամաչափություններ, ուստի կուսակցությունն անհրաժեշտ է համարում քաղաքաշինության ոլորտում ամրապնդել օրինականությունը և կանխել ապօրինի շինարարության բազմազան դրսևորումները, պուրակների, զբոսայգիների և այլ կանաչ տարածքների պահպանման համար կիրառել օրենսդրական պաշտպանության կոշտ միջոցներ, բացառել քաղաքացիների իրավունքների և շահերի ոտնահարումը կառուցապատման ծրագրերի իրականացման գործընթացում, միաժամանակ քաղաքացիների համար շինություններ կառուցելու ընթացքում չհարուցել արհեստական խոչընդոտներ և բյուրոկրատական քաշքշուկներ, առանց քաշքշուկների օրինականացնել երևանցիներին պատկանող բնակելի տներն ու տնամերձ հողատարածքները:[239]

---

[238] Երևանի ավագանու ընտրություններ, ՀԱԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 7-8:
[239] Երևանի ավագանու ընտրություններ, ՕԵԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 4-5:

Ինչ վերաբերում է մյուս քաղաքական ուժերին, ապա դրանք (ԺԿ, ՀԱՍԿ) իրենց նախընտրական ծրագրերում առանձին դրույթների տեսքով չեն անդրադարձել քաղաքաշինության ոլորտին:

Ուսումնասիրենք ձեռնարկատիրության վերաբերյալ քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում առկա դրույթները:

ԲՀԿ նախընտրական ծրագրում նշվում է, որ քաղաքային իշխանությունը պետք է շահագրգիռ լինի, որ մայրաքաղաքում զարգանա ձեռնարկատիրությունը, հատկապես փոքր և միջին բիզնեսը: Մեկընդմիշտ պետք է լուծվեն փողոցային առևտրի, հակասանիտարական պայմաններում հասարակական սննդի օբյեկտների կազմակերպման և նմանատիպ այլ, տարիներով չլուծվող խնդիրները: Կուսակցության համոզմամբ՝ Երևանը փոքր և միջին բիզնեսի կազմակերպման համար պետք է ունենա ներդրումային բարձր գրավչություն: Այդ առումով Երևանի քաղաքապետարանը պետք է համագործակցի քաղաքում տեղակայված խոշոր ձեռնարկությունների բաժնետերերի ու սեփականատերերի հետ և չօգտագործվող արտադրական հրապարակներում վարձակալի համապատասխան տարածքներ՝ տեխնոպարկի, ժամանակակից տոնավաճառների և ցուցահանդեսների կազմակերպման նպատակով: Կուսակցությունը գտնում է, որ քաղաքի զարգացման և արդյունավետ կառավարման երաշխիքներից մեկը քաղաքային իրատեսական բյուջեի ձևավորումն է, որի մուտքային և ծախսային մասերի կառավարումը պետք է երևանցիների համար լինի տեսանելի ու թափանցիկ: Մայրաքաղաքը պետք է գրավիչ լինի նաև երիտասարդ ընտանիքների համար: Քաղաքապետարանն առաջիկա տարիների իր ծրագրերով պետք է ակտիվ մասնակցություն ունենա հիպոտեկային վարկային շուկայի ձևավորմանը և քաղաքաշինական-բնակարանային ոլորտում երիտասարդ ընտանիքների համար բնակարանների կառուցման գործընթացին:[240]

---

[240] Երևանի ավագանու ընտրություններ, ԲՀԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 17-19:

Ձեռնարկատիրության ոլորտում ՀՀԿ նախընտրական ծրագրում ևս կարևորվում են մանր և միջին բիզնեսի համար բարենպաստ պայմանների ստեղծումը, Երևանը ներդրումների համար առավել գրավիչ քաղաք դարձնելու գաղափարը, մայրաքաղաքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի և սպասարկման այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների աշխատանքների կանոնակարգումը, բնակելի շրջաններում գյուղատնտեսական մթերքների փոքրածավալ շուկաների ստեղծումը, նոր և ժամանակակից առևտրակենցաղային շենքերի և համալիրների միջոցով քաղաքակիրթ սպառողական շուկայի ձևավորումը, ժամանցային նոր ծառայությունների զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:[241]

ՀԱԿ-ը ևս իր նախընտրական ծրագրում առանձին դրույթներով անդրադարձել է ձեռնարկատիրության ոլորտում առկա խնդիրներին: Դաշինքի ծրագրում նշվում է, որ քաղաքային իշխանությունները Երևանում կապահովեն գործարարության զարգացման հիմնական պայմանները՝ հավասարություն, մրցակցություն, պետական կառավարման մարմինների չեզոքություն: Գործարարությունը կտարանջատվի հանրային կառավարումից: Փոքր և միջին ձեռնարկատիրությանը աջակցելու նպատակով ՀԱԿ-ի նախընտրական ծրագրում կարևորվում է խորհրդատվական անվճար կենտրոնների ստեղծումը, որոնք գործարարներին կաջակցեն նաև պաշտպանվել հարկային, մաքսային և այլ ստուգող կազմակերպությունների անօրինականություններից: Փոքր և միջին գործարարներին օժանդակելու և մայրաքաղաքում բարենպաստ գործարար միջավայր ստեղծելու համար քաղաքապետարանը կնախաձեռնի օրենսդրական համապատասխան փոփոխությունների գործընթաց:[242]

ՕԵԿ-ի նախընտրական ծրագրում ևս ձեռնակատիրության վերաբերյալ առկա են որոշ առանձին դրույթներ: Այսպես, օրինակ՝ կուսակցությունն առաջարկում է փոքր և միջին գործարարության

[241] Երևանի ավագանու ընտրություններ, ՀՀԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009:
[242] Երևանի ավագանու ընտրություններ, ՀԱԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 11:

զարգացման ուղղությամբ նպատակային պետական աջակցության քաղաքականության արդյունավետ իրականացում, մայրաքաղաքում օտարերկրյա ներդրողներին և հայրենական արտադրողներին հետևողական օգնության և աջակցության ապահովում աշխատատեղերի ստեղծման գործում, տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա աշխատող մանր և միջին ձեռնարկություններին շուկայագիտական աջակցություն:[243]

Ձեռնարկատիրության ոլորտի վերաբերյալ իր ծրագրային դրույթներով առանձնանում է նաև ԺԿ-ն, որն առաջնահերթ է համարում մայրաքաղաքում ավանդաբար զարգացած արդյունաբերական ուղղությունների խթանումը, ձեռնակատիրության ոլորտում ազատ շուկայական և հավասարակշռված մրցակցային պայմանների երաշխավորումը, մանր ու միջին բիզնեսը խթանող նախադրյալների հստակեցումը, հարկային, ֆինանսավարկային և մաքսային ճկուն քաղաքականության միջոցով հայրենական ապրանքարտադրողների գործունեության խրախուսումը, տնտեսության մրցունակ ուղղություններին աջակցության ցուցաբերումը, սեփական ռեսուրսների արդյունավետ ու խնայողաբար օգտագործումը, ստվերային տնտեսությանը նպաստող գործոնների սահմանափակումը և վերացումը, բանկային համակարգի և վարկավորման մեխանիզմների կատարելագործումը, զբոսաշրջության զարգացումը:[244]

Հարկ է արձանագրել, որ ՀՅԴ և ՀԱՍԿ նախընտրական ծրագրերում առկա չեն ձեռնարկատիրության վերաբերյալ առանձին դրույթներ: Այնուամենայնիվ, կարելի է վստահաբար ասել, որ վերոհիշյալ հարցը պատշաճ ուշադրության է արժանացել ընտրություններին մասնակցող յոթ քաղաքական ուժերից հինգի (ԲՀԿ, ՀՀԿ, ՀԱԿ, ՕԵԿ, ԺԿ) նախընտրական ծրագրերում:

Այժմ հետազոտենք արտաքին կապերի վերաբերյալ քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում առկա դրույթները:

---

[243] Երևանի ավագանու ընտրություններ, ՕԵԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 4:
[244] Երևանի ավագանու ընտրություններ, ԺԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009:

Արտաքին կապերի և Սփյուռքի հետ հարաբերությունների ընդլայնումը և խորացումը խրախուսվում են ՕԵԿ նախընտրական ծրագրում: Կուսակցությունն այդ առումով առաջարկում է տարեցտարի ընդլայնել Երևանի միջազգային կապերը՝ դրանք ծառայեցնելով մայրաքաղաքի զարգացմանը և միջազգային ասպարեզում հեղինակության բարձրացմանը, ստորագրել համագործակցության համաձայնագրեր աշխարհի առավել զարգացած երկրների մայրաքաղաքների հետ, քաղաքապետարանում ստեղծել Երևան - Սփյուռք հարաբերությունները կարգավորող ստորաբաժանում, խրախուսել և ըստ ամենայնի պաշտպանել սփյուռքահայերի ցանկությունը՝ Երևանում ներդրումներ կատարելու ուղղությամբ, սահմանել նրանց օրինական իրավունքների և շահերի պաշտպանության գործուն մեխանիզմներ, ձևավորել ընդհանուր տեղեկատվական դաշտ աշխարհի հայաշատ քաղաքների միջև: ՕԵԿ-ն առաջարկում է նաև Երևանում ստեղծել «էլեկտրոնային համալսարան», որը կարող է նորագույն տեխնոլոգիաների հիման վրա դառնալ Երևան - Սփյուռք կապերի ամրապնդման կարևորագույն օղակ:[245]

Արտաքին կապերի հաստատման մասին խոսվում է նաև ԺԿ նախընտրական ծրագրում, որում մասնավորապես նշվում է, որ կուսակցությունը կողմնակից է ավանդական տնտեսական կապերի վերականգնմանը, միջազգային կառույցների, ինչպես նաև արտերկրի մայրաքաղաքների հետ արդյունավետ համագործակցությանը և ինտեգրմանը:[246]

Արձանագրենք, որ մյուս քաղաքական ուժերի (ԲՀԿ, ՀՀԿ, ՀԱԿ, ՀՅԴ, ՀԱՍԿ) նախընտրական ծրագրերը չեն բովանդակում արտաքին կապերի վերաբերյալ դրույթներ: Փաստորեն, կարելի է եզրակացնել, որ վերահիշյալ հարցը պատշաճ ուշադրության է արժանացել Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող յոթ քաղաքական ուժերից միայն երկուսի (ՕԵԿ, ԺԿ) նախընտրական ծրագրերում:

---

[245] Երևանի ավագանու ընտրություններ, ՕԵԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 8:
[246] Երևանի ավագանու ընտրություններ, ԺԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009:

Այժմ վերլուծենք քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերը մշակույթի, սպորտի և երիտասարդության վերաբերյալ հարցերի տեսանկյունից:

ԲՀԿ նախընտրական ծրագրում վերոհիշյալ հարցերին տրվում է մեծ կարևորություն: Կուսակցությունը գտնում է, որ մշակույթի, երիտասարդության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառներում քաղաքային իշխանության գործունեությունը պետք է ուղղված լինի համապատասխան հիմնարկների, կազմակերպությունների ու ակումբների համալիր ձևավորմանը, գեղարվեստական և տեխնիկական ստեղծագործության տարբեր ձևերի աջակցությանն ու զարգացմանը: Կուսակցությունը դեմ չէ, որ հանրապետության առանձին քաղաքներ վերածվեն մշակութային, սպորտային կամ զբոսաշրջության կենտրոնների, սակայն համոզված է, որ Երևանը երբևէ չի դադարի լինել Հայաստանի կրթամշակութային, երիտասարդության և սպորտի ոլորտների առաջատարը, ուստի գտնում է, որ քաղաքային իշխանությունը ոչ միայն չպետք է թուլացնի այդ ոլորտների նկատմամբ ուշադրությունը, այլև պետք է բազմապատկի այն՝ նպատակ ունենալով Երևանը դարձնել մշակութային, կրթական, սպորտային և, ընդհանուր առմամբ, հյուրընկալության ինդուստրիայի տարածաշրջանային բանուկ խաչմերուկ:[247]

Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերն առանձին դրույթներով ներկայացված են նաև ՀՀԿ նախընտրական ծրագրում: Այս տեսանկյունից կուսակցությունը նախատեսում է օժանդակել մշակութային արժեքների պահպանմանը և վերականգնմանը, բարելավել համայնքի ենթակայության տակ գտնվող թանգարանների, գրադարանների, մարզադպրոցների շենքային պայմանները, կազմակերպել մշակութային, սպորտային, երիտասարդական միջոցառումներ և փառատոներ, աջակցել թատերահամերգային կազմակերպությունների գործունեությանը, պայմաններ ստեղծել երիտասարդների ազատ ժամանցի, ակտիվ և նպա-

[247] Երևանի ավագանու ընտրություններ, ԲՀԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 19-20:

տակային գործունեության կազմակերպման համար, ապահովել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու մատչելիությունը, կազմակերպել բնակչության ակտիվ հանգիստը, բնակչության շրջանում արմատավորել առողջ ապրելակերպը, օժանդակել առանձնահատուկ օժտվածություն ունեցող երեխաների և երիտասարդների ուսուցմանը:[248]

Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի վերաբերյալ առանձին դրույթներ են առկա նաև ՀԱԿ նախընտրական ծրագրում, որում նշվում է, որ երիտասարդների համար կկառուցվեն թաղամասեր, որտեղ բացի մատչելի բնակարաններից կլինեն նաև համապատասխան ենթակառուցվածքներ՝ կինոթատրոն, մշակույթի կենտրոն, գրադարան, մարզահրապարակներ և այլն: ՀԱԿ-ը կարևորում է նաև Երևանի բյուջեի միջոցների հաշվին համաշխարհային առաջնակարգ կրթահամալիրներում արդար մրցութային կարգով ընտրված երևանցի ուսանողների ուսման ծախսերի վճարման ապահովումը, Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ երիտասարդ մասնագետների մասնագիտական որակավորումը այլ պետություններում բարձրացնելու հնարավորության ընձեռումը, քաղաքապետարանի հաշվին յուրաքանչյուր տարի մանկապատանեկան արձակուրդային հանգստի կազմակերպումը, մայրաքաղաքի մշակութային արժեքները սերունդներին փոխանցելու նպատակով մշակութային արժեքների ռեգիստրի ստեղծումը, որում կներառվեն առանձնահատուկ վերաբերմունքի կարիք ունեցող արժեքները: ՀԱԿ-ը կարևոր է համարում նաև մայրաքաղաքի գրադարանային ֆոնդի պահպանման և համալրման համար միջոցների ձեռնարկումը և Երևանում վիրտուալ գրադարանի ստեղծումը:[249]

ՕԵԿ-ը իր նախընտրական ծրագրում ներառել է միայն մշակույթի վերաբերյալ առանձին դրույթներ, իսկ սպորտի և երիտասարդության մասին առանձին դրույթներ ծրագիրը չունի: Մշակույթի ոլորտում կուսակցությունն անհրաժեշտ է համարում

---

[248] Երևանի ավագանու ընտրություններ, ՀՀԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009:
[249] Երևանի ավագանու ընտրություններ, ՀԱԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 12-13:

աջակցել Երևանի պատմամշակութային ժառանգության պահպանմանը, նպաստել արդի, ժողովրդական և կիրառական արվեստների ներդաշնակ զարգացմանը, քաղաքային փառատոների և տոնախմբությունների կազմակերպմանը, խրախուսել մշակութային նշանակալի գործերի հեղինակներին, ընդլայնել տարածաշրջանային և միջազգային մշակութային ծրագրերին Երևանի մասնակցությունը, վերանորոգել և կահավորել քաղաքային ենթակայության թանգարանները, գրադարանները, երաժշտական դպրոցները, բարձրացնել դրանց աշխատակիցների աշխատավարձերը:[250]

Ինչ վերաբերում է ԺԿ նախընտրական ծրագրին, ապա այն ևս պարունակում է մշակույթի վերաբերյալ որոշ դրույթներ: Ծրագրում մասնավորապես նշվում է, որ կուսակցության ուշադրության կենտրոնում պետք է լինեն մայրաքաղաքի մշակութային խնդիրները, որովհետև մշակույթն իր ամբողջության մեջ պետք է դիտարկել որպես ազգային հոգևոր հարստություն և հզոր գաղափարական միջոց հայեցի դաստիարակությունն ապահովելու, ինչպես նաև երևանցիների հոգևոր վերելքն ամրագրելու գործում:[251]

Մեր հետազոտությունը թույլ է տալիս բացահայտել, որ մշակույթի, սպորտի և երիտասարդության մասին հարցերը առանձին դրույթներով են ներկայացված հետազոտվող նախընտրական ծրագրերից միայն մի քանիսում (ԲՀԿ, ՀՀԿ, ՕԵԿ, ՀԱԿ, ԺԿ):

Հարկ է նշել, որ Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի շարքում ԲՀԿ-ն, ՀՀԿ-ն, ՀԱԿ-ը, ՕԵԿ-ը և ԺԿ-ն աչքի են ընկնում իրենց ամբողջական ծրագրերով, մինդեռ ՀՅԴ-ի և ՀԱՍԿ-ի նախընտրական ծրագրերը բովանդակային տեսանկյունից բավականին սահմանափակ են:

Ինչ վերաբերում է ՀՅԴ-ին, ապա վերջինիս ծրագրի ամբողջ բովանդակությունը ներկայացված է տասը կետով: ՀՅԴ նախընտրական ծրագրում մասնավորապես նշվում է, որ մայրաքաղաքի արդյունավետ կառավարումը պետք է իրականացվի համահայ-

---

[250] Երևանի ավագանու ընտրություններ, ՕԵԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009, էջ 3:
[251] Երևանի ավագանու ընտրություններ, ԺԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009:

կական ներուժի ներգրավմամբ, Երևանի կառուցապատումը պետք է իրականացվի անվտանգության ապահովման և կենսագործունեության համար բարենպաստ միջավայր ձևավորելու սկզբունքով, համայնքը պետք է մտահոգ լինի յուրաքանչյուր բնակչի սոցիալական վիճակով, յուրաքանչյուր հարկատու պետք է իրավունք ունենա տեղեկանալ, թե ինչպես են ծախսվում իր վճարած հարկերն ու տուրքերը: Կուսակցությունը գտնում է, որ Երևանի տնտեսական պոտենցիալի ամբողջական օգտագործման և մայրաքաղաքի բեռնաթափման բանալին ակտիվ և նախաձեռնողական տնտեսական քաղաքականությունն է, բնակարանային պայմանների բարելավման և կոմունալ որակյալ ծառայություններից օգտվելու բնակչի իրավունքը քաղաքապետարանի պարտավորությունն է[252] և այլն:

Ինչ վերաբերում է ՀԱՍԿ-ին, ապա այն իր նախընտրական ծրագրով բավականին տարբերվում է մյուս քաղաքական ուժերից: ՀԱՍԿ-ի նախընտրական ծրագրում նշվում է, որ կուսակցությունը ցանկանում է հնարավորինս օժանդակել սոցիալապես անապահովներին՝ արագ, որակյալ և մատչելի բժշկական օգնություն ստանալու հարցերում, բուժհիմնարկներին ապահովել ժամանակակից սարքավորումներով և տրանսպորտով: ՀԱՍԿ-ը կարևորում է նաև համատիրությունների դերի, աշխատանքների կազմակերպման ձևերի և տնօրինման ոլորտների հստակեցման անհրաժեշտությունը, ուշադրության կենտրոնում է պահում բնակֆոնդի պահպանության խնդիրները, ինչպես նաև տրանսպորտի բաժնի միջոցով Երևանի տրանսպորտային խնդիրները քաղաքապետարանի անմիջական մասնակցությամբ արագորեն կարգավորելու հարցը: Կուսակցությունը նախատեսում է կանոնակարգել Երևանի փողոցներում, շուկաներում, անցումներում կատարվող առևտուրը, վերցնել տոնավաճառները քաղաքապետարանի վերահսկողության տակ: ՀԱՍԿ-ի համոզմամբ՝ Երևանի քաղաքապետարանը պետք է մշակի և իրականացնի հատուկ ծրագիր՝ նորաստեղծ ընտանիքներին մատչելի բնակարաններով ապահովելու համար, ինչպես նաև հաշմանդամ-

[252] Երևանի ավագանու ընտրություններ, ՀՅԴ նախընտրական ծրագիր, Երևան 2009:

ների համար ստեղծի կյանքի և աշխատանքի հարմարավետ պայմաններ: ՀԱՍԿ-ը նշում է, որ բնապահպանական խնդիրները պետք է գտնվեն քաղաքապետարանի ամենօրյա ուշադրության կենտրոնում: Կուսակցության նախընտրական ծրագրով նախատեսվում է Երևանին տալ ինքնավարության կարգավիճակ, ավագանուն շնորհել օրենսդիր մարմնի լիազորություններ, ստեղծել մայրաքաղաքում արդյունաբերությունը խթանող բաժիններ, մեծ ուշադրություն հատկացնել քաղաքի բյուջեի կազմավորման մեխանիզմին[253] և այլն:

Ստորև բերված աղյուսակում համակարգված կերպով ցույց տանք Երևանի ավագանու ընտրություններին մասնակցած յոթ քաղաքական ուժերի ծրագրային դրույթների համեմատական պատկերը:

Աղյուսակ 10.

Ծրագրային դրույթների համեմատական աղյուսակ

Ծրագրային դրույթներ	ԲՀԿ	ՀՀԿ	ՀԱԿ	ՕԵԿ	ԺԿ	ՀՅԴ	ՀԱՍԿ
Բնակչության կենսագործունեության ապահովում	առկա	առկա	առկա	առկա	առկա	չկա	չկա
Բնապահպանություն	առկա	առկա	առկա	առկա	առկա	չկա	առկա
Տրանսպորտ	առկա	առկա	առկա	առկա	չկա	առկա	առկա
Քաղաքաշինություն	առկա	առկա	առկա	առկա	չկա	առկա	չկա
Ձեռնարկատիրություն	առկա	առկա	առկա	առկա	առկա	չկա	չկա
Մշակույթ, սպորտ, երիտասարդություն	առկա	առկա	առկա	առկա	առկա	առկա	չկա
Արտաքին կապեր	չկա	չկա	չկա	առկա	առկա	չկա	չկա

[253] Երևանի ավագանու ընտրություններ, ՀԱՍԿ նախընտրական ծրագիր, Երևան 2009:

Այսպիսով, Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող վերոհիշյալ քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերի խոսութային վերլուծության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին:

Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի մեծամասնությունը (ԲՀԿ, ՀՀԿ, ՀԱԿ, ՕԵԿ, ԺԿ) նախընտրական ծրագրում կարևորում է բնապահպանության, տրանսպորտի, քաղաքաշինության, ձեռնարկատիրության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերը: Մինչդեռ արտաքին կապերի ձևավորման և Սփյուռքի հետ հարաբերությունների ընդլայնման գաղափարները, որպես ծրագրային դրույթներ, առկա են միայն ՕԵԿ և ԺԿ նախընտրական ծրագրերում:

Բոլոր քաղաքական ուժերի շարքում իր ծրագրով առանձնանում է ՀԱԿ-ը, որի առաջ քաշած դրույթներում հստակ ընդգծվում է վերջինիս ընդդիմադիր կեցվածքը: ՀԱԿ-ի նախընտրական ծրագիրը տարբերվում է նաև լեզվաոճական տեսանկյունից: Եթե մյուս քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում նշվում է, որ «... կուսակցությունը *պետք է* լուծի այս կամ այն խնդիրները», ապա ՀԱԿ-ի ծրագրում հիմնականում «*պետք է*» հարկադրական եղանակիչը փոխարինված է ենթադրական ապառնիին հատուկ «*կ*» եղանակիչով, որը հաստատունություն է հաղորդում խոսքին: Օրինակ՝ ՀԱԿ-ը *կիրականացնի, կստեղծի, կկարգավորի, կբարելավի, կնախաձեռնի, կբացառի* և այլն: Պետք է ընդգծել, որ խոսքի նման երանգավորումն ընթերցողի մոտ ձևավորում է որոշակի վստահության զգացում, և այս հանգամանքը, ինչպես նաև ՀԱԿ-ի խիստ ընդգծված ընդդիմադիր կեցվածքը նպաստեցին, որպեսզի տվյալ քաղաքական ուժը ձայների առումով զբաղեցնի երրորդ տեղը ընտրություններում:

Այսպիսով, կարելի է պնդել, որ վերոհիշյալ յոթ քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում չեն նկատվում խիստ գաղափարախոսական տարբերություններ: Հիմնականում բոլոր ուժերն էլ իրենց նախընտրական ծրագրերում առաջնորդվել են առկա քաղաքային խնդիրների լուծման տեսանկյունից:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մեր օրերում քաղաքական խոսութի վերլուծության միջոցով իշխանության և ընդդիմության փոխհարաբերությունների ուսումնասիրությունը դարձել է արդիական և առանձին դեպքերում նույնիսկ խիստ անհրաժեշտ՝ հաշվի առնելով քաղաքական խոսույթի՝ քաղաքական գործընթացների և հասարակության գիտակցության վրա ունեցած զգալի ազդեցությունը: Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական փոփոխությունները, որոնք պայմանավորված են քաղաքական խոսույթով, պահանջում են գիտական հիմնավորումներ, քանզի դրանց ներգործությունը հասարակական-քաղաքական գործընթացների կառավարման գործում բավականին մեծ է: Իշխանության և ընդդիմության փոխհարաբերությունները հիմնականում արտահայտվում են դրանց միջև առկա քաղաքական խոսույթի միջոցով: Ըստ այդմ՝ իշխանության և ընդդիմության՝ որպես տարբեր սոցիալական խմբերի շահերն արտացոլող քաղաքական երևույթների հետազոտության և խոսութային վերլուծության արդյունքում հանգում ենք հետևյալ եզրակացություններին:

Տարբեր հայեցակարգերի և հետազոտական հարացույցների միջոցով «քաղաքական իշխանության» և «քաղաքական ընդդիմության» տեսական վերլուծության արդյունքում պարզ են դառնում դրանց էությունը և առանձնահատկությունները: Իշխանության ուսումնասիրության ուժային, կոնֆլիկտային ավանդական մոտեցման հետ մեկտեղ զարգանում է նաև կոնսենսուսային մոտեցումը, որի շրջանակներում ձևավորվում է իշխանության հաղորդակցական հայեցակարգը, որն ավելի համահունչ է արդի հասարակության ժողովրդավարական, հետարդյունաբերական կամ տեղեկատվական մոդելների սկզբունքներին:

Մեր հետազտության արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքական իշխանությունը քաղաքական ընտրություն է, որը կատարում է հասարակությունը քաղաքական ուժերի կողմից առաջարկված գաղափարների արդյունքում դրանց միջև առկա խոսույթի միջոցով: Ժողովրդավարական իշխանությունն առավելապես կարևորում է

ընդդիմության և հասարակության հետ երկխոսությունը: Ավտորիտար իշխանությունն առաջարկում է երկխոսության նմանակում, որը մշտապես ուղեկցվում է համոզումներով և ձեռնածությամբ: Իսկ ամբողջատիրական իշխանությունը նախընտրում է մենախոսություն և հաղորդակցական բռնություն:

Իշխանության հաղորդակցական մոտեցման դեպքում ընդդիմության ինստիտուտը ներգրավվում է իշխանական հարաբերություններում համաձայնեցման գործընթացների, բանակցությունների, երկկողմ քաղաքական հաղորդակցության և քաղաքական խոսույթի արդյունքում: Այս պարագայում ընդդիմությունը ևս պատասխանատվություն է կրում պետությունում տեղի ունեցող քաղաքական գործընթացների համար: Այսպիսի ընդդիմությունը կոչվում է կառուցողական: Հաղորդակցական մոտեցման տեսանկյունից քաղաքական ընդդիմությունը հանդես է գալիս որպես այլընտրանքային իշխանություն, որը ներկայացնում է տվյալ պահին հասարակության փոքրամասնության շահերը:

Համադրելով 1991-2008թթ. Հայաստանում մեր կողմից իրականացված իշխանության և ընդդիմության փոխհարաբերությունների և քաղաքական խոսույթի հետազոտության արդյունքները ՀՀ նախագահներ Լևոն Տեր-Պետրոսյանի և Ռոբերտ Քոչարյանի կառավարման փուլերում՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի քաղաքական խոսույթն իր նախագահության տարիներին կրել է այսպիսի բնույթ՝ ազատականացում, ժողովրդավարական արժեքների հաստատում: Տվյալ ժամանակահատվածում ընդդիմության քաղաքական խոսույթին բնորոշ են եղել հետևյալ տարրերը՝ իշխանության քրեականացում, կոռուպցիայի առաջացում, ժողովրդի և ընդդիմության քաղաքական իրավունքների ոտնահարում: Մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ այդ ժամանակահատվածում իշխանության և ընդդիմության միջև գործել են կոնֆլիկտի արժեքային, ինքնանույնականացման և սոցիալ-տնտեսական ձևերը: ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի քաղաքական խոսույթն իր նախագահության տարիներին, ըստ մեր եզրակացության, կրել է այսպիսի բնույթ՝ հզոր և պա-

տասխանատու պետության ձևավորում: Տվյալ ժամանակահատվածում ընդդիմության քաղաքական խոսույթին բնորոշ են եղել հետևյալ տարրերը՝ հակասոցիալական պետություն, ընդդիմության ճնշում, քաղաքական իրավունքների ոտնահարում, իշխանության վերարտադրություն: Մենք հանգել ենք այն եզրակացությանը, որ այդ ժամանակահատվածում իշխանության և ընդդիմության միջև ևս գործել են կոնֆլիկտի արժեքային, ինքնանույնականացման և սոցիալ-տնտեսական ձևերը:

Այսօր Հայաստանում քաղաքական հարաբերությունների համատեքստում պահանջված երևույթներից է իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթը, որը բաղկացած է երկու ձևից՝ կոնֆլիկտային խոսույթ (վեճեր, քննադատություններ, մեղադրանքներ) և համաձայնության խոսույթ (բանակցություններ, բանավեճեր, դաշինքներ): Կոնֆլիկտային խոսույթը նեղացնում է վիճող կողմերի գիտակցությունը. այն ուղղված է դիրքորոշումներում տարբերությունների բացահայտմանը և շահերի միջև տարաձայնության առարկայի հայտնաբերմանը: Համաձայնության խոսույթն ընդլայնում է վիճող կողմերի գիտակցությունը. այն ուղղված է ընդհանուր շահերի որոնմանը և դիրքորոշումների մերձեցմանը: Համաձայնության խոսույթը հնարավոր չէ առանց կոնֆլիկտային խոսույթի, քանզի խոսույթի այդ երկու ձևերը լրացնում են միմյանց:

Ինչ վերաբերում է ժամանակակից Հայաստանում քաղաքական խոսույթին, ապա այն թերի է և հիմնականում կրում է ձևական բնույթ: Իշխող էլիտան բավարար թափանցիկ չէ և փակ է հասարակական վերահսկողության համար: Հասարակության համար կարևոր հարցերի լուծումները կայացվում են առանց լայնածավալ հասարակական քննարկումների և առանց ընդդիմության ներգրավման: Քաղաքական ընդդիմությունն էլ իր հերթին արդյունավետ չի գործում և զուրկ է կառուցողականությունից: Իշխանության և ընդդիմության քաղաքական խոսույթում հիմնականում առկա են կոնֆլիկտային խոսույթին բնորոշ տարրեր (զրպարտություն, հախուռն քննադատություններ, մեղադրանքներ, արհամարհանք), և գրեթե բացակայում է համաձայնության խոսույթը: Հայաստանում դեռևս չի հաջողվում ձևավորել

կառուցողական խոսույթ, որն ուղղված կլինի կողմերի միջև փոխըմբռնմանը, հասարակության զարգացման համար քաղաքական նոր գաղափարների և հեռանկարների որոնմանը, կոնֆլիկտային իրավիճակներում բանակցությունների միջոցով փոխշահավետ լուծումների ձեռքբերմանը: Իսկ այս ամենի բացակայությունը կարող է հիմք ծառայել երկրում նորանոր բռնությունների համար: Այս հարցում քիչ չէ նաև ԶԼՄ-ների պատասխանատվությունը, որոնք միջնորդավորում են այդ խոսույթը:

Մեր կողմից իրականացված տեսական և գործնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քաղաքական մասնակցության կոնվենցիոնալ և ոչ կոնվենցիոնալ ձևերն իրենց ազդեցությունն են թողնում քաղաքական գործընթացների վրա, որոնցում կարևոր դերակատարություն ունի նաև քաղաքական խոսույթը:

Կարևորելով ընտրազանգվածի մասնակցության դինամիկան ընտրություններին, վիճակագրական տվյալների հիման վրա հետազոտության և վերլուծության ենթարկելով 1991-2008թթ. ՀՀ Նախագահի, Ազգային Ժողովի ընտրություններում և Սահմանադրության հանրաքվեներում քաղաքացիների մասնակցության համաթիվը և այդ ամենը դիտարկելով քաղաքական խոսույթի համատեքստում՝ հանգել ենք հետևյալ եզրակացությանը:

Ընտրությունների ընթացքում տեղեկատվության տարածումը, քաղաքական գործընթացների հրապարակայնությունը, հասարակական-քաղաքական քննարկումները ձևավորում են քաղաքական խոսույթ, որն իր դրսևորման ձևերով և առանձնահատկություններով ազդեցություն է գործում ընտրազանգվածի վարքագծի վրա: Որքան հաճախակի են հասարակական-քաղաքական քննարկումները, որքան ընդարձակ է տեղեկատվության դաշտը և որքան հրապարակային է քաղաքական խոսույթը, այնքան մեծ է ընտրազանգվածի քաղաքական մասնակցության ակտիվությունը և հակառակը:

Ընդդիմության իրավական հիմքերի ձևավորման գործընթացը կարևոր նախապայման է համարվում քաղաքական դաշտում վերջինիս գործունեության արդյունավետության համար: Աշխարհում կան պետություններ, որոնք լուծել են այդ խնդիրը ընդդիմության իրա-

վական կարգավիճակի մասին առանձին օրենքի ընդունման միջոցով (Պորտուգալիա, Մավրիտանիա, Կոնգո, Բենին և այլն):

Հայաստանում քաղաքական ընդդիմության ինստիտուտը սկսել է գործել 1991թ. ՀՀ անկախությունից հետո, սակայն հարկ է նշել, որ Հայաստանում ընդդիմությունը դեռ չունի հստակ իրավական կարգավիճակ: Ժողովրդավարական պետություններում, որտեղ քաղաքական ընդդիմությունն ինստիտուցիոնալացված է որպես օրինական քաղաքական ուժ և տիրապետում է օրենսդրությամբ ամրագրված որոշակի իրավունքների, պայմաններ են ստեղծվում իշխանության և ընդդիմության միջև լիարժեք քաղաքական խոսույթի ձևավորման համար:

Այս տեսանկյունից Հայաստանում ժողովրդավարության զարգացման և քաղաքական ընդդիմության գործունեության արդյունավետացման համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ, այսինքն՝ քաղաքական ընդդիմությունը պետք է կարողանա իշխանության հետ փոխգործակցության և հաղորդակցության միջոցով առաջարկել երկրի զարգացման համար այլընտրանքային գաղափարներ: Այս ամենի իրականացման համար առաջարկում ենք մշակել և ընդունել ընդդիմության իրավական կարգավիճակի մասին օրենք, որում կարտացոլվեն կառուցողական ընդդիմության լիազորությունները և քաղաքական պատասխանատվության սկզբունքները՝ հաշվի առնելով, որ դրա նախադրյալներն արդեն առկա են ՀՀ ԱԺ կանոնակարգում: Այդպիսի օրենքի ընդունումը կնպաստի իշխանության և ընդդիմության փոխհարաբերություններում հստակություն մտցնելուն, դրանց միջև լիարժեք քաղաքական խոսույթի ձևավորմանը, որն էլ թույլ կտա մեղմել և նվազեցնել կոնֆլիկտային խոսույթի դրսևորումները:

Այսպիսով, վստահաբար կարելի է պնդել, որ քաղաքական խոսույթն իր դրսևորման ձևերով և առանձնահատկություններով իր կայուն տեղն է զբաղեցնում քաղաքագիտության կարևորագույն գիտակարգերի շարքում:

Summary

Nowadays the study of the mutual relations between the authorities and the opposition through the analysis of the political discourse became topical and in separate cases even necessary, considering an essential influence of the political discourse on the conscience of the political processes and the society. The socio-political changes taking place in the up-to-date world, which are conditioned by the political discourse, require scientific substantiations, because their impact on the government of public-political processes is quite big. The mutual relations between the authorities and the opposition are mainly expressed through the political discourse available between them. So, we come to the following conclusions as a result of the analysis of the political discourse and the study of the political phenomena reflecting the interests of the authorities and the opposition as different social groups.

As a result of the theoretical analysis of the “political authority” and “political opposition” through different concepts and research paradigms their essence and peculiarities become quite clear. A consensus approach is also developing simultaneously with a force, conflict traditional approach to the study of the authority. An authority communication approach is being formed within the framework of the consensus approach, which is more consonant to the principles of the democratic, post-industrial or information models of the modern society.

The results of our study show that the political authority is a political choice made by the society as a result of the ideas suggested by the political forces through the discourse available between them. The democratic authority mostly attaches importance to a dialogue between the opposition and the society. The authoritarian authority suggests imitation to a dialogue, which is always accompanied with convictions and tricks. The totalitarian authority prefers a monologue and communication violence.

In case of the authority communication approach the institute of opposition is attracted to the authoritative relations as a result of concordance processes, negotiations, bilateral political communication and political discourse. In this circumstance the opposition also has responsibility for the political processes taking place in the state. Such an opposition is called constructive. From the viewpoint of the communication

approach the political opposition performs as an alternative authority representing the interests of the minority of the society at the present moment.

We come to the following conclusions, comparing the results of our study of the political discourse and the mutual relations of the opposition and authorities in Armenia in 1991-2008 at the stages of the government of the RA Presidents Levon Ter-Petrosyan and Robert Kocharyan:

The political discourse of the RA first President Levon Ter-Petrosyan during the period of his presidency was of the following nature: liberalization, the establishment of democratic values. During the indicated period the following elements were native to the political discourse of the opposition: the criminalization of the authority, the appearance of corruption, the infringement of the political rights of the people and the opposition. Our study gave us an opportunity to state that the value, self-identification and socio-economic forms of conflict existed between the authorities and the opposition during that period. The political discourse of the RA second President Robert Kocharyan during the period of his presidency, according to our conclusion, was of the following nature: the formation of a powerful and responsible state. During the indicated period the following elements were native to the political discourse of the opposition: an anti-social state, the pressure of the opposition, the infringement of the political rights, the reproduction of the authority. We came to a conclusion that the value, self-identification and socio-economic forms of conflict also existed between the authorities and the opposition during that period.

The political discourse of the authorities and the opposition, consisting of two forms, i.e. a conflict discourse (arguments, criticisms, accusations) and a concordance discourse (negotiations, disputes, blocks), is one of the phenomena required in the context of the political relations in Armenia today. The conflict discourse makes narrower the conscience of the arguing parties, it is directed at the exposure of differences in positions and the revelation of a subject of disagreement between the interests. The concordance discourse makes wider the conscience of the arguing parties, which is directed at the search of common interests and the rapprochement of positions. The concordance discourse is impossible without the conflict discourse, because these two forms of discourse supplement each other.

As for the political discourse in nowadays Armenia, it is defective and of formal nature. The dominating elite is not transparent enough and close for the public supervision. The solutions of issues important for the society are made without wide-scale public discussions and without the attraction of the opposition. In its turn, the political opposition is not operating effectively and is deprived of constructiveness. The elements native to the conflict discourse are mainly available in the political discourse of the authorities and the opposition, i.e. slander, audacious criticisms, accusations, neglect, and the concordance discourse is almost absent. Up to now it had failed to establish in Armenia a constructive discourse directed at mutual understanding between the parties, the search of political new ideas and prospects, the acquisition of mutually beneficial solutions through negotiations in conflict situations. And the absence of all of this can become a basis for new violations in the country. In this issue the responsibility of mass media meditating this discourse is not small either.

The theoretical and practical studies conducted by us show that the conventional and non-conventional forms of political participation have their influence on the political processes, in which the political discourse also plays an important role.

Attaching importance to the dynamics of participation of the electorate in the elections, subjecting the citizens participation in the referendums of the Constitution, the elections of the RA President and the National Assembly of 1991-2008 to an analysis and study on the basis of the statistical data, as well as considering all this in the context of the political discourse, we come to the following conclusion:

During the elections the spread of information, the publication of political processes and public-political discussions form the political discourse, which by its peculiarities and forms of manifestation has influence on the behavior of the electorate. The more often public-political discussions are, the wider the information field is, and the more public the political discourse is, the greater the activity of the political participation of the electorate is and vise versa.

The process of the formation of legal bases of the opposition is considered as an important precondition in the political field for the efficiency of the latter's activities. There are states in the world which could

solve this problem through adopting a separate law on «The Legal Status of the Opposition» (Portugal, Mauritania, Congo, Benin, etc.).

The institute of the political opposition started operating in Armenia in 1991 after the independence of the RA, but it should be mentioned that in Armenia the opposition does not have an exact legal status up to now. In the democratic states, where the political opposition is institutionalized as a legal political force and has some rights stipulated by the legislation, conditions are created between the authority and the opposition for the formation of the full political discourse.

From this point of view it is necessary to create favorable conditions for the efficiency of the activities of the political opposition and the development of democracy in Armenia, i.e. the political opposition should be able to suggest alternative ideas for the development of the country through cooperation and communication with the authorities. For the execution of all of this we are suggesting that a law on «The Legal Status of the Opposition» should be elaborated and adopted. The authorizations of the constructive opposition and the principles of political responsibility should be reflected in this law, taking into account that its preconditions are already available in the policies of the RA National Assembly. The adoption of such a law will contribute to exactness in the mutual relations of the authorities and the opposition, the formation of the complete political discourse between them, which, in its turn, will allow to soften and decrease the manifestations of the conflict discourse.

So, we can insist that the political discourse with its peculiarities and forms of manifestation occupies a stable place among the most important scientific orders of the political studies.

LIMUSH
PRINTHOUSE

Տպագրության եղանակը՝ ռիզոգրաֆիա:
Ֆորմատ՝ 60X84 1/16, թուղթ՝ օֆսեթ, N 1:
Ծավալ՝ 14.25 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 200:

Տպագրված է «Լիմուշ» ՍՊԸ-ի տպարանում:
Ք. Երևան, Պուշկի 40, տարածք 76, հեռ. 58.22.99
E-mail: info@limush.am